Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

22 ՎԲ.

ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԸՍՏ ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱ-
ՆՈՒԹՅԱՆ

1899

Թող. 1

Մոսկվա

2013

AUG 2010

22
Գ-61

Труды по Востоковѣдѣнію, издаваемые Лазаревскимъ Институтомъ Восточныхъ Языковъ.

**Выпускъ I.**

**Книги Паралипоменонъ** въ древнѣйшемъ армянскомъ переводѣ. (*Editio princeps.*)

# ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՑ

ԸՍՏ

## ՀՆԱԳՈՅՆ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

**ՀԱՌԱՋԻՆՆ ԱԾ Ի ԼՈՅՍ**

*ԸՍՏ ԿՐԿԻՆ ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԱՑ, ՀԱՆԴԵՐՁ Բ. ԼՈՒՍԱԳԻՐ ՆՄԱՆԱՏՊՈՒ-
ԹԵԱՄԲՔ ՆՈՑԻՆ*

**ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆՑ.**

**ՄՈՍԿՈՒԱ.**

ՏՊԱՐԱՆ ՎԱՐՎԱՌԷ ԳԱՏՑՈՒԿ.

*ՌՅԽԸ—1899.*

24288-Н2
280-2009

На основанія опредѣленія Совѣта Спеціальныхъ Классовъ Лазаревскаго Института Восточныхъ Языковъ отъ 21 Мая, 1899 года, печатать разрѣшается.

Директоръ *Вс. Миллеръ.*

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

# Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀԱԲԱՐ

ՆՈՒԻՐԷ

Ի ԼՈՅՍ ԱԾՈՂՆ:

[library stamp]

# Предисловіе.

Извѣстно арменистамъ, что, согласно письменнымъ преданіямъ, Священное писаніе было переведено на армянскій языкъ дважды: сначала съ сирскаго языка, а потомъ съ греческаго; послѣдній переводъ извѣстенъ подъ названіемъ „Семидесяти толковниковъ". Однако дошедшіе до насъ рукописные списки армянскаго перевода Библіи, равно какъ и всѣ печатныя изданія, представляютъ только переводъ Семидесяти толковниковъ (армянская вульгата). Правда, въ критической литературѣ были въ разное время замѣчены по предположенію слѣды сирскаго перевода въ отдѣльныхъ словахъ и выраженіяхъ армянской Библіи, но цѣльныхъ отрывковъ, отдѣльныхъ главъ или книгъ до сихъ поръ не удавалось еще открыть. Лѣтомъ 1896 г., когда я занимался въ Эчміадзинской библіотекѣ, собирая между прочимъ матеріалы для второй части моего изслѣдованія по Исторіи Моисея Хоренскаго, матеріалы, между которыми Библія, какъ это замѣчено мною въ другомъ мѣстѣ, составляетъ одинъ изъ важнѣйшихъ источниковъ армянскаго историка, — я нашелъ по счастливой случайности въ рукописной армянской Библіи XVII вѣка (№ 176 по печатному каталогу Кареняпца) неизвѣстный до сихъ поръ и *совершенно отличный отъ армянской вульгаты другой переводъ*, и то только Первой и Второй книги Паралипоменонъ. Судя по языку и изложенію этихъ книгъ, переводъ ихъ весьма древенъ и изященъ, и такъ какъ онъ совершенно расходится съ армянской вульгатой, то я сдѣлалъ предположеніе, не имѣемъ ли въ данномъ случаѣ дѣло съ армянскимъ переводомъ съ сирскаго языка; иначе говоря, не найдены ли фрагменты древнѣйшаго или первоначальнаго армянскаго перевода Библіи, о которомъ упоминаетъ ученикъ Великихъ Переводчиковъ, Корюнъ?

Помянутая рукопись № 176 вмѣстѣ съ другими рукописями находилась въ то время въ большомъ залѣ Эчміадзинской Патріаршей библіотеки, въ которомъ, въ числѣ другихъ, занимался сравненіемъ рукописныхъ списковъ армянскаго перевода Священнаго писанія членъ Эчміадзинской братіи архимандритъ Ехья Хасанъ-Джалалянцъ. Дѣйствительно, достопочтенный о. Ехья, какъ потомъ оказалось, задолго до того замѣтилъ различія въ чтеніяхъ рукописи № 176, и именно въ I и II книгахъ Паралипоменонъ, отъ армянской вульгаты; но такъ какъ онъ имѣлъ цѣлію для предпринятаго имъ новаго изданія Библіи сравненіе рукописныхъ списковъ, равно какъ и печатныхъ изданій лишь армянской вульгаты, то вовсе и не придалъ значенія особен-

ностямъ этой въ своемъ родѣ единственной рукописи *). Я говорю единственной потому, что пересмотрѣлъ я послѣ того находящіеся въ той библіотекѣ рукописные списки армянской Библіи (числомъ свыше 30 ти), но ни въ одномъ изъ нихъ не замѣтилъ слѣда этого новооткрытаго перевода.

Объ этомъ важномъ открытіи я имѣлъ честь представить 6-го іюля того же 1896 г. въ Патріаршей палатѣ особый докладъ Его Святѣйшеству Католикосу всѣхъ Армянъ, который выразивъ мнѣ по сему поводу особое свое удовольствіе, благословилъ меня и разрѣшилъ мнѣ издать книги Паралипоменонъ по новооткрытому переводу.

Въ тоже время, желая возможно скорѣе распространить въ ученомъ мірѣ вѣсть объ этомъ интересномъ открытіи и вмѣстѣ съ тѣмъ разузнать и провѣрить, не сохранилось ли того же перевода и въ другихъ библіотекахъ армянскихъ рукописей, — я поспѣшилъ напечатать въ іюльскомъ номерѣ журнала „Араратъ", въ качествѣ образчика, нѣсколько отрывковъ новооткрытаго перевода книгъ Паралипоменонъ, помѣстивъ параллельно съ ними соотвѣтствующія мѣста изъ армянской вульгаты, съ цѣлію наглядно показать различія въ обоихъ текстахъ.

Когда была уже напечатана моя замѣтка и я былъ занятъ приготовленіемъ изданія новооткрытаго памятника по Эчміадзинскому списку, я получилъ въ октябрѣ 1896 г. изъ Іерусалима пріятное извѣстіе отъ досточтимаго епископа Саака Хабаяна: въ письмѣ своемъ его преосвященство извѣщалъ меня о томъ, что, по прочтеніи имъ моей замѣтки въ „Араратѣ", онъ разыскалъ въ библіотекѣ монастыря св. Іакова рукопись армянскаго перевода Библіи XIII вѣка, въ которой именно I и II книги Паралипоменонъ также отличаются отъ армянской вульгаты и близко сходятся съ отмѣченной мною Эчміадзинской рукописью № 176. По моей настоятельной просьбѣ достоуважаемый епископъ Саакъ охотно согласился подъ личнымъ своимъ наблюденіемъ дать списать для меня съ Іерусалимской рукописи обѣ книги Паралипоменонъ и прислалъ ихъ мнѣ, предварительно самъ сличивъ и тщательно провѣривъ копію съ оригиналомъ; отъ него же я получилъ составленное имъ подробное описаніе Іерусалимской рукописи (см. арм. предисловіе, стр. Գ – Ե) и нѣсколько фотографическихъ снимковъ, которые помѣщены въ концѣ этой книги.

Послѣ того, сличивъ между собою списки Эчміадзинскій и Іерусалимскій, я убѣдился въ томъ что они восходятъ къ одной и той же редакціи;

*) Справедливость однако требуетъ припомнить, что болѣе чѣмъ за 100 лѣтъ до архим. Ехи, а именно въ 1773 году, членъ братіи армянскаго монастыря св. Іакова въ Іерусалимѣ, архимандритъ Саргисъ, при сравненіи находящихся въ томъ же монастырѣ 15-ти списковъ рукописей армянскаго перевода Библіи, замѣтилъ относительно одного изъ нихъ (а именно того, который мы нынѣ издаемъ) слѣдующее: „въ немъ обѣ книги Паралипоменонъ по чтенію совершенно расходятся съ прочими списками, также какъ и съ печатными изданіями Священнаго писанія". (См. описаніе рукописей Вѣнскихъ Мхитаристовъ *о. I. Дашіана*, Вѣна, 1896, стр. 632—634). — Но послѣ этого вѣрнаго замѣчанія архим. Саргисъ также не пытается сдѣлать какое-нибудь предположеніе къ объясненію этого необычнаго и въ высшей степени любопытнаго явленія.

вмѣстѣ съ тѣмъ я замѣтилъ, что второй изъ нихъ не только древнѣе по времени написанія, но и сохранился лучше, такъ какъ менѣе подвергся вліянію армянской вульгаты, которая, напротивъ того, столь сильно отразилась на спискѣ Эчміадзинскомъ, по винѣ позднѣйшихъ переписчиковъ *). По этой то причинѣ, принявшись за изданіе новооткрытаго памятника, я далъ предпочтеніе Іерусалимскому списку и помѣстилъ его въ *текстъ*, списокъ же Эчміадзинскій съ его разночтеніями, между которыми иногда замѣчаются слѣды болѣе древней, превосходной копіи, а мѣстами и болѣе полный текстъ, привелъ я, насколько это было необходимо, въ *примѣчаніяхъ*, съ цѣлію возможно точно и полно возстановить первоначальную редакцію памятника.

Новооткрытый памятникъ представляетъ, по всѣмъ видимостямъ, одно изъ древнѣйшихъ, чтобы не сказать, первыхъ, произведеній армянской письменности, дошедшее до насъ. Если даже возникнетъ сомнѣніе на счетъ подлинности помѣщенной въ концѣ Іерусалимскаго списка записи, упоминающей о личности извѣстнаго переводчика Священнаго писанія, армянскаго католикоса Саака (Великаго — † 439 г.), который, какъ сказано, „перевелъ книги Паралипоменонъ послѣ всѣхъ (книгъ) пророковъ", — все же мы не можемъ не замѣтить отпечатка глубокой древности на новооткрытомъ переводѣ; въ этой древности и заключается его первостепенная важность. Самый языкъ памятника чрезвычайно интересенъ по изяществу изложенія, по чистотѣ и ясности слога. Кромѣ того, заслуживаетъ вниманія рядъ архаическихъ словъ, не встрѣчающихся въ извѣстныхъ до сихъ поръ сочиненіяхъ армянской письменности; таковы — *բերանապարիշտ, զմծեալ, ամջեռեալս, պատպարհէլ, քարապատի, քակերով, քեփուր։*

Далѣе, мнѣ кажется, что, благодаря новооткрытому памятнику, мы бы могли выяснить себѣ, какимъ образомъ исполненъ былъ *второй* армянскій переводъ Библіи, т.-е. переводъ съ греческаго, а именно: переводчики, повидимому, совершили свою работу, имѣя постоянно передъ глазами *первый* армянскій переводъ; они сохранили изъ него то, что было согласно съ греческимъ текстомъ Семидесяти толковниковъ и измѣнили въ немъ то, въ чемъ они видѣли несогласіе съ послѣднимъ, въ томъ числѣ и ороографію собственныхъ именъ.

Переходя къ вопросу о томъ, дѣйствительно ли новооткрытыя книги Паралипоменонъ переведены съ сирскаго, я позволю себѣ слѣдующимъ образомъ формулировать свое мнѣніе, оставляя детальное изслѣдованіе вопроса и

---

*) Къ вліянію армянской вульгаты я отношу, между прочимъ, находящіяся въ спискѣ Эчміадзинскомъ и совершенно отсутствующія въ Іерусалимскомъ — *Предисловіе, Оглавленіе* и дѣленіе на *Главы*, вполнѣ согласныя съ обычнымъ текстомъ Семидесяти толковниковъ. При этомъ слѣдуетъ замѣтить, что дѣленіе на главы въ Эчміадзинскомъ спискѣ двойное: одно согласно „Франкской", какъ сказано въ рукописи, т. е. Латинской Библіи, а другое, повидимому, болѣе древнее, имѣющее 44 главы въ Первой книгѣ и 19 (sic!) во Второй.

заключительный выводъ спеціалистамъ сиріологамъ. Тотъ сирскій текстъ *) книгъ Паралипоменонъ, съ которымъ я сравнивалъ новооткрытый нашъ переводъ, вообще мало имѣетъ сходства съ послѣднимъ и, напротивъ того, сближается болѣе съ текстомъ греческимъ или Семидесяти толковниковъ; особенно близокъ къ новооткрытому армянскому переводу еврейскій оригиналъ. Не смотря на это, я предполагаю, что *первый* армянскій переводъ книгъ Паралипоменонъ исполненъ съ сирскаго языка, съ того древняго сирскаго перевода, который извѣстенъ подъ названіемъ Таргум'а, который въ свою очередь былъ очень близокъ къ Еврейскому оригиналу, будучи переведенъ съ этого послѣдняго, и который потомъ исчезъ, будучи замѣненъ другимъ сирскимъ переводомъ, но уже съ греческаго, — точь въ точь, какъ это случилось съ армянскимъ переводомъ Библіи.

Если оправдается это предположеніе послѣдующими изслѣдованіями, то очевидно, какую важность пріобрѣтетъ нашъ новооткрытый переводъ также для критическаго изученія еврейскаго оригинала, въ особенности же для возстановленія Таргум'а. Мало этого: я полагаю, что настоящій памятникъ могъ бы способствовать рѣшенію вопроса, касающагося и грузинскаго перевода Священнаго писанія, вопроса, который по сіе время остается еще открытымъ. Повидимому, съ грузинскимъ переводомъ Библіи случилось тоже, что и съ сирскимъ и армянскимъ: будучи, по всему вѣроятію, переложенъ сначала съ перваго армянскаго перевода, въ самомъ началѣ V вѣка, переводъ грузинскій подвергся потомъ измѣненію и исправленію также согласно тексту греческому или Семидесяти толковниковъ; грузинологамъ теперь остается указать болѣе точнымъ образомъ слѣды армянскаго перевода на грузинской Библіи.

Въ заключеніе приношу свою глубокую благодарность: члену братіи монастыря Св. Іакова въ Іерусалимѣ, епископу Сааку Хабаяну, оказавшему мнѣ цѣнную услугу доставленіемъ копіи съ замѣчательной рукописи Іерусалимской и вообще просвѣщеннымъ содѣйствіемъ своимъ настоящему изданію; членамъ Эчміадзинской братіи—ученому о. Галусту Теръ-Мкртчіану (онъ же Міабанъ) и почтенному библіотекарю Патріаршаго книгохранилища, архимандриту о. Сааку Аматуни за оказанное ими мнѣ весьма существенное содѣйствіе по перепискѣ рукописи Эчміадзинскаго списка, сличенію и провѣркѣ этого послѣдняго съ другими списками и пр.

*Гр. Х.*

---

*) Biblia sacra polyglotta Londinensia Briani *Walton*, Londini, 1654—1657, T. II. Liber Paralipomenon, pag. 628—817.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Ծանօթ է բանասէրներին, որ՝ ըստ գրաւոր աւանդութեան, Ածաշունչ մատեանը թարգմանուել է հայերէն երկու անգամ՝ նախ Ասորերէնից և ապա Յունարէնից, որ կոչվում է Եօթանասնից թարգմանութիւն։ Սակայն մինչև այսօր մեզ հասած հայերէն Ս. Գրքի գրչագիրները, որպէս և հետևաբար բոլոր տպագիրները, միայն Եօթանասնից թարգմանութիւնն են ներկայացնում։ Արդարև, քննական գրականութեան մէջ այլ և այլ ժամանակ նկատուած են եղել ենթադրութեամբ Ասորերէնից թարգմանութեան հետքեր հայ Ածաշնչի առանձին բառերի ու նախադասութիւնների մէջ, բայց ամբողջ հատուածներ, գլուխներ կամ գրքեր մինչև այժմ դեռ չէր յաջողուել գտնել։ 1896 թ. ամառը՝ զբաղուելով երեք շաբաթի չափ Ս. Էջմիածնի մատենադարանում և նիւթեր ժողովելով Մովսէս Խորենացու պատմութեան վերաբերեալ երկրորդ հետազօտութեանս համար, նիւթեր, որոց մէջ Ս. Գիրքը, ինչպէս ես կարծիք եմ յայտնել այլ տեղում, նոյն պատմագրի կարևորագոյն աղբիւրներից մէկն է,—ես գտայ բաղդաւոր դիպուածով ԺԷ. դարու մի գրչագիր Ածաշնչի մէջ (№ 176 ըստ Կարենեանցի Ցուցակին) մինչև այսօր բնաւ անծանօթ և սովորական հայ թարգմանութիւնից բոլորովին տարբեր մի այլ թարգմանութիւն, և այն՝ միայն Ա. և Բ. Մնացորդաց Գրքերի մէջ պահուած։ Սոյն գրութեան լեզուից երևում է, որ թարգմանութիւնը շատ հին է և ընտիր, և որովհետև նա շատ հեռու է Եօթանասնից կամ Յունական թարգմանութիւնից, ես ենթադրեցի — արդեօք Ասորերէնից թարգմանութիւն չէ՞ սա, այսինքն՝ չէ՞ գտնուել արդեօք հայ Ածաշնչի այն հնագոյն կամ նախնական թարգմանութեան բեկորներից, որի մասին յիշում է մեծ թարգմանիչների աշակերտ Կորիւն։

Ածաշնչի յիշեալ գրչագիրը այլ գրչագիրների հետ միասին գտնվում էր այն ժամանակ Մայր Աթոռի մատենադարանի առաջին դահլիճում, ուր՝ ի միջի այլոց, պարապում էր Ս. Գրքի գրչագիրների բաղդատութեամբ Ս. Էջմիածնի Միաբան Հ. Եղիա Հաւան-Ջալալեանց։ Արժանայիշատակ Հ. Եղիան, ինչպէս յետոյ ինքը բացատրեց, վաղուց նկատել էր № 176 գրչագրի, և յատկապէս Ա. և Բ. Մնացորդաց Գրքերի սովորական օրինակներից տարբեր ընթերցուածները, բայց դիտաւորութիւն ունենալով Ածաշնչի իւր ձեռնարկելիք նոր տպագրութեան համար միայն Եօթանասնից առած ծանօթ հայ թարգմանութեան գրչագիրների որպէս և տպագիրների համե-

280-2009

մասութիւնը, նա ամենևին կարևորութիւն չէր տուել այդ եզական օրինակի խոշոր տարբերութիւններին *)։ Ասում եմ եզական, որովհետև աչքից եմ անցրել ես այնուհետև Մայր Աթոռում գտնուած Ածաշնչի գրչագիր օրինակները (թուով երեսնից աւելի), բայց և ոչ մէկի մէջ չեմ նկատել այս նորագիւտ թարգմանութեան հետքերը։

Այս նշանաւոր գիւտի մասին ես պատիւ ունեցայ նոյն 1896 թ. յուլիսի 6'ին առանձին զեկուցումն ներկայացնել Վեհարանում Նորին Վեհափառութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ՝ իւր գոհունակութիւնը յայտնելով այս առթիւ, բարեհաճեց ինձ օրհնել և թոյլատրել տպագրելու Ա. և Բ. Մնացորդաց Գրքերը ըստ նորագիւտ թարգմանութեան։

Նոյն իսկ միջոցին՝ ցանկալով կարելոյն չափ շուտով արծարծել գիտնական աշխարհում այս նշանաւոր գիւտի լուրը և միևնոյն ժամանակ ստուգել տեղեկանալ՝ չէ՞ պահվում արդեօք նոյն թարգմանութիւնը և միւս հայ մատենադարաններում,— ես շտապեցի «Արարատ» ամսագրի յուլիս համարում հրատարակել իբրև նմոյշ միքանի հատուած այս նորագիւտ թարգմանութեան՝ զուգընթացաբար նշանակելով Եօթանասնից կամ՝ որ նոյնն է, տպագիր հայ թարգմանութիւնը՝ երկու բնագրի տարբերութիւնները ակնյայտնի կերպով ցոյց տալու համար։

Երբ այս յօդուածը լոյս էր տեսել արդէն և ես զբաղուած էի նորագիւտ թարգմանութիւնը ամբողջովին տպագրութեան պատրաստելով ըստ Էջմիածնի գրչագրին, նոյն 1896 թ. հոկտեմբերին մի ուրախալի նամակ ստացայ Ս. Երուսաղէմի Գերապատիւ Սահակ եպիսկոպոս Խապայեանից, որով Սրբազանը հաճել էր հաղորդել ինձ, թէ՝ «Արարատում» իմ յօդուածս կարդալուց յետոյ, նա գտել է Ս. Յակովբեանց վանքի մատենադարանում՝ ԺԳ. դարու մի գրչագիր Ածաշունչ, որի մէջ յատկապէս Ա. և Բ. Մնացորդաց գրքերը նոյնպէս տարբեր խմբագրութիւն են ներկայացնում Եօթանասնից թարգմանութիւնից և շատ մօտ են իմ գտած Ս.

---

*) Արդարութիւնը սակայն պահանջում է յիշել, որ Հ. Եղիայից աւելի քան 100 տարի առաջ, այն է 1773 թուին «Սարգիս վրդ Հաճնցի տոհմիւ Մալեան, միաբան և ժամօրհնող ի Ս. քաղաքն Երուսաղէմ ի Ս. Յակովբեանց հրաշալի տաճարս»,— հին կտակարանի 15 գրչագիր օրինակները իրար հետ բաղդատելիս, նկատում է մի օրինակի մասին, այսինքն այն, որ տպագրում ենք մենք ներքևում, թէ նորա մէջ «Առաջին և Երկրորդ Մնացորդաց գիրքն յայլմէ թարգմանչէ թարգմանեալ. ըսեղիս տեղիս թէպէտ նոյնեցայ, սակայն կարի հեռի է ի տպագրելոյն (իմա՛ Ոսկանի և Մխիթար Աբբայի տպագրած Ածաշունչը)։ Բայց այս ճիշտ նկատողութիւնը անելուց յետոյ Հաճնցի Սարգիս Վարդապետն ևս փորձ չէ անում ո՛ր և է ենթադրութիւն կամ եզրակացութիւն առաջարկելու այդ արդարև արտասովոր և վերին աստիճանի հետաքրքրաշարժ երևոյթը բացատրելու համար։ (Տես Հ. Յ. Տաշեանէ «Ցուցակ հայեր. ձեռագրաց Մատեն. Մխիթարեանց ի Վիէննա», էջ 632—634.) Այս կէտի վերայ դարձրեց իմ ուշադրութիւնը գերապ. Սահակ եպս. Խապայեանը ինձ գրած մի առանձին նամակում (1896, դեկտեմբերի 16)։

էջմիածնի № 176 գրչագրին։ Իմ յատուկ խնդրանօք Գերապատիւ Սահակ Սրբազանը սիրով յանձն առաւ արտագրել տալու ինձ համար Ս. Երուսաղէմի գրչագրից Մնացորդաց Գրքերը իւր իսկ հսկողութեամբ և ուղարկեց ինձ՝ նախապէս խնամքով համեմատելով արտագրութիւնը բնագրի հետ։ Սրբազանից ես ստացայ նաև իւր կազմած նոյն Երուսաղէմի գրչագրի մանրամասն նկարագրութիւնը և մի քանի լուսանկար, որ տեղաւորուած են գրքիս վերջում։

Այնուհետև համեմատելով Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի գրչագիրների ընդօրինակութիւնները ես համոզուեցի, որ նոքա միևնոյն խմբագրութիւն են ներկայացնում։ Միևնոյն ժամանակ ես նկատեցի, որ երկրորդը դոցանից ոչ միայն հնագոյն է ըստ ժամանակի գրութեան, այլ և համեմատաբար աւելի ընտիր է իւր ընթերցուածներով և մանաւանդ աւելի զերծ սովորական՝ Եօթանասնից Թարգմանութեան յետին ազդեցութիւնից, որ՝ ընդհակառակը, այնչափ զգալի է Ս. Էջմիածնի օրինակի վերայ՝ յետ ժամանակի ընդօրինակողների շնորհիւ։ Այս պատճառով է, որ նորագիւտ Թարգմանութիւնը տպագրելու ձեռնարկելիս՝ բնագիր ընտրեցի ես Ս. Յակոբեանց օրինակը, իսկ Ս. Էջմիածնինը իւր տարբեր ընթերցուածներով, որոց մէջ երբեմն պահուած են երևում ընտրելագոյն օրինակի հետքեր և տեղ-տեղ նաև բնագրի աւելի լիակատար ընդօրինակութիւն, գրի՝ որչափ որ այդ պէտք էր, ծանօթութեանց մէջ՝ կարելոյն չափ ճիշտ և կատարեալ կերպով վերականգնելու գրուածքի նախնական խմբագրութիւնը։

Ներկայ հրատարակութեան կազմութեան եղանակի մասին կը խօսեմ մանրամասն փոքր ինչ յետոյ, իսկ այժմ կարևոր եմ համարում կանգ առնել երկու գրչագիրների նկարագրութեան վերայ։

Աստուածաշունչ՝ գրչագիր Ս. Էջմիածնի մատենադարանի, № 176
(ըստ Կարինեանցի ցուցակին, այժմ՝ № 183)։
ՌՁԴ—1635 թ.

Թուղթ՝ 648. էջ 1296։ Մեծութիւն՝ 27×20 սանթիմ։ Գրութիւն՝ երկսիւն $19{,}_{75}\times 6{,}_{5}$ ս.։ Տող՝ 46 ընդհանրապէս։ Գիր՝ բոլորգիր օ գրութեամբ և տարբեր ձեռքերով. տեղ-տեղ լուսանցքում սրբագրութիւններ։ Նիւթ՝ մասամբ հաստ կաթնագոյն մագաղաթ և մասամբ կոկած թուղթ։ Կազմ՝ կաշեպատ հին և ընտիր։ Հանգամանք՝ լաւ պահպանուած։ Խորան կամ կիսախորան, զարդագիր, զարդեր կամ մանրանկար՝ չկայ։ Ժամանակ գրութեան՝ անյայտ բուն յիշատակարանի ընկնելովը, բայց 1635 թուից բաւական առաջ։ Գրիչ՝ Ղուկաս՝ հնագոյն (մագաղաթի վերայ), Գրիգոր դպիր Գառնեցի կամ Ապարանեցի (թղթի վերայ) և Յակոբ՝ նորագիր (մասամբ թղթի և մասամբ մագաղաթի վերայ). իւրաքանչիւրի գիրը տարբեր է։ Կազմող՝ Յակոբ։ Ստացող՝ Փր. Մխիթարիչ։ Յիշատակագրութիւն՝ բազմաթիւ. Ղուկաս գրչից՝ թղթ.

392$^{ա}$ (անթուական), Գրիգոր գրչից՝ թղթ. 101$^{ա}$, 252$^{բ}$, 258$^{ա}$, 265$^{բ}$, 288$^{բ}$, 501$^{ա}$ (բոլորը անթուական), և Յակոբ գրչից՝ թղթ. 83$^{ա}$ և 223$^{ա}$ (թուականով).— «Ի թվին ՌՉԴ. Նորոգեցաւ ձեռամբ Թարմատար ՅՃԲ գրչի։» — «Նորոգեցաւ և կազմեցաւ Ճաշոցս գիրքս ի թվականիս ՌՉԴ...»։

Ա. և Բ. Մնացորդաց Գրքերի նորագիւտ թարգմանութիւնը՝ չը հաշուելով նոյա Նախադրութիւնը և Ա. գրքի գլուխների բովանդակութիւնը, որոնք յար և նման են տպագրին կամ Եօթանասնից թարգմանութեան,— բռնում է Էջմիածնի գրչագրի 191$^{ա}$ մինչև 222$^{բ}$ թղթերը, ընդ ամէնը 32 թուղթ, գրուած երկու գրիչների ձեռքով՝ Յակոբի (Ա. և Բ. Մնացորդաց Գրքերի միայն սկիզբը՝ Ա. գլուխ և վերջը՝ ԼԶ. գլուխ — մէկ-մէկ թուղթ) և Գրիգորի (Մնացեալ մեծագոյն մասը)։

### Ճաշոց՝ գրչագիր Ս. Յակոբեանց վանուց Երուսաղէմի. ՉԺԸ—1269 թ.

Թուղթ՝ 601. էջ՝ 1202։ Մեծութիւն՝ 37×26 սանթիմ։ Գրութիւն՝ երկսիւն 29×9,1 ս.։ Տող՝ 48 ընդհանրապէս։ Գիր՝ բոլորգիր ըստ բաւականին մաքուր, ի լուսանցս տարբեր և աղճատ նոտր գրով սրբագրութիւնք կամ մոռացածները յաւելուածք։ Նիւթ՝ թուղթ պինդ և յղկեալ։ Կազմ՝ հին տախտակեայ կաշեպատ. կաշեայ փակարանին վերայ գլխագրերով «Ազաք, եւ կազմող յիշէ ի Տր»։ Հանգամանք՝ լաւ պահպանուած, սակաւ ի լուսանցս ցեցակեր։ Խորագիր և Վերնագիր՝ կարմրաւ. Սկզբնատառք՝ երփնեայ և ոսկեզարդ ծաղկագիր. «Արարածոց» առաջին երեսը ամբողջ ծաղկագիր. Աւետարանների առաջին երեսները երկաթագիր ոսկեզօծ։ Լուսանցազարդք՝ 290 հատ մեծանկարք և մանրանկարք, կէսք երփնեայ և շքեղ, կէսք միայն կարմրաւ և պարզ։ Պատկեր՝ մեծ և փոքր 40 հատ։ Խորան և Կիսախորան՝ 58 հատ, ամէնն նուրբ գործ, ոսկեզարդ և երփնեայ։ Ժամանակ ծաղկման և գրութեան՝ ՉԺԸ—1269 թ։ Գրիչ՝ Մխիթար, Յակոբ և Մինաս, թէև գիրը միակերպ։ Տեղի՝ հաւանականաբար Եզնկա։ Տէր՝ Սարգիս արքեպ֊ս վիճակին Եկեղեաց։ Ստացող՝ Մարգարէ վրդ. և Խօճայ Զիրաք։ Յիշատակագրութիւն՝ բազմաթիւ և կրկինք, որք երեք խումբի կը բաժնուին. Ա. անոնք, որ բուն տիրոջ կը վերաբերին. Բ. յաջորդ ստացողաց, և Գ. գրչաց։— Թղթ. 290$^{բ}$. «Ի թուականիս Հայոց ՉԺԸ։ Արդ գրեցաւ պրակս աստուածային որ մարգարէին Եսայիա հրամանաւ և արդեամբք տեառն Սարգսի սրբասէր և արհիական եպիսկոպոսի և նորին հարազատ որդւոյ աստուածասէր և քաջապահ իշխանին պարոն Յովհաննիսի ի վայելումն անձին իւրոյ և ի պէտս որդւոյ եկեղեցւոյ և ի խրատ աստուածատուր և գեղարդյս զաւակաց իւրոց Ներսիսի և Գրիգորի։» — Թղթ. 405$^{բ}$. «Փառք արարչին ամենայն արարածոց անմահ Թագաւորին երկնաւորի Քրիստոսի Այ մերոյ, ամէն։ Զստացաւղ

այսմ Ածաշունչ տառիցս համահաւաք կատարանաց հնոց և նորոց զառաքելաշնորհ և զարհի եպ̃ս մեր և զվերադիտող մեծի վիճակին Եկեղեաց գաւառիս Եզնկայիս զտէր Սարգիս և զաստուածասէր և զամենիմաստուն իշխանն զպարոն Յովհաննէս հանդերձ աստուածատուր զաւակաւք իւրովք յիշեսջիք ի Տէր...»

* * *

Երկու գրչագիր օրինակն էլ՝ յատկապէս Մնացորդաց Գրքերի վերաբերմամբ, թէև միևնոյն խմբագրութիւն են ներկայացնում, բայց ունին և բաւական մանր տարբերութիւններ, որովհետև այլ և այլ օրինակներից են եղել ընդօրինակուած։ Էջմիածնայ օրինակի գլխաւոր տարբերութիւնը Երուսաղէմի օրինակից այն է, որ նա, ինչպէս ասացի, ենթարկուած լինելով Եօթանասնից թարգմանութեան արտաքին ազդեցութեան՝ ունի Նախադրութիւն կամ Առաջաբան, Յանկ գլխոց Ա. և Բ. գրոց և Գլխահամար *), որոնք բնաւ պակասում են Երուսաղէմի օրինակում։ Եօթանասնից ազդեցութեանն եմ վերագրում ես և այն մանր յաւելուածները Էջմիածնի օրինակում. զորօրինակ՝ Ա. Մնացորդաց Ա. գլխի 4-որդ համարատան մէջ—«Որդիք Նոյի՝ Սեմ...», 14 համար. «Եւ որդիք Սեմայ և Ուզ և Ուղ». նոյն առաջին գլխի վերջում՝ «իշխան... իշխան» փոխանակ՝ «առաջնորդ» ըստ Երուսաղէմեան օրինակի. վերջապէս, նոյն գրչագրի Բ. գրքի ԼԵ. գլխի վերջը (համ. 26—27) և ամբողջ ԼԶ. գլուխը նոյնպէս Եօթանասնից թարգմանութեան հետքեր են կրում։ Ընդհակառակը՝ արժանի են ուշադրութեան երկու գլուխ երկու օրինակներումն էլ (Ա. Մնաց. գլ. ԻԶ. համ. 12—32, Իէ. համ. 1—15), որից երևում է, թէ Եօթանասնից հայ թարգմանութիւնը կատարուած պէտք է լինի մի այլ՝ հնագոյն, գուցէ Ասորերէնից արած թարգմանութեան վերայ և նորան հետևելով։

Գալով երկու օրինակների գրութեանը, նախ Էջմիածնինը օ է ամեն տեղ, ուր որ Երուսաղէմինը միշտ ու է։ Երկրորդ՝ յատուկ անունների մէջ յաճախ ա է պատահում Էջմ. օրինակում, ուր Երուսաղէմինը չ ունի. թէև երբեմն պատահում է և ընդհակառակը։ Երրորդ՝ Երուսաղ. օրինակին յատուկ է մի քանի դէպքում միաւորիչ ա յօդի կրճատումը, որ չունի Էջմիածնինը. օրինակ՝ վերջինս դնում է «զինապետ», «ձեռնատու», «աշխարհահամար», մինչդեռ Երուսաղէմեանը՝ «զինպետ», «ձեռնտու», «աշխարհամար»։ Չորրորդ՝ Էջմ. օրինակը չափազանց հակումն ունի՝ մի կողմից դէպի անտեղի կիրարկումն յ տառի բառի վերջում (օր. ի

*) Գլխահամարները կրկնակի բաժանմունքով են. մէկը՝ ըստ երևութին հնագոյն — Ա. Բ. Գ... մինչև ԽԴ. Առաջին Մնացորդաց, և Ա. Բ. Գ... մինչև ԺՀ ([illegible]) Երկրորդ Մնացորդաց գրքում, և միւսը՝ ըստ բաժանման Ֆռանկաց («Փռ.») կամ Լատինաց, այսինքն այն, որ գործածական է Ածաշնչի տպագիր օրինակներում, որով Ա. Մն. գիրքը քսան և ինն գլուխ ունի և Բ. Մն. երեսուն և վեց գլուխ։

նայ, նմայ, սայ, ասայ) և - տառի բառի միջում (օր. սեղան-ոյն, մարդ-ոյ, գր-ոյն, կաց-ոյց, Թող-ոյր), և միւս կողմից՝ դէպի անկանոն յապաւումն նոյն յ և - տառերի (օր. արքա, ծառա, ծառաի, գրո, ի գրո, գործո, նորո, պխտո, իմո, ծառաուԹիւն, արքաուԹիւն, զա, զաին, կաին, և կամ՝ որդո, տարօջէ, Թշնամո, ոսկո)։ Նոյն երևոյԹը՝ այսինքն անտեղի կիրարկումն կամ յապաւումն յ և - տառերի ունի և Երուսաղէմեան օրինակը, բայց համեմատաբար շատ սակաւ։ Վերջապէս՝ Էջմ. օրինակին յատուկ է նոյնպէս և յաճախ կիրարկումն ֆ տառի՝ փոխանակ փ՛ի մանաւանդ առաջնեկայ բառերի մէջ. անֆ, անֆր, անֆէն, անֆրէն, անֆրանիկ։ Մնացեալ տարբերուԹիւնները ընԹերցողը կը գտնի մի առ մի նշանակած ծանօԹուԹիւնների մէջ. իսկ երկու գրչագիր օրինակների արտաքին ձևի և բուն գրուԹեան մասին ճիշտ գաղափար տալու համար՝ աւելորդ չը համարեցի դնել գրքիս վերջը միքանի լուսատիպ նմանահանուԹիւն, այն է — Ա. Մնացորդաց Ա. գլխից և Բ. Մնացորդաց Ա. Բ. Գ. և Դ. գլուխներից։

* * *

Ներկայ հրատարակուԹիւնը բաղկացած է երկու մասից՝ բնագրից և ծանօԹուԹիւններից։

Ա. Բնագրում տեղաւորել ենք մենք Երուսաղէմի օրինակը՝ ամենայն հաւատարմուԹեամբ հետևելով գրչագրին *) և միայն մի քանի դէպքում, ուր՝ մեր կարծիքով, ակներև տառասխալներ կային, ուղղագրեցինք դոցա, սակայն ամեն անգամ ճշտուԹեամբ պահպանելով ծանօԹուԹիւնների մէջ մեզ սխալ երևցած ձ և երը։ Փակագծերում դրինք նաև բուն գրչագրի էջահամարները (կամ երեսահամարները) Ա. և Բ. տառերով որոշելով աջ և ձախ երեսը և նոցա կից՝ 1 ու 2 մանր Թուանշաններով երեսի առաջին և երկրորդ սիւնակը (օր. ԹղԹ. 196Ա¹—196Ա²—196Բ¹—196Բ²)։ Ինչպէս յիշեցի՝ ոչ ՆախադրուԹիւն, ոչ գլուխների Ցանկ և ոչ Գլխահամար կայ Երուսաղ. օրինակում, որ ունի սակայն Էջմիածնինը ԵօԹանասնից ԹարգմանուԹեան օրինակներից փոխ առած լինելով. ուստի և ՆախադրուԹիւնը ու գլուխների Ցանկը բնաւ բաց Թողինք մեր հրատարակուԹեան մէջ, յարմարուԹեան համար դնելով մեզանից հ ա մ ա ր ա ն ն ե ր ը (լուսանցքում՝ աջ և ձախ կողմից) համաձայն Զօհրապի հրատարակուԹեան (Վենետիկ, 1805 Թ.)։ Նոյնպէս մեզանից ենք աւելացրել խորագրանիշ երեսի խորագրերը, որ ունին տեղ-տեղ համառօտ կերպով և մեր երկու օրինակները՝ Էջմիածնինը սովորաբար վերևից, իսկ Երուսաղէմինը՝ ներքևից։

---

*) Նաև այսպիսի դէպքերում. օր. էջ 44. սիւնակ Ա. տող 4 և 11—12 «վեշտասաներքորդ», «երրորդ քսաներքորդ», «չորրորդ քսանեքորդ», էջ 61 սիւն. Ա. տող 10—12 «Լամպաւորացն» և «Լամբաւորք», էջ 65 սիւն. Բ. տող 6 (վերջից) «դարձին» (փոխ. դարձցին)։

Բնագրի վերաբերմամբ անելու է.— ա. Գլխագրերը յատուկ անուններում՝ հետեւելով սովորութեան, գրինք մեզանից, որովհետեւ երկու օրինակներումն ես գլխատառ չը կայ։— բ. Նոր տողը Երուսաղէմի գրչագրի պահեցինք ամէն անգ, ուր որ իմաստին հակառակ չէր այդ. ներհակ դէպքում՝ նոր տողը չենք պահպանել և միայն ծանօթութիւնների մէջ ենք յիշել նորա գոյութեան մասին՝ որ և է կարեւորութեան համար։— գ. Կէտադրութիւնը ամբողջապէս մերն է, որովհետեւ այդ խնդիրը՝ ընդհանրապէս հայ գրչագիրներին յատուկ սովորութեամբ, շատ խառն է և չփոթ նաեւ մեր երկու օրինակներում և՝ որ գլխաւորն է, բոլորովին զուրկ որ և է կանոնից։— դ. Համառօտագրութիւնից կամ պատուագրերից, որ շատ սովորական են ընդհանրապէս հայ գրչագիրների և մասնաւորապէս մեր օրինակների մէջ, մենք պահպանեցինք միքանիսը միայն. օրինակ՝ Տր, Տն, Ած, Իէղ, Եմ և այլն՝ ընթերցանութեան մէջ հնարաւոր թերիմացութիւնների առաջն առնելու դիտմամբ։— ե. Նոյնպէս բնագրում պահպանեցինք ամէն անգամ Երուսաղէմի գրչագրի տառօրինակ կամ արտասովոր ուղղագրութիւնը, որ մեր կարծիքով արժանի էր որ և է ուշադրութեան. հակառակ դէպքում՝ մենք դոյա ուղղագրեցինք բնագրում, և խակական ձեր գրինք ծանօթութիւնների մէջ՝ բացի մի քանի դէպքից, ուր՝ բառ սովորական ուղղագրութեան, աւելորդ կամ պակաս յ և ւ-ն գործածուած. օր. նորայ, նմայ կամ թէ՝ ի վերա, կամ որդւոյ, ի տեղւոջէ և այլն։— զ. Յատուկ անունների վերաբերմամբ նկատելու է, որ նոքա թէ Երուսաղէմի և թէ Էջմիածնի օրինակներում շատ տարբեր, երբեմն նաև աննման լինելով հայ Եօթանասնից Թարգմանութեան անուններին, միևնոյն ժամանակ շատ աղաւաղուած են իրենց անսովոր լինելու, մանաւանդ մի քանի տառերի իրար հետ նմանութիւն ունենալու, որպէս և ընդօրինակողների անփոյթ լինելու պատճառով։ Եւ թէպէտ այդ աղճատումների մեծագոյն մասը մենք կարող էինք բաւական ապահովութեամբ վերականգնել՝ հետեւելով նոյն Մնացորդաց Գրքերի Եբրայական բնագրին, որի հետ այնչափ մերձաւորութիւն ունի մեր նորագիւտ թարգմանութիւնը, բայց զգուշացանք գործնից և անփոփոխ թողինք նոյա՝ չուզելով մեր սրբագրութեամբ որ և է արգելք կամ թերիմացութիւն առաջացնել մասնագէտ Եբրայագէտներին և Ասորագէտներին, որոնք կարող են զբաղուել այս խնդրով։ Նոյնպէս ամենայն խնամքով պահպանեցինք միևնոյն յատուկ անուան տարբեր գրութիւնը այլ և այլ տեղում. օրինակ՝ Յաբէթ, և մի տող յետոյ՝ Յափեթ, Հռէկիմայ և Հռէկիմայ, Յուդա և Յուդայ (Սեռակ. հոլով), Շոլգայ և Շոդա, Ոքրէդ և Ոքրէք, Յու և Յէու, Յոնաթան և Յոնաթան (շատ յաճախ՝ ո— և ով), Սէոան և Սէոան, Եթի և Յեթի, Ովբ և Ովբ (վերջին տառերի նմանութեան պատճառով), Եղիազար և Եղիաօր, Կաաթ և Գաաթ, Յէրոու Յորովացիք և Յէրուօվացիք, Շեմ և Սեմ, Շաւուղ և Սաւուղ և այլն։ Միայն մի-երկու՝ մեր կարծիքով, անհրաժեշտ դէպքում, ուր տառասխալները

ակներև էին և իմաստը գորանից կարող էր չփոթուել, մենք թոյլ տուինք մեզ սրբագրել կամ՝ լաւ է ասել, վերականգնել աղաւաղած ձևերը, հետևելով հռչակաւոր Reuss գիտնականի Ս. Գրոց Եբրայականից Ֆրանսիական թարգմանութեան *), սակայն ամեն անգամ ծանօթութիւններում չակերտների մէջ ճշտիւ դնելով գրչագրի նոյն աղճատուած ձևերը։ — է. Երուսաղէմի օրինակի պակաս հատուածը, որ ակներև կերպով առաջացել են ընդօրինակողների մոռացութիւնից կամ անհոգութիւնից և որ սակայն պահուել են Էջմիածնի օրինակում (դոքա շարուած են ծանօթութիւնների մէջ նօտրագրով), մենք լրացրինք ամեն անգամ այս վերջինից առնելով և տեղաւորեցինք բնագրում՝ շղագիր տառերով և անկիւնաւոր փակագծերում, եթէ միայն այդ հատուածները առաջացել չէին Էջմիածնի օրինակում ըստ երևութին յետոյ ուրեմն՝ Եօթանասնից թարգմանութեան ազդեցութեամբ՝ ընդօրինակողների շնորհիւ, ուրեմն անհարազատ, յետ ժամանակի ներմուծումներ չէին, ինչպէս վերը յիշած տարբեր ընթերցուածները. (տես էջ Ե)։ Այդ ազդեցութիւնը որոշելիս՝ մենք զգուշութեամբ աչք ենք պահել Եբրայական բնագրի վրայ (Reuss և Կ. Պոլսի Ս. Գրոց նոր հրատարակութիւնը, 1895), և եթէ Էջմիածնի օրինակի աւելորդ մասերը անհամաձայն էին Եբրայականին, սովորաբար չենք մտցրել նոցա բնագրի մէջ և գոհ ենք եղել նօտրագրով նշանակելով նոցա ծանօթութիւնների մէջ միայն։ Եւ ընդհակառակը, Էջմիածնի օրինակի պակասները լրացրել ենք ծանօթութիւնների մէջ Երուսաղէմի օրինակով ամեն անգամ մէջ բերելով այդ պակասները սովորական տառերով (ոչ նօտր)՝ չակերտների մէջ և փակագծերում։ — ը. Պակասորդների առթիւ անհրաժեշտ է յիշել, որ Երուսաղէմի օրինակում Մնացորդաց Բ. գիրքը աւարտւում է Լե. գլխի 25-րդ համարանով, որին անմիջապէս հետևում է և ընդօրինակողի յիշատակարանը, մինչդեռ Էջմիածնինը աւելցնում է ևս երկու համարատուն (26 ու 27) և ապա մի ամբողջ գլուխ՝ ԼԶ-րդ (թէև առանց գլխահամարի), որ կայ թէ Եբրայական բնագրում և թէ Եօթանասնից թարգմանութեան մէջ։ Սակայն համեմատելով այդ վերջին գլուխը Եբրայական բնագրի հետ, որին՝ ինչպէս արդէն յիշեցի, ընդհանրապէս շատ մօտ է մեր նորագիւտ թարգմանութիւնը, մենք տեսնում ենք նոցա մէջ մեծ տարբերութիւն։ Էջմիածնի օրինակի ԼԶ-րդ գլուխը ակներև կերպով կրում է հետքեր հայ Եօթանասնից թարգմանութեան, այն է՝ յիշեալ գլխում կան մի շարք հատուածներ, որ բնաւ չունի Եբրայականը (հմմտ. համար. 2, 3, 4, 5), և ընդհակառակը՝ գտնւում են Յունական թարգմանութեան մէջ։ (Տե՛ս և Կ. Պոլսի 1895 թ. Ա̃ծաշունչը)։ Այս հանգամանքը ստիպում է ինձ այսպիսի ենթադրութիւն անել. կարող է պատահած լինել, որ հնագոյն կամ Ասորերէնից արած հայ թարգմանութիւնից ընկած լինէր այդ գլուխը

---

*) La Bible, traduction nouvelle avec introductions et commentaires, Paris. 1878.

և կամ զուցէ ի սկզբանէ բնաւ չը կար նա այդ Թարգմանութեան մէջ և յետոյ միայն էջմիածնի օրինակի ընդօրինակողը լրացրած լինի նորան՝ երկրորդ կամ Եօթանասնից Հայ Թարգմանութիւնից առնելով։

Բ. Ծանօթութիւններու մէջ տեղաւորել ենք. — ա. բնագրից, կամ որ նոյնն է՝ Երուսաղէմի օրինակից որ և է կերպով տարբերուող էջմիածնի օրինակի ընթերցուածները, սովորաբար նօտրագրով շեշտելով այդ ընթերցուածները և կամ որ և է կողմից ուշադրութեան արժանի նոցա որոշ մասերը։ Հետևելով բնագրի լեզուին՝ տարբեր ընթերցուածների նկարագրութիւնը գրինք գրաբար։—բ. Միւս գնելու է և լայն շարուած բառերի վերայ, որոց կարևորութիւնը իրենց տեղում գիւրաւ կը հասկացուի։—գ. Երկու օրինակի տարբերութիւններին առանց դժուարութեան հետևելու համար մենք նշանակեցինք նոցա յաջորդական Համարակալ բնագրի համարաներին համաձայն։—դ. Վկայութիւններ Աստուծոյ միւս գրքերից Մնացորդաց Գրոց նոյն կամ նման անունը և կամ խմաստը համեմատելու կամ հաստատելու համար՝ մեր նպատակից դուրս համարեցինք, թէև այդպիսիք առանց դժուարութեան կարելի էր նշանակել մանաւանդ Ծննդոց և Թագաւորութեանց գրքերից։ Միայն մի քանի դէպքում՝ բնագիրը անսխալ ըմբռնելու դիտմամբ, մենք աւելորդ չը համարեցինք շեշտել նոյն Մնացորդաց գրքերի այս կամ այն յատուկ անունը, որ այլ և այլ գլուխներում տարբեր ձևով է պատահում։ Նոյնպէս կարէք չը զտանք համեմատելու մեր նորագիւտ Թարգմանութիւնը Զգօնի և Եփրեմի Հայ Թարգմանութիւնների հետ, որոց մէջ մենք չը կարողացանք մերձաւոր նմանութիւն նկատել։

***

Մեր նորագիւտ Թարգմանութիւնը ամենայն հաւանականութեամբ հայերէն լեզուի ամենահին՝ թէ չասենք՝ անդրանիկ գրուածքներից մէկն է ընդունելու, որ հասել է մեր ձեռքը։ Եթէ անգամ տարակոյս ծագի Երուսաղէմեան օրինակի Մնացորդաց Գրքերի վերջում գրած յիշատակարանի վաւերականութեան մասին Մեծ Թարգմանիչ Սահակ Կաթողիկոսի անձնաւորութեան վերաբերմամբ, որ՝ ինչպէս ասած է, «զՄնացորդս յետոյ ամենայն մարգարէից է Թարգմանեալ (Տեառն Սահակա Կաթողիկոսի)», — այնու ամենայնիւ անկասկած խորին հնութեան դրոշմ ենք նկատում այս Թարգմանութեան վերայ. և այդ հնութեան մէջն է արդէն նորա առաջնակարգ կարևորութիւնը։ Գրուածքի լեզուն և ոճն եւս շատ հետաքրքրական են իրենց բնաւիր կազմութեամբ, ձևութեամբ և բուն հայկաբանութեամբ։ Այս տեսակէտից՝ ոչ պակաս արժանի են ուշադրութեան և մի շարք նախնական՝ հին գրականութեան մէջ մինչև այսօր դեռ չը պատահած բառեր. (գէթ ըստ Հայկազնեան բառարանի) օր. «Բեբանադաբէ» (Ա. Մն. Թ. 4.), որ համապատասխան է Եօթանասնից Թարգմանութեան «մատուակ» բառին. — «Ըծծէսը» (Բ. Մն. Իէ. 2)՝

ըստ Եօթանասն. թարգմ. «ապականեալ». երևի՝ մեծ (տիգմ, աղտ) բառի հետ առնչութիւն ունի.—«[illegible]» (Բ. Մն. Է. 9)՝ ըստ Եօթան. թարգման. «եղև» (մեծ տօնի կամ ժողովի իմաստով).—«[illegible]» (և ոչ կարաց պատարհել— Բ. Մն. ԺԳ. 20)՝ համապատասխան Եօթանասն. թարգման. «և ոչ ևս գտր զօրութիւն».—«[illegible]» (Բ. Մն. ԻԵ. 12)՝ համապատասխան Եօթան. թարգման. «գլուխ քարանձաւի».—«[illegible]» (Ա. Մն. ԻԲ. 20)՝ համապատասխան Եօթան. թարգ. «սրահ».—«[illegible]» (Ա. Մն. ԻԸ. 17)՝ բուն Եբրայական բառ. Եօթան. թարգմանութիւնը ունի այստեղ «տաշտ» և «բաժակ»։

Սորանից զատ, ինձ թվում է, թէ այն թարգմանութեան շնորհիւ մենք կարող էինք պարզել, թէ ինչպէս է կատարուած եղել Ս. Գրքի [illegible] կամ Յունականից հայերէն թարգմանութիւնը. այն է՝ թարգմանիչները՝ ըստ երևոյթին, կատարել են իրենց գործը՝ միշտ աչք պահելով [illegible] թարգմանութեան վերայ, գգուշութեամբ պահպանելով նորանից ինչ որ համաձայն էր Յունականին, և փոփոխելով ինչ որ հակառակ էր սորան, որոց թվում և յատուկ անունների ուղղագրութիւնը։

Գալով այն խնդրին, թէ նորագիւտ Մնացորդաց Գրքերը արդարև Ասորերէնից են թարգմանուած, այս մասին ես թոյլ կը տամ ինձ այսպէս ձևակերպել իմ կարծիքս՝ թողնելով խնդրի մանրակրկիտ հետազօտութիւնը և վերջնական եզրակացութիւնը մասնագէտ ասորագէտներին.—Մնացորդաց Գրքերի Ասորերէնը *), գոնէ այն, որի հետ ես համեմատել եմ մեր նորագիւտ թարգմանութիւնը, սակաւ նմանութիւն ունի մերինի հետ և, ընդ հակառակը՝ աւելի մերձենում է Յունականին կամ Եօթանասնից. շատ աւելի մօտ է մեր նորագիւտին Եբրայականը *)։ Այսու ամենայնիւ ես ենթադրում եմ, որ Մնացորդաց Գրքերի [illegible] հայերէն թարգմանութիւնը կատարուած է եղել Ասորերէնից՝ այն հնագոյն Ասորերէն թարգմանութիւնից, որ ծանօթ է Թարգում կոչմամբ, որ՝ ըստ կարգին, շատ մօտ էր Եբրայական բնագրին՝ իբրև սորանից թարգմանուած, և որ յետոյ անյայտացաւ, նորա տեղը յաջորդելով Յունականից կամ Եօթանասնից Ասորի թարգմանութիւնը—ճիշտ այնպէս, ինչպէս պատահեց հայերէն Աստուածաշնչին։

Եթէ այս ենթադրութիւնը հաստատուի յետագայ հետազօտութիւններով, այն ժամանակ ակներև է, թէ որքան մեծ կարևորութիւն կունենայ մեր նորագիւտ թարգմանութիւնը նաև Եբրայական բնագրի քննական ուսումնասիրութեան, նա մանաւանդ հին Ասորականի կամ Թարգումի վերականգնելու համար։ Այս բաւական չէ. ես կարծում եմ, որ ներկայ հրատարակութիւնը կարող էր նպաստել և Վրացերէն Աստուածաշնչի թարգմանութեան խնդրի լուծմանը, որ մինչև այժմ

---

*) Biblia sacra polyglotta Londinensia Briani *Walton*, Londini, 1654—1657. T. II. Liber Paralipomenon, pag. 628—817.

բուական անորոշ վիճակի մէջ է։ Ըստ երեւոյթին՝ Վրաց Ս. Գրքի թարգմանութեանը նոյնն է հանդիպել, ինչ որ Ասորերէնին և հայերէնին. այն է՝ նախապէս թարգմանուած լինելով ամենայն հաւանականութեամբ, առաջին հայերէն թարգմանութիւնից Ե. դարու սկզբում, յետոյ նա փոփոխուել ու սրբագրուել է նոյնպէս Յոյն կամ Եօթանասնից բնագրի համաձայն. մանրադէտներին կը մնայ այժմ որոշ կերպով ցոյց տալ հայերէնի հետքերը Վրաց Ածաշնչի մէջ։

***

Ի վերջոյ քաղցր պարտականութիւն եմ համարում իմ խորին շնորհակալութիւնս յայտնել այն անձինքներին, որոնք որ և է կերպով նպաստեցին ներկայ հրատարակութեանը. նախ՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի միաբան գիտնական Սահակ եպիսկոպոս Խապայեանին, որ այնքան սիրով վերաբերուեց իմ ձեռնարկած գործին, ինձ անծանօթ մի հնագոյն և ամենաընտիր գրչագիր մատնացոյց անելով և նորա ճիշդ ընդօրինակութիւնը աննախանձօրէն իմ տրամադրութեան տակ դնելով։ Իսկապէս Սրբազանի լուսամիտ աջակցութեան շնորհիւ է, որ Մնացորդաց Գրքերի հրատարակութիւնը լոյս է տեսնում այսօր համեմատաբար աւելի կատարեալ ձեւով այն է — երկու օրինակների բաղդատութեամբ։ Յետ այնորիկ՝ շնորհակալ եմ Ս. Էջմիածնի միաբան գիտնական դպիր Գալուստ Տէր-Մկրտչեանին, որ հայ և եւրոպացի ուսումնականներին արդէն ծանօթ իւր սիրալիր պատրաստակամութեամբը ամեն կերպ աջակցեց ինձ՝ Մայր Աթոռի գրչագիրներով և յատկապէս նորագիւտ Մնացորդաց Գրքերի ընդօրինակութեամբ և բնագրի համեմատութեամբ զբաղուելուս միջոցին։ Չեմ կարող մոռանալ և Մայր Աթոռի այն ժամանակուայ հմուտ մատենապետ Արժ. Հ. Սահակ վ. Ամատունուն, որ նոյնպէս շատ օգնեց ինձ՝ դիւրացնելով Մնացորդաց Գրքերի ընդօրինակութեան գործը։

***

Ներկայ հրատարակութիւնը լոյս է տեսնում Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց նորերս ձեռնարկած «Արեւելագիտութեան վերաբերեալ երկերի» հրատարակութիւնների շարքում՝ իբրեւ առաջին հատոր։

Գ. Խ.

30 Յուլիսի, 1899 Թ.
Մոսկուա.
Լազարեան Ճեմարան.

# ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ ՄՆԱՑՈՐԴԱՑ.*

[Ա.]

1–2 ԱԴԱՄ, Սէթ, Ենովս, Կայինան,
3 Մաղաղայէլ, Յարեդ, Ենովք, Մաթու-
4 սաղայ, Ղամէք, Նոյ. Շեմ, Քամ, Յաբեթ:
5 Որդիք Յաբեթայ. Գամէր և Մագովգ
և Մադայ և Յաւան և Թովբէլ, [Մոսոք]
6 և Թիրայ: Եւ որդիք Գամերա. Իշ-
խանազ և Հռիփաթ և Թորգոմ:
7 Որդիք Յաւանու. Եղիշան, Թարշիշ
8 և Քեթիին և Դոդանայիմ: Որդիք
Քամա. Քուշ և Մէզրէմ, Փուտ և
9 Քանայան: Եւ որդիք Քուշայ. Սաբայ
և Եղիղաթ և Շէբաթայ և Հռեկմայ
և Սեբեկաթայ: Եւ որդիք Հռէկմայ.
Սաբայ և Դադան: Եւ Քուշ ծնաւ
10 զՆեբրովթ: Սա էր որ առաջին սկայ
11 էր ի վերայ երեսաց երկրի: Եւ Մեստ-
րեմ ծնաւ զԼուդիացիսն և զԷնամեա-
ցիսն և զՆեփթովմինացիսն և զՓա- 12
թերովմինացիսն և [զ]Քէերովգմինա-
ցին, ուստի ելեն անտի Փոխնտացիքն,
և զԿափթովրիմացիսն:
Եւ Քանան ծնաւ զԾուր զանդրա- 13
նիկ իւր և զԵթն և զԵբուսացին և 14
զԳերգեսացին և զԽևացին և զԱրակն 15
և զԱսանին և զԱրուադայն և զՇա- 16
մարայն և զԱմաթին: Եւ որդիք Շե- 17
մայ. Եղամ և Ասուր և Աղփաքսադն
և Ղուդ և Արամ և Ուզ և Ուղ և
Գէթեր և Մոսոք:
Եւ Արփաքսաթ ծնաւ զԿայինան, 18
և Կայինան ծնաւ զՇայղայ, և Շայ-
ղայ ծնաւ զԵբեր: Եւ Եբերայ եղեն 19
որդիք երկու. անուն միումն Փաղեկ,
զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր,

* Երես ձեռագրի Ս. Երուսաղէմի (=Օ. մեր) 185 Ա. | Ի խորագիր գրոցս ունի ձեռագիր Ս. Էջմիածնի (=Է.)՝ Գիրք Մնացորդաց Առաջին | 1 Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Ա. | 2 ի ձեռ. Է. [illegible] «Կայինան» | 3 Ենոք | 4 Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Բ. | Նոյ. (Է. յաւելու՝) [illegible] Սեմ... | 5 ո. Յաբեթի Գամեր... և Մադա և Յաւան, [illegible] և Թոբէլ, [illegible] (որ գուցէ վրիպակաւ պակասէ յՕ. մերում և զոր յաւելաք ի բնագրին՝ շղագրով և յանկիւնաւոր փակագծան.) և Թիրա | 6 Գամերայ... և Թորգոմ | 7 ո. Յաւանայ... և Դոդանայիմ | 8 Ո. Ք. Քուշ և Մեստրեմ... և Քանաան | 9 ո. Քուշայ... և Դ. Եբրաթա... և ո. Ռեկմայ | 10 և Քուշ ծ. զՆեբրովթ... սկա էր | 11—12 Եւ Մեստրեմ ծ... զ[illegible]ացիսն և զՓաթերոմա-ցիսն և զՔէերովգմինացիսն ուստի ելեն... | 13 [illegible] ունի Օ. մեր ի Ն ո ր տող է սկսեալ, զոր և համաձայն նմին ճշտիւ նշանակեմք ամենուրեք. | 14 զՅեբուսացիսն, և զԳերգեսացիսն, և զԽևացիսն | 17 Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ Գ. | ո. Սեմայ Ելամ... և Արփաքսադն (նոյն՝ որ «Արփաքսաթ» և «Որփաքսադ» ձեռվք յիշի յ18 և ի 24 համ.) և Ղուդ և Արամ: [illegible] Արամայ. և Ուզ և Ուղ և Գեդեր և Մոսոք | 18 զԿայինան, և Կայինան ծ. զՍաղա, և Սաղա ծ. | 19 Եւ Եբերայ էին... և անուն [illegible] Յեկտան (թուի պակասել վրիպակաւ յՕ. մերում՝ Է. Ն., զորս յաւելաք ի բնագրին՝ ի փակագծան.) |

և անուն [եղբաւր նորա] Յեքտան։
20 Եւ Յեքտան ծնաւ զԵղմովդադ և
21 զՇաղեփ և զԱսերմովդ և զՅարեթ և
22 զԱդովրամ և զՈւզաղ և զԴեղան և
23 զՆերան և զԱբիմէլ և զՍաբայ և
զՈփիր և զԵւիղաթ և զՅովբաբ։
Ամենեքին սոքա որդիք էին Յեք-
24 տանայ։ Որդիք Շեմա. Որփաքսադ,
25 Կայինան, Շաղա, Եբեր, Փաղեգ,
26 Հռագաւ, Սերովգ, Նաքովր, Թարա,
27 Աբրամ, այսինքն է Աբրահամ։ Որդիք
28 Աբրահամու. Իսաք և Իսմայէլ։ Այս
29 ծնունդք նոցա. անդրանիկ Իսմայէլի
Նաբէովթ և Կեդար և Աբդիէլ և Մաբ-
30 սամ և Մաշմայ և Դուսմայ և Մա-
31 սսա և Ադդաղ և Թեման և ||185 Ա²||
Յետուր և Նափես և Կեդմա. այս են
32 որդիք Իսմայէլի։ Եւ որդիք Կետուր-
րայ, հարճին Աբրահամու, զոր ծնաւ
նա նմա. զԵբրան և զՅեքսանն և
զՄադիամն և զԱմադիմն և զՅեսբոկն
և զՇուէն։ Եւ որդիք Յեքսանայ.
33 Սաբայն և Դադդանն։ Եւ որդիք Մա-
դիամու. Գեփայ և Գովփեր և Ենովք
և Աբրաղ և Եղդադ. և այս ամենայնք
որդիք Կետուրայ։ Եւ ծնաւ Աբրահամ 34
զԻսահակ. և որդիք Սահակա Իսաւ
և Իէղ։ Եւ որդիք Իսաւայ. Եղիփազ 35
և Հռագուէլ և Յեուղ և Յակղոն և
Կորխ։ Որդիք Եղիփազայ. Թեման և 36
Յովմար, Սեփփուն և Գոթամ և Կենեզ
և Թամնայ և Ամաղէկ։ Որդիք Հռա- 37
գուէլի. Նաքեթ և Սամայ և Զարեհ և
Մազէ։ Եւ որդիք Սիբերայ. Ղովթան 38
և Շովբաղ և Սեբեգոմն և Անան և
Դեսոմն և Դասար և Դիսայ։ Եւ որ- 39
դիք Զեթովդանայ. Քովրի և Եման, և
քոյր նոցա Գեղովսան և Թեմնան։
Եւ որդիք Նովբաղայ. Հաղովան և Մա- 40
նայաւ և Նաբայաւ և Ուբաղ և Շափի
և Յովնան։ Եւ որդիք Սեբեգոմնայ.
Լի և Կայինանան։ Եւ որդիք Անանայ 41
Դեսային. և Դեսոմնայ Ամադամ և
Եսերամ և Յեթրան և Խառան։ Եւ 42
որդիք Դիսա. Բաղաամ և Զաւան և
Իղադան։ Եւ որդիք Ղեսոմնայ. Ուշ
և Առան։

Այս են որ թագաւորեցին յերկրին 43
Եդովմայեցոց մինչ չև էր կացեալ թա-
գաւոր ի վերայ որդւոցն Իղի. Բաղակ

---

20—23 Եւ Յեկտան ծ. զԵղմովդադ և զՍաղեփ և զԱսերմովթ և զԱրեդ… և զՅուղադ… և զՆերեան… և զՅոբաբ. Ամենեքեան… Յեկտանայ. | 24—27 Որդիք Սեմայ. Ն… և Ա…, Արփաքսադ, Կայինան, Սաղա… Փաղեկ… Սերուք… Աբրաամ այսինքն է Աբրաամն. | 28 Է. ունի ի լուսանցս բաժ. գլխոյ՝ Դ. | 28—31 Ն… [ո]րդիք Աբրաամու Իսահակ և Իսմայէլ. Սորա են ծնունդք (…՝ «նոցա. անդրանիկ») Իսմայէլի Նաբէովթ (…՝ «և Կեդառ») և Աբդէլ… և Մաւեմայ… և Յետուր | 32 Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ Ե. | Եւ ո. Քետուրայ հ. Աբրաամու… նմա. և զՅեբրոն… զԵսբոկն… Եւ ո. Յեկսանայ. Սաբայն և Դադդայն | 33 Գեբա… և Ենոք… և Ելդադ և այս ամ ո. Քետուրայ | 34 Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ Զ. | Աբրաամ զԻ. և որդիք Իսահակայ Եսաւ և Իէլ | 35 Եւ ո. Եսաւայ. Եղիփաղ և Հ. և Յեուղ | 36 Ո. Եղիփազայ. Թ… և Գոթամ… և Թամնա | 37 Ն… որդիք Հռագուէլի Ն. | 38 Եւ ո. Սէիրայ… և Սովբաղ և Սեբեգոն… և Դեսոն | 39 Եւ ո. Ղէթովդանայ… Գէղովսան (թուին պղպջեալ ի «Ղովդան» անուանէ որ յ38 համ.) | 40 Եւ ո. Սովբաղայ. Հ. և Մանայաւ և Նաբաաւ… և ո. Սեբեգոնայ (յՕ. մերում փոփոխու՝ «Կեբեգոմնայ», զի յ38 համ. «Սեբեգոմն» գնի.) Լի և Կայինանն | 41 Ա. Դեսոն. և Դեսոնա՝ Անադամ և Սերամէն, Յեթրան (Օ. մեր՝ «Երյեթրան», յորում Եք, որպէս և Է Է. ձեռագրի պղպջեալ թուին յ«Ե» շաղկապէ, զոր և եդաք ի բնագրին.) | 42 և Շաւան, (…՝ «և») Իղադան… Ղեսոնայ | 43 Է. ունի ի լուսանցս բաժան. գլխոյ՝ Է. | Ն… այս… են որ թագաւորեցին… որդի Սեփփովրայ |

որդի Սեփովրա, և անուն քաղաքի
44 նորա Դենաբայ. և մեռաւ Բաղաք, և թագաւորեաց փոխանակ նորա Յովբաբ
45 որդի Զարեխի ի Բոսորա. և մեռաւ Յովբաբ, և թագաւորեաց փոխանակ նորա Սաոմ յերկրէն Թեմնշաւէ։
46 Եւ մեռաւ [Աս]ոմ, և թագաւորեաց փոխանակ նորա Ադադ, որդի Բադադայ, որ փախեաց զՄադիամ յերկրին Մովաբացւոց, և անուն քաղաքի նորա
47 Եւիթ. և մեռաւ Ադադ, և թագաւորեաց փոխանակ նորա Սամաայ ի
48 Մասեկրակայ. և մեռաւ Սամայ, և թագաւորեաց փոխանակ նորա Սաւուղ
49 ի Ռոովթ գետոյ. և մեռաւ Սաւուղ, և թագաւորեաց փոխանակ նորա Բաղեղենան որդի Աքովբովրայ.
50 մեռաւ Բաղեղենան, և թագաւորեաց փոխանակ նորա Ադադ, և անուն քաղաքի նորա Փոուաան, և անուն կնոջ նորա Մետաբէել, դուստր Մատրաթայ, դստեր Մեզբայ.
51 և մեռաւ Ադադ և եղեն այնուհետև առաջնորդք [յԵդոմայ. առաջնորդ] Թեմնա, առաջնորդ Աղուա, առաջնորդ Յեթէ,
52 առաջնորդ Յեղիբամայ, առաջնորդ Յեղա, առաջնորդ Փինոնի, ‖185 բ'‖
53 առաջնորդ Կենեզ, առաջնորդ Թեման,
54 առաջնորդ Բամսյէլ, առաջնորդ Մէգէել, առաջնորդ Երամ. այս ամենայն առաջնորդ[ք] Եդոմայեցւոց։

[Բ.]

1 Եւ այս որդիք Իղի. Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա, Իսաքար, Զաբուղոն,
2 Դան և Յովսէփ, Բենիամին, Նեփթաղիմ, Գադ, Ասէր։
3 Որդիք Յուդայ. Էր և Աւնան և Սեղղոն. երեք սոքա ծնան նմա ի դստերէն անուի ի Շաւէշկա Քանանացւոյ։ Եւ եղև որ անդրանիկն էր Յուդա չարագործ առաջի Տն, և սպանեաց զնա անդէն։
4 Եւ Թամար նուն նորա ծնանէր նմա զՓարէս և զԶարայ. ամենեքին սոքա որդիք Յուդայ։
5 Եւ որդիք Փարեսայ Եզրոմ և Ամուէլ։
6 Եւ որդիք Զարայ. Զամբրի և Եթամ և Եման և Կաղքաղ և Դարադ, ընդ ամենեսին սորա հինգ։
7 Եւ որդի Քարմեայ Աքար, որ խռովեաց զԻէղ և անց ըստ ուխտ նուիրացն։
8 Եւ որդի

44 Բաղակ... Յոբաբ | 45 Յոբաբ... յերկրէն Թեմանացւոյ | 46 Ասամ... որդի Բարադայ, որ փախեաց... յերկրէն... քաղաքին նորա Ե. | 47 Ի Մասեկրակայ | 48—49 Սաւուղ (յՕրինակի մերում՝ «ի Ռոովթ գետոյ. և մեռաւ Սաւուղ» յաւելեալ է նովին ձեռամբ ի լուսանցսն՝ մանր տառիւք. իսկ յօրինակի Է. ընաւ գտանէն բանքդ.) | Բայեղենան | 50 Բայեղենան... Փաուայն... Մետաբէէլ... Մատրեթայ | 51—52 Է. ունի ի լուս. բաժանումն գլխոյ՝ Ը. | այնուհետև իշխանք յԵդոմայ. իշխան (Թուի վրիպակաւ պակասել յՕ. մերում՝ յԵդոմայ. առաջնորդ, զոր և յաւելաք ի բնագրին ի փակագիծսն.) Թեմնայ իշխան Աղուայ (այսպէս և ի ներքոյ իշխան ունի սա Է. փոխանակ «առաջնորդ» Օ. մերոյ)... Փենան | 53 Կենէզ | 54 Մէէգէլ. այս ամենայն իշխանք Եդոմայեցւոց |

ԳԼ. Բ.—Է. ունի ի լուսանցս կրկնակի բաժանումն գլխոյ՝ Յա. $\frac{բ}{բ}$ | 1 Եւ այս են որդիք Իսրայէլի. Ռուբէն... Զաբուղոն | 2 Դան (գտանի՝ «և»), Յոսէփ... Ասեր | 3 Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ Ժ. | Օնան, և Սելովմ. Գ. սոքա... ի դստերէ Շաւեշկայ Ք. և եղև (գտանի՝ «որ») ա. էր Յուդայ չարագործ (գտանի՝ «առաջի Տն»), և սպանեաց | 4 Նա նորա... ամենեքեան սոքա | 5 Փարէսայ Եզրոմ և Կամուէլ | 6 ընդ ամենեսեան չորս Ե. | 7 զԻսրայէլ | 8 Եւ որդի Բեթամայ Ազարիա |

9 Բէնեթամ Աղարիայ։ Եւ Եզրոմի որ
եղեն նմա․ Յերամեիլ և Արամ և
Քաղըբունի։
10 Եւ Արամ ծնաւ զԱմինադաբ, և
Ամինադաբ ծնաւ զՆաասոն, զիշխան
11 տանն Յուդայ, և Նաասոն ծնաւ
զՍաղմոն, և Սաղմոն ծնաւ զԲոոս,
12 և Բոոս ծնաւ զՈվբէդ, և Ովբէդ
13 ծնաւ զՅեսսեա, և Յեսսէ ծնաւ զան-
դրանիկն իւր Եղիաբ, և զԱմինադաբ
զերկրորդն, և զՍամաայ զերրորդն,
14 և զՆաթանայէլ զչորրորդն, և զՌադայ
15 զհինգերորդն, և զԱսոմայ զվեցերորդն,
16 և զԴաւիթ զեօթներորդն։ Եւ քորք
սոցա Շարուհի և Աբիգէ․ և որդիք
Շարուհեայ․ Աբեսա և Յովաբ և Ա-
17 սայէլ։ Եւ Աբիգեայ ծնաւ զԱմեսայ․
և հայր [Ամ]եսեայ Յեթեր Իէլացի։
18 Եւ Քաղեբ որդի Յեզրոնայ ծնաւ զԱ-
զուբա և զԵրիովթ, և այս որդիք
նորա․ Յեսար և Շուբաթ և Արդոն։
19 Մեռաւ [Ա]զուբա, և առ իւր կին Քա-
ղեբ [զ]Եփրաթէ․ և ծնաւ նա նմա
20 զՈվր, և Ովր ծնաւ նմա զՈւրի, և
21 Ուրի ծնաւ նմա զԲեսելիէլ։ Եւ յետ
այսորիկ եմուտ Եզրոմ առ դուստր
Մաքիրայ, հաւր Գաղաադու, և ինքն
Գաղաադ առ իւր զԱքեմի․ և ինքն
էր ամաց իբրև վաթսուն․ և ծնաւ
նա նմա զՍեգուբն։ Եւ Սեգուբն ծնաւ 22
զՅայիրն․ և եղեն նորա քսան և երեք
քաղաք յերկրին Գաղայադու։ Եւ առ 23
նա զԳեսուրն և զԱռամն և զԱւի-
ովթն, Յայիրն ի նոցանէ յԿեթամայ
մինչև ի Կանաթ և զգաւերս նորա
քաղաքս իբրև Կ։ Ամենեքին սոքա
որդիք Մաքիրայ, հաւրն Գաղայադու։
Եւ յետ մահուն Եզրոմա եկն եմուտ 24
Քաղեբ առ Եփրաթայ․ և էր ||185 բ²||
21 Մոսողամի դարապան (Օ. մեր՝ «դարապանք») | 22 ընտիր ընտիր+ | զկնի՝ երկերիւր և երկոտասան (Օ. մեր —՝ «երկերիւր և երկոտասան») դնին անընդմիջաբար յՕ. մերում բանի մի բառք՝ ունելով ի վերայ ընչից նշանս, (որպէս ի վեր անդր, Գլ. Է. 12) —՝ «ի վերայ սրահից վիճակք նոցին», որ ցուցանեն, թէ չէ պարտ ընթեռնուլ զբանսդ. | թուեաց Դ. և կաց—ցյ (Օ. մեր՝ «կացոյց») | 23 տանն Այ | 24 չ. կողմանց. և էին դար—պանքն... և ի հարաւու | 25 Եւ եղբարք նոց—... տար—ջէ | 26 զի հաւատարիմք էին չորս իշխանքն Ղևտացոցն... գանձուցն | 29 կարասւոյ | 30 էին իւղեփեցս եղ—ոյն | 31 և Մատաթիա որդւոցն Ղևտացոց... Շաղումայ Կորեցո (յՕ. մերում՝ «Շաղում Ակորեցւոյ»)... տապակացն («տապակացն» յՕ. մերում եղեալ է ի լուսանցս.) | 32 անտի իւրոյն... ի շաբաթ | 33 ազգացն Ղ. ընդ սրսկապանաւն (— և Օ. մեր, զոր պատշաճ դատեցաք ուղղել.) | 35 ի Գաբաւոն... Գաբաւոնի Եղ— | Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ ԻԱ. | 36 Բաեթ... Ներ | 37 Զաքրի և Մակեղովթ | 38 բնակէին |

39 Եւ Ներ ծնաւ զԿիս, եւ Կիս ծնաւ
զՇաւուղ, եւ Սաւուղ ծնաւ զՅովնա-
թան, եւ զՄեղքիսուէ, եւ զԱմինադաբն,
40 եւ զՅիսբաաղն։ Եւ որդի Յովնաթանու
Մեմփիբաաղ. եւ Մեմփիբաաղ ծնաւ
41 զՄիքա։ Եւ որդիք Միքա. Փիթովթ
եւ Մեղքիէլ եւ Թարաա եւ Ազազ.
42 եւ Ազազ ||189բ'|| ծնաւ զՅուդաեէ, եւ
Յուդաեէ ծնաւ զԱղեփ եւ զԱզմովթ եւ
[զ]Զամբրի, եւ Զամբրի ծնաւ զՄու-
43 շայ, եւ Մուշա ծնաւ զԲաանայ. եւ
Բարաքա որդի նորա, Եղեաս որդի
44 նորա, Ասայէլ որդի նորա։ Եւ Ասա-
յէլի էին որդիք վեց, եւ այս ա-
նուանք նոցա. Եզրիկամ անդրանիկ
նորա եւ Իսմայէլ եւ Ազարիայ եւ
Աբդիու եւ Ասարիայ եւ Անանան.
այս որդիք Ասայելի։

## [Ժ.]

1 Եւ այլազգիք հասեալ պատերազմ
տային ընդ Իէղ, եւ ի փախուստ դառ-
նայր դունդն Իէղեան յերեսաց այլազ-
2 գեաց։ Եւ զհետ մտեալ էին այլազ-
գիքն Շաւուղի եւ որդւոց նորա. եւ
հարին այլազգիքն զՅովնաթան եւ
զԱմինադաբն եւ զՄելքիսուէն, զորդիսն
3 Շաւուղի։ Եւ ծանրացաւ պատերազմ
ի վերայ Շաւուղի, եւ եկին հասին
նմա աղեղնաւորք եւ արգելին զնա։
4 Խաւսել ասէ Շաւուղ ընդ զինակ-
րին իւրում՝ եւ ասէ. առ ի վեր զսու-
սեր քո եւ սպան զիս, զի մի եկեսցեն
հասցեն անթլփատքն եւ խաղ առնիցեն
զիս։ Եւ ոչ կամէր առնել նա զհրամանն
Շաւուղի, զի երկնչէր յոյժ։ Ապա
եհան Շաւուղ զսուսեր իւր եւ զե-
րովի չոգաւ։
Իբրեւ ետես զինակիրն, թէ մեռաւ Շա- 5
ւուղ, ել եւ ինքն ընդ սուր իւր եւ անդէն
մեռաւ։ Մեռաւ Շաւուղ եւ երեքին որ- 6
դիք նորա յաւուր յայնմիկ, եւ ամենայն
տուն նորա միանգամայն սատակեցան։
Իբրեւ տեսին ամենայն այր Իէղեան 7
որ ի հովիտս անդ էին, եթէ փախեաւ
դունդն Իէղացւոց եւ մեռաւ Շաւուղ
եւ որդիք իւր, թողին զիւրաքանչիւր
քաղաքս եւ փախեան. եւ եկին այլազ-
գիքն եւ մտին բնակեցան անդէն ի
նոսա։ Եւ եղեւ ի վաղիւ անդր եկին 8
իջին ի տեղի պատերազմին զինակա-
պուտ լինել այլազգիքն։ Եւ եկին գտին
զՇաւուղ եւ զորդիսն անկեալ ի մէջ
զինակացն ի լերինն Գեղբուէ, մեր- 9
կացին զնոսա եւ առին զգէնս նոցա
յիւրեանս, եւ հատին զգլուխ նորա եւ
առաքեցին ընդ ամենայն կողմանս
այլազգեաց, եւ յղեցին աւետարանս
ընդ ամենայն կուռս պաշտամանց
նոցա, եւ տարան եդին զգէնն եւ 10
զգլուխն ի մեհեանս իւրեանց ի տանն
Դեգոնայ։ Եւ լուան շուրջ բնակիչքն 11
յԱբիս Գաղաադ զամենայն գործս զոր
գործեցին այլազգիքն ընդ Շաւուղ եւ
ընդ որդիսն եւ ընդ Իէղ, յարեան 12

---

39 Ներ... եւ զՄեղքիսաւէ... եւ զԻսբաաղն | 41 եւ որդի Միքա Փիթովթ... եւ Թարայա | 42 զՅուդայէէ, եւ Յուդաէէ | 44 Եւ Ասաէլի... եւ Իսմաէլ... եւ Աբդիա... Ասաէլի (Հմմտ. զանուանս 35—44 համ. ընդ հանգոյնսն որ ի 29—38 համ. Ը. գլխոյն։) |

Գլ. Ժ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Թռ. Ժ. | 1 Եւ այլազգիքն... այլազգեացն | 3 պատերազմն | 4 Շաւուղ (Շ ուղղեալ ի լուսանցս՝ Հ) ընդ զինակիրն... զհրամանս... զսուսերն իւր | 5 զինակրեան... է սուր | 6 եւ երեքին որդիք իւր | 7 փախեաւ —ն— դունդն | 9 եւ հատին զգլուխ նոցա (ուղղեալ ի լուսանցս՝ նորա)... աւետարս | 10 Դագոնայ | 11 յԱբիս Գաղաադա | 12 յԱղիսն (թուի նոյն լինել ընդ «յԱբիս», 11 համ.) |

փայտփայտակի, իջին ի Գաղգաղա, և
առին զգլխակունս Շաւուղի և զոր-
դւոցն և բերին Թաղեցին զոսկերս
նոցա ընդ կաղնեաւն յԱղիս, և անդ
նստան լացին աւուրս է։ ‖189 բ²‖
13 Արդ մեռաւ Շաւուղ յանաւրէնու-
թեան խրում, զոր արար առաջի
Տն, զի ոչ պահեաց նա զհրամանն Տն,
և երթեալ հարցանէր նա զվհուկսն
և խնդրէր ի նմանէն. և Սամուէլ
14 մարգարէն խաւսէր ընդ նմա, և նա
ոչ խնդրէր ի Տնէ։ Արդ սպան զնա
Տր և դարձոյց զարքայութիւնն ի
Դաւիթ, յորդի Յեսեա։

[ԺԱ.]

1 Եւ ժողովեցան ամենայն ազգ Իս-
րայէլի առ Դաւիթ ի Քեբրոնի և
ասեն. մարմինք ի մարմնոյ քոյ և
2 ոսկր յոսկերաց քոց. քանզի երէկ և
յեռանդ մինչդեռ Շաւուղ կենդանի
էր, դու էիր որ առաջնորդէիր տանդ
Իղի, և քեզ ասաց Տր ԱԾ քո. դու
հովուեսցես, ասէ, և առաջնորդեսցես
3 ժողովրդեան քում Իղի։ Եւ եկին ա-
մենայն ծերակոյտ տանն Իղի առ
Թագաւորն ի Քեբրոնի և անդ եդին
ուխտ ընդ նմա առաջի Տն. և աւծին
զԴաւիթ ի Թագաւորութիւն տանն
Իղի ըստ բանի Տն ի ձեռն Սամուէլի։
4 Եւ գնայր արքայ Դաւիթ և ամենայն
Իէլ ընդ նմա յԵմ այսինքն Յերուշ, և
անդ Յորոշացիքն բնակիչք երկրին
սկսան խաւսել ընդ Դաւթի և ասեն. 5
ոչ մտցես դու այսր։ Եւ եհաս կալաւ
Դաւիթ զպարսպարն Սիհոնի այսինքն
է քաղաք Դաւթի։ Ասաց խաւսել կա- 6
լաւ Դաւիթ ի մէջ զաւրացն և ասէ.
ամենայն այր որ յարձակեալ ձեռնե-
րեց լիցի սատակել զայր Յերուսացի,
իշխան զաւրավար կացուցից զնա ի
վերայ ամենայն զաւրացն։
Անդէն փայտփայտակի յարձակեալ նա-
խաձեռն ձեռներեց լինէր Յովաբ, որդի
Շարուհեա, փանել զՅերուշացին ձեռ-
ներեց ի ներքս անկանէր, և նա լինէր
իշխան զաւրավար զաւրացն։ Եւ պահ 7
արկեալ նստէր Դաւիթ շուրջ զպա-
տաւարաւն, փան այսորիկ անուանե-
ցաւ քաղաքն այն քաղաք Դաւթի։
Եւ շինեաց Դաւիթ զքաղաքն շուր- 8
ջանակի ի գլխաւոր տեղւոջէ անտի
մինչև ի շուրջ պատելով. և Յովաբ
շըջէր ջանայր ապրեցուցանել զմնա-
ցորդս քաղաքին։ Եւ Դաւիթ երթա- 9
լով երթայր յառաջադէմ յաջողեալ
բարձրացեալ, և Տր ամենակալ էր ընդ
նմա։ Եւ այս իշխանք են զաւրավա- 10
րացն, որ էին ընդ Դաւթի, որ աւգ-
նական ձեռնտու նմա ի Թագաւորու-
թեան խրում ամենայն Իէղացւով-
քըն հանդերձ, զի Թագաւորեցուսցեն
զնա ըստ բանին Տն ի վերայ որդւոցն
Իղի։ Եւ այս թիւք են զաւրավարացն 11
Դաւթի. Յեսէբան որդի Քաամնայ

---

13 Անդ մեռաւ... առաջի Տն (դ-ֆ-ի՝ «զի ոչ պահեաց նա զհրամանն Տն»), և երթեալ... ի նմանէ. և Սամուէլ մարգարէ | 14 Յեսսեայ |

Գլ. ԺԱ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժան. գլխոյ՝ Յո. ԺԱ/ԻԲ. | 1 ազգն Իղի առ Դաւիթ ի Քեբրոն | 2 և քեզ ասաց... ժողովրդեանդ Իմում | 3 ի Քեբրոն. . և ածին զԴ. | 4 Իէղ... այսինքն է Յերուշ, և անդ Յէրուշացիքն | 5 զպատուարն Սիոնի | 6 ձեռներեց լիցի է սատակել զայր Յերուշացի... կացուցից զնա... ձեռներեց լինէր... փանէ զՅերուշացին ձեռներեց... իշխան զօրավարաց (դ-ֆ-ի՝ «զաւրացն») | 7 վասն այնորիկ | 10 Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԻԳ. | 11 թիւք են զօրացն Դաւթի Յեսրան ո. Քաաանար... լինն հարիւրոց յարձակելոցն

առաջի քան զերիսն. սա սուսեր ի
վեր առեալ ընդխառնէր ի մէջ ինն
հարիւր յարձակելոցն միանգամայն։
12 Եւ յետ նորա Եղէազար որդի Դոդեա
հաւրեղբաւր նորուն. և սա էր յերից
անտի հզաւր որ ընդ Դաւթին իսկ
13 էր ի Սեղան։ ||190Ա'|| Եւ այլազգիքն
ժողովեալ էին ի գործ պատերազմի.
և անդ էր երկիր մի յագարակի վա-
րեալ լի ոսպամբ, և զունդն Դաւ-
թեան ի փախուստ դառնայր յերե-
14 սացն այլազգեաց։ Եւ նա առեալ ունէր
զտեղին ի մէջ երկրին վիճակաց, և
զերկիրն ապրեցուցանէր և զայլա-
զգիսն վանէր և առնէր փրկութիւն
մեծ ի ձեռն Տն ժողովրդեանն ամե-
15 նայնի։ Եւ իջին երեք ոմանք յերից
գնդից անտի, զի էր Դաւիթ յայրի
անդ առ վիմին Ոդողամ, և զունդք
այլազգեաց պատրաստեալ ի պատե-
16 րազմ ի հովտին Տիտանայ։ Եւ Դաւիթ
յայնժամ արգելեալ էր ի ներքս և
զունդքն այլազգեաց պատեալ էին
17 շուրջ զհովտաւն Բեթղէեմ։ Եւ ցան-
կացեալ տենչացաւ Դաւիթ և ասէ.
լինէր ով որ տայր բերէր ինձ ջուր ի
Բեթղահեմ ի ջրհորէ անտի, որ մերձ
18 առ դրանն է։ Եւ անդէն վաղվաղակի
երեքն յարձակեցան ի վերայ գնդին
այլազգեաց և զգունդն պատառեցին,
և ջուր առեալ բերին ի ջրհորէ անտի
ի Բեթղահեմ, որ էր մերձ առ դրանն։

Եւ առ[եալ] Դաւիթ ոչ կամեցաւ
ըմպել ի ջրոյ անտի, այլ զոհէր զնա ա-
ռաջի Տն իբր ի նուէրս պատարագաց
և ասէր. քաւ լիցի ինձ, եթէ արարից 19
զանդ զայդ, եթէ յարիւն արանցդ
այդոցիկ ի փոխանակել զոգիս իւրեանց
ընդ ջրոյդ, եթէ արբից ես այտի։ Զայս
այն երեքն արարին։ Եւ Աբիսայ, եղ- 20
բայր Յովաբու. սա գլուխ էր երիցն.
այս այն է, որ հանեալ զսուսեր իւր
և վանէր զերեքհարիւրսն յարձա-
կելս ի միում վայրի. և սա էր ա- 21
նուանեալ ի մէջ երիցն, ինքն երրորդ
փառաւորագոյն քան զերկուսն, և
եղև գլուխ նոցա, և երիցն ոք ոչ
ժամանէր։ Եւ Բանէաս որդի Յո- 22
վադ, որդի առն հզաւրի. և բազում
գործք գործեալ էին ի նմանէ ի Կա-
սայէլ։ Սա այն է, որ եհար վանեաց
զերկոսին որդիսն Արիէլ Բանէ, և սա
էր, որ էջ եսպան ի ներքս ի գբի
անդ զառեծն յաւուրն ձիւնաբերի։
Սա այն է, որ սատակեաց զայրն 23
Եգիպտացի, զայրն յաղթանդամ հինգ-
կանգնեան, որ ունէր զնիզակն ի ձե-
ռին իբրև զվերստարի ոստայնանկաց,
և իջանէր ի վերայ նորա Բանէ բրաւ
և թափէր ի նմանէ զնիզակն և նո-
վին անդէն նորին նիզակաւն սպա-
նանէր զնա։ Զայս արար Բանէաս 24
որդի Յովադայ, և այս անուն էր
նորա ի մէջ երիցն հզաւրաց փառա-

---

(Օ. մր. վրիպակաւ «ինն հարոյր յարձակելոյն») | 12 Եղիազար ո. Ռոդիայ | 13 լի ոսպամբ... յերեսաց | 14 Եւ նա ––եալ (Օ. մր՝ «նա––եալ») ունէր զտեղի | 15 և զունդք այլազգեացն | 16 զ. այլազգեացն... Բեդղէէմ | 17 տենչացաւ... ի Բեդղէէմէ... առ դրանն (––՝ «է») | 18 ի Բեդղէէմէ... և առեալ Դաւիթ... իբրև | 19 և ասէ. քաւ լիցի ինձ, ––է, եթէ... այդոցիկ (––՝ «ի») փոխանակել... թէ արբից | 20 Եւ Աբեսսա... գլուխ (––՝ «էր») երիցն | 21 հզնի՝ «քան զերկուսն» ի Նոր տողէ ունի Օ. մր. | 22 Եւ Բանեա ո. Յովդեա... ի Կաւսէլ... Արիէլերանէ... էսպան ի ներքս (––՝ «ի») գբի անդ զառիւծն յաւուր | 23 հնգեականգնեան... վերստորին | Օ. մր և Է. «բանէբրաւ»՝ –– ի միասին գրեալ | և նովին (Օ. մր վրիպակաւ՝ «և նո–ին») անդէն նորին | 24 ո. Յովիդեայ. և այս անուն է |

25 ւորագոյն քան զերկուսն, և երից
ոչ ոք կարէր նմանել. և կացոյց զնա
Դաւիթ ի վերայ իշխանութեանն։
26 Եւ զաւրաւորքն զաւրութեան իւրոյ.
Ասայէլ եղբայր Յովաբու, Եղեանան
որդի Դոդդեա ||190 Ա²|| հաւրեղբաւր
27 նորին ի Բեդղեեմ քաղաքէ, Սամովթ
28 Արովրացի, Սեղով Փեւղովնացի, Իրաս
որդի Եկայ Թեկուացւոյ, Աբիեզեր
29 Անաթովթացի, Սուբովքայ որդի
30 Սովթաթայ, Եղա Աքաթի, Մարիով
31 Նեթյովփաթեայ, Հէթի որդի Հոուեա
ի Տարաթեայ ի Բենիամին ի բլրոյ ան-
32 ափ, Բանի Փարաթովնայ, Ուրիայ ի
Նաքաղեայ Գաղա, Աբիէլ Ցերաբաթա,
33 Ամովթ Բարամացի, Եղիփա Սաղա-
34 փովնեայ, Իրասէ Այգունունեցի, որ-
դիք Սասովնեայ Զենեանց, Յովնաթան
35 որդի Սամեա Արովրացի, Աքիամ որ-
դի Իսաքասեանց, Եղիփայէլ որդի
36 Ուրհեայ, Ոփար Մեքովրաթայ, Աքար
37 Փեղովնացի, Եզրի Քերմեղացի, Նայարի
38 որդի Ազբեայ, Յովէլ եղբայր Նաթա-
39 նու, Նաարար որդի Ագարեայ, Սեղէկ
Ամմոնացի, Նաւարա Բերովթացի, զեն-
կիրք Յովաբու որդւոյ Շարուհեա.
40 Իրայ Եթրացի, Գարեբ Եթրացի,
41 Ուրիաս Քեթթացի, Զաբաթ որդի
Սամաղեա, չորք սոքա. Գինան որդի 42
Սիզայ և հաւրէն ի վերայ երեսնիցն.
Անան որդի ի Մաաքայ և Յուսափաթ 43
Մաթանայ, Ոզեայ Եսթարովնայ, Սա- 44
մայ և Յէիէլ որդիք Քովթան Արա-
րեանց, Յիէդէլ որդի Շամրայ և 45
Եղեայ եղբայր նորա Թովսի, Յիեղեայ 46
Յովթովնաամ և Յեթմա Մովաբացի
և Եղիէլ, Յովսէլ և Յեսիէլ Մասե-
բացի։

## [ԺԲ.]

Սոքա են որ եկին առ Դաւիթ ի 1
Սիկեղակ մինչդեռ ի նեղութեանն էր
յերեսաց Շաւուղի, որդւոյ Կիսեա.
սոքա եկին ի բուն ճգնութեանն աւգ-
նականք նմա ի պատերազմի, կորովի 2
աղեղնաւորք, աջոց ձախող պարսիւք,
ափգաւք, նետիւք, յեղբարցն Շաւուղի
ի Բենիամին ցեղէ. իշխան Աքիեզեր 3
և Յովաս, որդիք Սամաայ Գաբաւով-
նացւոյ, և Եզիէլ և Փաղեթ որդի
Ասմովթայ, և Բարաքիէլ և Յեուղ
Անաթովթացիք, և Սամէաս Գաբա- 4
ւովնացի, հզաւրք ընտրեալք ընդ երե-
սունսն, Յերեմիայ և Յեզիէլ և Յով-
նան և Յովսափատ Գադարովթեա,
Եղիեզէր և Յերիմովթ, Բաղեամ և 5

---

25 և երիցն... ի վերայ -- իշխանութեանն. | 26 Եղիանան ո. Դովդեա հօրեղբայր ն. ի Բեդլէեմ | 27 Սամովթ Արօրացի, Սելովթ Փեղոնացի (Օ. մեր՝ «Սեղովէ Եւղովնացի».) | 28 Եկաթեկուացւոյ | 29—30 Աբաթիմարի, Ովեեթ Յովփաթեա (յՕ. մերում՝ «Աբաթիմարիովեեթ Յովփաթեայ») | 31 Հոուա ի Տաբաթեայ ի Բ. (--՝ «ի») բլրոյ ա., Բանիճարաթովնա | 32 Ուրիայինաքաղեա, Գադ-րիէլ (յՕ. մերում՝ «Գադաարիէլ») Յերաբաթեայ | 33 Ասմովթ Բ., Եղիբաս Արովնեայ | 34 Իրասա Գունեցի, ո. Ասովմեայ Զենեացն, Յովնաթան | 35—36 Եղիփաէլ ո. Սուրհեաոփար Մեքովրաթաոբարփելոնացի (--) | 39 Սեղէ Կեմացի (Օ. մեր՝ «Սեղէ Կամանացի»)... զեն-կիրք | 40 Գարեփ Եթրացի (Օ. մեր՝ «Գարէ բեթրացի») | 42 Դինան ո. Սիզեայ և Հաուրէն | 43 Անան որդի (--՝ «ի») Մաաքեայ, և Յովսափաթ | 44 Եսթարոնայ | 45 Յեէդէղ ո. Շամեա | 46 և Եղիէլ, Յովսէղ... Մասեբացի. |

Գլ. ԺԲ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Ֆո. ԺԲ. | 1 ի Սիկելակ... ճգնութեան... ի պատերազմի -- | 2 աջող ձախող (Օ. մեր՝ «ջաղող») | 3 որդիք Սամեա Գաբաւոնացւո... Փ. ո. Սամովթեա, և Բարաքիէղ | 4 Գաբաւոնացի հ. ընտրեալք ընդ Լ-ուսն. | 5 Բաղէամ և

Շամրէաս և Սաղատիա Քարաքացի,
6 Եղկանայ և Յեշովէ, Եզրիէլ և Յեզ-
րաառ և Յեզբաամ և Կորայեցին
7 Յովզեղա և Զաբդեա, որդիք Յերխո-
8 ամայ, որդւոյ Գեդովրայ։ Եւ ի Գա-
դայէ մեկնեցան գնացին առ Դա-
ւիթ յանապատէ անտի արք հզաւրք,
պատրաստեալք ի պատերազմ նի-
զակաւորք ասպարաւորք· ||190 Բ'|| դէմք
առիւծուց դէմք նոցա, թեթեւու-
թիւն ոտից իբրև թեթեւութիւն
այծեմանց արագութեամբ ի վերայ
9 լերանց։ Եզեկեր զաւրաց գլուխ,
Աբդիայ երկրորդ, Եղիար երրորդ,
10 Մասմանէ չորրորդ, Երեմիայ հինգե-
11 րորդ, Եթի վեցերորդ, Եղիէլ եւթնե-
12 րորդ, Յովնաթան ութերորդ, Եզաբադ
13 իններորդ, Յերամիայ [տասներորդ], Մա-
14 քարենի մետասաներորդ։ Այս իշխանք
յորդւոցն Գադայ զաւրավար զաւ-
րացն, մի մի ի հարիւրոց տասի, մեծ
և փոքր առ հազարս կշռեալս։
15 Սոքա այն են, որ անցին ընդ գետն
Յորդանան յամսեանն առաջնում, և
նա գայր լի ափամբ և ափամբ առ հա-
սարակ ծայրիւ իւրով. և հալածեցին
նոքա անտի զբնակիչս հովտացն յա-
16 րեւելս և յարեւմուտս։ Եւ եկին նոքա
յորդւոցն Բենիամին գնդէն յաւգնա-
17 կանութիւն Դաւթի։ Ապա եւ Դաւիթ
ընդ առաջ նոցա, խաւսել կալաւ և
ասէ ցնոսա. եթէ խաղաղութեամբ
եկիք յաւգնականութիւն ինձ, եղիցի
սիրտ իմ ի ձեզ ի հաւասարութիւն
միաբանութե՟ր. և եթէ մատնել եկիք
զիս ի ձեռս թշնամեաց իմոց ոչ ի
ձեռս արդար ճշմարտութեան, տեսցէ
ԱԾ հարցն մերոց և յանդիմանեսցէ
զձեզ։ Եւ ոգի զգեցաւ Ամասիայ, այր 18
իշխան երեսնիցն, և ասէ. երթ երթ,
Դաւիթ, որդի Յեսսեա, դու և ժո-
ղովուրդ քո, խաղաղութիւն ընդ քեզ,
և խաղաղութիւն յաւգնականս քո, զի
աւգնեաց քեզ ԱԾ քո։ Եւ ընկալաւ
զնոսա Դաւիթ և կացոյց զնոսա
զաւրավարս ի վերայ ամենայն զաւրաց
իւրոց։ Եւ ի Մանասէէ եւս եկին կա- 19
ցին առաջի Դաւթի, զի եկեալ գայր
նա ընդ այլազգիսն, որ եկին ի վե-
րայ Շաւուղի ի գործ պատերազմի։
Եւ ոչ տայր նոցա աւգնականութիւն
Դաւիթ, զի ի խորհրդի եղեն ընդ
նախարարսն այլազգեաց և ասեն.
եթէ ի գլուխս մեր դարձցին անդրէն
առ տէր իւր Շաւուղ, և հանին զնա
անտի։ Եւ իբրև գնաց Դաւիթ ի 20
Սիկեղակ, եկին կացին առաջի նորա
ի Մանասեան գնդէ անտի Յեդնայ
և Յուզաբադ և Յադիէլ և Միքաէլ
և Յուզափատ և Եղիուս և Շիղա-
թայ, իշխանք զաւրավարք, հզաւրք
զաւրութեանց։ Եւ նոքա եկին յաւգ- 21
նականութիւն Դաւթի ի Գեդուր,
զի էր նա անդ հալածական, զի հզաւրք
զաւրութեամբ էին ամենեքեան, և
եղեն իշխանք զաւրավարք զաւրաց

---

Շամրիաս | 6 Եղկանա և Յեշովէ ∟ Բիէզ... և Կորայիքն | 7 Յովլեղա... Յերուամա | 8 –ասպարաւորք. (Զկնի՛ «ասպարաւորք» ի նոր տողէ ունի Օ. մրս) | 9 Եզեր զօրագլուխ | 10 Մա–մանէ | 11 Եղիէլ | 13 Յերամա ՃՃ–ՃՃ (սխալմամբ ընդօրինակողաց պակասէ յՕ. մերում անունդ թուական, զոր յաւելաք ի բնագրին՝ համաձայն Է. օրինակին.) | 14 զօրավար+ զօրացն... կշռեալ | 16 Բ. գնտէ | 17 միաբանութեան... մատնել եկիք (գ–է–Է՛ «զիս») ի ձեռս... ոչ ի ձեռն արդար... հարցն մեր–ոց | 18 ոգի –զգեցաւ... Դաւիթ և կացոյց զնոսա Դ––Ի զօրավարս | 19 եկին ∟ կացին... օգնութիւն Դաւիթ... ընդ նախարարսն այլազգեացն | 20 ի Սիկելակ... Յեդնաչ... և Յուզարատ | 21 ի Գեթուր |

22 նորա։ Զի ժամանակէ ի ժամանակ
վաւրհանապազ գային առ Դաւիթ
յաւգնականութիւն իբր ի բանակ մեծ,
իբր ի բանակ Այ։ ‖190բ²‖

23 Եւ այս անուանք իշխանաց զաւ-
րավարաց, որ եկին առ Դաւիթ ի
Քեբրոն դարձուցանել զարքայութիւն
իշխանութեանն Սաւուղի առ Դաւիթ
24 ըստ բանին Տն, և այս թիւք։ Որդիք
Յուդայ սպառազէնք, նիզակաւորք և
սպարաւորք Զ. հազար և Պ. կուռ
25 վառեալ։ Որդւոցն Շմաւոնի նոյնպէս
հզաւրք զաւրութեանց, կարգեալք և
կազմեալք պատրաստեալք ի գործ
26 պատերազմի Է. հազար և Ճ։ Որդւոցն
27 Ղեւեայ Դ. հազար և Ո։ Եւ Յովիադա
զաւրագլուխ, և որդւոցն Ահարոնի
28 ընդ նմա Վ. և Չ., և Սադովկ մա-
նուկ հզաւր զաւրութեամբ ի վերայ,
և ի տանէ հաւր իւրոյ ԻԲ. զաւրա-
29 գլուխք։ Եւ յորդւոցն Բենիամենի, յեղ-
բարցն Շմաւոնի, Գ. հազարք, և բա-
զումք ի նոցանէ մինչև ցայս ժամ
պահապան կային ի վերայ տանն Սա-
30 ւուղի։ Եւ ի տանէն Եփրեմայ ԻՆ.
հազար և Պ. այր, արք հզաւրք պա-
տերազմողք ըստ ազգի ազգի գնդացն
31 նահապետաց։ Եւ ի կէս ազգին Մա-
նասեան գնդին Ը. ու Ժ. հազար, որ ա-
նուանեցան անուամբ գալ թագաւո-
32 րեցուցանել զԴաւիթ։ Եւ յորդւոցն
Իսաքարայ արք իմաստունք գիտու-
թեամբ, ժամանակագէտք, յառաջագէմ
իմանալ գիտել զինչ գործ իցէ Իղի ի
սկզբան իւրում, երկերիւր արք հա-
ւատար ամենքին, և եղբարք իւրեանց
ընդ ինքեանս։ Եւ ի Զաբուղոնի գնդէ 33
անտի գային ի գործ պատերազմի ա-
մենայն պատրաստութեամբ իւրեանց
Ծ. հազար ոչ ձեռնունայն և ի սիրտ
սիրտ բաժանեալս։

Եւ ի Նեփթաղիմ գնդէ իշխանք Ռ. 34
և ընդ նոսա գային սպարաւորք և
նիզակաւորք ԼԷ. հազար։ Եւ ի Դան 35
գնդէ անտի կազմեալք ի գործ պա-
տերազմի ԻԸ. հազար և Ո.։ Եւ յԱսեր 36
գնդէ անտի գային յաւգնականութիւն
գործոյ պատերազմին Խ. հազար։ Եւ 37
յայնկոյս Յորդանան գետոյ, ի Հռուբէն
և ի Գադ և ի կէս ազգին Մանա-
սեան գնդէ անտի գային ամենայն
կազմութեամբ պատրաստութեամբ
գործոյ պատերազմին ՃԻ. հազար, ա- 38
մենայն պատրաստութեամբ ի գործ
պատերազմի միաբան ի Քեբրոնի, թա-
գաւորեցուցանել զԴաւիթ ի վերայ
ամենայն որդւոցն Իղի, և ամենքին
հաւատարութեամբ միաբան հասին
առ Դաւիթ։ Եւ լինէին անդ առ 39
նմա զերիս աւուրս ուտեալ և ըմ-
պեալ, զի պատրաստեալ էր նոցա
համբարս յեղբարցն իւրեանց, ի սահ- 40

---

22 Զի չ ժամանակէ ի ժ. զըր հանապազ... իբրև... իբրև | 23 Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԻԴ. | անուանք են իշխանաց... զարքայութիւն (գրչէ՝ «իշխանութեանն») Շաւուղի | 24 սպարաւորք վեց Ռ. և ՊՃ. կուռ վառեալ (Օ. մեր՝ «վառեալ» | 25 Որդոց Շ. | 26 Որդոց Ղեւեա չորս Ռ. և ՋՃ. | 27 ՋՌ. և Ունծն Ճ. | 29 Բենիամինի եղբարց Շ. ՋՌ. ...մինչև ցայսօր... կային | 30 ԻՌ. և ՊՃ. ...նահապետացն | 31 Եւ (գրչէ՝ «ի») կէս... Ը. և տասն Ռ. | 32 գործիցէ Իէղ ի սկզբան ի. ՄՃ. արք հաւատարք ամենեքեան | 33 յիսուն հազար զձեռնունայն (գուցէ՝ ձեռնունայն) և ի սիրտս (գրչէ՝ «սիրտս») բաժանեալս | 34 գնդէ անտի իշխանք... կային սպարաւորք... Լ. և ԷՌ. | 35 կազմեալք ի պատերազմ ի գործ... Ռ. և ՊՌ. և վեց Ճ. | 36 յօգնականութիւն գործ (պակասէ) պատերազմի | 37 գնդէն... գային ամենեքեան ամենայն կազմութեամբ (գրչէ՝ «պատրաստութեամբ») գործո... Ճ. և ԻՌ. | 38 ամենայն պատրաստեալք ի գործ... ի Քեբրոն... և ամենեքեան | 39 ըմպելով | 40 ի Սաքարա, ի Զաբուղոնէ և ի Նեփթաղիմա... ուղտուք... և ձէթ |

մանակցացն իւրեանց Իսաքարայ, ի
Զաբողոնէ, ի Նեփթաղիմայ, և կրէին
իշովք, ուղտովք և ջորովք և
մղուք զկերակուրս ալեր և գինւոյ և
չամչոյ և պաղատիտս, ձէթ և զարջառ
և զոչխար յոյժ, զի ուրախութիւն
||191 Ա'|| մեծ էր ընդ ամենայն Իէղ:

## [ԺԳ.]

1 Ապա խորհուրդ կալաւ Դաւիթ
ընդ ծերակոյտ ժողովրդեանն, ընդ
2 հազարաւորս, ընդ բիւրաւորս, և ասէ.
եթէ հաճոյ իցէ ամենայն ժողովր-
դեանդ Իղի, զմտաւ ածէք, զի ի Տէ Այ
մերմէ յաջողեսցի մեզ այս ամենայն,
եկայք առաքեսցուք առ մնացորդս
ամն Իղի ընդ ամենայն երկիր, առ
ամենայն եղբարս մեր, զի իցեն նոքա
քահանայք և Ղևտացիք ի քաղաքս
բաղաքս իւրաքանչիւր ի բնակու-
թեան, զի եկեսցեն ժողովեսցեն առ
3 մեզ. և դարձուսցուք մեք զտապա-
նակն կտակարանաց Տն Այ մերոյ առ
մեզ, զի ոչինչ եղև նմա խնդիր երբէք
4 յամս յաւուրս Շաւուղի: Ետուն պա-
տասխանի ամենայն զաւրքն և ասեն.
այո, ուղիղ և բարի է բանդ յաչս ա-
մենայն ժողովրդեանս, եղիցի այդպէս:
5 Եւ հրաման ետ Դաւիթ ժողովել ամե-
նայն Իէղացւոյն յիւրաքանչիւր ի սահ-
մանաց անտի Եգիպտացւոց մինչև ի
մուտս Եմաթու, զի եկեսցեն բարձցեն
զտապանակն կտակարանացն ի քա-
ղաքէ անտի Յարիմ: Եւ եկին հասին 6
Դաւիթ և ամենայն զաւրքն ի Կարի-
աթարիմ ածել անտի զտապանակն
կտակարանաց Տն Այ, որ նստի ի քե-
րովբէս, զի կոչեցաւ անուն նորա անդ
ի վերայ [նորա: Եւ առին եդին զտա- 7
պանակն կտակարանացն Տն Այ ի վե-
րայ] նորոյ սայլի ի տանէ անտի Ամե-
նադաբ, և Ոզիայ և եղբարք նորաւն
ածին զնոսա: Եւ Դաւիթ և ամենայն 8
Իէղ գային առաջի ամենայն զաւրաւք
իւրեանց, խաղալով խնդալով, փո-
ղովք և երգովք և թմբկաւք: Եւ 9
եկին հասին մինչև ի կալն ի Քեղոմն.
և ձգեաց զձեռն իւր Ոզիայ բուռն
հարկանել զտապանակէն, զի թիւ-
րեաց իմն անդ զուարակն: Բարկացաւ 10
սրտմտութեամբ Տէր ի վերայ Ոզիայ
և անդէն սատակեաց զնա, զի իշխեաց
ձգել զձեռն իւր բուռն հարկանել
զտապանակէն. և անդէն մեռաւ Ոզիայ
առաջի Այ: Եւ տրտմեցաւ Դաւիթ 11
յոյժ, զի եղեն հարուածքն այն ի Տէ
ի վերայ Ոզիայ, և կոչեաց զանուն
տեղւոյն այնորիկ հարուածք Ոզիայ:
Եւ երկեաւ Դաւիթ ի Տէ յաւուր 12
յայնմիկ և ասէ. զիարդ մարթացից
զադարեցուցանել զտապանակն Տն առ
իս: Եւ ոչ իջոյց Դաւիթ զտապա- 13
նակն կտակարանաց Տն Այ ի քաղաքն
Դաւթի, այլ դարձոյց զնա ի տուն
Աբեդդարայ Գեթացւոյ: Անդ հան- 14

ԳԼ. ԺԳ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ Յո. ԺԳ/ԽԵ | 1 ընդ ծերակոյտ... և ընդ բիւրաւորս | 2 Իղի և բոլոր զմտաւ ածէք, զի... տանդ Իղի... իւրաքանչիւր (գ–լ–ւ–է՝ «ի») բնակութեան | 3 զտապանակ... նոքա խնդիր | 5 ժողովեալ... Եգիպտացւոցն... կտակարանաց | 6 զտապանակ կտակարանացն (գ–լ–ւ–է՝ «Տն») Այ | 7 սխալմամբ ընդօրինակողաց գ–լ–ւ–էն յՕ. մերում՝ ի վերջ 6 և ի սկիզբն 7 համարատանդ բանք ինչ, զորս առեալ յէ. օրինակէ՝ եդաք ի բնագրին. | Ամինադարայ, և Ոզա | 8 Իէղ | 9 ի Քեղիոն... Ոզա... թիւրեաց անդ իմն | 10 ի վերայ Ոզա... մեռաւ Ոզա | 12 դարձուցանել զտապանակն (գ–լ–ւ–է՝ «Տն») առ իս | 13 զտապանակ... Աբեդդարա Գեթացւոյ | 14 ի տան Աբեդդարայ... զաւուն Աբեդդարայ... և ընտանեաց նորա |

գեաւ տապանակն կտակարանաց ի
տան Աբեդդարայ ամիսս երիս, և
աւրհնեաց Տէր զտունն Աբեդդարայ և
զամենայն ինչս և զստացուածս նորա։

[ԺԴ.]

1 Եւ առաքեաց Քիրամ արքայ Տու-
րայ հրեշտակս ‖191 Ա²‖ առ Դաւիթ, և
ետ բերել նմա փայտ մայր և ճար-
տարապետս որմաշինաց և շինաւղաց
և ճարտարապետս փայտագործաց, զի
2 շինեսցեն նմա տաճար։ Եւ գիտաց
Դաւիթ, եթէ յաջողեաց Տէր զթագա-
ւորութիւն նորա ի վերայ Իղի, զի
աճելով աճէր և բազմանալով բազ-
մանայր տէրութիւն նորա վասն ժո-
3 ղովրդեան իւրոյ Իղի։ Առաւ էառ
Դաւիթ կանայս իւր յԵմ, և եղեն
4 նմա ուստերք և դստերք։ Այս ա-
նուանք են որդւոցն որ եղեն յԵմ։
5 Սամմայ և Սոբէփ, Նաթան և Սո-
ղոմոն և Ցեբարար և Եղիշուէ և
6 Եղիփաղէթ և Նագէն և Նափէգ և
7 Ցափի և Եղիշամա և Բաաղեարաղ և
8 Եղիփաղաղ։ Եւ լու եղև այլազգեացն,
եթէ թագաւորեաց Դաւիթ ի վերայ
ամենայն Իղի, և ելին համին այլազ-
գիքն ի խնդիր Դաւթի։ Եւ լու եղև
Դաւթի, և գնաց ի դիմի հարկանել
նոցա. և եկին լցան այլազգիքն ի 9
հովիտս Սկայիցն։ Ապա սկսաւ հար- 10
ցանել Դաւիթ ի Տէ և ասէ. եթէ
տացես ինձ հրաման ելանել ի վերայ
այլազգեաց և մատնեսցես զնոսա ի
ձեռս իմ։ Եւ ասէ ցնա Տր. ել հա-
մարձակ, զի մատնեցից զնոսա ի ձեռս
քո։ Եւ ել Դաւիթ ի Բայեղփարսիմ 11
և սատակեաց զնոսա անդէն, և ասէ
Դաւիթ. սատակեաց այսաւր Տր ի
ձեռին իմում զթշնամիս իմ և ջնջեաց
զնոսա, զոր աւրինակ զի պակասէ
ջուր իբրև հատանեն զնա, վասն այ-
սորիկ կոչեաց զանուն տեղւոյն այնո-
րիկ Սատակումն Բաեղփարսիմ։ Եւ 12
թողին լքին անդէն այլազգիքն զդիսն
իւրեանց. հրաման ետ Դաւիթ, և հրձիգ
արարին զամենայն։ Դարձան յաւելին 13
այլազգիքն ելանել ի հովիտս Սկայիցն։
Եւ հարցանէր Դաւիթ ի Տէ Այ, և 14
ասէ ցնա Ած. մի ելաներ դու զհետ
նոցա, դարձիր ի նոցանէ և եկեսցես
դու մինչև ի տանձիսն. և իբրև լսի- 15
ցես դու ձայն բարբառոյ շարժման ի
ծայրից անտի տանձեացն, ապա յար-
ձակեսցիս դու ի վերայ այլազգեացն,
զի գնասցես դու, եթէ ել Տր Ած քո
սատակել զբանակն այլազգեաց։ Եւ 16
արար Դաւիթ որպէս և հրաման ետ
նմա Տր Ած, և սատակեաց զբանակն

---

Գլ. ԺԴ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ Յո. ԺԴ/ԻԶ | 1 հրեշտակ... չէ շինեսցեն (Օ. մեր՝ «և շինեսցեն») նմա տաճար։ | 2 թէ յաջողեաց... աճելով աճէր (դ-ի--է՝ «և բազմանալով») բազմանայր տէրութիւն... ժ. իւրոյ (Օ. մեր՝ «իւրոց») | 3—4 ուստերք (դ-ի--է՝ «և դստերք»). այս անուանք... յԵմ. (—դէն ի նոր տող է ունի Օ. մեր.) Սամա և Սոբեփ... Սողոմոն | 5 և Ցեբաար և Եղշուէ | 6 Նաղեն և Նաբեգ | 7 և Բաղղեարաղ և Եղիփաղաղ (Հմմտ. զանուանս 5—7 համարատանց ընդ համանգյնան որ յ5—7 համար. Գ. գլխոյն սորին գրոց) | Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԻԷ. | 8 ի վերայ (դ-ի--է՝ «ամենայն») Իղի | 10 եթէ տացես... այլազգեացն | 11 ի Բաաղփարսիմ... անդէն ...զթշնամիս իմ («զթշնամիս իմ» եղեալ է յՕ. մերում ի տողամէջսն.)... վասն այնորիկ կոչեաց (յՕ. մերում՝ ի բնագրին եղեալ է «անուանեաց» և ուղղագրեալ ի լուսանցս՝ «կոչեաց», որպէս ունի և Է.)... Բաաղփարսիմ | 12 լքին անդ այլազգիքն զդիսն (Օ. մեր՝ «զդիսն») | 14 մի ելանել դու | 15 դու զձայն... զբանակս | 16 և սատակեաց Նա զբանակս... ի Գաբաւոնէ | 17 Եւ (դ-ի--է՝ «ել») անուն Դաւթի ...և Տր ետ զահ |

պլպղգեաց ի Գաբաւոնէ մինչև Գա-
17 զերայ: Եւ ել անուն Դաւթի ընդ ա-
մենայն երկիր, և Տր ետ զահ իւր ի
վերայ ամենայն հեթանոսաց:

## [ԺԵ.]

1 **Եւ** շինեաց իւր Դաւիթ տուն ի
քաղաքին և պատրաստեաց տեղի տա-
պանակին կտակարանաց Տն Այ և
2 անդ կանգնեաց խորան: Յայնժամ ժամա-
նակի խաւսել կայաւ, ‖191 բ'‖ ասաց
Դաւիթ և ասէ. ոչ ումեք այլում
պարտ և պատշաճ է բառնալ զտա-
պանակն կտակարանացն Տն, եթէ ոչ
Ղևտացւոցն, զի ինքն Տր ընտրեաց
Ղևտացիսն բառնալ զտապանակ կտա-
կարանաց Տն և պաշտել նոցա զնա
3 մինչև յաւիտեան ժամանակաց: Եւ
հրաման ետ Դաւիթ ժողովել զամե-
նայն ազգս Իէլացւոցն յԵմ, զի հան-
ցեն անդր զտապանակ կտակարանացն
Տն ի տեղին, զոր պատրաստեաց նմա
4 Տր: Եւ ժողովեցին զամենայն որդիսն
5 Ահարոնէի, զՂևտացիսն: Եւ զորդիսն
Կաաթու. Ուրիէլ իշխան, և եղբարք
6 նորուն ՃԻ: Յորդւոյն Մերարի. Ասայիա
7 իշխան, և եղբարք նորուն ՄԻ: Յոր-
դւոյն Գերսոնա. Յովէլ իշխան, և
8°9 եղբարք նորուն Մ: Որդիքն Քեբրոնիա.
Եղիէլ գլուխ, և եղբարք նորուն Ձ:
Յորդւոյն Ոզիէլի. Ամինադաբ գլուխ, 10
և եղբարք նորուն Ճ. և ՃԺ. անձն: Եւ 11
հրաման ետ Դաւիթ կոչել զՍադովկ
և զԱբիաթար քահանայապետն և
զՂևտացիսն. և ածին զՈւրիէլ և
զԱսայիա և զՅովէլ և զՍամէաս և
զԵղիէլ և զԱմինադաբ: Եւ ասէ ցնոսա 12
Դաւիթ. դուք էք նահապետք ազգա-
տոհմացդ Ղևտացւոց. արդ սրբեցէք
դուք զանձինս ձեր և զեղբարս ձեր,
զի բառնալ մարթասցուք զտապա-
նակն կտակարանաց Տն Այ ի տեղւոյ,
ուր պատրաստեցին նմա, զի առանց 13
պատրաստութեան ձերոյ առաջ սա-
տակումն Տր ԱԾ մեր ի մեզ, զի ոչ
խնդրեցաք մեք զնա իրաւամբք: Եւ 14
սրբեցան քահանայքն և Ղևտացիքն,
զի բարձցեն զտապանակն կտակա-
րանաց Տն Այ Իղի: Եւ բարձին որ- 15
դիքն Ղևտացւոց զտապանակ կտա-
կարանաց Տն, որպէս և հրաման
տուեալ էր Մովսէսի բանիւ Տն Այ
Իղի ըստ գրոյն, լծայի բարձեալ ու-
սովքն իւրեանց: Եւ հրաման ետ 16
Դաւիթ իշխանացն Ղևտացւոց և ասէ.
ածէք կացուցէք զեղբարս ձեր ի սպաս
պաշտաման ուրախութեան, ի սրինգս,
ի փողս և ի թմբուկս, զի լսելի լիցին
բարձրացեալ ձայնք ուրախութեան:
Եւ ածին կացուցին Ղևտացիքն զԵ- 17
ման որդի Յովելայ, և յեղբարց անտի

Գլ. ԺԵ.—Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԺԵ. | 2 Է. ունի ի լուս. այլ բաժ. գլխոյ՝ ԻԲ. | խօսել (դ-ձ-ե՝ «կալաւ») ասաց Դ... ոչ ումեք (դ-ձ-ե՝ «այլում».—յՕ. մերում թուի վրիպակ՝ «այլումէ+.») պարտ... զտապանակ կտակարանաց Տն եթէ ոչ Ղևտացիք... ընտրեաց զՂևտացիսն | 3 ազգս Իէլացոց... զտապանակն կտակարանաց... պատրաստեաց Ն- նմա (դ-ձ-ե՝ «Տր») | 4 ո. Ահարոնի (Օ. մեր՝ «Ահարոնէի») | 5 Կահաթու... Ծ. և բսան | 6 ՃԾ. և Ի. | 7 և եղբարք նոր- ՃԾ. | 8° համարատուեդ դ-ձ-ե յՕ. մերում և յԷ. | 9 Որդիք Ք... Նոքէն ութսուն | 10 Յորդւոց Ոզելի | 11 ետ կոչել Դաւիթ... զԵւիճար... զՈւրիէլ և Ասափայ | 12 սրբեցէք | 13 առանց պատրաստութեան ձերում | 14 զտապանակ | 15 Եւ բարձին... ըստ գր-ցն... ուսովք | 16 իշխանաց Ղևտացոցն... ի սրինգս | 17 զԵման որդի Յովելայ (Է Թգ. Զ. 33, «Յովելայ» ունի և Օ. մր.)... զԱսափ որդի... զԵմաթ, զորդի Քուշիա |

զԱսափ, զորդի Բարաքեայ, և յորդւոցն
Մերարի եղբարց նորա զԵթամ, զորդի
18 Կուշեայ։ Եւ ընդ նոսին եղբարք նորուն
Ղևտացիք երկրորդեալք. և Զաքարիա
որդի Ազիէլ, Ազիմարամովթ, Յէիէլ և
Անանիա և Եղիաբ և Բանէ և Մա-
սափ և Մատաթիա և Եղիփաղ և
Մաքսիա և Մականիա և Երդադոմ
19 և Յէիէլ և Ոզիայ դռնապանք։ Եւ
20 երգիչք. Եման, Եթամ և Ասափ։ Զա-
քարիա ||191 բ²|| և Ոզիէլ և Շամիրա-
մովթ և Յէէլ և Անանիա և Եղիաբ,
Մասափ և Բանէ որ փառս գաղտնեացն։
21 Մատաթիա և Եղիփաս և Մականիա
և Աբեդոմ, Յէիէլ և Ոզիա փառս ու-
թերորդացն ի բարձրաձայն բարբա-
22 ռոյ։ Եւ Յեքոնիա իշխան գլուխ Ղև-
տացւոցն ի համբառնալ զերգսն, զի
23 իմաստուն էր։ Բարաքիա և Եղկանա
24 դռնապանք տապանակին։ Եւ Սա-
բանիա և Յովսափաթ և Նաթանիէլ
և Ամասիա և Զաքարիա և Բանէ
և Եղիազար քահանայք, որ փողս
հարկանէին փողովք առաջի տապա-
նակին կտակարանաց Տն։ Եւ Աբդի-
դոմ և Յէիէլ դռնապանք կտակա-
րանաց Տն։
25 Եւ էր Դաւիթ ի ծերակոյտ ժո-
ղովրդեանն զաւրագլուխ հազարաւոր
գնդաց, որ երթային բառնալ զտա-
պանակ կտակարանացն Տն ի տանէն
Աբեդդարայնու խնդութեամբ և ուրա-
խութեամբ։
Եւ եղև իբրև խնդեալ կային Ղև- 26
տացիքն առաջի Տն ի բառնալ զտա-
պանակ կտակարանաց, և զենին զուա-
րակս եւթն։ Եւ Դաւիթ զգեցեալ էր 27
բեհեզ և ամենայն Ղևտացիքն, որ
բառնայեն էին զտապանակ կտակա-
րանաց Տն, և Յեքոնիա գլուխ երգ-
չացն. և Դաւիթ միայն զեփուռն
ունէր։ Եւ ամենայն Իէղ որ առեալ 28
բերէին զտապանակ կտակարանաց Տն
ի ձայն աղդոյ, ի ձայն շեփորաց և ի
ձայն փողոյն կրկնէին։ Եւ լինէր մինչ 29
գայր տապանակն կտակարանաց Տն
ի քաղաքն Դաւթի, և Մեղքող դուս-
տրն Սաւուղի կարկառեալ կայր ընդ
պատուհանն, և եսես նա զարքայ
Դաւիթ, զի գայր նա կաքաւելով,
այպանեաց զնա ի միտս իւր։

[ԺԶ.]

Եւ բերին մուծին եդին զտապա- 1
նակն կտակարանաց, և զենին զուա-
րակս եւթն, և Դաւիթ զգեցեալ էր
բեհեզ. և հաստատեցին [զ]տապա-
նակն ի մէջ խորանին, զոր կանգնեաց
նմա Դաւիթ, և մատուցին նմա ող-
ջակէզս պատարագաց զվասն խաղա-
ղութեանն և փրկութեանն առաջի Տն։

---

18 Աէիէղ... Յիէլ... և Մատթիա... Երդէադոմ և Յիէլ | 19 Եւ երգիչք. և Մանեթաամ (Օ. մեր՝ «Եմանեթամ», յորում կրկին անուանք թուին լինել) և Ասափ | 20 և Զաքարիա... և Շէրամովթ և Յեիղ (Հմմտ. զանուանս համարատանդ ընդ հանդգյնան որ ի 5—6 համար. ԺԶ. գլխոյն) | 21 և Աբդեդովմ | 22 զերգս | 24 Յովսափաթ և Նաթանայէլ... և Եղէազար... առաջի (Օ. մեր վրիպակաւ «առաջին») տապանակին... դռնապանք կտակարանացն (դ-ձ--՝ «Տն») | 25 Դաւիթ և ծերակոյտ... հզօրաւոր... զտապանակն... Աբեդդարայնու | 26 Տն (դ-ձ--՝ «ի») բառնալ զտապանակն | 27 որ բառնալ-ոյ | 28 կտակարանաց Տն ... Դ--Բ ի ձայն աղդ... շեփորեա... փողոյն | 29 տապանակ... ի քաղաքն Դաւթի... Շաւուղի... ընդ պատուհանն |

Գլ. ԺԶ.—Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԺԶ. | Անանջատ և միայար ունի Օ. մեր զսկիզբն ԺԶ.-որդ գլխոյն ընդ նախընթացին՝ առորակիտիւ միայն բաժանեալ | 1 զտապանակ կ. Տն

2 Եւ կատարէր Դաւիթ ողջակէզսն
պատարագաց զվասն խաղաղութեանն
և փրկութեան, և սկսաւ աւրհնել
3 անուամբ Տ՟ն։ Եւ զնէր Դաւիթ մա-
սունս մասունս ամենայն Ի՟էլացի մար-
դոյ, յարանց մինչև ցկանայս, առ այր
քաքար մի և մանդառ մի և կաւաղ մի։
4 Եւ կարգեաց Դաւիթ առաջի տապա-
նակին կտակարանաց երգիչս և աւրհ-
նիչս, որ կան խոստովան լինել զՏ՟ր
5 Ա՟Ծ Ի՟ղի. և Ասափ զաւրագլուխ, և
երկրորդ նորին Զաքարիաս, և Յէիէլ
և Շէմիրամովթ և Յմայէլ և Մատա-
6 թի և Եղիար և Բանէ և Արդադամ
և Ոսիայ, և օրինգս և փողս առ-
‖192Ա՛‖-աջի տապանակին կտակարա-
նաց Ա՟յ։
7 Յաւուր յայնմիկ կարգեաց Դաւիթ
ի սկզբանն աւրհնել ի ձեռն Յասափա
8 և եղբարց նորա։ Խոստովան եղերուք,
ասէ, Տ՟ն և կարդացէք զանուն նորա,
պատմեցէք զգործս նորա մեծամեծս։
9 Աւրհնեցէք զնա և պատմեցէք ամե-
նայն հեթանոսաց զսքանչելիս նորա,
10 զոր արար։ Ուրախ լիցին սիրտք, որ
11 խնդրեն զհաճոյս նորա։ Զաւրացարուք
և խնդրեցէք զերեսս նորա յամենայն
12 ժամ։ Յիշեցէք զսքանչելիս նորա զոր
արար, զնշանս և զարուեստս և զի-
13 րաւունս բերանոյ նորա։ Զաւակք
Աբրահամու, որդիք Յակոբայ, ընտ-
րեալք նորա։ Նա ինքն է Տ՟ր Ա՟Ծ մեր. 14
յամենայն երկրի են իրաւունք նորա։
Յիշատակ արար յաւիտենից ուխտին 15
իւրում, բան զոր պատուիրեաց ի
հազար ամ, ուխտ զոր եդ ընդ Աբրա- 16
համու և զերդումն իւր ընդ Սահա-
կայ, հաստատեաց զհրամանս իւր առ 17
Յակովբ և առ Ի՟էլ զուխտ իւր յա-
ւիտենից. ձեզ տաց, ասէ, զերկիրն 18
Քանանացւոց վիճակ ժառանգութեան
ձերոյ։ Զի էին նոքա սակաւ թուովք, 19
նշդեհք և պանդուխտք ի նմին, գնա- 20
ցին ազգէ յազգ ի թագաւորութենէ
ի ժողովուրդ այլ, ոչ ետ թոյլ մար- 21
դոյ մեղանչել նոցա, կշտամբեաց զթա-
գաւորս վասն նոցա. մի մերձենայք, 22
ասէ, յաւծեալս իմ և ի մարգարէս
իմ, ասէ, մի՛ մեղանչէք։ Աւրհնեցէք 23
զՏ՟էր ամենայն երկիր, պատմեցէք աւր
ըստ աւրէ զփրկութիւն նորա։ Պատ- 24
մեցէք ի հեթանոսս զփառս նորա,
յամենայն ժողովուրդս զսքանչելիս նո-
րա։ Մեծ է Տ՟ր և աւրհնեալ է յոյժ, 25
ահարկու է նա ի վերայ ամենայն
կռոց, զի ամենայն կուռք հեթանոսաց 26
դեք են, այլ Տ՟ր զերկինս արար։
Աւրհնութիւն և մեծ վայելչութիւն 27
առաջի նորա, զաւրութիւն և խոս-
տովանութիւն ի սրբութեան նորա։
Տուք Տ՟ն ազանց, տուք Տ՟ն 28
փառս անուան նորա։ Առէք պատա- 29

---

(Դձն՝ «և զեռին զաւարակս եւթն, և Դաւիթ զգեցեալ էր բեհեզ», — որ սխալմամբ թուի կրկնեալ յընդօրինակողէն ի 26 և ի 27 համարատանց ԺԵ. գլխոյն. —) և հաստատեցին ԶՆ— ի մէջ խորանին... զվասն խաղաղութեան և փրկութեան առաջի Ա՟յ | 2 Եւ կատարեաց Դ... խաղաղութեան... և սկսաւ | 3 բաղարջ մի և մանդառ մի | Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԻԹ. | 4 Տ՟ն երգիչս... Ի՟ղի | 5—6 Յայէլ... և Բանէ և Եչէէլ (Դձն՝ «և Արդադամ և Ոսիայ, և օրինգս և») է փողս... կտակարանաց Տ՟ն (Հմմտ. զանուանս երկոցուն համարատանցդ ընդ հանգոյնսն որ ի 20 համար. նախընթաց ԺԵ. գլխոյն) | 9 ամենայն հեթանոսս | 13 Զաւակ Ա. | 14 երկրի (Դձէ՝ «են») իրաւունք | 17 զհրաման իւր... Ի՟էղ | 18 Քանանացոց | 19 թուով | 20 գնային | 24 յամ ժղվդ զսքանչելիս | 25 ահարկու է նա (Դձէ՝ «ի վերայ») ամենայն կռոց | 26 այլ Տ՟ր Ե՟Ք երկինս | 27 խոստովանութիւն | 29 պատարագ |

րագս և մտէք առաջի նորա, երկիր-
պագէք Տն, որ բնակեալ է ի սրբու-
30 թեան իւրում։ Երկիցեն յերեսաց նորա
ամենայն երկիր, զի հաստատեաց զաշ-
31 խարհ, զի մի սասանեսցի։ Ուրախ
լիցին երկինք և ցնծասցէ երկիր,
պատմեսցեն հեթանոսք, թէ Տր թա-
32 գաւորեաց։ Խռովեսցի ծով լրիւ իւրով,
ցնծասցէ անտառն և փայտն ագա-
րակի և ամենայն ինչ որ իցէ ի նմա։
33 Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք
անտառի յերեսաց Տն, զի գայ, զի հա-
սեալ է Տր դատել զերկիր։
34 Խոստովան եղերուք Տն, զի բարի
է, զի յաւիտեան է ողորմ նորա։
35 Ասացէք, եթէ փրկեաց զմեզ Ած և
ժողովեաց զմեզ ի հեթանոսաց, զի
աւրհնեսցուք զանուն քո սուրբ և
պարծեսցուք յամե-‖192 Ա$^{2}$‖-նայն յաւրհ-
36 նութիւնս քո։ Աւրհնեալ է Տր Ած
Իղի յաւիտենից, և ասասցէ ամե-
նայն ժողովուրդն. ամէն։
Եւ աւրհնէին յաւրհնութիւնս յայս
37 զՏր Ած։ Եւ թողին անդ առաջի տա-
պանակին կտակարանաց Տն և զԱսափ
և զեղբարս նորա, զի պաշտիցեն ա-
ռաջի տապանակին յամենայն ժամ
միարան աւրըստաւրէ զաւրհնապաղ։
38 Եւ զԱբեդոմն և զեղբարս նորա ԿԸ., և
Աբեդաթ և Իդիթում և որդի Ոսա
39 ի դարապանս։ Եւ Սադովկն քահանայ,
և զեղբարսն առաջի վրան ժամուն
40 Տն ի Բամաս որ ի Գաբաւոնինէ, զի
մատուսցանիցեն պատարագ ողջակիզաց
Տն ի վերայ ողջակիզաց սեղանոյն
զայգուն և զերեկուն, ըստ ամենայնի
որպէս գրեալ է ըստ աւրինաց Տն,
որպէս և ետ պատուէր որդւոյն Իղի
ի ձեռն Մովսէսի ծառայի Տն։ Եւ ընդ 41
նոսա Եման և Իդիթոմն և այլք, որ
ընտրեալ էին յանուանէ աւրհնել զՏր,
զի յաւիտեան է ողորմ նորա։ Եւ ընդ 42
նոսա Եման և Իդիթոմն և Աբեդոմն,
և եղբարք իւր ԿԸ., և փող և սրինգ
և յերգս քնարի երգել Տն Այ, և Իդի-
թովմ դարապետ ի վերայ խորանին
տապանակին կտակարանաց։ Եւ խա- 43
ղաց գնաց ժողովուրդն ամենայն յիւ-
րաքանչիւր տեղիս, գնաց եկն և Դաւիթ
ի տուն իւր աւրհնել զնա։

## [ԺԷ.]

Եւ եղև իբրև բնակեալ էր Դաւիթ 1
ի տան իւրում, խաւսել կալաւ Դա-
ւիթ առ Նաթան մարգարէ և ասէ.
արդ այս իրաւունք են. ես բնակեալ
եմ ի տաճարս մայրակոփեայս, և տա-
պանակ կտակարանաց Տն վրանաւք
արտաքոյ։
Եւ պատասխանի Նաթան Դաւթի 2
և ասէ. զամենայն ինչ զոր ասէ սիրտ
քո, արա, զի Ած քո ընդ քեզ է։ Եւ 3
եղև ի գիշերին յայնմիկ պատգամ Տն
առ Նաթան մարգարէ և ասէ. գնա 4
դու ասա ցԴաւիթ ծառայ իմ. այս-

---

30 զաշխարհս | 32 անտառ և փայտ... ամենայն որ ինչ | 35 յամենայն օրհնութիւնս | 36 Օրհնեալ (դոխոէ՝ «է») Տր | 37 Տն (դոխոէ՝ «և») զԱսափ ...զի պաշտեսցեն | 38 զԱբեդոն ...Իդիթովմ | 39 Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ Լ. | և Սադովկ... զեղբարս... ի Բամայս որ ի (Օ. մեր թերևս վրիպակաւ՝ «որչի») Գաբաւոնն է | 40 սեղան-ոյն... և զերեկուն Է (-ոյ-դէ-), ըստ ամի որպէս և գրեալ է... որդոցն Իղի | 41 և այլքն | 42 Իդիթովմ և Աբեդոմ... ԿԸ. ...և սրինկ... Այ, և զիթովմ (-ոյ-դէ-) դարապետ |

Գլ. ԺԷ.—Է. ունի ի լուսանցս կրկնակի բաժանումն գլխոյ՝ Թռ. ԺԷ/ԼԱ | 1 ի տան իւրում Դաւիթ, խօսել... արտաքոյ | 2 զամենայն զոր ինչ ասէ... զի Տր Ած | 4 դու ասաց ցծառա իմ

պէս ասէ Տր. Ոչ եթէ դու շինեսցես ինձ տաճար, զի բնակեցայց ես ի նմա,
5 զի ոչ եմ ես բնակեալ ի տան յաւրէ յայնմանէ, յորմէ հետէ հանի ես զոր-դիսն Իղի յերկրէն Եգիպտացւոց մինչև ցայսաւր ժամանակի. և էի ես անդ բնակեալ ի վրանս յարկ աւթեւանի:
6 Ընդ ամենայն տեղիս, ընդ որ անցանէիցես ի ժամանակս Իէլացւոց, ոչ է երբէք ասացեալ իմ ցմի զք յազգաց անտի Իէլացւոց և որոց պատուէր ետու հովուել ժողովրդեան իմում ասելով, եթէ ընդէ՞ր ոչ շինէք դուք
7 ինձ տաճարս մայրափայտ: Եւ արդ այսպէս ասասցես դու ցծառա-||192Բʹ||-այ իմ Դաւիթ, եթէ այսպէս ասէ Տր զաւրութեանց. Ես առի զքեզ ի գոմաց ի մակաղատեղէ խաշանց, զի կացուցից զքեզ առաջնորդ ժողովր-
8 դեան Տն Իղի, և եղէց ես ընդ քեզ յամենայնի ուր և գնասցես դու, և սատակեցի ես զամենայն թշնամիս քո առաջի երեսաց քոց:

Եւ արարի ես քեզ անուն մի ըստ անուան մեծամեծաց, որ ի վերայ եր-
9 կրի էին յառաջ քան զքեզ: Եւ հաստատեցից ես տեղի ժողովրդեան իմոյ Իղի և անկեցից զնա, և բնակեսցէ խաղաղութեամբ առանձինն և մի խռովեսցի, և մի յաւելցէ որդի անաւրէնութեան մեղանչել նմա որպէս յա-
ռաջ: Եւ յաւուրց անտի յայնցանէ, 10
յորմէ հետէ կարգեցի ես դատաւորս ի վերայ ժողովրդեան իմոյ Իղի և նկուն արարի զամենայն թշնամիս նորա առաջի նորա, արդ աճեցուցից զքեզ և շինեսցես տաճարս, ասէ Տր:
Եւ եղիցի, իբրև լցցին աւուրք քո 11
և ննջեսցես դու առ հարս քո, և կանգնեցից ես զզաւակ քո զկնի քո, և եղիցի որ ելէ յորովայնէ քումմէ, և պատրաստեցից ես զարքայութիւն
նորա: Նա շինեսցէ ինձ տուն, և 12
հաստատեցից և կանգնեցից ես զաթոռ նորա մինչև յաւիտեանս ժամանակաց.
և ես եղէց նորա հայր, և նա եղիցի 13
իմ որդի, և զողորմութիւն իմ ոչ դարձուցից ի նմանէ, որպէս դարձուցի յայնցանէ, որ յառաջն էին քան զնա:
Եւ հաստատեցից զնա և կացուցից 14
զնա ի թագաւորութեան իմում, և աթոռ նորա եղիցի հաստատեալ մին-
չև յաւիտեան: Ըստ ամենայն բանիցս 15
այսոցիկ [եւ ըստ ամենայն տեսլեան այսորիկ] այսպէս եկն խաւսեցաւ Նա-
թան առ Դաւիթ: Եւ եկն արքայ 16
Դաւիթ, նստաւ առաջի Տն և ասէ. ո՞ եմ ես Տր կամ զի՞նչ է տուն իմ, զի սիրեցեր դու զիս մինչև յաւիտեան.
և թեթևացաւ այս ամենայն առաջի 17
քո Տր ԱԾ, և խաւսեցար զայս այսպէս ի վերայ տան ծառայի քո յերկար և

Դաւիթ... բնակեցայց (գրչ-ե՝ «եմ») ի նմա | 5 անդ բնակել | 6 ընդ որ անցեալ էՏ է- ի ժ. Իէղացւոցն, և ոչ երբէք ասացեալ է իմ... անջի Իէղացոցն... եթէ (գրչ-ե՝ «ընդէ՞ր») ոչ շինէք... տաճար մայրափայ | 7 ի գոմց... տանն Իղի | 8 ընդ քեզ յամ —ուր և գնասցես դու և սատակեցես... ըստ անուան («անուան» ի տողամէջս եդեալ է յՕ. մերում.) | 9 ժողովրդեան իմում... մի յաւելցէ... յառաջն | 10 ժողովրդեան իմում | 11 որ ելցէ յորովայնէ | 12 նորա (Օ. մեր՝ «նոցա») հայր | 13 ոչ դարձուցից (յՕ. մերում եդեալ է ի բ ն ա գ ր ի ն՝ «ոչ արգելից» և ապա ուղղագրեալ ի լ ու ս ա ն ց ս՝ «ոչ դարձուցից.)... որպէս դարձուցի... յառաջ էին | 14 ի թ. իշխում | 15 Ը. ա. բանիցս այսոցիկ և ըստ ամենայն տեսլեան այսորիկ (թերևս մոռացմամբ ընդօրինակողին պակասեն ի մերում Օ. նոտրագիրքը, զորս յաւելաք ի բնագրին՝ համաձայն Է. օրինակին.) այսպէս | 16 ո՞յ եմ ես | 17 և թեթևացաւ (Օ. մեր՝ «թեթևացաւ»)... բարձրացուցեր (գրչ-ե՝ «դու») զիս |

հայեցար զու յիս իբրև ի տեսիլ մար-
դոյ և բարձրացուցեր զու զիս, Տր Ած:
18 Զինչ ես յաւելցէ Դաւիթ ի քեզ, զի
փառաւորեցեր զու զծառայ քո, և
19 զու գիտես զծառայ քո: Ըստ սրտի
քում արարեր զամենայն մեծութիւնս
զայս, զի ծանիցեն զամենայն զաւրու-
20 թիւնս քո: Տէր, ոչ ոք է իբրև զքեզ,
և ոչ այլ Ած դոյ բաց ի քէն ըստ
ամենայնի, որպէս լուաք մեք ական-
21 ջաւք մերովք: Եւ ոչ դոյ իբրև զժո-
ղովուրդ քո Իէղ և ոչ այդ յազգս
իբրև զազգս, և ոչ յուսացեալ եմք
յոք իբրև յԱծ մեր, եթէ երթիցէ
առաջի մեր և փրկեսցէ զժողովուրդ
իւր և հաստա-‖192 Բ[2]‖-տեսցէ զանուն
իւր մեծ զերևելի, մերժել յերեսաց
22 ժողովրդեան քո զհեթանոսս: Եւ
եդուր զու ժողովրդեան քում Իէղի
հաստատութիւն մինչև յաւիտեան, և
23 զու Տր եղեր նոցա Ած: Եւ արդ Տր
իմ, Տր իմ, բան քո, զոր խաւսեցար
ընդ ծառայի քում ի վերայ տան քո,
24 հաստատեսցի յաւիտեան: Եւ արասցես
զու որպէս խաւսեցար, և հաստա-
տեսցես բարձրացուսցես զանուն քո
մինչև յաւիտեանս ժամանակաց, զի
ասիցեն, եթէ Տր ամենակալ Ած Իէղի,
և տուն Դաւթի ծառայի քո հաս-
տատեալ, պատրաստեալ առաջի քո:
25 Զի զու ես Տր Ած իմ, յայտնեցեր զու
ունկան ծառայի քո շինել քեզ տաճար:
Վասն այսորիկ եգիտ շնորհս ծառայ
քո, կալ յաղաւթս առաջի քո: Եւ 26
արդ Տր, զու նոյն Ած ես, և խաւ-
սեցար զայս բարիս ամենայն ի վերայ
ծառայի քո, զի եղիցի յաւիտեան ա- 27
ռաջի քո, զի զու Տր աւրհնեցեր, և
աւրհնեալ կացցէ յաւիտեան:

## [ԺԸ.]

Եւ եղև յետ այսորիկ հարկանէր 1
վանէր Դաւիթ զայլազգիսն և հանէր
ի ձեռաց նոցա զԳեթն և զգաւառս
նորա ի ձեռաց այլազգեաց: Հարկանէր 2
վանէր զՄովաբ, և լինէր Մովաբ
ծառայ Դաւթի պաշտել պատարա-
գաւք: Ապա հարկանէր վանէր Դա- 3
ւիթ զԱդրաազար արքայ Սուբա
յԵմաթ ի ժամանակի, իբրև յարու-
ցեալ գայր դնել զձեռն իւր ի վերայ
գետոյն Եփրատու: Եւ առնոյր Դա- 4
ւիթ զնորա հազար կառս ոսկիապատս
և եւթն հազար հեծեալ և Ի. հազար
հետևակ, և քակէր քակտէր զայն և
թողոյր իւր անտի Ճ. կառս ի սպաս:
Ապա դարձեալ գայր հասանէր արքայ 5
յԱսորեստանի կողմանցն Դամասկոսի
ի թիկունս Ադրաազարու արքայի Սու-
բայ. դարձեալ հարկանէր վանէր Դա-
ւիթ զԱսորիսն ի Ի.ևԲ. հազարս այր
պատերազմող և զաշխարհն ի հարկի
կացուցանէր: Եւ շինէր պարհակ ի 6
Դամասկոս Ասորեստանեաց, և կային
նմա ի ծառայութեան բերել նմա պա-

---

18 փ. զու զծառայս քո և | 21 զԻէղ... յուսացեալ եմ յոք | 22 Եւ եդուր (Գրիգոր՝ «զու») ժողովրդեան | 23 Տր իմ, Տր, (Գրիգոր՝ «իմ») բանն քո (Օ. մեր՝ «բանքդ».—Թեքեա՝ «բան քո») զոր... ի վր տան քում | 24 և հաստատեսցես և բարձրացուսցես | 25 զկնի «տաճար» բառից ի Նոր տողէ ունի Օ. մեր. | Վասն այնորիկ | 26 Եւ արդ զու նոյն Տր Ած ես |

Գլ. ԺԸ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ ԺԸ/ԼԲ. | 3 զԱդրիազար արքայ Սուբայեմաթ | 4 Դ. զնորա (Օ. մեր՝ «զնոսա») հազար կառս ոսկիապատս (Օ. մեր՝ «ոսկիապատ») և Է̃Ռ. հեծեալ և [illegible] հազար հետևակ. և քակէր քանդէր զայն և թողոյր | 5 արքա Ասորեստանի ի կողմանց ...Ադրէազարու ([illegible])... ի բյան և յերկու հազար այր | 6 ի ծառայութիւն |

7 տարապս հանապազորդս։ Եւ առնոյր
Դաւիթ զմանեակսն ոսկիս ի ծառա-
յիցն Ադրաազարու և բերէր զնոսա
8 յԵմ։ Եւ ի Տաբաթայ և յայլոց ընտիր
ընտիր քաղաքացն Ադրաազարու առ-
նոյր Դաւիթ արծաթ և արոյր և
պղինձ բազում յոյժ, ուստի և առնէր
իսկ Սողոմոն զծովն պղնձի և զսիւ-
նըս պղնձիս և զայլս ամենայն սպասն
պղնձի։
9 Ապա իբրև լուաւ Թովայ արքայ
Եմաթայ, եթէ վանեաց սատակեաց
Դաւիթ զամենայն զաւրութիւն Ադ-
10 րաազարու արքայի Սուբայ, և առա-
||193Ա'||-քեաց նա զԱդորամ որդի իւր
առ Դաւիթ աղաչել զնա ի խաղա-
ղութիւն և աւրհնել զնա, զի հար-
կանէր վանէր զԱդրաազարեր, զի այր
էր նա խռովիչ, մարտիկ պատերազ-
մող։ Եւ վանէր զԱդրաազարէր Դաւիթ
և առնոյր զամենայն սպաս զոսկոյ և
11 զարծաթոյ և զպղնձոյ։ Եւ բերէր
Դաւիթ զամենայն սպասն զոսկոյ և
զարծաթոյ յամենայն ազգաց հեթա-
նոսաց յԻդումեացացն [եւ ի Մովաբա-
ցոցն եւ յորդւոցն] Ամոնոյ և այլոց
12 ազգացն Ամաղեկացւոցն։ Եւ Աբեսայ
որդի Շարուհեայ հարկանէր վանէր
զկոտորածս Եդոմայեցւոց ի հովիտս
13 աղտիցն Ը․և․Ռ․ հազար։ Եւ անդ շի-
նէր պարհակ և պարհակապանս
կարգէր. և կային Եդոմայեցիքն ի
ծառայութեան Դաւթի յամենայնի,
յոր և հրամայէր նոյա։ Եւ թագա- 14
ւորեաց Դաւիթ ամենայնիւ ի վերայ
Իղի, և առնէր զիրաւունս և զար-
դարութիւն յամենայն ժողովրդեանն։
Եւ Յովաբ որդի Շարուհեա սպարա- 15
պետ նորա, և Յովսափատ որդի Աքի-
ղովթ յիշատակաց դպիր, և Աքիտովփ 16
և Աբիմելէք, որդիք Սադովկայ, քա-
հանայք նորա, և Շուշա դպրապետ
նորա, և Բանէ որդի Յուդաեէ ի վե- 17
րայ եղի մաի, և որդիքն Դաւթի
առաջինքն ի ձեռն թագաւորի։

[ԺԹ.]

Եւ եղև յետ այսորիկ իբրև մեռաւ 1
Նաաս արքայ որդւոցն Ամոնայ, և
թագաւորեաց Անան որդի նորա ընդ
նորա։ Խաւսել սկսաւ Դաւիթ և ասէ. 2
Եկայք արասցուք և մեք ողորմու-
թիւն ընդ Անանու որդւոյ Նաասու,
որպէս արար հայր նորա առ մեզ ո-
ղորմութիւն։ Եւ առաքեաց հրեշտակս
առ Անան մխիթարել զնա վասն հաւր
իւրոյ. և եկին ծառայք Դաւթի յեր-
կիրն որդւոցն Ամոնայ առ Անան
մխիթարել զնա։ Եւ ասացին իշխանք 3
որդւոցն Ամոնայ առ Անան և ասեն
ցնա. միթէ փառաւորել ինչ յղեաց

7 զմանեակն ոսկիս | 8 և յայլ—ոց... Սողոմոն... և զայլ ա՟մ սպասս պղնձիս | 9 Է. ունի ի լուս. բաժան. գլխոյ՝ ԼԳ. | արքա —յէ— Եմաթա... զօրութիւնն | 10 զԱ—որամ —որդի իւր... աղաչէր... վանէր զԱդրիազար... զԱդրիազար Դաւիթ... սպասս ...և պղնձոյ | 11 զ—ա՟մ սպաս—... յԵդովմեացւոցն — է Մ—վ—բ—ց—ցն — յ—րդ——ցն (պակասեն յՕ. մրուր նաւրագիրքդ, զորս առեալ յէ. օրինակէն՝ եդաք ի բնագրին.) Ամոնա և այլ—ոց ազգաց Ա. | 12 Եւ Աբեսսեա... Եդոմա-ցոցն... յաւլ և ի տասն հազար | 13 Եդոմեացիք ի ծառայութիւն | 15 և Յովսափաթ որդի Աբելովթ | 16 և Աքիտովբ | 17 որդի Յովիդաէ ...ելիմոի |

Գլ. ԺԹ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ ԺԹ/ԼԴ. | 1 ընդ նմա | 2 խօսել կ ա լ ա ւ Դաւիթ... և առաքեաց Դ——իթ հրեշտակս... ծառայքն... ի յերկիրն որդոցն Ամոնայ | 3 իշխանքն որդոցն Ամոնայ... և ասեն (գ—ի——է՝ «ցնա»). միթէ... աչաց քոց, ո՞—ր զի քննեսցեն և ջիտեսցեն և |

Դաւիթ զհայր քո առաջի աչաց քոց.
ո՞չ զի քննեսցեն և զխուզեսցեն և լըր-
տեսեսցեն զքաղաքս քո ծառայք իւր:
4 Եւ յղեաց Անոն զծառայս իւր, և
կալան զծառայսն Դաւթի, գերծին
զհերս և հատին զզրաւշակս և ար-
5 ձակեցին զնոսա անդրէն: Եւ լուր եղև
Դաւթի արքայի վասն ծառայից իւ-
րոց, զի էին այնպէս անարգեալ յոյժ,
յղեաց ընդ առաջ նոցա և ասէ ցնո-
սա. Նստարուք դուք այդրէն յԵրիքով,
մինչև բուսցին հերք ձեր և ի չափ
հասցեն, և ապա եկեսջիք: Եւ նստան
անդ որպէս և հրամայեաց նոցա:
6 Ապա իբրև տեսին որդիքն Ամոնայ
և Անոն արքայ իւրեանց, առեալ
հազար քանքար արծաթոյ և խնդրե-
ցին վարձու զԱսորիսն ‖193 Ա²‖ Միջա-
գետաց, զԱսորիսն Մաաքայ և զԱսո-
7 րիսն ի Սուբաա, և կառս հեծեալս
երիւարաւք ԼԲ. հազար, և զԲաամաք
արքայ զաւրաւք իւրովք, և եկին
պատրաստեցան կային ի գործ պա-
տերազմի ի Միտաաթա, և որդիքն
Ամոնայ ժողովեցան յիւրաքանչիւր
8 քաղաքացն ի պատերազմ: Եւ իբրև
լուաւ Դաւիթ, առաքեաց նա զՅովաբ
սպարապետն և զամենայն զաւրս իւր:
9 Ապա ելին որդիքն Ամոնա, կարգե-
ցան պատրաստեցան ի գործ պատե-
րազմի առ դրան քաղաքին, և թա-
գաւորքն որ եկեալ էին ճակատեցան
ի դաշտին անդ առանձինն: Եւ իբրև 10
հայեցաւ ետես Յովաբ, եթէ պատրաս-
տեցան կազմեցան ճակատեցան հա-
մարձակեցան ընդդէմ ունել նորա
զկնի և առաջի առ հասարակ, ըն-
տրեալ իւր ընտիր ընտիր երիտասար-
դացն Իէղացւոց, և կազմեցաւ պատ-
րաստեցաւ ճակատեցաւ ընդդէմ Ասո-
րեստանեաց, և զայլ ամենայն զաւրսն 11
ետ ի ձեռն Աբեսայ եղբաւր իւրոյ և
կարգեաց ճակատեցոյց ընդդէմ որ-
դւոցն Ամոնայ: Եւ ասէ Յովաբ ցեղ- 12
բարս իւր. եթէ իցէ զաւրացել ինչ
քան զիս և յաղթահարեսցէ զիս Ասո-
րեստանեայն, ձեռն տուեալ ինձ վաղ-
վաղակի ի թիկունս հասանիջիք. ապա
թէ իցէ զաւրացել ինչ ի վերայ քո
Ամոնացին և յաղթահարեսցէ զքեզ,
ձեռն տուեալ քեզ անդէն վաղվաղակի
ի թիկունս հասից: Հա՛պա քաջալե- 13
րեաց, ժիր լիցուք ի վերայ զաւրաց,
քաղաքաց, յատակաց երկրին Այ մե-
րոյ, և Տր, որ ինչ բարի իցէ առաջի
աչաց իւրոց, զայն կատարեսցէ:
Եւ ճակատեցաւ Յովաբ զնդաւն 14
իւրով ընդդէմ Ասորեստանեացն: Եւ
իբրև պատրաստեցաւ յարձակել, ի
փախուստ եղև Ասորեստանեայն և չո- 15

---

4 զծառայսն իւր... զնոսա անդէն | 5 ծառայիցն իւրոց... անդրէն յԵրիքով | 6 Ամոնայ... արքայն իւրեանց (զկնի բանիցդ՝ «արքայ իւրեանց» թուի պակաս ինչ լինել թէ՛ յՕ. մերում և թէ՛ յէ.) ե ա ո ւ ն ու քանքար... է Միջագետաց... Մայաքա... ի Սուբայա | 7 երիվարաւք երեսուն և ու. հազար, և զԲաամ արքա... ի Միտաբայ... Ամոնայ | 8 իբրև (դ–խ–ն՝ «Եւ») | 9 Ամոնա... ի դաշտի անդ | 10 ընտրեաց իւր զընտիր ընտիր երիտասարդաց դ–ր–ցն Իէղացոց և կազմեցաւ պատրաստեցաւ (դ–խ–ն՝ «ճակատեցաւ») ընդդէմ Ասորեստանեացն | 11 ամ զօրս... Աբեսեա... Ամոնայ | 12 Եւ ասէ Յովաբ ցեղբարս (Օ. մեր՝ «ընդբարս»)... Ասորեստանէայն (Օ. մեր աստ, ի 14 և ի 16 համար.՝ «Ասորեստան–յն») ձեռն տուել... ի թիկունս հասանիջիր (դ–խ–ն՝ «ապա թէ իցէ զաւրացեալ ինչ ի վերայ քո Ամոնացին և յաղթահարեսցէ զքեզ, ձեռն տուեալ քեզ անդէն վաղվաղակի ի թիկունս հասից».) | 13 երկրին ծ– Այ մերոյ | 14 ի փախուստ եղև Ասորեստանեայն |

զան ամրացան ի քաղաք, և Յովաբ
16 գնին նոցա։ Եւ իբրև ետես Ասորին,
եթէ յաղթահարեցաւ յԻէղացւոց ան-
տի, գեսպանս արձակէր փաղփաղակի,
հանէր զԱսորեստանեայն, որ յայնկոյս
գետոյն էր, և Սոփաք սպարապետն
17 Ադրադազարու առաջնորդ նոցա։ Եւ
ժողովեաց Դաւիթ զամենայն Իէղ և
անց ընդ գետն Յորդանան գայ ի վե-
րայ նոցա. եհաս կազմեցաւ պատրաս-
տեցաւ ճակատեցաւ ի գործ պատե-
րազմի դէմ յանդիման Ասորեստա-
18 նեացն։ Անդէն փաղփաղակի ի փա-
խուստ լինէր Ասորեստանեայն յերե-
սացն Իէղացւոցն, և հատանէր հար-
կանէր վանէր ||193 բ'|| Դաւիթ ի զօ-
րաց անտի Ասորեստանեացն Է. հազար
[կառս] և քառասուն հազար այր, և
զՍոփաք սպարապետն զաւրաց Ադրա-
19 զադարու անդէն սպանանէր։ Եւ տեսին
ծառայք Ադրազադարու, թէ բեկան ա-
ռաջի երեսացն Իէղացւոց, ուխտ եդին,
դաշինս կռեցին, եթէ այլ ոչ եկեսցուք
ի թիկունս որդւոցն Ամոնոյ, և ին-
քեանք ի ծառայութիւն մտին Դաւթի։

[Ի.]

1 Եւ եղև յամին ի միւսում, ի ժա-
մանակս չուոց թագաւորացն, առ-
Յովաբ սպարապետն զաւրացն Դաւթի
զամենայն զաւրսն Իէղացւոցն և ան-
գանէր տարածէր ընդ երկիրն Ամով-
նացւոց, հարկանէր և յապականու-
թիւն դարձուցանէր։ Ապա եկն Յո-
վաբ և նստաւ զՌաբաւ պաշարել
զնա, և Դաւիթ նստէր ի ներքս յԵմ.
և հարկանէր վանէր Յովաբ սպարա-
պետն Դաւթի զՌաբայն և աւերէր
զնա։ Եւ առեալ Դաւիթ զպսակ Թա- 2
գաւորին նոցա ի գլխոյ նորա, գնէր
ինքն, և կշիռ պսակին քանքար մի
ոսկի և ի նմա ակունք պատուա-
կանք. և էր պսակն ի գլուխ Դաւթի
զամենայն աւուրս կենաց իւրոց։ Եւ
զաւ զապուռ քաղաքին բերէին կու-
տէին յոյժ, և զզաւրսն հանեալ կոտո- 3
րէին սուսերաւք և սակրաւք և ի
տապակս երկաթիս։ Եւ այսպէս առ-
նէր Դաւիթ ընդ ամենայն որդիսն
Ամոնոյ, և ապա դառնայր Դաւիթ
և ամենայն զաւրքն յԵմ։ Եւ եղև յետ 4
այսորիկ լինէր գործ պատերազմի ընդ
այլազգիսն ի Գազեր. յայնմ ժամանակի
վանէր Սուբարի Եսթեանց զՍափին,
որ յորդւոցն ի սկայից էր, և անդէն
նկուն յերկիր կործանէր, և նոքա ի
պարտութիւն մատնէին։
Եւ եղև դարձեալ պատերազմ ընդ 5
այլազգիսն. և հարկանէր վանէր Եղի-

---

16 զեսպանս (—ջ—ղէ— և Օ. մեր.)... զԱսորեստանեայն... Սոփաք ս. Ադրիազարու | 17 Իէղ, և անց— ընդ գետն | 18 լինէր Ասորեստանեայն (Օ. մեր՝ «Ասորեստանեացն») յերեսաց Իէղացւոց... Է՛Ռ. (պակասէ յՕ. մերում բաղդ., զոր եդաք ի բնագրին.) և ՌՌ. այր, և զՍոփաք սպարապետ զաւրաց Ադրիազարու | 19 Եւ տեսին ծառայքն Ադրիազարու... երեսաց Իէղացւոցն... Ամոնա |

Գլ. Ի.—Է. ունի ի լուս. բաժան. գլխոյ՝ Ձռ. Ի. | 1 յամի (—ջ—ն—է՝ «ի») միւսում... զօրս —էղացւոց, և անգանէր... Ամոնացոց... եկն Յովաբ (յՕ. մերում փոխպակաւ՝ «Մովաբ» գնի աստ.) | 2 ի գլխոյ նորա ... գնէր (Օ. մեր՝ «գնէր») ինքն... և էր ... պսակ... և զաւ զապուռ ... (յՕ. մերում նախ գրեալ և ապա ջնջեալ բաղդ. վերջին.) քաղաքին | 3 և զօրսն... և ի տապակ (Օ. մեր՝ «ի տապակս») երկաթի... Ամոնոյ | 4 Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԼԵ. | Գազեր (—ջ—ն—է «ի» նախդիրն.)... հարկանէր վանէր Սուբարի Եսթեանց զՍափի որ յորդւոց (—ջ—ն—է՝ «ի») սկայիցն էր | 5 զԱթամի (—ջ—ն—է՝ «և») զեղբայր Գողիադու... նորա իբրև զվերստորի

անուն որդի Յայիր զԱթոմի և զեղ-
բայր Գողիադու, և բուն նիզակի նո-
րա իբրև զվերստորի ոստայնանկաց։
6 Եւ եղև դարձեալ գործ պատերազմաց
ի Գէթ, և անդ էր այր մի յաղթան-
դամ և մատունք ոտից և ձեռաց
նորա վեց վեց. և էր այրն ի սկայից
7 առհմանէ անտի, և բատ գունդն ար-
տաքս ելեալ, դնէր նախատինս զաւրա-
ցըն Իէղացւոց։ Ապա անդէն հարկանէր
վանէր զնա Յովնաթան որդի Սամայայ,
8 եղբաւր Դաւթի։ Այս այն սկայք չորք
էին, որ ծնացեալ էին ի Ռափային
ի Գէթ և անկան սատակեցան ի ձեռն
Դաւթի և ի ձեռն ծառայից նորա։

[ԻԱ.]

1 Ապա յարեաւ սատան ի վերայ
Իէղացւոց և գրգռեաց զԴաւիթ, զի
արասցէ թիւ զիր համար որդ-||193 Բ²||-
2 ւոց Իղի։ Ապա խաւսել սկսաւ Դաւիթ
առ Յովաբ և առ ամենայն իշխանս
զաւրացն Իէղացւոց. երթայք շրջե-
ցարուք ընդ ամենայն Իէղ, զիր թիւ
համար կալարուք ի Դանա մինչև
ցԲերսաբէէ, և բերէք առաջի իմ, զի
3 գիտացից զհամար նոցա։ Ապա ետ
պատասխանի Յովաբ սպարապետն և
ասէ. յաւելցէ, ասէ, Տր ի ժողովուրդ
իւր որպէս իցեն հարիւրապատիկ և
հազարապատիկ, և աչք տեառն իմոյ
արքայի տեսցեն զաւրխ. ամենեքին
ծառայք տեառն իմոյ արքայի են, քաւ
լիցի տէր իմ արքայ, մի լիցին մեղք
այդ ի մէջ տանդ Իղի, և ընդէր խոր-
հեցաւ տէր իմ արքայ զխորհուրդդ
զայդ։ Եւ յաղթեաց արքայ և հաս- 4
տատեաց զբան իւր քան զՅովաբու։
Ապա ել ի նմանէն Յովաբ և եկն ընդ
ամենայն Իէլ։ Եւ եկն եբեր Յովաբ 5
զթիւ համարի զաւրաց Դաւթի. և
լինէր ամենայն համարն Իէղացւոց
հազարաց հազար և հարիւր հազար
այր միայն, որ սուսեր ի վեր կարէր
առնուլ, և ի կողմանցն Յուդայ չորեք-
հարիւր և ութսուն հազար այր, որ
սուսեր ի վեր կարէր առնուլ։ Եւ 6
զՂևին և զԲենիամին բնաւ թուեաց
իսկ ոք ոչ, զի անարգեաց եհաս բանն
թագաւորին առ Յովաբ, զի չար 7
թուեցաւ գործն առաջի Այ, և սկսաւ
հարկանել զԻէղ ի հարուածս չարա-
չարս։ Ապա եկն անկաւ Դաւիթ ա- 8
ռաջի Այ և ասէ. մեղա յոյժ Տր,
զի գործեցի զգործդ զայդ. և արդ
քաւեա Տր զանաւրէնութիւնս ծա-
ռայի քո, զի անմտութեամբ անզգա-
մեցայ յոյժ։
Ապա խաւսել սկսաւ Տր ընդ Գա- 9
դայ, որ տեսանէրն Դաւթի, և ասէ.
Երթ, խաւսեա դու ընդ Դաւթի ար- 10
քայի և ասասցես. այսպէս ասէ Տր
Աճ. երեք ինչք են, որ ածեմ ի վերայ

---

(Օ. մեր՝ «և իբրև զվերստորի») | 6 Գէթ... մատունք... ի սկաից առհմ. | 7 Ապա անդէն... Սամայ | 8 որք ծնացեալ էին յՌափային ի Գէթ և անկան |

Գլ. ԻԱ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ ԻԱ/ՂԶ. | 1 յարեաւ սատանայ (յՕ. մերում թերևս վրիպակաւ՝ «Սատան».)... Իէղացւոցն... որդւոցն Իղի | 2 և առ (դ-ի--է՝ «ամենայն») իշխանս ...մինչև ի Բերսաբէէ... զի գիտացից և զհամար | 3 ամենեքեան... մի լիցի մեղքդ այդ ի մէջ (դ-ի--է՝ «տանդ») Իղի... խորհեցաւ տէր | 4 բան զՅովաբու (Օ. մեր՝ «Յովաբու») ...ի նմանէ... Իէղ | 5 չորս Ճ. և ութսուն Ռ. | 6 թուեաց իսկ (դ-ի--է՝ «որ») ոչ... անարգեաց և եհաս | 7 հարկանել (Օ. մեր՝ «հարթանել») զԻէլ | 8 անձաւ... զանօրէնութիւն | 9 որ տեսանէրն Դաւթի | 10 երեքն ինչք են... ընտրեա... ի քոյանէ |

քո. ընտրեա զու մի ինչ ի նոցանէ, և
11 արարից քեզ: Եւ եկն Գադ առ Դա-
ւիթ և ասէ ցնա. այսպէս ասէ Տր.
ընտրեա զու մի ինչ յայսցանէ որ ա-
12 սեմ քեզ. կամ երիս ամս զմիմեանց
կնի սով, կամ երիս ամիս զմիմեանց
կնի փախչել ի թշնամեաց և սուր
զկնի, կամ երիս աւուրս մարդամահ
յերկիր, և հրեշտակ Տն սատակել զա-
մենայն ժառանգութիւնդ Իղի: Արդ
տես, զինչ տաս պատասխանի որ ա-
ռաքեաց զիս:
13 Խաւսել սկսաւ Դաւիթ ընդ մար-
գարէին և ասէ. երեք չարք, և երեք
անհնարինք, բայց սակայն լաւ է ինձ
անկանել ի ձեռս Տն, զի բազում են
ողորմութիւնք նորա, քան անկանել
ի ձեռս մարդկան:
14 Եւ արկ մահ Տր սերանց ի վերայ
Իղի, և ան-‖194Ա'‖-կան ի նոցանէն
15 եւթանասուն հազար այր միայն: Եւ
առաքեաց Տր ԱԾ զհրեշտակն յԵմ
սատակել զնա. և իբրև սկսաւ սատա-
կումն, զղջացաւ Տր ի վերայ չարեացն,
որ հասին ի վերայ նոցա: Խաւսել
սկսաւ Տր ընդ հրեշտակին, որ իջեալ
սատակէր զԻէղացիսն, և ասէ. շատ է
քեզ, կարճեա զձեռն քո. և հրեշտակն
իջեալ կայր ի կալն Ոռնեա Յեբու-
16 սացւոյ: Եւ ամբարձ Դաւիթ զաչս
իւր և ետես զհրեշտակն, զի կայր
ընդ երկինս և ընդ երկիր ի միջի և
սուսեր մերկ ի ձեռին նորա, և սու-
սերն ձգեալ ի վերայ Եմի. և անկաւ
Դաւիթ և ամենայն ծերակոյտն Իէղա-
ցւոց ի վերայ երեսաց իւրեանց
քրձազգած:
Ապա խաւսել սկսաւ Դաւիթ առ 17
ԱԾ և ասէ. ապաքէն ես ետու հրաման
թուելով թուել զժողովուրդդ, ես եմ
որ մեղայ, ես եմ որ չարիս արարի,
ես եմ որ բարկացուցի. արդ այս ո-
չխարքս զի մեղան. Տր ԱԾ, եղիցի ձեռն
քո [ի վերայ իմ եւ] ի վերայ տան հաւր
իմոյ և մի ի վերայ ժողովրդեանդ քո
ի կորուստ: Եւ հրեշտակ Տն խաւսել 18
սկսաւ ընդ Գադայ, զի ասասցէ ցԴա-
ւիթ, զի ելցէ կանգնեսցէ սեղան Տն Այ
ի կալն Ոռնայ Յեբուսացւոյ: Եւ ել 19
Դաւիթ ըստ բանի Գադայ, զոր խաւ-
սեցաւ անուամբ Տն: Եւ դարձաւ Ոռ- 20
նիա ետես զթագաւորն և զչորեսին
որդիս նորա, զի թաքուցեալ կային
ընդ զաղչիւն, և նա կասէր ցորեան:
Եւ եկն Դաւիթ առ Ոռնիայ, և հայե- 21
ցաւ Ոռնիայ և ետես զԴաւիթ, եկն [ել]
ի կալոյ անտի և երկիր եպագ Դաւթի
ի վերայ երեսաց իւրոց: Խաւսել սկսաւ 22
Դաւիթ և ասէ ցնա. տուր ինձ, ասէ,
զտեղի կալոյդ արծաթոյ, որչափ ար-
ժան իցէ, և շինեցից ի դմա սեղան
Տն Այ, զի դադարեսցեն հարուածք
բարկութեանդ յերկրէ ժողովրդեանս:
Եւ պատասխանի Ոռնիայ և ասէ. 23

---

11 ընտրեա | 12 զկնի միմեանց սով... զմիմեանց ՝կնի փախչել ի թշնամո... առաքեացն զիս | 13 և երեքե-ՆՆ անհնարինք... անքանել ի ձեռն... բազումք են ողորմութիւն նորա, քան անքանել | 14 տերանցն... Իլի, և անքան ի նոցանէ Հ՟. այր | 16 և սուսերն ձգել ի վերայ... անքաւ Դ... Իէղացոյ... քրձազգած (Օ. մեր՝ «քրձա-զած») | 17 մեղա... ձեռն քո է ԽՄՆ է (յՕ. մերում պակասեն նոտրագիրքդ, զորս յաւելար ի բնագրին.) և ի վերայ տան | 18 է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԼԷ. | ասացէ (դ-ի--է՝ «ց») Դաւիթ... Ոռնեա Յեբուսեանց (յՕ. մերում թուի վրիպակաւ՝ «Յեբուէ՞այ», զոր ուղղագրեցաք համաձայն 15 և 28 համարատանցս.) | 19 ըստ բանին | 20 Ոռնա... թաքուցեալ... կասէր | 21 եկն էլ (դ-ի--է յՕ. մերում նոտրագիրդ, զոր յաւելար ի բնագրին.) ի կալո... եպագ | 22 ժողովրդեան | 23 և ասէ. առջէ տէր իմ... աչաւա-ւէիկ տուեալ լիցի (դ-ի--է՝ «ե») զեղինոդ (յՕ. մերում բանըդ՝ «և զօրյլոդ ի փայտ ողջակիզաց»

ան, տէր իմ արքայ, և արասցէ որ ինչ
բարի թուեսցի առաջի աչաց իւրոց.
աՀաւասիկ տուեալ լիցի և զեզինդ
յողջակէզս և զսայլսդ ի փայտ ող-
ջակիզաց և զցորեանդ ի պատարագս,
24 զամենայն տուեալ: Ապա խաւսել կա-
լաւ թագաւորն ընդ Ոռնիայ և ասէ.
ոչ այդպէս է, այլ գնելով գնեցից ար-
ծաթոյ որպէս արժան իցէ, ոչ առ-
նում ի քէն ձրի և մատուցանեմ պա-
25 տարագ Տն Այ: Ապա ետ Դաւիթ
Ոռնիայ վասն տեղւոյն այնորիկ
կշիռ ոսկւոյ Ո.:
26 Եւ շինեաց անդ սեղան Տն Այ Դա-
ւիթ և մատոյց անդ ողջակէզս պա-
տարագաց փրկութեան. և աղաղա-
կեաց Դաւիթ առաջի Տն ‖194Ա$^{a}$‖, և
լուաւ նմա, և Տր հրով իջանէր
յերկնից ի վերայ սեղանոյն ողջակի-
27 զաց: Եւ ետ հրաման Տր հրեշտակին,
և դարձոյց անդրէն զսուրն ի պա-
28 տեանս իւր: Ի ժամանակի յայնմիկ
իբրև տեսանէր Դաւիթ, թէ լուաւ
նմա Տր ի կալն Ոռնեայ Յեբուսա-
ցւոյ, և անդ մատուցանէր զպատա-
29 րագս ողջակիզացն: Եւ վրան ժամուն
Տն էր յանապատի և սեղանն ող-
30 ջակիզաց ի Բամայ ի Գաբաւոն. և
ոչ կարաց Դաւիթ գնալ առաջի
նորա, զի խնդրեսցէ յԱյ, զի սար-
սեալ էր յերեսաց սրոյն հրեշտա-
կին Տն:

[ԻԲ.]

Եւ ասէ Դաւիթ. այս է տուն Տն 1
Այ և այս է սեղան ողջակիզաց տանդ
Իղի: Ապա ետ հրաման Դաւիթ ածել 2
ժողովել զեկս աշխարհին երկրին Իէղա-
ցւոց. և կացոյց զնոսա քարագործս,
կոփել քարինս քերածոյս, շինել զտա-
ճար տանն Այ, և երկաթ յոյժ ի 3
բևեռս դրանցն, ի դամս յաւդիցն և
ի կրկունս ծխնեացն: Եւ պատրաս-
տեաց Դաւիթ երկաթ և պղինձ, զի
ոչ գոյր կշիռ, և փայտ, զի ոչ գոյր 4
թիւ, զի կրելով կրէին Ծայդոնա-
ցիքն և Տուրացիք փայտամայր, զի
ոչ գոյր թիւ: Ապա խաւսել սկսաւ 5
Դաւիթ և ասէ. Սողոմոն որդեակ
իմ մանուկ մատաղ է, և տունդ շի-
նելոյ Տն մեծի անուան է յանուն
մեծի փառաց ընդ ամենայն երկիր.
ես պատրաստեցից նմա նիւթ շինա-
ծոյ: Եւ պատրաստեաց Դաւիթ զնիւթ
շինածոյ յառաջ քան զմահ իւր:
Ապա կոչեաց Դաւիթ զՍողոմոն 6
զորդի իւր և հրաման տայր շինել
զտաճարն Տն Այ Իղի: Խաւսել սկսաւ 7
Դաւիթ ընդ Սողոմոնի և ասէ. ես
ինձէն եղի ի մտի իմում շինել տուն
անուան Տն Այ իմում: Ապա եղեն 8
պատգամք Տն ի վերայ իմ և ասէ.
բազում են այն արիւնք, որ հեղան

---

յաւելեալ են ի լուսանցս՝ նովին ձեռամբ.)... ի պատարագ | 24 խօսել սկսաւ թագաւորն... որ֊֊ արժան իցէ | 25 կշիռ֊ ոսկո ՉԾ. (Ծ. ուղղագրեալ ի լուսանցս՝ Ո.) | 26 և շինեաց անդ... և լուաւ նմա Տէ, և Տր | 27 անդրէն | 28 եթէ լուաւ | 29 և սեղան... ի Բամա (գրչ֊՝ «ի») Գաբաւոն |

Գլ. ԻԲ.—Է. ունի ի լուսանցս կրկնակի բաժ. գլխոյ՝ Յո. ԻԲ/ԼԸ | 2 աշխարհին եկէն Ի... զտաճարն | 3 երկաթ֊ յոյժ... և ի դամս... և ի կրկունս ծխնեացն... և պղինձ, զի ոչ գոյր պղինձ (գրչ֊՝ ջնջիչ նշանաւ ի բնագրին.) և փայտ | 4 և Տուրացիքն փայտ մայր (Օ. մեր՝ «փայտամայր») | 5 Սողոմոն (գրչ֊ և չ ...) ես պատրաստեցի... շինուածոյն (գրչ֊՝ «Եւ պատրաստեաց Դաւիթ զնիւթ շինածոյ») յառաջ քան | 6 Այն Իղի | 7 Տն Այ իմում (Աստէն ի նոր տողէ ունի Օ. մեր) | 8 Տն Այ ի վերայ իմ... ի ձեռաց քո (գրչ֊ յՕ. մերում բառդ վերջին, զոր յաւելար ի բնագրին.) և անհնարինք են... ոչ շինեսցես դու (գրչ֊՝ «տուն») անուան... արիւնք բազումք |

ի ձեռաց [քոց], և անհնարին են պա-
տերազմունք, զոր պատերազմեցար
դու. ոչ շինեսցես դու տուն անուան
իմոյ, զի արիւնս բազում հեղեր յեր-
9 կիր ի ձեռաց քոց առաջի իմ։ Այլ
որդի ծնանելոց է ի քէն. սա եղիցի
այր հանգստեան և հանգուցից զնա
յամենայն թշնամեաց իւրոց շուրջ
զնովաւ. Սողոմոն անուն նորա, և
խաղաղութիւն և հեզութիւն տաց ի
10 վերայ Իղի յաւուրս նորա։ Սա շի-
նեսցէ տուն անուան իմոյ, սա եղիցի
ինձ յորդիս և ես եղէց նորա հայր
‖194բ'‖ և պատրաստեցից զաթոռ
թագաւորութեան նորա ի վերայ
Իէղացւոց մինչև յաւիտեանս ժամա-
11 նակաց։ Եւ արդ, որդեակ իմ, եղիցի
Տր Ած քո ընդ քեզ և աջողեսցէ քեզ,
և շինեսցես դու տուն Տն Այ քո,
12 որպէս խօսեցաւ նա վասն քո։ Բայց
տացէ քեզ Տր Ած հանճար իմաստու-
թեան և զաւրացուսցէ զքեզ ի վերայ
Իղի առնել և պահել զամենայն զաւ-
13 րէնս Տն Այ։ Զի յայնժամ աջողեսցի
քեզ, յորժամ դու առնիցես պահիցես
զաւրէնս հրամանաց Տն, զոր պա-
տուիրեաց Տր Մովսէսի ի վերայ որդւո-
ցըն Իղի. քաջալերեաց զաւրացիր, մի
14 երկնչիր և մի զանգիտեր։ Արդ աչա-
ւասիկ ես ըստ իմում աղքատութեան
պատրաստեցի նիւթ տան Տն. ոսկի
քանքարս հարիւր հազար, և արծա-
թոյ հազարաց հազար քանքար, և
պղինձ և երկաթ բնաւ չափ չիք կշռոյ
նոցա, և փայտ և քար պատրաստեցի։
Եւ դու յաւելջիր ի նոսա, և ընդ 15
քեզ բազմակոյտ գործաւն ճարտարա-
պետաց, և քարակոփ և հիւսունս
փայտի, իմաստնացեալս ճարտարա-
ցեալս ի գործ յոսկւոյ, յարծաթոյ, ի 16
պղնձոյ, յանագոյ, զի ոչ իցէ թիւ և
համար։ Հապա արի և գործեա, և Տր
եղիցի ընդ քեզ։
Ապա զարձեալ պատուէր տայր 17
Դաւիթ իշխանացն Իէղացւոց հնա-
զանդութեամբ ձեռնտու աւգնական
լինել Սողոմոնի որդւոյ իւրոյ։ Արդ 18
խաւսել կայաւ և ասէ. ոչ Տր Ած ընդ
ձեզ էր և հանգոյց զձեզ յամենայնէ,
և մատնեաց ի ձեռս իմ զամենայն
բնակիչս երկրի, որ շուրջ զձեւք իցեն,
և հնազանդ եղև առաջի ձեր և ա-
ռաջի Տն ամենայն երկրի։ Արդ տուք 19
զսիրտս ձեր և զոգիս ձեր խնդրել ի
Տէ Այ ձերմէ, զարթիք արիք շինեցէք
սրբութիւն Տն Այ ձերում, զի բերջիք
զիջէք ի նմա զտապանակ կտակարա-
նաց Տն և զսպաս սրբութեան Այ ի
տունն, զոր շինեսջիք անուան Տն Այ
ձերոյ։

[ԻԳ.]

Եւ Դաւիթ հինաւուրց ծերացեալ 1
լի աւուրբք թագաւորեցոյց զՍողո-
մոնն որդի իւր փոխանակ իւր ի վե-
րայ Իղի։ Եւ հրամայեաց ժողովել 2
զամենայն իշխանս Իէղացոցն և զքա-
հանայս և զՂևտացիս։ Եւ կալան 3

9 ծնանել—ոց... նա եղիցի... տացէ ի վերայ | 10 նա եղիցի | 12 զօրացուսցէ զքեզ Տէ ի վերայ... զա՟մ օրէնս | 13 աջողեցի է քեզ... Մովսէսի... Իղի | 14 Աստէն ի նոր տողէ սկսի Օ. մեր. | աւասիկ... քանքարս ծ՟ռ. ...չիք չափ կշռո նէ | 15 գործօն ճարտարապետաց (գրիչը՝ «և», յորոյ վերայ նշմարին սակայն յՕ. մերում հետք ինչ սրբագրութեան.) քարակոփ | 16 ի գործ ոսկւոյ... և ի պղնձոյ... գործեա, | 17 ձեռնտու... որդւոյն իւրում | 18 շուրջ զձեօք են... ա՟մ երկիր | 19 Արդ տուք (ջնջ.) զսիրտս (Օ. մեր՝ «ի սիրտս») |

Գլ. ԻԳ.—Է. սկսի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԻԳ. | 1 զՍողոմոն | 2 Իէլացոցն | 3 Է. սկսի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԼԹ. | զԹիւ համարո... ըստ մարդոյ արք (Օ. մեր՝ «արք») իբրև Լ. և ուժ Է. |

զթիւ համար Ղեւտացիքն յերեսնեմե-
նից և ի վեր. և էր թիւ նոցա ըստ
մարդոյ արք իբրև Լ. և Ը. հազար.
4 ի սոցանէ սախպաւղք և վարիչք ի
ի գործ ՏՆ Ի. և Դ. հազարք, և դպիրք
5 և դատաւորք Զ. հազարք, և երգիչք,
զոր արարեալ և կազմեալ էր ՏՆ Այ
6 Դ. հազարք: Եւ բաժանեաց զնոսա
Դաւիթ շարաթաւորս շարաթաւորս
‖194 բ²‖ որդւոցն Ղեւեա, Գեթսոնին և
7 Կաաթայն և Մերարեայն: Ի դունդն
Գեթսոնի. Ղոմբենի և Սէմէի, զաւրա-
8 գլուխ Ղայանն: Եւ որդիք Ղաադանու
9 Եհէլ: Եւ Սէմէի որդիք. Սաղոմիթ և
Ոզիէլ և Արամ, երեք. սոքա իշխանք
10 ազգատոհմին Ղաաթոնայ: Եւ որդիք
Սէմէի. Յիէլ և Զիզայ և Յովաս և Բե-
11 րիա. այս որդիք Սեմեայ չորք: Եւ էր
Յիէլ առաջին, և Զիզա երկրորդ, և
Յովաս և Բերրա, որոց ոչ խառնեցաւ
զաւակ, և եղեն սոքա ընդ մի բաժին
12 ի ժառանգութեան համարի: Որդիքն
Կաաթու. Ամրամ, Յեսսար, Քերրոմ և
13 Ոզիէլ, չորք: Որդիք Ամրեմայ. Ահարոն
և Մովսէս: Ապա ընտրեցաւ Ահարոն ի
նուէր սրբութեան նուիրել սուրբ սըր-
բոցն մինչև յաւիտեան, արկանել խունկս
առաջի ՏՆ և պաշտել առաջի նորա և
աղաւթս առնել առ նա մինչև յաւի-
տեանս. և Մովսէս այր Այ և որդիք նո- 14
րա ոչ անուանեցան յազգս Ղեւտացւոց:
Որդիք Մովսէսի. Գերսամ և Եղիե- 15
զեր: Որդիք Գերսամայ. Սուբիէլ ա- 16
ռաջինն: Եւ էին որդիք Ալիա առա- 17
ջինն, և այլ ոչ գոյին Եղիազարու
որդիք, բայց որ աճեցին ի բարձրն:
Որդիք Իսաար. Սաղոմիթ առաջին: 18
Որդիք Քերրոմայ. Եզղիա առաջին, 19
Ամարիա երկրորդն, Յաղիէլ երրորդ,
Յակամիայ չորրորդ: Որդիք Եղիէլի. 20
Միքաս առաջին և Յովսարամ երկ-
րորդ: Եւ որդիք Մերարի. Յովիէլ և 21
Մուշի: Որդիք Մովեղայ. Եղիազար և
Կիս: Եւ մեռաւ Եղիազար, և որդի 22
ոչ գոյր նորա, բայց դստերք և եթ
էին. և առին զնոսա որդիքն Կիս, եղ-
բայր նոցա: Որդւոց Մուշի. Մովեղի 23
և Եդեր և Երիմովթ, երեք:
Սոքա որդիք Ղեւայ ըստ ազգատոհ- 24
մին տանց իւրեանց համարոյ թուոյ
անուանց նոցա, ըստ մարդոյ գործա-
վարացն, որ պաշտէին ի սպասու տան
ՏՆ ի վեցամենից և ի վեր: Եւ ասաց 25
Դաւիթ. հանգիստ արար ՏՐ ԱԾ Իղի
ժողովրդեան իւրում և բնակեցոյց
զձեզ յԵմ մինչև յաւիտեան: Արդ Ղե- 26
տացւոցն ոչ գոյ թիւ, որ բառնալ
կարիցեն զգանձ և զկահ կարասի

---

4 բսան և Դ... վեց Ռ. | 5 արարեալ և կազմեալ էր ...չորս Ռ. | 6 շարաթաւո-րս շարա-թաւո-րս | 7 Ղոբենի և Ս--մէի... Ղաադան | 8—9 Աստէն ի Նոր տողէ ունի Օ. մր. | Եհէլ և Սեմէի, ո. Սաղոմիթ... ազգատոհմին Ղայաջանա | 10 Յէիէլ... Բերիէ... Սեմայ | 11 Յէիէլն... Զի-զայն...ի ժառանգութիւն | 12 ո. Կաաթայ Ամրամ (Օ. մր ասա և ի Ներքոյ. ԻԴ. 20, «Ամրամ» ունի վրիպակաւ, փոխ. «Ամրամ», որպէս է տեսանել ի յաջորդ համարատան, ես և ի վեր, Զ. 2, 18.), Յեսայար, Քերրոն | 13 Ամր--մա Ահարոն և Մօսէս | 14 Եւ Մօսէս... և որդիք նորա (դ--լ--է՝ «ոչ») անուանեցան | 16 Սուփիէլ առաջին | 17 և էին որդիք (պակասել թուի յերկոսին ձեռագիրս՝ «Եղիազարու») Սուփա առաջինն... ի բարձրն | 19 Քերրոնայ Եզղիա առաջինն, Ա. երկրորդ | 20 Մ. առաջինն, և Յովասարամ | 21 Յովէլ... Մովելա | 22 և առին զն- որդիքն Կիսէ-յ եղբայր նոյա | 23 Մովելի (Հմմտ. զանուանս 15–23 համարատանցս ընդ համգոյնսն որ ի 21–30 համար. առաջիկայ ԻԴ. գլխոյն) | 24 (Զկնի՝ «երեք սոքա»՝ ի Նոր տողէ ունի Օ. մր, իսկ Է. անան-ջատ և միայար՝) Ձ սոքա որդիք Ղեւեայ ըստ ազգատոհմի տանն իւրեանց... գործավարաց... ի Ձ. ամենից | 25 Իղի ժողովրդեանն | 26 Ղեւտացոց ոչ գոյ (դ--լ--է՝ «որ») բառնալ... զգանձն |

27 սպասու պաշտամանն, զի ի բանս
Դաւթի վերջինս թիւ որդւոցն Ղեւեայ
28 ի քսանամենից և ի վեր։ Զի հաս-
տատեաց զնոսա ի ձեռն որդւոցն
Ահարոնի պաշտել ի տան Տն ի վե-
րայ գրանցն և սրսկարանացն, ի վե-
րայ սրբութեան ամենայն սրբոց, և
ի վերայ գործոց պաշտաման տանն
29 Այ, և ի վերայ հացին, որ առաջի
դնեն, և ի վերայ նաշհին պատարա-
գացն, և ի վերայ յան-‖195 Ա'‖-խմորն
մանգառան, և ի վերայ խմեալ տա-
30 պակելոցն, և ի վերայ յանդիմանու-
թեան այգուն պաշտամանն, և ի վե-
րայ խոստովանութեանն աւրհնու-
31 թեան Տն ընդ երեկոյս, ի վերայ
ամենայն մատուցելոցն ողջակիզաց Տն
յաւուր շաբաթացն և յաւուրս ամ-
սագլուխ տաւնից տարեկանացն, ըստ
թուոյն ընտրութեան նոցա յամենայն
32 ժամ առաջի Տն։ Եւ պահեսցեն զպահս
վրան ժամուն, և զպահս սուրբ սըր-
բոյն, և զպահս որդւոցն Ահարոնի
եղբարցն իւրեանց առ ի պաշտելն ի
տան Տն։

## [ԻԴ.]

1 Եւ այս որդւոցն Ահարոնի բա-
ժինք. որդիք Ահարոնի. Նաբաթ և
2 Աբիուդ, Եղիազար և Իթամար։ Եւ
մեռան Նաբաթ և Աբիուդ առաջի
հաւրն իւրեանց, և որդի ոչ գոյր նոցա։
Եւ քահանայացաւ Եղիազար և Իթա-
մար որդիք Ահարոնի։ Եւ արար նոցա 3
բաժինս Դաւիթ. և Սադովկ յորդւո-
ցըն Եղիազարու, և Աբիմելէք յոր-
դւոցն Իթամարայ ըստ հանդիսին
իւրեանց ի պաշտամանն իւրեանց։
Եւ գտան որդիքն Եղիազարու ա- 4
ռաւելագոյն իշխանք զաւրաւորացն
քան զորդիսն Իթամարայ. և բաժա-
նեաց զնոսա Դաւիթ յիշխանս յիշխանս
տան ազգատոհմին մեծասան, և որ-
դւոցն Իթամարու ըստ ազգատոհմին
ութ։ Եւ արար զբաժինսն վիճակաւք 5
նոցա ընդ նոսա և սոցա ընդ նոսա,
զի էին զաւրաւորք ի սրբն սրբոց
և իշխանք ի պաշտաւն Այ ի մէջ
որդւոցն Եղիազարու և ի մէջ որդւոցն
Իթամարայ։ Եւ գրեաց զնոսա Սամէաս 6
որդի Նաթանայէլի, դպրապետն Ղեւեայ,
առաջի արքայի և իշխանացն և Սա-
դովկ քահանայապետի և Աքիմելէքա
որդի յԱբիաթարու և իշխանաց նա-
հապետացն Ղեւտացւոց տուն յազգա-
տոհմէ անուի Իթամարայ։ Եւ ել վի- 7
ճակն առաջին առ Յարիմ, և երկրորդն
առ Յուդայա, և երրորդն առ Բարամ, 8
և չորրորդն առ Գէուրիմ, և հինգե- 9
րորդն առ Մելքիէլ, և վեցերորդն առ
Մէիման, և եւթներորդն առ Ակոսս, 10
և ութերորդն առ Աբիայ, և իննե- 11
րորդն առ Յիշով, և տասներորդն առ
Յեքոնիայ, և մետասաներորդն առ 12

---

27 զի բանս Դ... ի ի̃.ամենից | 28 ի ձեռ- որդոցն Ահարոնի | 29 առաջի դնէին, և ի վերայ նաշին պատարագաց... անխումն մանքառայն... տապակել-ոցն | 31 մատուցել-ոցն... շաբա-թուցն (Օ. մր վրիպակաւ՝ «շաթացն»)... տարեկանաց | 32 սուրբ սրբոց, և զպահսն ո. Ահարոնի |

ԳԼ. ԻԴ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ Փռ. $\frac{ԻԴ}{Ժ}$. | 1 Ահարոնի (—յ—դէ— և էներ—յ)... Նաբաթ | 2 Նաբադ... և քահանայացաւ Եղիազար | 3 և Աբիմելէք... և պաշտամանն | 4 որդիք... զօրաւորացն... ազգատոհմի | 5 զբաժին-ն... ընդ նոսա (դ—խ—էն՝ «և սոցա ընդ նոսա».) | 6 Նա-թանայէլի... և Աբիմելէք որդոյ Աբիաթարու... Ղեւտացոցն տուն (—յ—դէ—՝ ջնջիչ նշանաւ ի վերայ տ̃ և ի լուսանցս ուղղագրեալ՝ յիս.) յազգատոհմէ ա. Իթամարա | 7 առ Յուդա | 8 առ Դէուրիմ | 9 Մեղքիէլ... Մէիամէն | 10 Ակովբ | 11 Յեշով... Յեքոնիա. (Ասաէն ի Ն ո ր տողէ ունի Օ. մր.) |

13 Եղեաւափ, և Բ.տասաններորդն առ
Յակիմ, և ԳԺ.երորդն առ Յափփայ,
14 չորեքտասաններորդն առ Յեզբաղ, և
15 ԵԺ.աններորդն առ Բեղգայ, վեշտա-
սաններրորդն առ Եմեր, ||195 Ա²|| և
ԷԺ.երորդն առ Քեզիր, ութուԺ.ե-
16 րորդն առ Ափեսէ, ԹԺ.երորդն առ
Փարխայ, և Ի.երորդն առ Յեզեկայ,
17 և առաջներորդ Ի.երորդ առ Աքին,
և երկրորդ Ի.երորդն առ Կամէլ, և
18 երրորդ Ի.երրորդ առ Գաղայ, և չոր-
րորդ Ի.երրորդ առ Մովզեայ:
19 Այս գիր համարոյ է ըստ պաշտա-
ման նոցա առ մտանել ի տուն Տն
ըստ ընտրութեանն իւրեանց, ի ձեռն
Ահարոնի հաւրն իւրեանց, որպէս
պատուէր ետ Տր ԱԾ որդւոցն Իղի:
20 Եւ որդւոցն Ղեւեա Մնացորդաց. արդ
որդւոցն Ամրամ Սովբիէլ, Ադախա.
21 որդւոցն Արիա Յուսիայ գլուխ. որ-
22 դւոցն Իսահառ Սաղովմիթ գլուխ.
որդւոցն Սաղովմիթ Իթիաթարեաթ
23 գլուխ. որդւոցն Քեբրոնի Այառիա
գլուխ, Ամարիա երկրորդ, Յազիէլ եր-
24 րորդ, Իկանիաս չորրորդ. որդւոցն
Ազիելայ Միքեա գլուխ, և Յուսիայ
25 երկրորդ. որդւոցն Միքեա Սեմ. որ-
26 դւոցն Յուսիա Զաքարիայ. որդւոցն
Մերարի Մոողի և Մուշի. Ոզիայ, որդի
նորա Բունիա, որդի նորա Յեսամ, 27
որդի նորա Կեզաք, Քուր և Բարիայ:
Մովողեա. Եղիազար և Իթամար, և 28
ոչ գոյին Եղիազարու որդիք: Որդիք 29
Կիսեա Յերամայէլ, Մուշի. որդիք 30
Մուշեա Մոողի և Եդեր և Յերիմովթ:
Այս որդիք Ղեւտացւոց ըստ ազգա-
տոհմին տան նոցա: Եւ աւին նոքա 31
վիճակս, որպէս և եղբարք իւրեանց
և առաջի արքային, և Սադովկ և
Աբիմելէք և իշխանք ազգատոհմին
քահանայից և Ղեւտացւոցն, որ կա-
յին ի վերայ նոցա, ազգ առաջնոյն
ընդդէմ եղբաւր իւրոյ կրտսերոյ:

[ԻԵ.]

**Ե**ւ հաստատեաց Դաւիթ արքայ և 1
իշխանք զաւրացն ի վերայ գործոյն
զորդիսն Ասափայ, զԵմանն և զԵթի-
թովմ, որ մարգարէանային ի փող
և ի թմբուկ և ի քնար, և եղև
թիւ նոցա ըստ մարգաթուի արանց
[որ գործէին ի ծառայութեան իւ-
րեանց]. որդիք Ասափայ Զաքուր և 2
Յուսէփ և Նաթանիաս և Ակիրեղայ,
որդիք Ասափայ Զանիա, Սափա մար-

14 գնի «առ Բեղկայ» ի Նոր տողէ ունի Օ. մր. | 15 Աբեսէ | 16 Փաթիա... Եզեկիա 17 և առաջներորդ քսաներորդն | 18 և երրորդ քսաներորդն առ Գաաղա, և չորրորդ քսանե-րորդն | 19 համարու... Ահարոնի... Իղի | 20 և որդոց Ղ... Աճրամ Սուբիէլ, Ադախա | 22 Սաղովմիդ գլուխ (դ-[illegible]՝ «որդւոցն Սաղովմիթ») Իթարիադ գլուխ | 23 Քեբրոն Աճիա գլուխ | 24 Ազիելա Միքիա... Միքիա | 27 Կեզաքքուր (չփոթեալ թուի անունդ յերկուսին ձեռագիրսն, գուցէ փոխ. ասելոյ՝ Կիս, Զաքքուր. Հմմտ. 29 համար. ես և գլ. ԻԵ. 2 և 10.) և Բարիա | 29 Որդիք Կիսա (Օ. մր թուի շփոթմամբ՝ «Միկեա») Յերամաէլ | 30 Ղեւտացոց... տանց նոցա (Հմմտ. զանուանս 21—30 համարատանցս ընդ հանգոյնսն որ ի 15—23 համար. Նախընթաց գլխոյն) | 31 և առաջի արքաի... և Ղեւտացոյն... ընդդէմ եղբարց իւրոց կրսերոյ |

ԳԼ. ԻԵ.—Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ Ձռ. ԻԵ. | 1 գործոյն... զԵդիթումն... թիւ նոցա (Օ. մր՝ «նոքա»)... արանց, [illegible] (պակասեն յՕ. մրում Նոտրագիրքդ, զորս յաւելաք ի բնագրին՝ համաձայն Է. օրինակին.) | 2 Զաքուր և Յովսէփ... Ակիրեղա (նոյն՝ որ ի 11 համար. «Ասիրէլ» կոչի.)... ո. Ասափա Զանիայ սա գա (շփոթումն ինչ թուի լինել աստ յերկուսին օրինակսն. թերևս փոխ. ասելոյ՝ «որդիք Ասափայ զէնի Ասափա») մարգարէութեամբ զՏեա

3 գարէութեամբ զհետ արքայի։ Առ Իդի-
թովմ. որդիք Իդիթովմ Գոդողիայ և
Սուրի և Ասիայ և Ասաբիայ և Հեղրի
և Մատաթի զկնի հայրն իւրեանց,
Իդիթովմ ի քնար մարգարէութեան
խոստովանութեան աւրհնութեան Տն։
4 Զկնի Եման. որդիք Եմանայ Բոքիայ՝
Մաթթանիայ և Ոզիէլ և Սուայէլ,
Երիմովթ և Անայիա և Անանիէլ և
Եղիաթայ և Գոդոլաթ և Արամաթի,
Եսէր և Ցեղբոզ և Մաղեթի, ||195 բ'||
5 Եսթիր և Մաղիովթ։ Ամենեքին սոքա
Եմանայ, տեսանողին արքայի ի բանս
Այ, զի բարձրասցի եղջիւր. և ետ
Ած որդիս Եմանայ չորեքտասան և
6 դստերս երիս։ Ամենեքին սոքա երգիչք
աւրհնութեան ի տան Տն ի փող և
ի քնար ի ծառայութեան տան Այ
զկնի արքայի, Ասափայ և Իդիթովմ
7 և Եման։ Եւ եղև թիւ նոցա եղբարբք
իւրեանց հանդերձ, որ ուսուցեալ էին
երգել զաւրհնութիւնս Տն, ամենայն
8 որ իմաստնացեալ էին ՄՁԸ։ Ապա
արկանէին վիճակս շարաթուորաց
միմեանց ընդդէմ մեծի և փոքու ըստ
իմաստնանալոյն և որ զեռ յուսմանն
9 էր։ Եւ ել վիճակն առաջին Ասափայ
և որդւոց իւրոց և եղբարցն իւրոց.
և Յովսեփայ առաջին, Գոդողիա երկ-
րորդ, ինքն և եղբարք իւր և որդիք
10 իւր երկոտասան. երրորդ Զաքուր,
ինքն և եղբարք իւր երկոտասանք.
չորրորդ Ասիրէլ, որդիք իւր և եղ- 11
բարք իւր ԲԺ.ան. հինգերորդ Նաթա- 12
նիայ, որդիք իւր և եղբարք իւր եր-
կոտասան. վեցերորդ Բոքիայ, որդիք 13
իւր, եղբարք իւր ԲԺ.ան. եւթներորդ 14
Եզրի, որդիք իւր և եղբարք իւր եր-
կոտասան. ութերորդ Իսաիայ, որդիք 15
իւր և եղբարք իւր ԲԺ.ան. իններորդ 16
Մաթթանիայ, որդիք իւր և եղբարք
իւր ԲԺ.ան. տասներորդ Սուրի, որդիք 17
իւր և եղբարք իւր ԲԺ.ան. մետա- 18
սաներորդ Ոզիէլ, որդիք իւր և եղ-
բարք իւր ԲԺ.ան. ԲԺ.աներորդ Ասափ, 19
որդիք իւր և եղբարք իւր երկոտա-
սան. երեքտասաներորդն Սուբիէլ, որ- 20
դիք իւր և եղբարք իւր երկոտասանք.
չորեքտասաներորդ Մատաթի, որդիք 21
իւր և եղբարք իւր ԲԺ.ան. հինգետա- 22
սաներորդ Ցերիմովթ, որդիք իւր և
եղբարք իւր ԲԺ.անք. վեշտասաներորդ 23
Անանիայ, որդիք իւր և եղբարք իւր
ԲԺ.անք. եւթնուԺ.երորդ Ցեսրաի, որ- 24
դիք իւր և եղբարք իւր ԲԺ.անք.
ութուտասաներորդ Անանիէլ, որդիք 25
իւր, եղբարք իւր ԲԺ.անք. իննու- 26
տասներորդ Մաղակթի, որդիք իւր և
եղբարք իւր ԲԺ.անք. քսաներորդ 27
Եղիաթայ, որդիք իւր և եղբարք իւր
ԲԺ.անք. քսաներորդ առաջներորդ 28
Ութիր, որդիք իւր և եղբարք իւր

---

արքաի | 3 առ Իդիթովմ. որդիք Իդիթովմ (այսպէս ունի և Օ. մեր ի սոյն խոկ համարատան.) Գոդողիա և Սուրիա… և Աքասիա… իւրեանց. և Իդիթովմ | 4 Սորաէլ… Անանիաս… և Գոդոթամթ… Ցեղբոթ և Մաղղեթի | 5 Ամենեքեան սոքա որդիք Եմանա | 6 ամենեքեան… Ասափ և Իդիթովմ | 7 եղբարբք (Օ. մեր՝ «եղբարք») …իմաստացեալ էին երկու Ճ.և Զ.և Ը. | 8 մեծին… իմաստնալոյն | 9 և որդւոց իւրոց (գրչագիրն՝ «և եղբարցն իւրոց») և Յովսեփա առաջինն… երկոտասանք. | 10 գրչագիր յէ. ամբողջ համարատունդ | 11 չ. Ասիէլ… երկոտասանք | 12 երկոտասանք (այսպէս և չ նշխոյ) | 13 Բոքիա | 14 Է.երորդ | 15 Ը.երորդ | 19 երկոտասաներորդ Ասարէլ, որդիք | 22 Երիմովթ | 24 Ցեսրաւ | 25 ինն ԺԹ.երորդ (այսպէս՝ փոխանակ՝ ութուտասաներորդ) Անանիէլ որդիք իւր և եղբարք | 26 ինն ԺԹ.երորդ Մաղաթի | 27 Եղիաթայ | 28 Ութիր (անունդ «Ութիր» եդեալ է յՕ. մերում ի լուսանցս.) |

29° ԲԺ․անք․ [քսաներորդ երկրորդ Գոդո-
ղաղ, որդիք իւր եւ եղբարք իւր երկո-
30 տասանք.] քսաներորդ երրորդ Երա-
գեովթ, որդիք իւր և եղբարք իւր
31 ԲԺ․անք․ քսաներորդ չորրորդ Ամա-
թիեղեր, որդիք իւր և եղբարք իւր
երկոտասանք։

## [ԻԶ.]

1 Ի բաժինս վիճակաց դրանց. որ-
դւոցն Կորեա Մեղեմիայ, որդի Կորեա,
2 յորդւոցն Ասափ։ Եւ Մեսեղեայ որդիք.
Զաքարիա անդրանիկն, Յադիէլ երկ-
րորդն, Զաբադիա երրորդն, Սադա-
3 թիէլ չորրորդն, Եղամ հինգերորդն,
||195 Բ²|| Յովնաթան վեցերորդն, Եղի-
4 ովայ եւթներորդն։ Աբիաթովմ որ-
դւոցն. Սամայ անդրանիկն, Յուզբաա
երկրորդն, Յովադ երրորդն, Սաքար
չորրորդն, Նաթանայել հինգերորդն,
5 Յովնաթան վեցերորդն, Իսաքար եւ-
թներորդն, Փեղաթի..., զի աւրհնեաց
6 զնա Ա՟ծ։ Եւ Սամեայ որդւոյ նորա
ծնան որդիք հաստատեալ ի տան
հաւր իւրեանց, զի զաւրացեալ էին
զաւրութեամբ։ Որդիքն Սամեա. Ոթնի 7
և Հռաթայել և Ովբէդ և Եզզաբէթ
և եղբարք նորա, որդիք զաւրու-
թեան, Եղիու, Եսամաքիա։ Ամենեքին 8
սոքա որդիք Աբդէովմ, ինքեանք և
որդիք իւրեանց և եղբարք իւրեանց,
զաւրացեալք զաւրութեամբ գործէին
զաւրութեամբ զգործս, վաթսուն և
երկու Աբդեդոմա։ Եւ Մեղեմիա որդիք 9
և եղբարք հասունք ութեւտասն։ Եւ 10
Յեսամա, որդւոցն Մերարեա, որդի մի
Շամարի, որում պահէին զգլխաւորու-
թիւն, զի ոչ գոյր անդրանիկն ի միջի,
և առ եդ զնա հայր իւր. սկզբան
Եղիւ, Քեղկի երկրորդ, Նաաբեղ եր- 11
րորդ և Զաքարիա չորրորդ. ամենե-
քին սոքա Ուսայեայ որդիք և եղբարք
նորա չորեքտասան։ Սոցա էին բա- 12
ժինք վիճակաւ դրանցն գլխաւորու-
թեանց զաւրութեանցն կալ շարա-
թաւոր առաջի եղբարցն իւրեանց և
պաշտել ի տան Տ՟ն։ Եւ արկին վիճակս 13
ըստ փոքուն և ըստ մեծին ըստ տանց
ազգատոհմին իւրեանց, ի դրունս

---

29° սխալմամբ ընդօրինակողաց պակասէ յՕ. մերում համարատունդ, զոր յաւելաք ի բնագրին՝ համաձայն Է. օրինակին.) |

Գլ. ԻԶ.—Է. ունի ի լուսանցս բաժ. գլխոյ՝ ԻԶ. | 1 դրանցն... Կորէայ Սեղեմիայ... որդոցն Ասափ- | 2 և Մեսեղիա... երկրորդ, Զարադիա... չորրորդ | 3 հինգերորդ, Յովնաթան վեցերորդ, Եղիունայ եւթներորդ | 4 Աբդիադոմ... Սամեա անդրանիկն Յուզաբադ... Նաթանաէլ... Յովնաթան | 5 Փիլաթի (թուի պակասել յերկուսին ձեռագիրս թուականն [illegible] գնի «Փեղաթի» անուան.) | 6 հաստատել | 7 Հռաֆաէլ | 8 Աբդիովմ ինքեանք (յՕ. մերում՝ «ընքեանք») և որդիք... Աբդիեդովմա (նոյն, որ ի 4 համար. «Աբիաթովմ» կամ Աբդիադամ կոչի.) | 9 և Սելէմիա... հասունք (Օ. մեր՝ «ի հաջսունք») ութուտասն | 10—11 Մերարեա որդի Միշամարի ([illegible] և Օ. մեր.) անդրանիկն... հայր իւր է սկզբանէ. Գիւբեղկի (չփոթումն ինչ թուի լինել յերկուսին օրինակսն՝ ի վերջ 10 և ի սկիզբն 11 համարատանց.) երկրորդ, Նաաբէլ... Ուսաեա... չորեքտասանք | 12 Սկսեալ յայսմ համարատանէս ցվերջ ԻԶ-որդ գլխոյս, որպէս և յառաջին մասին յաջորդ՝ ԻԷ-որդ՝ գլխոյդ ց15-որդ համարատունն միանգամայն առեալ, տեսանի [illegible] ի տպագրեալ օրինակս հայերէն թարգմանութեան Ս. Գրոց՝ որ ըստ Եօթանասնից՝ ընդ խմրագրութեան Նորագիւտ թարգմանութեանս՝ հանդերձ ինչ ինչ տարբերութեամբք ընթերցուածոց. Տե՛ս և ի ստորև՝ ԻԸ-որդ (ի վերջին համարատունն) և ԻԶ-որդ գլուխն Բ. Գրոց Մնացորդաց։ | բաժին... զօրութեանց | 13 վիճակ ըստ փոքու | 14 Յովաբ... վիճակ

14 դրունս։ Եւ ել վիճակ դրանն արե-
ւելից Սելեմիա և Զաքարիա որդւոյ նո-
րա, Յովասայ խորհրդական ի միտս
իւր. արկանէին վիճակս, և ել նմա
15 վիճակն ընդ կողմն հիւսիսոյ։ Եւ Ա-
բեդովմա ընդ հարաւակողմն կոյս,
[եւ որդոց իւրոց] ընդդէմ տանն Ասա-
16 փայ. յերորդեան սեմյն Ովսայ ընդ
արեւմուտս կոյս դրամբք հանդերձ
սրահապանին ելից ճանապարհին, պահ
առ պահ ընդ արեւելս։
17 Իսկ Ղեւտացիքն վեց վեց աւուր
ընդ կողմանս հիւսիսոյ, չորս չորս
յաւուր ընդ կողմանս հարաւոյ, և
չորս յաւուր յԱսափինն, և երկուս
18 երկուս ի փոխանակել. և ընդ արե-
ւմուտս չորս, և ի ճանապարհի եր-
19 կուս երկուս փոխանակաւ։ Այս վի-
ճակք բաժնից դարապանաց որդւոցն
20 Կորայ և որդւոցն Մերարեա։ Եւ
Ղեւտացիքն եղբարքն իւրեանց հան-
դերձ ի վերայ գանձին տան Տն և ի
21 վերայ գանձիցն սրբոյն սրբոց։ Որդիքն
Ղաադանայ, որդւոյ Գեսամ և Ադա-
դանայ, իշխանք ազգատ-‖196 Ա՛‖-ոհմին
22 Ղադանու և Գերսամայ. Յէիէլ, և
Զեթամ և Յովէլ եղբարք նորա ի վե-
23 րայ գանձին տան Տն։ Եւ Ամրիմ և
24 Իսահար և Քեբրոմն և Ոզիէլ և Սե-
բիէլ և Գերսամանցն Մուշեանց զաւ-
բաղլուխ ի վերայ գանձիցն։ Եւ եղ- 25
բայրն իւրոյ Եղիազար. Ռաբիա որդի
նորա և Յուսէէ որդի նորա և Յով-
րամ որդի նորա և Զեքրի որդի նորա.
և ինքն Ղամիթ և եղբարք ի վերայ 26
ամենայն գանձին սրբոյն սրբոց, զոր
նուիրեաց Դաւիթ, և իշխանք առհ-
մանցն հազարապետք և հարիւրա-
պետք և իշխանք զաւրութեանցն, զոր 27
առեալ էր ի քաղաքաց անտի աւար և
նուիրեալ էր ի նոցանէն, զի մի նուա-
զեսցի գործ շինուածոյ տանն Տն,
և ի վերայ ամենայն նուիրելոցն Տն,
զոր նուիրեցին Սամուէլ տեսանողն և 28
Շաւուղ Կիսեանց և Աբինէր Ներեանց
և Յովաբ որդի Շարուհեայ, և ամե-
նայն նուէրք որ էին ի ձեռն Սողով-
մայ և եղբարց իւրոց։ Յեսարի և 29
Քոնոնիայ և որդիք իւր, և գործն
գործոյն արտաքնոյ ի վերայ Իղի, զի
գրիցեն և վճարիցեն։ Ի Քեբրոնիայ 30
Սաաբիաս և եղբարք իւր, որդիք զաւ-
րութեանց, հազար և եւթն հարիւր և
ի վերայ ատիկանութեան Իղի, յայն-
կոյս Յորդանան գետոյ ընդ արեւմուտս,
ամենայն գործ պաշտաման Տն և ի
գործ արքունի։ Քեբրոմնեա. Ուրիաս 31
իշխան, Քեբրոմնեա ազգատոհմութքն
իւրեանց հանդերձ յամին քառասնե-
րորդի Թագաւորութեան Դաւթի այս

ընդ կողմ | 15 ը. հարաւակոյս կողմ և ‑դ‑ը‑ղ‑ բ‑ը‑դ (պակասեն յՕ. մերում Նոտրագիրքդ, որ թուին նախ լեալ ի բնագրին, բանզի ջնջեալ տեսանին յայնմ բառք ինչ, և զորս վերստին յաւելար աստ.) ընդդէմ տանն Ասափա. | 16 յերրորդեան... դրամբ | 17 հարաւոյ... Ասափինն և ՟Բ. ՟Բ. | 18 ՟Բ. ՟Բ. | 19 Կորեա | 21 Ղաադանա (դ-ի-ը-ն՝ «որդւոյ Գեսամ և Ադադանայ») իշխանք ա. Ղադա-դանու | 22 Յովել | 23 Իսահառ և Քեբրոն | 24 և Սեբիէլ (դ-ի-ը՝ «և») Գերսամեանցն Մուշեանցն | 25 Եւ եղբօր իւրո ։ դ-ը-դ Եղիազարու... Յովսէէ | 26 և ինքն Ս-ղամիթ... առհմաց հարիւրապետք և հազարապետք (Օ. մեր թուի վրիպակաւ՝ «հայրապետք և հարիւրապետք») և իշխանք զօ-րութեանց | 27 ի նոցանէ... տան Տն... նուիրել-ոցն | 28 Սամ-էլ... Աբեններ... ի ձեռս Սողոմոնեա | 29 արտաքնոյն... Իղի | 30 Սամէիսա և եղբարք իւր... ատիկանութեանն... պաշտամանն | 31 Քեբրոնեա... Քեբրոնեա... յամի... թագաւորութեանն Դ. այս աշխարհագրի անդ... Գաղադիտացոց | 32 երկու հազար և ՟Է. գլխաւոր... գնտին... և կէսազգեան Մ. գնտին... բանից արքունի |

յաշխարհագրի անդր գետոյն, այր զօ-
րութեանց ի նոսա Ցաբերն Գաղաադ-
32 տացւոց, և եղբարք իւր, որդիք զօ-
րաւորք, երկու հազարք և եւթն Ճ.,
գլխաւորք տոհմին, և կացոյց զնոսա
Դաւիթ արքայ ի վերայ ցեղին Հռու-
բէլայ և Գադայ և կէս ազգին Մա-
նասեան ցեղին վասն ամենայն բանից
Այ, բանից արքայի:

[ԻԷ.]

1 Եւ որդիք Իղի իւրաքանչիւր թուո-
ոց, նահապետք ազգատոհմին, հազա-
րաւորք և հարիւրաւորք, և համա-
րակար դպիրք, որ պաշտէին ի ժո-
ղովրդեան յամենայն համարս արքունի,
ըստ իւրաքանչիւր գործոյն համարոյ
ելին և մտին ամսոյ ամսոյ, յամենայն
ամիսս տարւոյն. ընտրութիւն առա-
2 ջին համարոյ Ի.և Դ. հազարք: Եւ
ընտրութիւն համարոյ առաջնոյ ամ-
սեանն Յեզբաադ և Բաղէէլն, և ըն-
տրութիւն ելից նորա քսան և չորք
3 հազարք, յորդւոցն Փարեսայ, որ
զլուխ էր ամենայն իշխ-‖196 Ա²‖-անացն
4 զաւրաց և ամսեանն առաջնոյ: Եւ
ընդրութիւն ամսոյն երկրորդի Դու-
դայի Դաքոթի և Մաղաղաւովդ ա-
ռաջնորդք, և ընտրութիւն նորա
ԻԴ. հազարք: Իշխան զաւրութեան 5
[երրորդն յամսեան] երրորդի Բանէաս
Յովադ քահանայ իշխան, և յընտրու-
թեան նորա քսան և Դ.հազարք:
Ինքն Բանէաս հզաւրագոյն էր քան 6
զերեսունսն, և ի վերայ երեսնիցն
բաժին է ընտրութեան իւրոյ: Յամ- 7
սեանն չորրորդի Ասայէլ եղբայր Յո-
վաբայ և Զաբդիայ որդի նորա և
եղբարք իւր զկնի նորա, և ընտրու-
թիւնն բաժնի նորա քսան և Դ. հա-
զարք: Հինգերորդ ամսեանն հինգե- 8
րորդի իշխան Սամաւովթ յեզարիայ,
և մասն բաժնի նորա ԻԴ. հազարք:
Վեցերորդ յամսեանն վեցերորդի Էկես 9
որդի Եկզեա Թեկուացւոյ, և մասն
բաժնի իւրոյ ԻԴ. հազարք: Եւթնե- 10
րորդ յամսեանն եւթներորդի Քեղ
Փաղովեանց յորդւոցն Եփրեմայ, և
մասն ի բաժնի իւրոյ ԻԴ. հազարք:
Ութերորդ յամսեանն ութերորդի Ու- 11
սաքէկի Եսթայեանց Զարայեայ, և
մասն ի բաժնի իւրում ԻԴ. հազարք:
Իններորդ յամսեանն իններորդի Աբի- 12
եզեր, որ յԱնաթովթայն, որ ի Բենի-
ամին երկրի, և մասն ի բաժնի իւ-
րում քսան և Դ.հազարք: Տասներորդ 13
յամսեանն տասներորդի Մաարին Ն-
ետոպաթեանց Զարայ, և մասն բաժնի
իւրոյ ԻԴ.Ռ: Մետասաներորդ յամսեանն 14

Գլ. ԻԷ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Ֆռ. ԻԷ. | Տե՛ս և ծանօթութիւնն 12-որդ համարատան Նախընթաց գլխոյն. | 1 Եւ որդիքն... թուոյն... ի ժողովրդեանն... համարոյն ելին... քսան և չորս Ռ | 2 համարս առաջին ամսեանն Յեզբաադ և Բաղէեղն... քսան և չորս Ռ | 3 և ամսեանն առաջնոյ (յՕ. մերում վրիպակաւ՝ «առնոյ».) | 4 ընտրութիւն ամսեանն... Դուդաի... Մաքաղաւովթ առաջնորդ, և ընտրութիւնք նորա քսան և ՌՌ | 5 զօրութեան երրորդն յամսեան (պակասեն վրիպակաւ յՕ. մերում Նոտրագիրքդ, զոր յաւելաք ի բնագրին.) երրորդի Բանէաս (Թուի պակասել յերկոսին ձեռագիրսն՝ «որդի», որպէս է տեսանել ի վեր՝ գլ. ԺԱ. 24.) Յովա քահանայ իշխան, և ընտրութիւնք նորա | 7 Ասաէլ... և Զարդիա... և ընտրութիւնք | 8 Հինգերորդն յամսեանն հինգերորդ իշխան Սամաւովթ յեզլիա, և բաժին մասին նորա | 9 վեցերորդ յամսեան (ձեռագր.՝ «յամսեանն վեցերորդի») Էկէս որդի... բաժնի նորա | 10 եւթներորդ յամսեան Քեղ... Եփրեմայ (ձեռագ.՝ «և մասն») ի բաժնի իւրում | 11 Եսթանեանց Զարայա | 13 Մայարինետ Սպանթեանց (ձեռագր.) | 14 Մետասաներորդ (Օ. մեր վրիպակաւ՝

մետասաներորդի Բանէաս ի Փարա-
թոնեայ, որդւոյն Եփրեմի, և մասն
15 բաժնի իւրոյ ԻԴ. Ռ։ Երկոտասաներորդ
յամսեանն երկոտասաներորդի Ողդիա
Տոփաթեանց Գոթոնիէլեանց, և մասն
բաժնի իւր ԻԴ. հազարք։
16 Եւ ի վերայ ազգացն Իղի. Հռուփէլ
նահապետ Եղիազար, որդի Զաքարեայ.
Շմաւոնի Սափատիա Մաքաեանց.
17 Ղևեայ Սաբիայ Կամուէլեանց. Ահարոնի
18 Սադովկ. Յուդայ Եղիաբ, յեղբարցն
Դաւթի. Իսաքարայ Ամրի Միքայե-
19 լեանց. Զաբուղոնի Իսամիա Աբդեանց.
Նեփթաղեայ Յերիմութ Ոզիէլեանց.
20 Եփրեմա Ուսի Էրդեանց. կէս ազգեան
21 Մանասէի Յովել որդի Փադէա. կէս
ազգին Մանասէի, որ յերկրին Գաղա-
ադու, Յադդայ Զաքարեանց. որդւոյն
22 Բենիամենի Յասիէլ Աբեներեանց. Դանա
Ոզիէլի Յերովամեանց։
Այս իշխանք նահապետք ազգ-||196 բ'||-
23 ացն որդւոյն Իղի։ Եւ ոչ եա համար
առնել Դաւիթ արքայ ի քսանամե-
նից և ի խոնարհ. զի ասաց Տէր, եթէ
բազմացուցանելով բազմացուցից ես
զզաւակ որդւոյն Իղի իբրև զաստեղս
երկնից։
24 Եւ Յովաբ որդի Շարուհեա սկսաւ
աշխարհամար առնել ժողովրդեանն

և ոչ կարաց կատարել. սակայն և
յայնմիկ եղև բարկութիւն ի վերայ
Իղի, և ոչ յարդեցաւ համարն այն ի
գիւտն գրրութեանն համարոց ա-
ւուրց արքային Դաւթի։ Եւ որ ի վե- 25
րայ գանձիցն թագաւորին էին Ազ-
մովթորէ Եղեանց. և ի վերայ գան-
ձուցն արտաքոյ, որ ի գեաւղս և ի
քաղաքս էին և ի գաւառս և ի պա-
հակս, Յովնաթան Ծիւեանց։ Եւ որ 26
ի վերայ արդեանցն էին հողագործաց
Եզրայիմ որ Քաղբէացն էր։ Եւ ի վե- 27
րայ այգեստանեացն Սէմէիս Բիմա-
թեանց. և որ ի վերայ գանձից գիւ-
ղից գինոյն էին Զաբդի Սափամեանց։
Եւ որ ի վերայ ձիթոյն և ի թը- 28
թոյն, որ ի դաշտի անդ, Եղեանան
Գեդովրացի. և որ ի վերայ գանձի
ձիթոյն էր Յովաս. որ ի վերայ ան- 29
դոյն էր, որ յԱսսարոմնէն, Սաարայր
Սառոնացի. որ ի վերայ արջառոյն,
որ ի հովիտս էր, Սափատ որդի Ա-
դայեայ. որ ի վերայ ուղտուց երա- 30
մակաց էր Ոբիայ Իսմայէլացի. որ
ի վերայ իշոց երամակաց էր Ազիա
Մերաթոնացի. որ ի վերայ հաւտին 31
էր Յովազ Գադարացի։ Ամենայն այս
իշխանք ընչից ստացուածոց Դաւթի
արքային։ Եւ Յովնաթան հաւրեղբայր 32

«տասներորդ») ...ի Փարաթոնեա, յորդոյն... բաժն և չորս Ռ. | 15 Ողդիա... բաժնի իւրոյ | 16 Իղի –ւչէ Հռուբէլ... Շմաւոնի | 17 Ղեւեա Ս––բիա Կ. Ահարոնի | 18 Միքաէլեանց | 19 Զաբուղոնի Սամիա Ա. Նեփթաղիմայ Երիմութ | 20—21 Եփրեմայ Ուսի Եզէբեանց... Մանասէի (դ–ի––էն՝ «Յովել որդի Փադէա. կէս ազգին Մանասէի») որ յերկրին Գաղաադու է Յադա Զաքարէեանց. որդոյն... Աբեններեանց. | 22 Դանայ Ոզիէլ Յերովամայեանց... որդոյն Իսրայէղի | 23 բազմացուցից (դ–ի––է՝ «ես») զզաւակ+ որդոյն | 24 աշխարհ–համար... գրրութեան | 25 Է. ունի ի լուս. բաժան. գլխոյ՝ ԽԹ. | Եւ (դ–ի––է՝ «որ») ի վերայ գանձից Ազմով Թադեղեանց.. գանձուց արտաքոյ, որ ի գեօղ... Յունաթեան Ժ. | 26 արդեանց... Եզրաիմ որ Քաղբեանցն է | 27 Սեմէի Արեմաթեանցն... գեղից... Ասփամեանց | 28 և թըթ–ոյն... Եղան Անգեդովրացի | 29 անդեոյն էր որ յԱսարոնէն Ս. Սաբոնացի... արջառոյն... Սաֆատ ո. Սադաեայ | 30 որ ի վերայ ուղտերամակացն էր Որայի Ամայելատացի... իշո–ց երամակացն էր Ադեայ | 31 ընչից (Օ. մեր՝ «ինչից») | 32 այր... Յայելա Սամեանց | 33 խորհրդակից Դաւթի և Թ. | 34 Աբիաթարէլ |

Դաւթի, այրն խորհրդական իմաս-
տուն և ինքնին գպրապետ, և Յայել
Սաամինեանց և ընդ որդիսն թագաւո-
33 րին։ Եւ Աքիտոփէլ խորհրդակից
արքայի, և Քուսի բանից ընկեր ար-
34 քայի. և զհետ նորա Աքիտոփէլ առ
նմին, և Յովաթ Բանեանց և Աբիա-
թար, և զաւրավար զաւրացն Դաւթի
Յովաբ, որդի Շարուհեայ։

## [ԻԸ.]

1 Եւ ի ժողով հրամայեաց կոչել Դա-
ւիթ զամենայն իշխանս Իսրայելոյ,
զզաւրագլուխս գնդաց գնդաց, և
զզաւրագլուխս վիճակաց վիճակաց,
զամսապահս, շաբաթապահս, զաւ-
րասպասիկս սպասաւորս արքունի,
զիշխանս իշխանս հազարաւոր հա-
րիւրաւոր գնդաց, զանձապետս գան-
ձից և որ ի վերայ ամենայն ընչից
ստացուածոց նորա էին, զգաւառա-
պետս գաւառապետս և զամենայն
պետս արքունի ||196 բ²||, զորդիսն ան-
դամ զարքայի ներքինեաւքն հանդերձ,
զամենայն զաւրագլուխս զաւրաւո-
րացն, մեծամեծաւք, պետաւք, մար-
տիկ նահատակաւք հանդերձ. և եկին
2 ժողովեցան յԵմ։ Ապա եկն եկաց Դա-
ւիթ արքայ ի մէջ ժողովոցն, խաւ-
սել կալաւ առաջի և ասէ. արք, եղ-
բարք իմ, ժողովուրդ իմ, լուարուք
ինձ. համայ եղև գնել ինձ ի սրտի ի
մտի իմում շինել տաճար հանգստեան
տապանակին կտակարանաց Տն և
հաստատութիւն հանգստեան անոտ-
նէի ոտիցն Այ մերոյ, և պատրաստեցի
ես զամենայն նիւթ շինածոյ որ զինչ
պիտէր. զոսկի և զարծաթ, զպղինձ
և զարոյր և զերկաթ և փայտ բա-
զում յոյժ։ Ապա խաւսել սկսաւ ընդ 3
իս Տր Ած իմ և ասէ. ոչ եթէ դու
շինեսցես ինձ տուն անուանել զանուն
իմ ի վերայ նորա, զի դու այր պա-
տերազմող էիր և արիւնք բազումք
հեղան ի ձեռս քո։ Արդ այս յայտ է, 4
զի ընտրեաց Տր Ած յամենայն ազգաց
զաւնդ Իղի և զՅուդայ կանգնել
զթագաւորութիւնս յաւիտեանս, և
ընդ Յուդայ և ընդ Իէղ ընտրեաց Տր
զՅուդայ, և ի տանէ Յուդայ ըն-
տրեաց Տր զտուն հաւր իմոյ, և ի տա-
նէ հաւր իմոյ ի մէջ եղբարց իմոց
ընդ իս հաճեցաւ, զի թագաւորե-
ցուսցէ զիս ի վերայ ամենայն որդւոցդ
Իղի։ Եւ ի մէջ ամենայն որդւոցն իմոց, 5
զի բազում որդիս ետ ինձ Ած, ըն-
տրեաց զՍողոմոնի որդի իմ նստուցա-
նել յաթոռ թագաւորութեան Տն ի
վերայ ամենայն Իղի։ Եւ ասէ ցիս Ած. 6
Սողոմոնի որդի քո շինեսցէ զտաճարն
իմ և զսրահսն իմ, զի ընտրեցի ես
զնա լինել ինձ զնա որդի, և ես եղէց
նորա հայր. և պատրաստեցից ես զար- 7

---

ԳԼ. ԻԸ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Ֆռ. ԻԸ. | 1 զորագլուխ... և զորագլուխ... զամպահս, Շ· զորայսպասիկս... պէտս արքունի... ներքինոք... զորագլուխս զորաց | 2 Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ ԽԲ. | ժողովրդոցն. Խ. կալաւ (Դրջ-նէ՝ «առաջի») Դ—ՅՔ... ժողովուրդք իմ | զկնի՝ «լուարուք ինձ» ի Ն ո ր տողէ ունի Օ. մեր. | համո եղև ինձ գնել ի սրտի (Դրջ-նէ՝ «ի մտի») ...տապանակի... անոտն էի... շին—ածո որ զինչ և պիտոյ էր... և զպղինձ | 3 ոչ եթէ (Դրջ-նէ՝ «դու»)... տուն անուանել (Օ. մեր՝ «անուան») զանուն... Նր... բազում հ. ի ձեռաց քոց | 4 Իղի... յաւիտեան... Տր Ած զՅուդա | 5 զի բազում որդի ետ ինձ Ած ընտրեաց Եւ զՍողոմոն | 6 ցիս Տէ Ած. Սողոմոն (Դրջ-ն և Լ Ներ-ս)... ընտրեցի ես (Դրջ-նէ՝ «զնա») լինել ինձ զնա | 7 պատրաստեցի ես... Ֆն— յորս յայս |

բայութիւն նորա մինչև յաւիտեանս
ժամանակաց, եթէ կարասցէ յաղթել
առնել և պահել զպատուիրանս իմ
և զիրաւունս իմ իբրև յաւր յայս։
8 Արդ գիցէ առաջի աչաց իւրոց ամե-
նայն Իէղ և ունկնդիր լիցին Տն Այ
մերում խնդրել և պահել զամենայն
պատուիրանս Տն Այ մերոյ, զի ժա-
ռանգել կարասջիք զերկիրն բարեաց
և ժառանգեցուսջիք զորդիս ձեր մին-
9 չև յաւիտեանս ժամանակաց։ Եւ արդ
Սողոմոն, որդեակ իմ, ծանիր դու
զՏր Աճ հարցն քոց և ծառայեաց դու
նմա կատարեալ սրտիւ, մտադիր
մտաւք, զի զամենայն սիրտս քննէ
Տր և զխորհուրդս մտաց ճանաչէ.
և եթէ խնդրեսցես դու զնա, գտցի
քեզ, և եթէ թողցես զնա, լքցէ զքեզ
10 մինչև ի սպառ։ Արդ տես, զի ընտրեաց
զքեզ ի շինել նմա տուն ի սրբու-
թեան։ ‖197 Ա'‖ Բաջալերեաց, զաւրա-
11 ցիր և ի գործ կաց։ Ապա ետ Դաւիթ
Սողոմոնի որդւոյ իւրում աւրինակս
աւրինակս տաճարին և սենեկացն,
գանձանակացն և վերնատանցն, շտե-
մարանացն ներքնոցն և արտաքնոց,
վերնատան և տաճարին քաւութեանց.
12 և զաւրինակ զամենայնի, որպէս ետ
ի նմա ոգին, սրահիցն և գաւթացն,
զամենայն սենեկացն, որ շուրջ զշ-
տեմարանաւքն Տն Այ էին, զտան
գանձին նուիրաց, զմասանցն, զվիճա- 13
կացն, զշարաթաւորացն, զքահանա-
յիցն և զՂևտացւոցն և որ յամե-
նայն ի գործ լինէ պաշտաման տան
Տն, զտան գանձին, կահին կարասոյն,
որ առ ձեռին սպաս էր պաշտամանն
Տն։ Ի կշիռ յոսկոյն և ի մէտ կշռոյն 14
ըստ իւրաքանչիւր անուաթոյ, որպէս
և պաշտէր ի կշիռ արծաթոյն, և ի 15
մէտ ըստ ամենայն կահի կարասոյն,
որպէս և պաշտէր ըստ բաւականի.
ըստ կշիռ ոսկի աշտանակացն և ճրա-
գարանաւքն և բազմակալաւքն հան-
դերձ իւրեանց ոսկի կշռով ի ճրագա-
րան մի, և ի բազմակալս և յաշտա- 16
նակսն ոսկի և արծաթի աշտանակացն
և ճրագարանացն և բազմակալացն
կշիռ ետ ցնա ճշմարտեալ, նոյնպէս
և զկշիռ սեղանոյն [հացին ցանկոր-
դեալ իւրաքանչիւր] ոսկոյ սեղանոյն.
նոյնպէս և շամփրոյն և մահճանացն, 17
տաշտիցն ոսկեացն և ճաշակացն և
մաղզմայիցն ոսկոյն զկշիռ քեփուրացն
և զքէփուրն, և զկշիռ ոսկոյն և զար-
ծաթոյ իւրաքանչիւր կշռով. և զնիւթ 18
ոսկէ սեղանոյ խնկոցն կշռով յոսկոյ
քաջէ, և եցոյց նմա զաւրինակ կա-
ռացն քերովբէիցն տարածելով թևով-
քըն, որ վերացեալ թռուցեալ տարա-
ծեալ խառարհեալ հովանի ունէր ի
վերայ տապանակի կտակարանացն Տն։

---

8 ունկնդիր լիցի | 9 ծանիր (գրչէն՝ «դու») զՏր... ծառաեա... մտադիւր կամօք... մտաց (Օ. մեր վրիպակաւ՝ «մաց») | 10 ի շինել (գրչէն՝ «նմա») տուն ի սրբութեան | զկնի՝ «ի սըրբութեան» ի Նոր տողէ ունի Օ. մեր. | 11 և արտաքնոյն վերնատանց և | 12 հոգին, և շըրահիցն | 13 յամենայն (գրչէն՝ «ի») գործ... կարասւոյն... պաշտաման տան Տն | 14 ոսկոյն և ի մէտ կշռոյն... ի կշիռ արծաթոյն | 15 կարասւոյն... աշտանակաց և ճրագարանօքն... կշռով ի ճրագարանսն | 16 և ի բազմակալսն և յաշտանակն ոսկի... աշտանակաց և ճրագարանաց և բազմականացն... ճշմարտել, նոյնպէս և զկշիռ սեղանոյն հացին ցանկորդեալ իւրաքանչիւր (պակասէն յՕ. մերում նոտրագիրքը, որ նախ լեալ էին ի բնագրին և ապա ջնջեալ և զօրս յաւելաք ստո վերստին.) ոսկի սեղանոյն | 17 տաշտիցն ոսկոյն... մաղզմաիցն... քեփուրացն և զքեփուր... ոսկւոյն և զարծաթոյն | 18 ոսկի սեղանոյն խնկոցն կ. յոսկո քաջէ... ի վերայ տ. կտակարանաց Տն |

19 Զամենայն գրով ի ձեռանէ Տն եւ
Դաւիթ ի ձեռս Սողոմոնի ըստ բա-
ւականի իմաստութեան մտաց իւրոց,
զի ի մտի կիցէ զամենայն գործած
20 զաւրինակացն։ Եւ ասէ Դաւիթ ցՍո-
ղոմոն որդի իւր. քաջալերեաց, զաւ-
րացիր, գործեա եւ մի զանգիտեր,
զի Տր Աճ քո ընդ քեզ է. ոչ թողցէ
զքեզ եւ ոչ ընդ վայր հարցէ, մինչեւ
գործեսցես կազմեսցես գործ պաշտա-
ման տանն Տն, զաւրինակ տաճարին
եւ տան նորա եւ քակերով նորա եւ
վերնատանց նորա եւ ներքին գանձա-
նակին եւ տանն քաւութեան եւ զաւ-
րինակ տան Տն։ ‖197 Ա²‖
21 Ահաւասիկ դասք դասք բաժանիցն,
շարաթաւոր քահանայիցն, ուրստա-
սիկ Ղեւտացւոցն, յամենայն գործ
կարգի տան Տն, եւ ընդ քեզ աւագիկ
յամենայն ի գործս քո, ամենայն յաւ-
ժարամիտ, յամենայն կարս կամակա-
րութեան իմաստութեան ըստ ամե-
նայն ճարտարութեան, եւ իշխանք եւ
ամենայն ժողովք զաւրացն ամենեքին
ըստ բանի քում։

## [ԻԹ.]

1 Դարձեալ խաւսել սկսաւ Դաւիթ
ընդ զաւրսն եւ ասէ. որդեակ իմ Սո-
ղոմոն, զոր ընտրեաց Տր, մանուկ
մատաղ եւ գործ մեծ. զի ոչ եթէ
մարդկան է բնակութիւն գործոյն,
այլ Տն Այ։ Բայց ես յամենայն զաւրու- 2
թենէ իմմէ պատրաստեցի նիւթ տան
Այ իմոյ, զոսկի յոսկւոյ տեղ եւ զար-
ծաթ յարծաթոյ տեղ, եւ զպղինձ ի
պղնձոյ, զերկաթ յերկաթոյ տեղ, եւ
զփայտ ի փայտի տեղ, եւ քարինս լռի,
եւ ականս պատուականս ազգիս ազ-
գիս, եւ զամենայն ակն պատուական
եւ վէմս զահանակեայս։ Եւ դարձեալ 3
զի հաճեալ էի ես մտադիւր շինել
զտուն Տն Այ իմոյ. գոյ եւ այլ, որ ես
ստացայ ինձ ոսկի եւ արծաթ, եւ ետու
ես ի տաճարն Տն Այ իմոյ ի բար-
ձրութիւն, թող զայն որ պատրաս-
տեցի ես նիւթ տաճարին, ետու ես ի
տուն սրբոյն սրբոց երիս հազարս 4
քանքարս ոսկի ի Սափերայ եւ եւթն
հազար քանքար արծաթոյ սրբոյ, զի
աւծցես նովաւ զորմս տաճարին, ի
վերայ ոսկւոյն ոսկւով եւ ի վերայ
արծաթոյն արծաթով, եւ յամենայն 5
գործ ձեռին ճարտարապետաց։ Արդ,
եթէ իցէ ոք յաւժար խոստաւորս բե-
րել այսաւր, լցէ զձեռս իւր Տն Այ։
Եւ անդէն փաղփաղկի սկսան նահա- 6
պետք ազգատոհմացն եւ իշխանք որ-
դւոցն Իղի եւ զաւրագլուխ հազարա-
ւոր գնդացն եւ որ պետք պետք էին
ի վերայ ամենայն գործոյն տան թա-
գաւորին, եւ շինողք անդամ, եկին բե- 7
րին գործ տանն Տն ոսկւոյ քանքարս

---

19 ի ձեռն Սողոմոնի… գործած զօրինակաց | 20 ցՍողոմոն… տան Տն… եւ տան քաւու-
թեանց | 21 բաժանիցն.. օրասպասիկ (Օ. մեր՝ «աւուրս սպասիկ»)… կարգ ի տան… յամ (դուխ-ուէ՝
«ի») գործս քո… յամ կամս… ամենեքեան |
Գլ. ԻԹ.—Է. ունի ի լուս. բաժանումն գլխոյ՝ ԻԹ. | 1 մանուկ մատաղ է եւ գործ… գոր-
ծոյն | 2 Այ իմոյ… արծաթս տեղ… Է յերկաթս տեղ… լռի… ազգի ազգիս | 3 մտադիւր… ես
ի ներքս սրբոյն սրբոց (Ա-ոյն ի նոր տողէ ունի Օ. մեր.) | 4 երիս Ռ. քանքար ա. ի Սուփերա…
արծաթս… ոսկոյն ոսկով | 5 եթէ ոք իցէ յօժար խոստաւորս (Օ. մեր թուի վրիպակաւ՝
«խոստաւուտ») բերել | 6 Է. ունի ի լուսանցս բաժ. գլխոյ՝ ԽԳ. | փաղփաղի (դուզէս)… ազգա-
տոհմաց… Իլի… գործոյն տան… շինօղք | 7 սասեր… տասն Ռ… ԸՌ… հարիւր Ռ. |

հինգ հազարս և բիւր սատերս, և
արծաթոյ քանքարս տասն հազարս,
և պղնձոյ քանքարս բիւր և ութ
հազար, և երկաթոյ հարիւր հազար
8 քանքար։ Եւ որոց գտան ակունք պա-
տուականք ի գանձս իւրեանց, ետուն
բերին ի ձեռն Յիէլայ Գերսոնեանց։
9 Եւ ուրախ եղեն ժողովուրդքն ի վե-
րայ ինքնակամ մտադիւր նուաստիցն,
զի ամենքին մտադիւր կամաւք կա-
մակարութեամբ բերին զնուաստն ի
10 շինած տան Տն։ ||197 բ'|| Եւ Դաւիթ
արքայ ուրախ եղև յուրախութիւն
մեծ, և աւրհնեաց Դաւիթ զՏր ա-
ռաջի ամենայն ժողովրդոցն և ասէ․
Աւրհնեալ ես դու Տր ԱԾ Իղի հարցն
մերոց յաւիտենից մինչև յաւիտեան։
11 Քեզ, Տր, մեծութիւն և զաւրութիւն
և մեծ վայելչութիւն, յաղթութիւն
և խոստովանութիւն, զի դու ամե-
նայն յամենայնի յերկինս և յերկրի
ամենեցուն տիրես, յերեսաց քոց խռո-
վին ամենայն թագաւորութիւնք ազ-
գաց։ Քո է, Տր, արքայութիւն և ամ-
12 բառնալ իշխանութեանց, զի ի քէն
է ամենայն մեծութիւն և փառք։
Դու ամենայնի տիրես և ի ձեռն քո
են ամենայն իշխանութիւնք և զաւ-
րութիւնք։ Ի ձեռս քո են, Տր ամե-
նակալ, ամենայն ողորմութիւնք մե-
ծացուցանել և զաւրացուցանել զա-
13 մենայն։ Եւ արդ, Տր, գոհանամք
զքէն և աւրհնեմք զանուն փառաց
քոց․ զի ով ուստեք էի ես, և կամ 14
զինչ ժողովուրդ իմ, զի զաւրացաք
մեք նուաստս կամաւք կամակարու-
թեամբ մատուցանել քեզ, զի քո էր
այս ամենայն և զքո առեալ քեզ մա-
տուցանեմք։ Եւ մեք նշդեհք և պան- 15
դուխտք առաջի քո, որպէս ամենայն
հարք մեր, և իբրև ստուեր են աւուրք
մեր ի վերայ երկրի, և ոչ եթէ առ
այս ամենայն է յոյս մեր։ Տր ԱԾ մեր, 16
որ պատրաստեցաք նիւթ շինածոյ
տան անուան սրբոյ քո, այլ ի ձեռաց
քոց առաք, Տր, և քեզ այդրէն մա-
տուցանեմք։ Եւ գիտացաք, թէ դու 17
ես, որ քննես զսիրտ և սիրես զար-
դարութիւն, և ես պարզմտութեամբ
սրտի իմոյ զնուաստս մատուցի զայս,
և ժողովուրդքս քո, այս որ գտաւ
աստ, տեսի, զի մտադիւրութեամբ
զնուաստս մատուցանեն քեզ։ Տր ԱԾ 18
Աբրահամու, Սահակայ, Յակոբու հար-
ցըն մերոց, պահեա զնոյս զանեղծուած
խորհրդոց սրտից ժողովրդեան քո և
ուղղեա զսիրտս սոցա առ քեզ։ Եւ 19
Սողոմոնի որդւոյ իմոյ տուր սիրտ
սրբութեան կատարել զամենայն պա-
տուիրանս քո և զվկայութիւնս քո
և զհրամանս քո և կատարել զամե-
նայն գործս շինուածոյս, որ առաջի
արկեալ է, զնիւթ շինածոյս, զոր
պատրաստեցի։ Եւ ասէ Դաւիթ ցա- 20

---

8 ակունք… Գերսոնեանց | 9 բերէին զնուաստն (դարձ.) շինուած | 10 և օրհնէր Դաւիթ | զնկի բանից «և ասէ» է․ ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԽԴ. | 11 վայելչութիւն… յերկին | 12 ի քէն (գրեթէ «է») ամենայն մեծութիւնք… և ի ձեռս քո է… և զօրութիւն | 13 գոհանամ… օրհնեմ | 14 ուստեքէ էի… նուաստ… քեզ մատուցանել | 15 պանդուխտք (դարձ.)… հարքն մեր… ստուերք… և ոչ թէ | 16 շինուածոյ… անդէն մատուցանեմք | 17 զսիրտս… ի սրտի իմում մատուցի զնուաստս զայս, և ժողովուրդ քո, զայս որ գտաւ շաստ… | 18 Աստուած ի նոր տողէ ունի Օ. մր. | Աբրահամու, Սահակայ և Յակոբայ… պահեա (Օ. մր՝ «պահեալ») զայսս զստացուած խորհրդոց… ուղղեայ զսիրտս նոցա | 19 Սողոմոնի (դարձ. և ի ներքս)… սիրտ բարութեան կատարել… պատուիրան քո… և զնիւթ շինուածոյս | 20 ժողովուրդք զՏր |

մենայն ժողովրդն. աւրհնեցէք և
դուք զՏ̃ր ԱԾ մեր: Եւ աւրհնեցին ա-
մենայն ժողովուրդքն զՏ̃ր ԱԾ հարցն
իւրեանց և ծունր եդին և երկիր
21 պագին Տ̃ն և արքայի: Ապա մատու-
ցանէր Դաւիթ պատարագս և ողջա-
կէզս ի վաղիւ անդր աւուրն առաջ-
նումն, զուարակս հազարս և խոյս
հազար և գառինս հազար ըստ ‖197 բ²‖
զոհից նոցա, ողջակէզս բազմութեանն
22 ամենայն Ի̃էղացւոց: Եւ կերան և
արբին յաւուր յայնմիկ խնդութեամբ
և ուրախութեամբ բազմաւ: Եւ դար-
ձեալ թագաւորեցուցին զՍողոմոն,
զորդի Դաւթի, և աւծին զնա ի ձեռն
Տ̃ն ի թագաւորութիւն, և զՍադովկն
23 աւծին ի քահանայութիւն: Եւ նստաւ
Սողոմոն յաթոռ Տ̃ն ի թագաւորու-
թիւն փոխանակ Դաւթի հաւր իւր,
և յաջողեցաւ նմա: Եւ լսէին նմա
24 ամենայն Ի̃էղ, և իշխանք և հզաւրք
և ամենայն որդիքն արքայի հաւր
իւրոյ Դաւթի հնազանդեցան նմա:

Եւ մեծացոյց Տ̃ր զՍողոմոն առա- 25
ջի ամենայն Ի̃էղացւոցն, և ետ ի վե-
րայ նորա փառս արքայութեան, որոյ
ոչ ուրեք երբէք եղեն ի վերայ թա-
գաւորութեանցն, որ յառաջ քան զնա
ի վերայ տանն Ի̃ղի: Եւ Դաւիթ որդի 26
Յեսսեայ թագաւորեաց ի վերայ Ի̃ղի,
և աւուրք թագաւորութեան նորա
քառասուն ամ. ի Քեբրոն ե̃թն, ի 27
յԵ̃մ երեսուն և երիս:

Եւ մեռաւ Դաւիթ ի ծերութեան 28
բարութեամբ, լի աւուրբք, մեծու-
թեամբ և փառաւք: Եւ այլ բանք 29
Դաւթի արքայի, առաջին և վերջին,
և աւանիկ գրեալ է ի բանս Սամու-
էլի որ տեսանէր, և ի բանս Նաթա-
նայ և ի բանս Գադայ որ տեսանէր,
վասն ամենայն թագաւորութեանց 30
զաւրութեանց նորա և վասն ամե-
նայն ժամանակացն, որ անցին ի վե-
րայ նորա և որ անցին ի վերայ Ի̃ղի
և ընդ ամենայն թագաւորութիւնս
երկրի: .

---

21 պատարագ... առաջնում զուարակս Ռ. և խոյս Ռ. և գառինս Ռ... բազմութեան... Ի̃է-ղացոց | 22 և ուրախութեամբ բազում... և զՍադովկ | 24 և իշխանք (դ-ն--է՝ «և») հզօրք... արքայի Դաւթի հաւր իւր... հնազանդեցան նմա | 25 Ի̃էլացոցն... որոյ ոչ երբէք ուրեք... թագաւորութեանց... քան զնա էին ի վերայ տանն Ի̃ղի | 26 ի վերայ Ի̃ղի... | 27 ի Քեբրոն Է. և յԵ̃մ ԼԳ. | 29 և վերջին (դ-ն--է՝ «և») աւ-անիկ գրեալ (դ-ն--է՝ «է») ի գիրս Սամուէլի | 30 Ի̃ղի | —Է. ունի ի վերջ Ա. գրոցս Մնացորդաց Յիշատակարան ինչ համառօտ.— «Կատարեցաւ գլուխ Առաջին Մնացորդաց թագաւորութեանց. Զգծողս յիշեա և անմեղադիր լեր, զի թանաքս վատ էր և կու սփռէր»—

Յետ այսորիկ գնի յէ. Ցանկ գլխոց Երկրորդ Գրոց Մնացորդաց («Գլուխք Երկրորդ Մնացորդացս») յար և նման տպագրելոյն՝ որ ըստ Եօթանասնիցն. իսկ յՕ. մերում պակասեն բնաւ թէ՛ Յիշատակարանն համառօտ և թէ՛ Ցանկն գլխոց. |

# ԳԼՈՒԽՔ ԵՐԿՐՈՐԴ ՄՆԱՑՈՐԴԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒ-ԹԵԱՆՑ.*

[Ա.]

1 Եւ զօրացաւ Սողոմոն որդի
Դաւթի ի թագաւորութեանն իւրում,
և Տր Ած իւր ընդ նմա էր և մեծա-
2 ցուցանէր զնա յոյժ։ Ապա խօսել
սկսաւ Սաւղոմոն ընդ ամենայն Իէղ,
ընդ իշխանս հազարաւոր գնդաց և
ընդ զաւրագլուխս հարիւրապետաց
և ընդ դատաւորսն և ընդ ամենայն
իշխանս նահապետաց ազգատոհմանցն
3 առաջի ամենայն Իէղացւոց։ Եւ գնաց
Սողոմոն և ամենայն զաւրքն ի բար-
ձաւնս, զի անդ էր վրան ժամուն
վկայութեանց Տն Այ, զոր արար
Մովսէս ծառայ Տն յանապատի անդ.
4 քանզի զտապանակն կտակարանաց
Տն եկն եբեր Դաւիթ ի Կարիաթարիմ
քաղաքէ, և կանգնեաց նմա խորան
5 Դաւիթ յԵմ, և սեղան արուրի, զոր
արար Բեսէլիէլ որդի Ճարուհեայ,
անդ էր վրան ժամուն վկայութեանց
Տն, և խնդիր արար Սողոմոն և ժո-
ղովուրդն։ Եւ եկն մատուցանել անդ 6
Սողոմոն ի վերայ սեղանոյն, որ կայր
առաջի Տն ի խորան ժամուն, և անդ
մատուցանէր ողջակէզս հազարաւո-
րաց։ Ի գիշերին յայնմիկ երևեցաւ Տր 7
Սողոմոնի և ասէ. խնդրեա դու քեզ,
զինչ խնդրես և տաց քեզ։ Եւ ասէ 8
Սողոմոն ցԱծ. դու արարեր ընդ
Դաւթի հաւր իմոյ ողորմութիւն
մեծ և թագաւորեցուցեր զիս փոխա-
նակ նորա։ Եւ արդ, Տր Ած, հաստա- 9
տեսցի բանն քո, որ ընդ Դաւթի հաւր
իմում էր, զի դու թագաւորեցուցեր
զիս ի վերայ ժողովրդեանս Իղի մեծի
այսորիկ, որ բազմացեալ են իբրև
զհող երկրի։ Արդ տուր ինձ իմաս- 10
տութիւն և հանճար, զի ելանել մտա-
նել մարթացից առաջի ժողովրդեանս
այսորիկ։ Ապա եւ պատասխանի Տր 11
և ասէ ցՍողոմոն. փոխանակ զի եղև
բանս այս ի սրտի քում, և ոչ խնդ-
րեցեր դու մեծութիւն ընչից ստա-
ցուածոց և ոչ փառս բարձրութեան

---

* Երես 198Ա՝ Ե. ձեռագրի | Ի խորագիր գրոցս ունի ձեռագիր Է՝ «Գլուխ Երկրորդ Մնացորդաց Թագաւորութեանց». | Գլ. Ա.—Է. ունի ի լուսանցս կրկնակի բաժան. գլխոյ՝ Ա/Ա. | 1 Սողոմոն (այսպէս և ի ներքոյ)... ի թագաւորութեան | 2 Ն̃ահապետաց... ազգատոհմացն... Իէղա-ցոցն | 4 զտապանակ | 5 արուրի... Բեսէլիէլ... և անդէն (Օ. մեր՝ «ընդ ենն». գուցէ՝ ա ն դ է ր, որոց զկնի թուի պակասել յերկուսին ձեռագիրսն բանդ՝ ա ռ ա ջ ի Հմմտ. համար. 6։) վրան ժա-մուն... Տն. (Առէն ի Ն ո ր տողէ ունի Օ. մեր։) | 8 հօր իմում | 9 մեծիս ա. | 10 (Զկնի՝ «զհող երկրի» ի Ն ո ր տողէ ունի Օ. մեր.) ելանել և մտանել | 11 և ա-ւ զոզիս... և ոչ աւուրս կենաց |

և զոգիս ատելեաց քոց և ոչ աւուրս
կենաց բազում խնդրեցեր դու, այլ
խնդրեցեր դու իմաստութիւն և հան-
ճար, զի դատել մարթասցես զժողո-
վուրդ իմ, զոր թագաւորեցուցի ես
12 զքեզ ի վերայ դոսա. զիմաստութիւն
և զհանճար տալով տաց քեզ, և զմե-
ծութիւն և զինչս և զստացուածս և
զփառս տաց քեզ, որպէս զի ոչ ուրեք
երբեք եղև նման քեզ ի թագաւորս,
որ յառաջ էին քան զքեզ և ոչ լեցի
13 ||198Ա²|| ոք իբրև զքեզ յետ քո: Եւ եկն
Սողոմոն ի Համայ ի Գաբաւոնէ
յԵմ ի վրան ժամուն վկայութեանց
և թագաւորեաց ի վերայ Իղի:
14 Եւ արար իւր Սողոմոն կառս և
երիվարս. և եղեն կառք նորա հազար
և երեք հարիւր, և հեծեալք իւր
երկոտասան հազար, և եթող անդ
զկառսն ի քառսն ի քաղաքս կառա-
պանացն, և զաւրքն էին ընդ ար-
15 քայի յԵմ: Եւ կուտեաց արքայ զգանձս
ոսկւոյ և արծաթոյ յԵմ իբրև զքա-
րինս, և զմայր փայտն եա ի կողմանն
Հրէաստանի իբրև զթթենի դաշտաց
16 բազում յոյժ: Եւ ելք երիւարացն
Սողոմոնի յԵգիպտոսէ և զինք վա-
17 ճառականացն թագաւորին, և ելանէր
յերկրէն Եգիպտացւոց կառք մի ընդ
Ռ. արծաթոյ և ձի մի ընդ ՃԾ. և այս-
պէս ածնէր ամենայն թագաւորացն
Քետացւոց և թագաւորացն Ասորես-
տանեաց ի ձեռն իւրեանց:

[Բ.]

Բերէին Սողոմոնի շինել նմա
զտունն յանուն Տն և զտունն թա-
գաւորութեան իւրում: Եւ ժողո- 2
վեաց Սողոմոն եւթանասուն հազար
այր բեռնակիր և ութսուն հազար
այր քարահատ ի լերինն և վարդա-
պետք ի վերայ նոցա երեք հա-
զարք և վեց հարիւր: Եւ առաքեաց 3
Սողոմոն առ Խիրամ արքայ Ծուրա-
ցւոց և ասէ. զոր աւրինակ արարեր
դու ընդ Դաւթի հաւր իմոյ և ա-
ռաքեցեր դու նմա մայր փայտ, զի
շինէր նա իւր ապարանս բնակել նմա
ի նմա, արդ աւասիկ ես որդի նորա 4
շինեմ տաճար անուան Տն Այ իմոյ
նուիրել զնա նմա, զի արկանիցեն
խունկս անուշից առաջի նորա և մա-
տուցանել պատարագս հանապազորդս
և հանել ողջակէզս յամենայն ժամ
զայգուն և զերեկոյն, և ի շաբաթս
շաբաթս, և ի գլուխս ամսոց և տա-
րեկանաց Տն Այ մերոյ յաւիտեանս
ժամանակաց ի ||198Բ¹|| մէջ տան Իղի:
Եւ տաճարն, զոր ես շինեմ, մեծ է, 5
և Տր ԱԾ մեծ է քան զամենայն
կուռս հեթանոսաց. և ո կարէ շինել 6
նմա տուն, քանզի երկինք և երկիր
ոչ հանդարտեն նմա, և ես ո եմ որ
շինեմ նմա տուն, բայց այնչափ է
զի զնիցեմք խունկս առաջի նորա:

12 փառս տաց... զի ոչ + ուրեք | 13 ի Հ. Գաբաւոնէ... ժամու | 14 Ռ.և Ջ̃Ծ. | զկառսն ([illegible] «ի քառսն») ի քաղաքս | 15 զքարինսն... ի կողմանս... զթըթենի | 16 երիվարացն | 17 և ելանէր ([illegible] «յերկրէն») յԵգիպտացոց... ՋԾ. արծաթ... Ծ.և Ծ... Քետացոց և թագաւորաց |

Գլ. Բ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Թո. Բ. | 1 Սողոմոնի ([illegible]) զտուն ([illegible]) | 2 Հ̃Ռ... Ձ̃Ռ... Գ̃Ռ. և Ջ̃Ծ. | 3 Հ. խիրամ... զի շինէր (Օ. մեր ունի աստանօր յիշատակարան ինչ համառօտ, եղեալ յընդօրինակողէն գրոցս՝ այսպէս. «Բազում փեաս և սղալանք լինի գրոյս ի նեղութենէ և վշտաց լի-ի և բնոյ որ տանջէս.») | 4 զայգուցն և զերեկոյն... տանն | 6 նմա ոչ հանդարտեն... բայց այնչափ (Օ. մեր՝ «բայց չափ) է զի |

7 Եւ արդ առաքեսցես դու ինձ այր
իմաստունս, որ տեղեակ իցէ ոսկւոյ
և արծաթոյ, պղնձոյ, երկաթոյ, ծո-
վագործ ծիրանւոյն կարմրոյ կապու-
տակի և բեհեզ նկւթոյ, առաքեսցես
ինձ այր տեղեկացեալս կոփել քան-
դակել ընդ ճարտարապետս մեր, որ
ի Հրէաստանի և յԵմ քաղաքի են,
զոր պատրաստեաց Դաւիթ հայր իմ
8 ի գործ ճարտարութեան: Եւ առցես
բերել ինձ փայտս սարոյն մայր և
կաղամախ ի Լիբանան լեռնէ, զի մեք
գիտեմք, եթէ տեղեկացեալ են ծա-
ռայք քո ընտրել հարկանել իջուցա-
նել փայտս ի Լիբանան լեռնէ: Եւ արդ
ահա գնասցեն ծառայք իմ ընդ ծա-
9 ռայս քո ընդրել հարկանել պատրաս-
տել փայտ բազում յոյժ, զի տունն,
զոր ես շինեմ, մեծ է և փառաւոր:
10 Եւ ահաւասիկ գործաւորացդ փայտա-
հարից ծառայից քոց հրաման տուաք
տալ փոխատակ ցորենոյ քոռս քսան
հազար, և գարւոյ քոռս քսան հազար,
և ձիթոյ մարս և գինոյ մարս Ի.հա-
11 զար: Եւ ետ պատասխանի Խիրամ
արքայ Տուրացւոց ի ձեռն հրեշտա-
կացն հրովարտակաւ առ Սողոմոն
և ասէ ցՍողոմոն. առ ի սիրել Տն
Այ զժողովուրդ իւր ետ Տր Ած զքեզ
12 ի վերայ դոցա թագաւոր: Աւրհնեալ
Տր Ած Իղի, որ արար զերկինս և
զերկիր, որ ետ Դաւթի արքայի որդի
իմաստուն, լի հանճարով զգաստու-
թեամբ, որ շինեսցէ տուն Տն տաճար
արքայութեան նորա: Արդ առաքեցի 13
ես քեզ այր իմաստուն, լի հանճարով,
զԽիրամ ծառայ իմ, զորդի կնոջն 14
ի դստերացն Դանայ, և հայր նորա այր
Սիդոնի, այր իմաստուն հանճարեղ ի
գործս ոսկւոյ և արծաթոյ, ի պղնձոյ,
յերկաթոյ, ի գործ փայտի և քարի,
ի գործ ականց պատուականաց, ի
գործ նկւթել անկանել ծիրանի կա-
պուտակ, բեհեզ և կարմիր, ի գործ
կռել կոփել ի քանդակել յիմանալ
խորհել ըստ ամենայն իմաստութեան
որ զինչ զիցես դու առաջի նորա ընդ
իմաստունս Տն իմոյ Դաւթի հաւր
քո: Բայց արդ զցորեանն և զգարին 15
և զգինին և զձէթն, զոր հրամայեաց,
առաքեսցէ տէր իմ արքայ ծառայից
իւրոց, և մեք հարցուք զփայտ ի Լի- 16
բանան լեռնէ ‖198Բ²‖ ըստ ամենայն
պիտոյից քոց և բերցուք զնա ի տա-
փաս ընդ ծով ի կողմանս Յոպպա-
ցւոց, և դու հանցես զնա յԵմ: Եւ 17
հրաման ետ Սողոմոն ժողովել զամե-
նայն եկս ճարտարաց յետ համարոյն,
զոր համարեցաւ զնոսա Դաւիթ հայր
նորա, և գտան ի մէջ ձԾ. և երեք
հազարք և վեց հարիւր այր. և ա- 18
րար ի նոցանէ Սողոմոն եւթնա-
սուն հազար սատանձնակիր, և ութ-
սուն հազար քարահատ ի լերինն, և
երիս հազարս և վեց հարիւր գործա-
վարս ի վերայ նոցա:

---

7 ծիրանւոյ... էին զոր | 8 ինձ բերել... սարոյ... տեղեկացեալք են... փայտ | 9 բազում ([illegible]՝ «յոյժ») զի... շինեմ ես | 10 Եւ [illegible] աւասիկ գործաւոր արանցդ փայտահարից (Օ. մեր՝ «գործաւորացդ փայտահարից»)... փոխատակ... գարւո [illegible] Ի. (Օ. մեր մոռացմամբ՝ «քս հազար») | 11 Քիրամ... հրեշտակաց... թագաւոր | 12 (Աւ[illegible] ի Նոր տողէ ունի Օ. մեր.) [illegible] օրհնեալ... երկիր | 13 ես [illegible] քեզ... Խիրամ | 14 կնոջ... այր Սի[illegible]նացի... հանճարեղ ([illegible]՝ «ի») գործ ոսկւոյ... պղնձո և երկաթոյ | 15 և զգինի և զձէթ, զոր հրամաեցեր | 16 և բերցուք զնա ի տափայս (Օ. մեր թուի շփոթմամբ՝ «զնա- տափայս».)... Յոպացոց | 17 համարւոյն | 18 բստանձնակիր |

## [Գ.]

1 Եւ սկսաւ շինել Սողոմոն զտունն
[Տն] յԵմ ի լերինն Ամորիա, ուր
երեւեցաւ Տր Դաւթի հաւրն նորա
ի տեղւոջն, ուր պատրաստեաց Դաւիթ
տեղի զկալն Ոռնեայ Յեբուսացւոյ։
2 Եւ սկսաւ շինել Սողոմոն յամին չոր-
րորդի յամսեանն երկրորդի թագաւո-
3 րութեան իւրոյ։ Եւ այսպէս սկսաւ
շինել Սողոմոն զտաճարն Այ. երկայ-
նութիւն տաճարին առաջին չափովն
4 Կ. կանգուն, և զեղամն ընդդէմ տա-
ճարին ի լայնութիւնս կանգունս
քսան և ի բարձրութիւնս կանգունս
հարիւր և Ի։ Եւ պատեաց զնա ոս-
5 կւով, ոսկւով քաջաւ։ Եւ զտունն մեծ
զրուագէր մայր փայտիւ, և պատէր
զնա ոսկւով քաջաւ, և քանդակէր ի
նմա արմաւենիս, և խառնէր զարդ
6 շղթայաձև խառնած։ Եւ կազմէր ա-
կանս պատուականս լուսաւորս ոսկւով
բաջաւ, որ ի Փարայիմ վայրաց է։
7 Եւ պատեաց զտունն ոսկւով և
զորմն և զդրանդսն և զդրունսն, և
անդ քանդակէր քրովբէս ի վերայ
8 որմոյն։ Եւ շինէր զտունն սրբոյն
սրբոց. զերկայնութիւն նորա ի լայ-
նութիւն տանն առաջնոյ Ի կանգուն,
և պատէր զնա ոսկւով սրբով, ոսկւո-
վըն Յեփարիմ, վեց հարիւր քանքար
կշիռ ոսկոյ։ Եւ ի բեեռ բեեռ Ծ.կը- 9
շիռ ոսկւոյ. և զձեղունն ոսկւով պա-
տէր։ Եւ առնէր տան սրբոյն սրբոց 10
Բ. քրովբէս, գործ քանդակեալ փայ-
տեայ, պատեալ ոսկւով։ Եւ թեւք 11
քրովբէիցն երկայնութիւն Ի.կան-
գուն, և թեւ միոյ քրովբէիցն միոյ
կողման Ե.կանգուն, որ յորմ անդր
կցէր. և միւս ևս թեւ Ե.կանգուն, որ
ի թեւ անդր կցէր միւսոյ քրովբէիցն,
և Ե.կանկուն, որ ի յորմ անդր կցէր 12
տանն, և Ե.կանգուն, որ ի թեւ քրով-
բէին միւսոյ կցէր։ Եւ տարածեալ 13
թռուցեալ կային թեւքն Ի. կանգուն,
և ինքեանք յոտս իւրեանց կային։
Եւ առնէր վարագոյր կարմիր ի ծի- 14
րանոյ, ի կապուտակէ և ի բեհեզ
նիւթոյ, և ի նմին անկանէր զքերովբէն։
Եւ առնէր կան-‖199 Ա'‖-գնէր ընդդէմ 15
տաճարին սիւնս Բ. Լ.և Ե. կանգնոյ
բարձրութիւն, և լայնութիւն խոյա-
կացն Ե.կանգուն։ Եւ դնէր ի վերայ 16
գործ վանդակապատ և շուրջ մանեակ
ի վերայ խոյակացն սեանցն, և անդ
առնէր դնէր խառնեալ ընդ վանդակսն
Ճ.զանկակ նռնաձև։ Եւ սիւնս կանգ- 17

---

Գլ. Գ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Յո. Գ. | 1 Սողոմոն (ջնջեալ և չ ներքոյ) զտուն Տն (վերջինդ պակասէ յՕ. մերում զոր և յաւելաք ի բնագրին.) յԵմ... հօր նորա... Յեբուսացւոյ | 2 յամի | 3–4 Կ. կանգուն և զեղ՚ամն (ջնջեալ՝ ջնջիչ նշանաւ ի վերայ ն)... և պատեաց զն—ա ոսկով և ոսկով (ջնջեալ և չ ներքոյ) բաջաւ | 5 զրուագէր... խառն—ած | 6 Փարո—իմ | 7 և զդրանդսն և [illegible] և [illegible] և զդրունսն... քերովբս... որմոյն | 8 (գրեալ յերկոսին ձեռագիրսն չափ լայնութեան տանն) | Ձճ. քանքար կշիռ ոսկոյն | 9 Եւ ի բեեռ (գրեալ՝ «բեեռ») Ծ. կշիռ... և զձեղունն | 10 տանն... երկու քերովբէս գործ քանդակել | 11 Եւ թ. քերովբէից... և թեւ մի քերովբէիցն միոյ կողման Ե. կանգուն որ յորմ անդր կցէր և միւս (գրեալ՝ «ևս») թեւ | 12–13 քերովբէից միւսոյն կցէր և տարածեալ | 14 վարագոյր (ջնջեալ՝ ջնջիչ նշանաւ ի վերայ )... ի ծիրանւոյ ի կապուտակ և... և (գրեալ՝ «ի») նմին (ջնջեալ՝ ջնջիչ նշանաւ ի վերայ ք) անկանէր | 15 Լ. և Ե. կանգուն բարձրութիւն | 17 և չ սիւնս կանգնէր... անուանս... ի ձախմէն (գրեալ՝ «էր») Բոոս |

նէր ընդդէմ տաճարին, մի յաջմէ և
մի ի ձախմէ, և կոչէր զանուանս
սեանցն. որ յաջմէն էր Յաքիմ, և որ
ի ձախմէն էր Բոոզ:

[Դ.]

1 Եւ արար նա զսեղանն պղնձի կան-
գունս Ի. երկայնութիւն, և կանգունս
2 Ի. ի լայնութիւն: Եւ արար նա զծովն
տասն կանկուն չափով շրթանէ ի
շուրթն, և շուրջ զնովաւ լարաչափ
3 Լ. կանգուն: Եւ նմանութիւն զուա-
րակացն ի ներքոյ ծովուն շուրջ զեւրե
պատեալ, առ երկուս երկուս կանգուն
երկու երկու կարգք ցլուց, գործ ձու-
4 լածոյ, քանդակեալ գործ: Հաստա-
տեալ կայր ծովն ի վերայ երկոտասան
ցլուցն. երեքն հայէին ընդ հիւսիս,
և երեքն ընդ արեւմուտս, և երեքն
ընդ հարաւ, և երեքն ընդ արեւելս,
և ծովն ի վերայ նոցա. և ինքեանք
կային միմեանց յետս ընդդէմ, թիկունս
5 ի թիկունս: Եւ թանձրութիւն ծո-
վուն ուղունկ մի, և շուրթն ծովուն
իբրև շուրթն բաժակի, քանդակեալ
տախտակ ի նմանութիւն շուշան
ծաղկի, և տանէին ընդ ամենեսին
իբրև երիս հազարս մար. և կատա-
6 րեաց զնա: Անդ առնէր դնէր աւա-
զանս տասն, և դնէր զհինգն ընդ
աջմէ և զհինգն ընդ ահեկէ, զի ի
նոսա լուանայցեն զգործ ողջակիզացն
ողողանել ի նոսա. և ծովն լցեալ կայր
պատրաստական ի լուանալ սրբել քա-
հանայիցն ի նմա: Անդ առնէր դնէր 7
զաշտանակսն ոսկիս ըստ աւրինակին
իւրեանց, և դնէր հինգ ընդ աջմէ,
և Ե. ընդ ահեկէ: Անդ առնէր սեղանս 8
ոսկիս Ե. ընդ աջմէ և Ե. ընդ ահեկէ:
Անդ առնէր դնէր տաշտս ոսկիս հա-
րիւր: Անդ առնէր սրահս քահանա- 9
յապետիցն և սրահս քահանայիցն և
զսրահն մեծ. անդ առնէր զդրունս
պղնձապատս: Եւ առնոյր դնէր զծովն 10
յաջակողմն կուսէ տաճարին յանդեան
անդ, ընդ արեւելս ի հարաւակողմ
կուսէ: Եւ առնէր Խիրամ կատսայս 11
և սանս և կասկարայս և մսահանս և
շամփուրս և զամենայն զկահ և զկա-
րասի: Եւ կատարէր Խիրամ զամե-
նայն գործ, զոր արար Սողոմոնի ար-
քայ ի տան Տ̃յ. զսիւնսն զերկոս-||199 Ա²||- 12
ին խարսխաւք խոյակաւք հանդերձ,
և զքոթարովթն ի վերայ խոյակաց
սեանցն երկուս, և վարմս երկուս
վանդակաձևս ծածկեալ զերկոսին խո-
յակսն քոթարոթայն, որ էին ի վերայ
խոյակաց սեանցն երկոցուն. և Նռա- 13
նաձևս ոսկիս և ի միջի երկոցուն
վանդակաց վարմից նորա երեք հա-
րիւր, երկուս կարգս ի միում վան-
դակապատ վարմի, և երկուս կարգս
ի միում ծածկէր զերկոսին սատի-

Գլ. Դ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Թռ. Դ. | 1 սեղան | 2 Ծ. կանգուն... և շուրջ զնովաւ արար չափ Լ. կանգուն | 3 զուարակաց... զեւրեաւ... առ երկուս երկուս կարգս և Ի. Ի. կարգ ցլուց... ձուլածոյ | 4 ընդ հիւսիսոյ... յետս ընդդէմ | 5 իբրև զշուրթն... երիս հազար մար | 6 ընդ յահեկէ | 7 զաշտանակսն (Օ. մեր գուցէ վրիպակաւ՝ «զաշտանակսն») ոսկիս ըստ օրինակի... հինգն ընդ ահեկէ | 8 (պակասէ՝ «Անդ առնէր սեղանս ոսկիս. Ե. ընդ աջմէ և Ե. ընդ ահեկէ») | 9 և սրահ մեծ... պղնձապատ | 10 յաջակողմ... յանդեան (պակասէ՝ «անդ») ընդ | 11 Քիրամ... Սողոմոն (այսպէս և յետոյ) | 12 զսիւնս զերկոսեան... խոյակաց սեանցն երկոցունց, և զվարմս երկու վ. ծածկել զերկոսեան... քոթարովթայն... սեանցն երկուց | 13 Ն. ոսկիս (պակասէ՝ «և») ի միջի երկոցունց վանդակապատ... Ծ̃... ծածկել զերկոսեան... որ են ի վերայ սեանց |

ճանսն քօթարօվթայն, որ էին ի վե-
14 րայ սեանցն: Եւ զմեքենովթն առնէր
տասն, և զաւազանսն առնէր ի վերայ
15 մեքենովթայն. և զծովն առնէր մի,
և զցուլսն առնէր երկոտասան ի ներ-
16 քոյ ծովուն, և զհրաւանգսն և զհա-
նելիսն և զկաթսայսն և զմսահանսն
և զամենայն զկահ և զկարասի և
զգործի, զոր առնէր Խիրամ, բերէր
դնէր առաջի Սողոմոնի ի տան Տն
ի պարզեալ սրբեալ պղնձոյ:
17 Եւ պղինձն գործեալ հալեալ ձուլեալ
ի թանձրութիւն երկրին, ի կողմանս
Յորդանան գետոյ, ի մէջ Սովկովթայ
18 և ի մէջ Սարեդաթայ: Եւ արար Սո-
ղոմոն զկահ և զկարասի բազում յոյժ,
և ոչ կարացին ստուգել ճշմարտիւ
19 զկշիռ համար պղնձոյ: Եւ արար Սո-
ղոմոն զամենայն կահ և զկարասի
տան Տն, և զսեղանսն ոսկիս, և ի
վերայ նոցա զցանգորդ հաց պատա-
20 րագացն, զաշտանակսն ոսկիս, և
զճրագարանսն լուսոյն ըստ աւրինա-
կի կարգին դէմ յանդիման դաբիրայն
21 յոսկւոյ քաջէ. և ճրագարանք իւ-
22 րեանց և բազմակալք իւրեանց և
տաշտքն և պատժանակքն և բա-
ժակքն և ճաշակքն և խնկաղացքն
և կրակարանքն ամենայն յոսկւոյ
քաջէ, դրունքն ներքին որ սրբոյն
սրբոց, և դրունք տաճարին յոսկւոյ
քաջէ:

[Ե.]

Եւ կատարեաց զամենայն գործն 1
Սողոմոն արքայ: Եւ առեալ բերէր
Սողոմոն զայն ամենայն նուէրս Դաւ-
թի հաւր իւրոյ, զոսկիս և զար-
ծաթս, զկահ և զկարասի դնել ի տան
գանձի տանն Տն: Յայնմ ժամանակի 2
ժողով հրամայէր առնել Սողոմոն ա-
մենայն ծերակոյտ ժողովրդեանն Իէ-
ղացւոց. և անդ ժողովէին ամենայն
իշխանք և պետք, զաւրավարք և նա-
հապետք և զաւրագլուխք ազգաց
ազգաց որդւոցն Իղի յԵմ, զի ելցեն
բերցեն զտապանակն կտակարանաց
Տն ի քաղաքէն Դաւթի, այսինքն
Սիոնէ: ||199 բ'|| Եւ ժողովեցան ամենայն 3
ժողովքն առ արքայ Սողոմոն, ամե-
նայն ազգ Իէղեան, ի տաւն տարեկա-
նին, այսինքն է ամիս եւթներորդ:
Եւ առեալ մատուցին ամենայն Ղե- 4
տացիքն զտապանակն կտակարանաց
և զվրան ժամուն և զամենայն կահ 5
և կարասի նուիրեալ ի վրան ժամու
անդր բերէին յԵմ: Եւ արքայ Սողո- 6
մոն և ամենայն ժողովք զաւրացն
Իէղացւոց երկիւղածք, որ ժողովեալ
էին ի նա, զոհէին զոհս զուարակս և
խոյս և նոխազս, որոց ոչ գոյր թիւ
բազմութեան համարոյն նոցա: Եւ բե- 7
րէին քահանայքն զտապանակն կտա-

14 զմեքենովթն... և զաւազանս | 16 և զկաթսայսն (այսպէս՝ ջնջիչ նշանաւ ի վերայ յ̊), և զհանելիս... ի տան Ա̃յ ի պարզեալ | 17 Սոքովթայ... Սարեդայ | 19 և զսեղանսն ոսկի... զցանկորդ հացն | 20 Դաբիրայն (Օ. մեր դուցէ շփոթմամբ՝ «փարիրայն»: Հմմտ. Գլ. Ե. 7, 9.) | 22 խնգաղացքն... Լ դրունքն տաճարին |

Գլ. Ե.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Ճռ. Ե. | 1 Սողոմոն (այսպէս Լ չ Նբրոյ) զԱմ նուէրս... զոսկին և զարծաթն | 2 և անդր ժողովէին... Լ զօրավարք... ի քաղաքն Դաւթի այսինքն է չ Սիոնէ | 3 ի տօն (յՕ. մերում նախ գրեալ «տաւն» և ապա ի վերոյ • տաւին • յաւելեալ.) տարեկանին | 4 և առին մատուցեալ... զտապանակ | 5 և զկարասի... բերին | 6 զօրաց... համարո | 7 և բերին... զտապանակ... բերովբէիցն |

կարանաց Տն ի տեղի իւր ի դպիր,
ի տան սրբոյն սրբոց ի ներքոյ քրով-
8 բէիցն, և անդ էին քրովբէքն թռու-
ցեալ տարածեալ զթևս իւրեանց ի
վերայ տեղւոյն տապանակին, և ծած-
կէին քրովբէքն զտապանակն, մերձե-
ցեալ պատեալ քրովբէք զտապանա-
կաւն և ի վերայ ունելեացն լծակա-
9 ւորացն. և էին լծակաւորքն ի վեր
քան զտապանակն, և ոչ երևէին
գլուխք լծակաւորացն ի սրբոյն սր-
բոց և ի տապանակէ անտի ընդդէմ
դպրիրայ և արտաքս ինչ ոչ երևէին,
և անդ էին զտապանակաւն զամենայն
10 աւուրս կենաց իւրեանց։ Եւ անդ ի
ներքս ի տապանակի անդ այլ ինչ ոչ
կայր, բայց միայն տախտակք երկու,
զոր եդ Մովսէս ի նմա ի լերինն ի
Քորէբ, որ միանգամ՟ պատուիրեալ էր
նմա Տն Այ որդւոցն հանդերձ Իղի,
իբրև ելանէին նոքա յերկրէն Եգիպ-
11 տացւոց։ Եւ եղև իբրև ելին քահա-
նայքն ի սրբոյն սրբոց, զի էին ամե-
նեքեան նուիրեալք և ոչ էին ընտրեալ
կարգ ըստ կարգի շաբաթաւորու-
12 թեան, և Ղևտացիքն որդւովքն հան-
դերձ Ասափայ, երգիչն Եման և Իդի-
թովմ՟ որդւովք և եղբարբք իւրեանց
հանդերձ ի հանդերձ բեհեզեղէն, ի
փողս և ի քնարս և ի թմբուկ ա-
ռաջի սեղանոյն, և ընդ նոսին քա-
հանայք հարիւր և քսան փողովք
13 իւրեանց հանդերձ, և լինէր ձայն
փողոյն ի հարկանել զփողս իւրեանց,
ելանէր ձայն մի բարբառոյ միաբանու-
թեամբ ի խոստովանելն առաջի Տն
Այ, և իբրև ամբառնային զձայնս իւ-
րեանց ի ձայն փողոյն և քնարին և
թմբկին և ի ձայն աւրհնութեան ա-
սէին առհասարակ. խոստովան եղե-
րուք Տն, զի բարի է, զի յաւիտեան
է ողորմ՟ նորա. և տունն առհասա-
րակ լի լինէր ամպաւքն և փառաւքն
Տն, և ոչ հանդարտէին քահանայքն 14
կալ առաջի երեսաց ամպոյն, զի լի
եղև տունն փառաւքն Այ։ ‖199 բ²‖

[Զ.]

Յայնմ՟ ժամանակի խաւսել կալաւ 1
Սողոմոն և ասէ. Տր ասաց, ասէ,
բնակել յամպս և ի մէգ։ Եւ ես շի- 2
նեցի տուն անուան սրբոյն քո և
պատրաստական աթոռոյ քում՟ բնա-
կել քեզ ի նմա յաւիտեանս ժամանա-
կաց։ Եւ դարձաւ անդրէն ի ժողո- 3
վուրդն անդր թագաւորն, և աւրհ-
նեաց զամենայն ժողովն Իէղացւոց,
որ կային առաջի սեղանոյն։ Եւ ասէ
Սողոմոն. աւրհնեալ Տր ԱԾ Իղի, որ 4
խաւսեցաւ բերան ի բերան Դաւթի
հաւր իմոյ՟ և ի ձեռն նորա կատա-
րեաց և ասէ. Յաւուրցն յայնցանէ, 5
յորմէ հետէ հանի ես զժողովուրդ իմ
յերկրէն Եգիպտացւոց, ոչ ընտրեցի
ես ինձ, ասէ, քաղաք յամենայն ազ-
գաց Իէղացւոց շինել ինձ տաճար ա-
նուան իմոյ, և ոչ ընտրեցի ես ինձ

---

8 քերովբէքն (այսպէս և չ Ներեոյ)... և մերձեցեալ պատեալ | 8 լծակաւորացն | 9 լծակաւո-
րացն | 10 տախտակքն... ի լերինն Քորէբ... պատուիրէր նմա (կրկնէ՝ «Տն Այ») որդւոցն |
11 և ոչ էին ընտրեալք | 12 Ասափա– երգիչք... ի թմբուկս | 13 և լինէր չ ձայն փողոյն...
ողորմութիւն նորա... փառօքն Այ | 14 զի լի (Օ. մբ՝ «զի») եղև |

Գլ. Զ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Ֆա. Զ. | 1 Սողոմոն (այսպէս և չ Ներեոյ)..
յամպ | 2 սրբոյ | 3 ի ժողովուրդ... զամենայն ժողով–րդեան |

անդ ուր առաջնորդել ժողովրդեան
6 իմոյ Իղի, եթէ ոչ զԵմ ընտրեցի զա-
նուն իմ անուանել ի նմա, և ընտրե-
ցի ես ինձ զԴաւիթ ծառայ իմ, զի
առաջնորդեսցէ նա ժողովրդեան իմում
7 Իղի: Եւ խաւսել սկսաւ Տր իմ ընդ
8 Դաւթի հաւր իմում և ասէ. փոխա-
նակ զի եդեր դու ի սրտի քում շի-
նել տուն անուան իմոյ, բարւոք
9 արարեր. բայց սակայն ոչ թէ դու
շինեսցես ինձ զտուն իմ, այլ որդի
քո, որ դայցէ ի միջոյ որովայնէ քում-
մէ. նա շինեսցէ ինձ տուն անուան
10 իմոյ: Արդ կանգնեաց Տր զբան իւր,
զոր խաւսեցաւ. արդ կացի ես փո-
խանակ Դաւթի հաւր իմոյ, և նստայ
ես յաթոռ թագաւորութեան տանդ
Իղի, որպէս և խաւսեցաւ Տր, և շի-
նեցի ես տուն անուան Տն Այ Իղի,
11 և եդի ես ի նմա զտապանակն կտա-
կարանաց Տն պատուիրանացն Իէղա-
ցւոց:
12 Եւ անդ եկաց Սողոմոն առաջի
սեղանոյն յանդիման ամենայն ժողո-
վրդեանն Իէղացւոց, և համբարձ
13 զձեռս իւր ի վեր, զի էր արարեալ
Սողոմոնի ատեանս պղնձիս ի մէջ
սրահին առաջնոյ տաճարին հինգ
կանգուն երկայնութիւն և Ե. կան-
գուն ի լայնութիւն և Գ. կանգուն
ի բարձրութիւն իւր, և ել ինքն
եկաց ի վերայ նորա առաջի ամենայն
ժողովրդոցն Իղի, էջ ի ծունր և համ-
14 բարձ զձեռս իւր յերկինս և ասէ. Տր
Ած Իղի, ոչ գոյ ոք նման քեզ Ած
յերկինս և յերկրի, պահես զուխտ և
առնես զողորմութիւն ի վերայ ծա-
ռայից քոց, որ գնան առաջի քո ա-
մենայն սրտիւ իւրեանց: Արդ պահե- 15
ցեր կատարեցեր դու Դաւթի հաւր
իմում զամենայն որ զինչ խաւսեցար
ընդ նմա բերանով քով: Եւ արդ
ած-‖200 Ա'‖-եր կատարեցեր աւասիկ
ձեռօք քովք յաւուր յայսմիկ: Եւ 16
Տր Ած Իղի, պահեա դու ծառայի
քում Դաւթի հաւր իմում, զոր խաւ-
սեցար ընդ նմա և ասացեր. ոչ պակա-
սեսցէ, ասես, այր յերանաց քոց, որ
նստի յաթոռ քո, բայց միայն թէ
պահեսցեն որդիք քո զճանապարհս
իւր գնալ ըստ աւրէնս իմ, որպէս և
գնացեր դու առաջի իմ: Եւ արդ Տր 17
Ած Իղի, հաստատեա զբան քո, զոր
խաւսեցար դու ընդ ծառայի քում
ընդ Դաւթի, զի եթէ արդարև բնա- 18
կեսցէ Ած ընդ մարդկան ի վերայ
երեսաց երկրի, զի եթէ երկինք և
երկնից երկինք չեն բաւական քեզ,
իսկ արդ ո՞վ է, որ շինեսցէ տուն բնա-
կութեան քեզ: Արդ եթէ հայելով 19
հայեսցիս դու յաղաւթս ծառայի քում
և լուիցես ձայնի աղաւթից իմոց, Տր
Ած, և ընկալցիս զաղաւթս ծառայի
քո այսաւր, զի լիցին աչք քո բացեալ, 20
հայեաց ի վերայ տանս այսորիկ ի
տուէ և ի գիշերի, որպէս և խոստա-
ցար կոչել զանուն քո ի վերայ սորա,
լսել ձայնի աղաւթից, զոր աղաչէ
ծառայ քո ի տեղւոջ յայսմիկ: Եւ լուի- 21
ցես դու ծառայի քում և ժողովըր-

10 Իղի | 11 կտակարանացն | 12 Եւ անդ կաց Ս. | 13 կանգուն (ձեռ.՝ «ի») լայնու-
թիւն… զձեռն | 14 ոչ գոյ –ոք… քեզ (ձեռ.՝ «Ած») յերկինս | 15 զամենայն զոր ինչ… ձե-
ռովք քով | 16 ոչ պակասեսցէ (ձեռ.՝ «ասես») այր յերեսաց քոց | 17 զբան– քո | 18 զի
թէ (երկիցս)… բնակութեան ք– | 19 ծառայի ք– | 20 աչք քո բացեալ (ձեռ.՝ «հայեաց»)
ի վերայ տանս… ի տեղւոջ– յայսմիկ |

դեան քում Իղի, որ ինչ ուխտադիր
եղեալ աղաչիցեն առ քեզ ի տեղւոջ
յայսմիկ, և դու լուիցես ծառայի
քում ի վերուստ յերկնից և հաճեալ
22 քաւեսցես։ Եւ եթէ մեղիցէ այր ըն-
կերի իւրում, և նա առցէ ի վերայ
նորա նզովս և եկեսցէ ի տեղի յայս
առաջի սեղանոյս քո նզովեսցէ զնա,
23 և դու լուիցես յերկնից ի բնակու-
թենէ քումմէ [եւ արասցես դատաս-
տանս ծառայի քում,] հատուցանել
անաւրինին ըստ անաւրէնութեան
նորա և դարձուցանել ըստ ճանա-
պարհաց նորա ի գլուխ նորա և ար-
դարացուցանել զարդարն ըստ արդա-
24 րութեան նորա։ Եւ ի պարտութիւն
եթէ մատնեսցի ժողովուրդ քո Իէղ
առաջի թշնամեաց իւրեանց, յորժամ
մեղուցեալ իցեն քեզ, և դարձցին
յապաշխարութիւն և խոստովանես-
ցին անուան քում և անկեալ առաջի
քո խնդրուածովք աղաչիցեն ի տանս
25 յայսմիկ, և դու լուիցես յերկնից ի
բնակութենէ քումմէ, քաւեսցես զմեղս
ժողովրդեան քում Իղի, դարձուսցես
զնոսա անդրէն յերկիրն, զոր ետուր
26 նոցա և հարց նոցա։ Ապա թէ իցէ
և պաշարեսցին երկինք և ոչ տացեն
զանձրեւս վասն մեղաց սոցա, զի մե-
ղան առ քեզ, և հասեալ խնդրուա-
ծովք աղաչիցեն առ քեզ ի տեղւոջ
յայսմիկ, խոստովան լիցին ան- ||200 Ա²|| -
ուան քում և ի մեղաց անտի դարձ-
ցին առ քեզ, զի դու նկուն արարեր
27 զնոսա, ապա լուիցես դու յերկնից ի
բնակութենէ քումմէ և քաւեսցես դու
զմեղս ծառայից քոց և ժողովրդեան
քո Իղի, և յայտնեսցես դու նոցա
զճանապարհն բարեաց, զի գնասցեն
ի նոսա, և տացես դու նոցա զանձրեւ
և զկանուխ և զանագան յերկիր քո,
զոր ետուր ի ժառանգութիւն ժո-
ղովրդեան քում։ Սով թէ եկեսցէ յեր- 28
կիր, կամ մարդամահ թէ լիցի, թէ
խորշակ շնչեսցէ, դեղն կամ դալուկն
թէ անկցի, և մարախ թէ ծնցի, կամ
թշնամի թէ հասեալ նեղիցէ յերկրի
դէմ յանդիման քաղաքացն իւրոց ըստ
ամենայն հարուածոց, ըստ մերձենալ
իւիք, ըստ ամենայն աղաւթից, ըստ 29
ամենայն խնդրուածոց ամենայն մարդ-
կան և ամենայն ժողովրդեան քո Իղի,
դէք թէ գիտասցեն այր զընդերի հա-
րուածն և ձեռս կարկառեալ ձգեսցէ
ի տաճարս յայս, և լուիցես դու յեր- 30
կնից ի պատրաստ բնակութենէ քում-
մէ, և քշկեսցես և տացես դու առն
իւրաքանչիւր ըստ ճանապարհս իւր,
որպէս և ծանիցես զսիրտ նորա. զի
միայն ճանաչես զսիրտս որդւոց մարդ-
կան, զի երկնչիցին ի քէն գնալ յա- 31
մենայն ճանապարհս քո զամենայն
աւուրս, զոր նոքա կեան ի վերայ ե-
րեսաց երկրի, զոր ետուր դու հարցն
նոցա։ Եւ ամենայն աւտարածին, որ 32
ոչ իցէ ի ժողովրդենէ քումմէ Իղի, և
եկեսցէ յերկրէ հեռաստանէ վասն ա-
նուան քո մեծի ի ձեռն քո հզաւր
և ի բազուկ քո բարձր, և եկեսցեն
ուխտադիր եղեալ խնդրուածովք յա-

---

22 ի տեղի- յայս | 23 ի բնակութենէ քումմէ ~~և արասցես դատաստանս ծառայի քում~~ (պակասեն յՕ. մերում Նոտրագիրքդ, զորս յաւելաք ի բնագրին.) հատուցանել | 24 Եւ եթէ ի պարտութիւն... խոստովան լիցին ան-ան քում և անգեալ | 25 Իլի | 26 և պաշարեսցէն... և ոչ տացեն զանձրև... ի տեղւոջ- | 27 զանձրև (~~դնել է~~՝ «և») զկանուխ | 28 թէ լինիցի | 29 զըն-կերի... և է ձեռս կ. | 30 և դու լուիցես է յերկնից... զճանապարհս իւր... զի ~~դու~~ միայն | 31 հարց | 32 եղեալ (Օ. մեր՝ «եղեալք»)... կայցեն |

զաւԹս կայցեն ի տեղւոջս յայսմիկ,
33 և դու լուիցես յերկնից ի պատրաստ
բնակուԹենէ քումմէ, և արասցես
դու ըստ ամենայնի, որպէս և ոք ինչ
կարդասցէ այն աւտարածինն զանուն
քո, զի ծանիցեն ամենայն ժողովուրդք
երկրի զանուն քո և երկնչիցեն ի քէն,
որպէս և այս ժողովուրդ քո Իէղ։
Եւ զայս գիտասցեն և ծանիցեն,
Թէ անուն քո կարդացեալ է ի վերայ
34 տանս այսորիկ, զոր շինեցի քեզ։ Ապա
Թէ ելցէ ժողովուրդ քո ի գործ պա-
տերազմի ի վերայ Թշնամեաց իւրոց
ի ճանապարհ, յոր և առաքեսցես
զնոսա, և ուխտադիր եղեալ յաղաւԹս
կայցեն առ քեզ ըստ ճանապարհս
քաղաքիս այսորիկ, զոր ընտրեցեր
շինել ի սմա ||200 Բ'|| տուն անուան
35 քում, և լուիցես դու յերկնից աղա-
Թից նոցա և խնդրուածոյ նոցա, և
արասցես դու զիրաւունս դատաստա-
36 նի ի վերայ նոցա։ Զի մեղան քեզ,
զի ով է մարդ, որ ոչ մեղանչէ առա-
ջի քո, և եԹէ բարկացեալ ի վերայ
նոցա մատնեսցես զնոսա յերկիր մեր-
37 ձաւոր կամ ի հեռաստան, և դարձցին
առ քեզ սրտիւք իւրեանց յերկրին
յայնմիկ, ուր գերեցան նոքա անդ, և
դարձցին և խնդրեսցեն և ասասցեն.
38 անաւրինեցաք մեղաք, և դարձցին
առ քեզ յամենայն սրտէ իւրեանց,
ուր գերեցին զնոսա Թշնամիք ի-
րեանց անդր, և խնդրեսցեն նոքա
ճանապարհ այսրէն յերկիր, զոր ե-
տուր նոցա դու և հարցն իւրեանց,
ճանապարհ քաղաքի բնակուԹեան,
զոր ընտրեցերն դու, և շինեցեր դու
ի Նմա տաճար անուան քում, և լուի- 39
ցես դու յերկնից ի պատրաստ բնա-
կուԹենէ քումմէ աղաւԹից նոցա և
խնդրուածոց նոցա, և արասցես դու
իրաւունս նոցա, հաճեսցիս նոցա և
քաւեսցես ի նոցանէն զմեղս նոցա,
զի մեղան քեզ։

Եւ արդ, Տր Ած, եղիցին աչք քո 40
բացեալ և ականջք քո լսել աղաւ-
Թից տեղւոյս այսորիկ։ Եւ արդ, Տր 41
Ած, ի հանգիստ քո արի, դու և տա-
պանակ կտակարանաց զաւրուԹեան
քո. երիցունք քո, Տր Ած, զգեցցին
զփրկուԹիւն և սուրբք քո ցնծալով
ցնծասցեն ի բարիս։ Տր Ած, մի դար- 42
ձուցաներ զերեսս քո յաւծելոյ քումմէ,
այլ յիշեսցես դու զողորմուԹիւնս քո
ԴաւԹի ծառայի քո։

## [Է.]

**Եւ** իբրև կատարեաց Սողոմոն զա- 1
ղաւԹս իւր, էջ հուրն յերկնից և
լափեաց զամենայն ողջակէզս և զպա-
տարագս առհասարակ, և փառք Տն
լցին զտունն։ Եւ ոչ կարէին քահա- 2
նայքն մտանել ի տունն Տն, զի փառ-
քըն Տն լցին զտաճարն։ Եւ ամենայն 3
որդիքն Իղի տեսանէին, զի իջանէր
հուրն և լափէր զպատարագսն, և
փառք Տն ի վերայ տաճարին. և ան-

---

33 զի ծանիցեն | (Զկնի բանիցդ՝ «քո Իէղ» ի նոր տողէ ունի Օ. մեր) | 36 որ ոչ մե-ղանչէ (Օ. մեր՝ «մեղանչել») | 37 անդ (դ-ի-ւ-է՝ «և դարձցին և խնդրեսցեն») և ասիցեն | 38 և խնդրիցեն... դու նոցա և հարց նոցա... ընտրեցեր | 39 հաճեսցես (Օ. մեր՝ «հաւ-եսցես») դու (դ-ի-ւ-է՝ «նոցա») և... ի նոցանէ | 41 Եւ (դ-ի-ւ-է՝ «արդ») արի Տր Ած ի հանգիստ քո | 42 ծառաի քումմ |

Գլ. Է.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Փո. Է. | 1 հուր... ողջակէզսն և զպա-տարագսն | 2 ի տունն... փառք | 3 ժողովուրդն... կճատարած (Օ. մեր՝ «կճեա-տարած»)...

կանէին ամենայն ժողովուրդքն յեր-
կիր ի վերայ երեսաց իւրեանց, ի
վերայ կճեատարած սալայարկ յատա-
կացն, երկիրպագանէին և աւրհնէին
զԱԾ, զի բարի է, ասեն, զի յաւիտեան
4 է ողորմ նորա։ Եւ թագաւորն և ա-
մենայն ժողովուրդքն մատուցանէին
5 զողջակէզսն Տն Այ զուարակս քսան
և երկու հազարս և նոխազս ճԻ. և
երկու հազարս։ Եւ արար զնաւակա-
տիս տաճարին թագաւորն և ամե-
նայն զաւրք ‖200 բ‖ իւր որ հասեալ
6 կային յիւրաքանչիւր տեղւոջ, և քա-
հանայքն փողովք և թմբկաւք առա-
ջի Տն, զոր արար Դաւիթ արքայ,
խոստովան լինել, զի բարի է, ասել,
զի յաւիտեան է ողորմ նորա, և աւր-
հնութիւն ի Դաւիթ ի ձեռն նոցա,
և քահանայքն աւրհնէին ի ձայն
փողոց, և ժողովուրդն կայր հաստա-
7 տեալ յիւրաքանչիւր տեղւոջ։ Ապա
սրբեաց Սողոմոն զմիջոց սրահի
տանն Տն, զի անդ մատուցին զողջա-
կէզսն և զճարպս քաւութեանցն, զսե-
ղանն պղնձի, զոր արար Սողոմոն
մատուցանել զողջակէզսն և զճարպս
8 հաշտութեանն։ Եւ արար Սողոմոն
զտաւն նաւակատեացն ի ժամանակի
յայնմիկ զեւթն աւր, և ամենայն Իէղ
ընդ նմա, ի ժողովս մեծ, ի մտից
սահմանաց Եմաթայ մինչև ի հեղե-
ղատն կողմանցն Եգիպտացւոց։

Եւ արար յաւուրն ութերորդի 9
զտանջեռեայսն, զի զեւթն աւր արար
զնաւակատիս սեղանոյն և զեւթն աւր
արար զտաւն տարեկանացն։ Եւ յա- 10
ւուր քսաներորդին երրորդի եւթնե-
րորդ ամսեանն արձակեաց Սողոմոն
զժողովուրդն յիւր տեղիս, լի ամենայն
ուրախութեամբ, զուարթացեալ սըր-
տիւք ի վերայ ամենայնի, զոր արար
Տր ԱԾ Դաւթի և Սողոմոնի որդւոյ
նորա և Իղի ժողովրդեան իւրոյ։

Եւ կատարեաց Սողոմոն զտունն 11
Տն և զտուն արքայութեան իւրոյ, և
զամենայն կամս, զոր կամեցաւ Սողո-
մոն առնել ի տան Տն և ի տան
անձին իւրոյ, յաջողեցաւ նմա։ Ապա 12
երևեցաւ Տր տեսանող Սողոմոնի ի
տեսլեան և ասէ ցնա. ահա լուայ
աղաւթից քոց և ընտրեցի ես ինձ ի
տեղւոջ յայսմիկ տուն պատարագաց։
Արդ եթէ ածից կարկեցից փակեցից 13
զերկինս, և տաց հրաման մարախոյ
ուտել ապականել զերկիր, և եթէ առա-
քեցից զմարդամահ յերկիր ժողովը-
դեան իմոյ, և դարձ սորսեսցեն յինէն 14
և դարձցին խնդրեսցեն զերեսս իմ և
դարձին այր իւրաքանչիւր ի չարեաց
իւրեանց. և ես լուայց նոցա յերկնից
և հաշտեցայց նոցա և քաւեցից զմեղս
նոցա և բժշկեցից զերկիր նոցա։
Եւ արդ աչք իմ եղիցի բաց և ա- 15
կանջք իմ ի լսել աղաւթից տեղւոյս

յատակաց | 4 ժողովուրդն | 5 տեղւոջ | 6 փողոք | յՕ. մերում՝ զկնի «Դաւիթ արքայ» վերջակէտ գնի և բանն յաջորդ սկսանի ի Նոր տողէ. փոխանակ վերջակիտի՝ միջակէտ ունի ատ է. | զի բարի է, ասէ... ողորմութիւն նորա. և օրհնութիւնս... փողոց | 7 Սողոմոն ([illegible])... քաւութեանց | 8 ի ժամանակին... մեծ մտից... ի հեղեղատ կ. Եգիպտացոյն | 9 սեղան-ոյն... տարեկանաց | 10 Եւ յաւուրն քսաներորդին երրորդին (Օ. մեր թուի վրիպակաւ՝ «քսաներորդ ինն երրորդի»)... յիւր-[illegible] տեղիս... ի վերայ ամենայնի (Օ. մեր՝ «ամենայն»)... ժողովրդեանն | 11 զտուն... ի տան Այ... իւրոյ և յաջողեցաւ նմա | 12 ի տեղոջ | 13 կարկեցից (Օ. մեր՝ «կարքեցից») | 14 յերկնից *([illegible]՝ «և») հաշտեցայց [illegible] նոսա և | 15 աչք իմ բաց եղիցի և ականջք իմ ([illegible]՝ «ի») լսել աղօթից տեղւոյս

16 այսօրիկ. զի ընտրեցի սրբեցի զտունս
զայս, զի եղիցի անուն իմ կոչեցեալ
ի վերայ դորա, և աչք իմ և սիրտ
իմ այդր զամենայն աւուրս կենաց
17 դոցա: Եւ դու թէ գնասցես առաջի
իմ զորաւրինակ ‖201 Ա'‖ գնայր Դաւիթ
հայր քո, և արասցես դու զամենայն
որ ինչ պատուիրեցի քեզ, զի պահես-
ցես դու զիրաւունս իմ և զարդա-
18 րութիւնս իմ, հաստատեցից զաթոռ
թագաւորութեան քո, որպէս ուխտե-
ցի Դաւթի հաւր քո, և ասեմ, եթէ
մի պակասեսցէ ի քէն այր իշխան
19 յԻէղէ: Ապա եթէ դարձջիք դուք և
թողջիք զհրամանս իմ և զպատուի-
րանս իմ, զոր ետու ես առաջի ձեր,
և գնասջիք դուք պաշտել զդիս աւ-
տարոտիս և երկիրպագանիցէք սնո-
20 տեաց, սատակեցից ջնջեցից յերկրէ,
զոր ետու ձեզ, և զտունդ, զոր սրբե-
ցի յանուն իմ, ի բաց թաւթափեցից
յերեսաց իմոց, և արարից զնա առակ
աւրինակ խայտառակութեան ընդ
21 ամենայն ազգս: Եւ տունս այս, որ ի
բարձր շինեցաւ, կործանեսցի, և ա-
մենայն անցաւորք, որ առ զովաւ
անցանիցեն, զարմանայցեն և ասիցեն.
եթէ ընդէր արար Ա̃ծ ընդ երկիրս
22 ընդ այս և ընդ տունս ընդ այս: Եւ
ասիցեն ոմանք ցնոսա. փոխանակ զի
թողին զԱ̃ծ հարցն իւրեանց, որ եհան
զնոսա յերկրէն Եգիպտացւոց, և շա-
ղան նոքա զհետ դիցն աւտարաւտաց,
երկիրպագին նոցա և ծառայեցին նո-
ցա. վասն այսորիկ ած զայս ամե-
նայն չարիս ի վերայ դոցա:

[Ը.]

Եւ եղև յամի քսաներորդի, յորում 1
շինեաց Սողոմոն զտուն Տ̃Ն և զտուն
արքայութեան իւրոյ և զքաղաքսն, 2
զոր ետ Խիրամ Սողոմոնի, շինեաց
զնոսա և բնակեցոյց ի նոսա զորդիսն
Իղի:
Եւ եկն Սողոմոն յԷմաթ Սուբա 3
և զաւրացաւ ի վերայ նորա: Եւ շի- 4
նեաց նա զԹոմբինն յանապատի, և
զամենայն քաղաքսն հզաւրս հարկի
շինեաց նա յԷմաթ: Եւ շինեաց զԲե- 5
թորոն վերին և զԲեթորոն ներքին,
քաղաքս հզաւրս պարսպաւորս, և
ամրացոյց զնոսա դրամբք և դռնա-
փակաւք, և զԲաղաաթն և զամե- 6
նայն քաղաքս հզաւրս, որ էին ի
հարկի առ արքային Սողոմոնի, և զա-
մենայն քաղաքս կառացն և զերիվա-
րացն, զքաղաքսն զաւնեձիոյ, որ ինչ
միանգամ ցանկացաւ Սողոմոն ի
սրտի իւրում շինել յԵմ և ի Լիբա-
նան և յամենայն տեղիս երկրի Թա-
գաւորութեանն իւրոյ և յամենայն

16 կենաց դոքա | 17 Ջկնի «կենաց դոցա» ի Նոր տողէ ունի Օ. մեր. | 18 ուխտ եդի... մի պակասեսցէ (Օ. մեր թուի վրիպակաւ՝ «մի պակեսցէ») | 19 Ապա եթէ ի Նոր տողէ ունի Օ. մեր. | զօտարոտիս, և երկիր պագանիջիք | 20 յառակ յօրինակ | 21 ի բարձր շինեցաւ (պակասէ՝ «կործանեսցի, և ամենայն անցաւորք») որք առ զովաւ... ընդ երկիրս (պակասէ՝ «ընդ») այս | 22 հարց... օտարոտացն... ած (պակասէ՝ «զայս») զամենայն չարիս |

ԳԼ. Ը.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Փո. Ը. | 1 Ջհամարատունդ անանջատ և միայար ընդ նախընթացին ունի Օ. մեր. | յամին... Սողոմոն (յաւելու և ի Նեբայ) | 2 զքաղաքս | 3 յԷմաթսուբա (յաւելու և Օ. մեր.) | 4 զԹոմբին յանապատին... հզօր... նայ յԷմաթ (Օ. մեր թուի վրիպակաւ՝ «նա Նմաթ») | 5 շինեաց նա զԲեթորոնն... Բեթորոնն... հզօր | 6 զԲաաղաթն... կառաց և զերիվարաց, և զքաղաքս... ցանկացաւ... թագաւորութեան... իւրում (պակասէ՝ «և»)

իշխանութեան իւրում, և աջողեցաւ
7 նմա։ Եւ զամենայն մնացորդս ժո-
ղովրդոյն, զՔետացին և զԱմուրհա-
ցին և զՓերեզացւոց, զԽեւացւոց և
զՅեբուսացւոց, որ ոչն էին յԻէղա-
8 ցւոց անտի, որ թողին զնոսա և ոչ
սատակեցին զնոսա որդիքն Իղի, ած
եհ-‖201 Ա²‖-ան զնոսա Սողոմոն և խառ-
նեաց ի հարկ մինչև ցայսաւր ժամա-
9 նակաց։ Բայց յորդւոցն Իէղացւոց
անտի ոչ զոք եա ի հարկ ծառայու-
թեան յամենայն ի գործ տէրութեան
իւրոյ. բայց միայն կային նոքա ի
զաւնդս առնեձիոյ ի հարկ զաւրա-
կանի, կառաց և երիւարաց և այլոց
վառելոց, իշխանս, զաւրագլուխս ի
կառս, յերիւարս և ի զաւնդս հեծելոց։
10 Եւ այս իշխանք Սողոմոնի արքայի
խրատել ուսուցանել երկերիւր յիսուն
11 այր ի վերայ տանն Իղի։ Զդուստրն
Փարաւոնի ած եհան ի քաղաքէ Դաւ-
թի ի տունն, զոր շինեաց նմա, զի
ոչ արժանի համարեցաւ բնակել կնոջ
իւրում ի տան Դաւթի արքային
Իէղացւոց, զի սուրբ էր նա ուր եկն
տապանակն կտակարանաց Տն Այ Իղի։
12 Յայնմ ժամանակի բերէր Սողոմոն
զկահ և զկարասի, զգանձս ողջակի-
զացն առ սեղանն, զոր շինեաց առա-
13 ջի տաճարին, և ըստ բանիցն Մովսէսի

ըստ շաբաթուցն, ըստ ամս[ոցն], ըստ
տաւնից տարեկանացն, բաղարջակե-
րացն և տաւնից եւթներորդացն,
[եւ տաւնի տաղաւարահարաց]։ Եւ 14
հաստատեաց կացոյց զամենայն իրա-
ւունս և զդատաստանս ըստ իրաւունս
Դաւթի հաւր իւրոյ, և դասս դասս
քահանայից ըստ պաշտաման նոցա,
և զՂևտացիսն դասս ի պահս իւ-
րեանց առաջի քահանայիցն ըստ բա-
նի աւուրն, յորում և զդարապանսն
ի դասս խառնէր դռնապանացն։ Զի
այսպէս էր պատուիրան Դաւթի առն
Այ, ոչ անցին ըստ պատուիրան Դաւ- 15
թի արքայի վասն քահանայից և
Ղևտացւոցն և յամենայն բանս հրա-
մանի գանձիցն գործոյ։ Պատրաստեաց 16
Սողոմոն յաւրէ ժամանակէ յորմէ
հետէ եդաւ հիմն տանն Տն [մինչեւ
յօրն կատարածի, զոր կատարեաց
Սողոմոն զտուն Տն]։ Յայնմ ժամանա- 17
կի գնաց [Սողոմոն] ի ԳեսղովմԳարեր,
յերկիրն Այլիդ առ ծովեզերբ, յերկիր
յԵդովմայ։ Եւ առաքեաց Խիրամ Սո- 18
ղոմոնի ի ձեռն ծառայից իւրոց նաւս
և նաւավարս տեղեկացեալս ծովու։
Եւ գնացին ծառայքն Սողոմոնի ընդ
ծառայսն Խիրամայ, գնացին նոքա
յՈվփիր և առին անտի չորեքհարիւր
քանքար ոսկի և բերին առ Սողոմոն։

---

յաջողեցաւ նմա | 7 զՔետացւոցն, և զԱմուրհացւոցն և զՓերեզացւոցն և զԽեւացւոցն և զՅեբուսացւոցն որ ոչ էին յԻէղացւոցն | 8 և ոչ սատակեցին (գրչէն՝ «զնոսա»)... ժամանակի· | 9 յամենայն (գրչէն՝ «ի») գործ... և երիվարաց... ի յերիվարս... հեծելոց | 11 Եւ զդուստր Փարաւոնի... ի քաղաքէ [illegible] Դաւթի... արքաի Իլացոցն | 13 ըստ ամսոցն (Օ. մեր թուի վրիպակաւ կամ մոռացմամբ՝ «ըստ ամս»)... բաղարջակերաց, և տ. եւթներորդացն, [illegible] (յՕ. մերում թուին վրիպակաւ պակասել նոտրագիրքդ, զորս յաւելաք ի բնագրին.) | 14 (գրչէն՝ «Եւ») հաստատեաց... ըստ իրաւունս (... և Օ. մեր.)... քահանայիցն ըստ պաշտամանց... և զՂևտացիսն դասս [illegible] ի պահս... խառնէր ի դռնապանացն | 15 քահանայիցն (գրչէն՝ «և») Ղ. ...ի բանս | 16 յորմէ հետէ եդաւ հիմն տանն Տն, [illegible] (վրիպակաւ ընդօրինակողաց պակասեն յՕ. մերում նոտրագիրքդ, զորս յաւելաք ի բնագրին.) | 17 գնաց Սողոմոն (պակասէ յՕ. մերում անունդ, զոր յաւելաք.) ի Գեղովմգարեբ (յՕ. մերում՝ «ի Գեսղով մգարեբ») յերկիր Նայիդ... յեդովմայ | 18 Սողոմոնի (գրչէն՝ «ի ձեռն ծառայից իւրոց») նաւս... յՈփփիր... չորս ճ. քանքար |

## [Թ.]

1 Եւ տիկինն Հարաւոյ լուաւ զիմաստութիւնն Սողոմոնի և եկն փորձել զնա յառակն աւրինակաց յԵմ. և եկն առ Սողոմոն և խաւսեցաւ զամենայն,
2 զոր ինչ կայր ի սրտի նորա։ Եւ պատմեաց Սողոմոն զամենայն բանս նորա անդրէն, և ոչ վրիպեցաւ բան, զոր
3 ոչ մեկնեաց Սողոմոն անդրէն։ Եւ ետես տիկինն Հարաւոյ ||201 բ'|| զամենայն իմաստութիւն Սողոմոնի, և
4 զտունն զոր շինեաց, և զծախս սեղանոյն, և զաթոռս մանկանց իւրոց, և զկարգս պաշտաման նորա, զհանդերձ պատմուճանի նորա, և զըմբրանապարիշտան և զհանդերձ իւրեանց, և զողջակէզսն զոր մատուցանէր. զարմացեալ էր և ոչ կային ոգիքն իւր առ իւր։
5 Ապա խաւսել կալաւ թագաւորին և ասէ. Ճշմարիտ էր բանն, զոր լուէի
6 ես յերկրի իմում վասն քո և բանից քոց, մինչև եկի և տեսի աչաւք իմովք։ Եւ ահաւասիկ տեսանեմ, զի կիսոյ կէս ոչ էր զոր պատմէինն վասն իմաստութեան քո. զի աւելի է զոր տեսա-
7 նեմս քան զայն, զոր լուայն։ Երանի է կանանց քոց, և երանի է մանկանց քոց, և երանի արանցս, որ կան առաջի լսել զամենայն բանս իմաստու-
8 թեան քո։ Եւ եղիցի Տր Աճ քո աւրհնեալ, որ հաճեցաւ ընդ քեզ տալ քեզ զաթոռ թագաւորութեան իւրոյ ի վերայ ժողովրդեան իւրոյ առ ի սիրել Տն Այ քո զԻէղ հաստատել զնա յաւիտեանս, և ետ զքեզ ի վերայ նոցա թագաւոր առնել զիրաւունս և զարդարութիւն։ Եւ ետ տիկինն արքայի 9
ճի. քանքար ոսկւոյ, և խունկս բազում յոյժ, և ականս պատուականս, և ոչ գոյր իբրև զխունկսն զայնս, զոր ետ տիկինն Հարաւոյ Սողոմոնի արքայի։ Եւ ծառայքն Խիրամայ և 10
ծառայքն Սողոմոնի բերէին ոսկի ի Սովփերայ Սողոմոնի, և փայտս ածէ- 11
ին անկոփս, և ականս պատուականս յոյժ. և արար ելանելիս տանն Տն և տանն արքունի և փողս երգչաց, և ոչ գտաւ երբեք յառաջ յերկրին Յուդայ գործք այնպիսիք։

Եւ արքայ Սողոմոն ետ տիկնոջն 12
Հարաւոյ զամենայն, որ ինչ խնդրեաց նա բայց յայնմանէ, որ նորա իսկ բերեալ էր նմա. և գնաց նա անդրէն յաշխարհ իւր։ Եւ էր կշիռ ոսկւոյն, 13
որ բերին Սողոմոնի ամէ յամէ ՈԿԶ. քանքար ոսկի, թող զծախս արանց 14
վաճառականաց և զպատարագսն զոր բերին, և որ ամենայն թագաւորքն Արաբացւոց և ամենայն զաւրավարք երկրին բերէին ոսկի և արծաթ Սողոմոնի արքայի։

Եւ արար արքայ Սողոմոն վահան 15
Յ. ոսկի կուռ, զի ի վէց Շ. կշռոյ ոսկւոյ

ԳԼ. Թ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Ծռ. Թ. | 1 Հարաւոյ (ըստ Լ և Է Ներս.) ...Սողոմոնի (ըստ Լ և Է Ներս.)... յառակն (Օ. մեր՝ «առակն»)... որ ինչ | 3 Եւ ետես կինն Հարաւո | 4 սեղանոյն... մանկանցն... և զհանդերձ պատմուճանի... և զըմբրանապարիշտս և զհանդերձ... ոգիքն (ըստ Է «իւր») առ իւր | 5 ընդ թագաւորին (յՕ. միայն պակասէ՝ ընդ.) | 6 պատմէին... տեսանեմս | 7 կանանց քոյ (ըստ Է «և երանի է մանգանց քոց») և երանի արանց որ կան առաջի քո լսել... բան | 10 ի Սովփերա | 11 Եւ փայտ... գործ այնպիսիք | 12 բայց յայնմանէ... անդէն | 13 որ բերէին... ՋԾ. և Կ. և Զ. | 14 զծախ... բերէին... Արաբացւոցն | 15 վահան ՓԾ. ոսկի կուռ |

16 սրբոյ ի մի վահան, և նիգակս Յ․
յերեքհարիւր երեքհարիւր կշռոյ ոս-
կւոյ, և եդ զնոսա արքայ ի տուն
17 մայրեացն Լիբանանու։ Եւ արար ար-
քայ զաթոռն փղոսկրեայ և պատեաց
18 զնա ոսկւով քաջաւ, և վեց աստիճան
աթոռոյն ոսկւով պատեալ, և անոտ-
նիւ մի ոսկի աթոռոյն, և բազուկք
||201 բ²|| աթոռոյն աստի անտի ոսկիք,
և երկու առիւծք աստի անտի բազ-
19 կացն. և ԲԺ․ան առիւծ վեց աստի-
20 ճանացն աստի անտի։ Եւ արար զա-
մենայն սպաս, կահ և կարասի տան
թագաւորին ոսկի, և ոչ էր արծաթ
համարեալ ամենեւին յաւուրս Սողոմոնի
21 արքայի։ Զի նաւ արքունի երթայր ի
Թարշիշ ընդ ծառայս Խիրամայ և
յերեամ մի անգամ դառնայր անդրէն
լի ոսկւով և արծաթով և ժանեաւ
փղի և կապկաւք և սիրամարգաւք։
22 Եւ մեծացաւ Սողոմոն քան զամե-
նայն թագաւորս երկրի մեծութեամբ
23 և իմաստութեամբ։ Եւ ամենայն թա-
գաւորք երկրի խնդրէին տեսանել
զերեսս Սողոմոնի, լսել զձայն իմաս-
տութեան նորա, զոր ետ նմա Ած ի
24 սիրտ նորա։ Եւ բերէին նմա պա-
տարագս ոսկի և արծաթ և զէն և
հանդերձ պատուական, ստաշխն և
25 զխունկս և զերիվարս և զջորիս։ Եւ
էին Սողոմոնի բաւասուն Դ․ մատակ
ձի կուտի և երիվարք կառաց ԲԺ․հա-
զար. և կացոյց զնոսա ի քաղաքսն
կառապանաց, և ինքն յԵմ էր զլուխ 26
թագաւորացն ի գետոյն Եփրատայ
մինչև յերկիրն այլազգեաց և մինչև ի
սահմանս Եգիպտացւոց։ Եւ եդ ար- 27
քայ Սողոմոն զոսկի և զարծաթ յԵմ
իբրև զքարինս առապարի, իբրև
զփայտ մայր և իբրև զթութ դաշտի
բազմութեամբ։ Եւ էր ելքն երիւա- 28
րացն Սողոմոնի յերկրէն Եգիպտա-
ցւոց և յայլմէ յամենայն երկրէ։ Եւ 29
այլ բանք Սողոմոնի, առաջինք և վեր-
ջինք, որ գրեցան ի պատգամս Նա-
թանայ մարգարէի և ի բանս Աքիայ
Սիղոմնացւոյ և ի տեսիլս Յովելա տե-
սանողի ըստ Յերոբովամայ, որդւոյ
Նաբատայ։ Եւ թագաւորեաց Սողոմոն 30
արքայ ի վերայ Իղի ամս քառասուն։
Եւ ննջեաց Սողոմոն ընդ հարս իւր, 31
և թաղեցին զնա ի քաղաքին Դաւթի
հաւր իւրոյ։ Եւ թագաւորեաց Ռո-
բովամ որդի նորա փոխանակ նորա։

[Ժ.]

Եղև իբրև լուաւ Յերոբովամ որդի 1°2
Նաբատայ, և ինքն էր յերկրին Եգիպ-
տացւոց փախուցեալ յերեսաց Սողո-
մոնի արքայի և բնակեալ էր յերկրին
Եգիպտացւոց, և դարձաւ Յերոբովամ
յԵգիպտոսէ, զի յղեցին կոչեցին զնա։ 3
Եւ եկն Յերոբովամ և ամենայն ժո-

16 ՅԺ. յերեք Ճ. (դ-ն--է՝ «երեք հարիւր») կշռոյ... ի տան | 18 ոսկով պատեալ (դ-ն--է՝ «և անոտնիւ մի ոսկի աթոռոյն») և բազուկք... և Բ առիւծք աստի անտի | 19 և երկոտասան առիւծք | 21 ընդ ծառայսն | 23 ի սիրտ- նորա | 24 և հանդերձ- պ. ստաշխն և զխունկս և զերիվարս | 25 և երիվարք կառացն... կառապանացն | 26 (Զկնի՝ «յԵմ էր» ի նոր տողէ ունի Օ. մեր») | թագաւորաց... Եփրատա... Եգիպտացւոյն 27 զարծաթն... և իբրև զփայտ | 28 ելք երիվարացն... Եգիպտացւոյն | 29 Աքիա (ի ներքոյ, Ժ. 15, «Աքիայ» ունի Օ. մեր.) Սեղովմացո | 31 ննջեաց Ս. ընդ հարս իւր... Ռոբովամ |

Գլ. Ժ. - Է. ունի ի լուս. կրկնակի բաժանումն գլխոյ՝ Ժ/Գ. | 1° յՕ. մերում, որպէս և յԷ., պակասէ համարատուն առաջին՝ որ ըստ տպագիր օրինակացն. | 2 Ե- եղև իբրև | 3 ընդ Ռո-

զօրքն Իէղացւոց. ապա խաւսել սկսան
4 ընդ Ռոբովամու և ասեն. Հայր քո
խստացոյց և ծանրացոյց լուծ ի վերայ
մեր. և արդ դու թեթևացո ի ծան-
րութենէ անտի խստութեան հաւր
5 քո, և ծառայեսցուք քեզ: Եւ պա-
տասխանի նոցա Ռոբովամ և ասէ.
առ այժմ երթ-‖202 Ա'‖-այք և յետ
երից աւուրց եկեսջիք, և արարին
6 զոյն: Ապա ժողովել հրամայեաց զա-
մենայն ծերակոյտն, որ առաջի կա-
ցեալ էին Սողոմոնի հաւր նորա առ
կենդանեաւ նորա, խորհել սկսաւ ընդ
նոսա և ասէ. զիարդ տայց պատաս-
խանի ժողովրդեանն, որ խաւսեցան
ընդ իս:
7 Խաւսել սկսան ծերակոյտ ժողովր-
դեանն և ասեն. եթէ այսաւր եղիցիս
դու դոցա բարի և խաւսեսցիս դու
խաղաղութեամբ ընդ ժողովրդեանդ
այդմիկ, հաճոյ լիցիս դու դոցա և
խաւսեսցիս խաղաղութեամբ ընդ դո-
սա, և եղիցին դոքա քեզ ծառայք
8 զամենայն աւուրս կենաց քոց: Եւ
եթող նա զխորհուրդ ծերոցն, որ
խրատ ետուն նմա, և սկսաւ խորհել
ընդ մանկտին, որ սննդակից էին նո-
9 րա, և ասէ. դուք զիարդ ասէք, զինչ
բան տաց պատասխանի ժողովրդեանդ
այդմիկ, որ խաւսեցան ընդ իս և ա-
սեն. թոյլ արա մեզ ի լծին ծանրու-
թեան, որ եդ ի վերայ մեր հայր քո:

Եւ ասեն սննդակից պատանեակքն. 10
այսպէս ասասցես ժողովուրդդ, որ
ասեն, թէ ծանրացոյց ի վերայ մեր
հայր քո զլուծ իւր և դու թեթևացո.
արդ ասասցես դու ցնոսա, եթէ ծկոյթ
իմ ստուար է քան զմէջ հաւր իմոյ.
եթէ հայր իմ եդ ի վերայ ձեր լուծ 11
ծանրութեան, արդ ես յաւելից ի նո-
սա. եթէ հայր իմ տանջէր զձեզ գաւա-
զանաւք, արդ ես տանջեցից զձեզ ա-
ձեաւք: Եւ եկն Ցերոբովամ և ամենայն 12
զաւրքն Իէղացւոց առ Ռոբովամ յա-
ւուրն երրորդի, որպէս և ժամ կա-
լան ի նմանէ: Եւ ետ պատասխանի 13
նոցա խստագոյնս, և եթող նա զխոր-
հուրդ ծերոցն և սկսաւ խաւսել 14
զխորհուրդ մանկտւոյն, որ սննդա-
կիցք եղեալ էին նորա, և ասէ. եթէ
հայր իմ ծանրացոյց լուծ ի վերայ
ձեր, և ես յաւելից ի նա. եթէ հայր
իմ տանջէր զձեզ գաւազանաւ, ես
տանջեցից զձեզ աձիւք: Եւ ոչ լուաւ 15
թագաւորն ժողովրդեանն, զի թիւ-
րեալ էր նմա յՏէ, զի կատարեսցէ Տր
զբանն զայն, զոր խաւսեցաւ ի ձեռն
Աքիայ Սիղովմացւոյ վասն Ցերոբովա-
մու որդւոյ Նաբատայ և ամենայն որ-
դւոցն Իէղի, վասն այնորիկ ոչ լուաւ 16
թագաւորն նոցա: Ապա ի ձայն բարձր
աղաղակել սկսան ժողովուրդքն և
ասեն. բնաւ և զինչ գործ է մեզ ընդ
Դաւթի կամ մասն և բաժին կայ ընդ

---

փեցաւ աղիքն որովայնիւն հանդերձ,
և մեռաւ նա յախտ չարչարանաց իւ-
րոց։ Եւ ոչ արարին նմա պնուհեստ
ժողովուրդն լալիս և կամախին, և ոչ
հուր այրեցին նմա հարցն իւրեանց։
Եւ այր էր ԼԲ. ամաց Յովրամ, զի 20
էհաս ի թագաւորութիւն, և ամս
Ը. կալաւ զթագաւորութիւն ի վերայ
Եմի։ Եւ մեռաւ նա ոչ գովութեամբ,
և թաղեցաւ նա ի քաղաքի Դաւթի
ոչ ի գերեզմանս թագաւորացն։

## [ԻԲ.]

Եւ թագաւորեցուցին բնակիչք 1
Յուդայ զՈքոզիայ, որդի նորա կրսեր,
փոխանակ նորա, զի զամենայն խու-
ժադուժ ազգաց նորա կոտորեաց և
զբանակն միաստնեաց։ Եւ թագաւո-
րեաց Ոքոզիայ որդի Յովրամա արքայի
Յուդայ, այր իբրև ԻԲ. ամաց, [եւ թա- 2
գաւորեաց ամ մի յԵմ]. և անուն մաւր
նորա Գոդոլիայ, դուստր Աքաբու։
Եւ ինքն գնաց ըստ ճանապարհն 3
Աքաաբու, զի մայր նորա խորհրդա-
կից էր նորա ի մեղանչել նորա։ Եւ 4
արար Ոքոզիայ չար առաջի Տն, որ-
պէս և տունն Աքաաբու, զի նոքա
էին խորհրդակիցք նորա յետ մահուան
հաւր նորա, զի սատակեսցեն և զնա
ի խորհուրդս իւրեանց։ Եւ գնաց Ոքո- 5
զիայ ընդ Յովրամա արքայի Իէզա-

---

14 մեծամեծս չարաչարս որդւով+ (Օ. մեր գուցէ վրիպակաւ՝ «չչարչարանօն որդւովք») հանդերձ և կանամբք հ... և կարասեաւ | 15 ինքնի... չար~չարանաց (ստորև՝ ընչիւ նշանաւ ի վերայ ~) | 17 Յուդայ և գերեցին (Օ. մեր վրիպակաւ՝ «գէտացին») զամենայն ինչս և զստացուածս... ի տունս նոցա և թագաւորաց նոցա... մնաց նոքա | 19 և եղև աւուրց... նորա աւուրց երկուցեալ (ստորև՝ ուղղիչ նշանաւ, գուցէ փոխանակ ասելոյ՝ աւուրց երկուց) թափեցաւ... և կ՞աժխի | 20 եհաս ի թագաւորութիւն է ԻԲ ԵԲ (դիմաց՝ «և ամս Ը.») կալաւ |

Գլ. ԻԲ.—է. ունի ի լուս. կրկնակի բաժանումն գլխոյ՝ Թռ. ԻԲ/Ը | 1 բնակիչքն... և զբանակն միաստ=նեաց (չփոխել թուի մասամբ համարատունդ յերկուսին օրինակսն.)... որդին Յ. արքային | 2—3 քսան և երկուց ամաց և թագաւորեաց ամ մի յԵմ (պակասեն վրիպակաւ նոտրագիրքդ յՕ. մերում, զորս յաւելաք ի բնագրին.) և անուն մօր նորա Գ. դ. Աքաաբու (դիմաց՝ «և ինքն գնաց ըստ ճանապարհն Աքաաբու») զի մայր | 4 չարն... խորհրդակից | 5 Իէլացոց... Ալաէլի... ի Հռամովթ Գաղաադ (Օ. մեր վրիպակաւ՝ «ի Հռամով և է Գաղբադ».)... աղեղնաւորքն |

ցոյն ի գործ պատերազմի ի վերայ
Ազայելի արքային Ասորոց ի Հռամովթ
Գաղաադ: Անդ հարկանէին զՅովրամ
6 Նետիւք աղեղնաւորք, և դառնայր նա
վիրաւորեալ բժշկել յԵզրայել: Եւ
Ոքոզիայ, որդին Յովրամայ արքայի
Յուդայ, եկն էջ տեսանել զՅովրամ
որդի Աքաաբու, զի էր հիւանդա-
7 ցե[ա]լ: Եւ եղև յՏյ կործանումն Ոքո-
զիայ ընդ գալ նորա առ Յովրամ: և
իբրև եկն Ոքոզիայ, ել Յովրամ ընդ
նմա առ Յու որդի Նիմեսայ, աւծեալն
Տն, զի աւծ զնա Տր, սատակել զա-
8 մենայն տունն Աքաաբու: Եւ եղև իբ-
րև խնդրել զվրէժն Յուայ ի տանէ
Աքաաբու, եգիտ նա զիշխանսն Յուդայ
և զեղբարսն Ոքոզիայ և անդէն սա-
9 տակեաց զնոսա: Եւ հրաման ետ խըն-
դիր առնել Ոքոզիայ. և եկին հասին
գտին զնա ի Շամրին, զի անդ բժըշ-
կէին զնա, եկին ածին առ Յու, և
սպան զնա անդէն. բայց թաղեցին
զնա, զի ասացին՟ բան, թէ որդի է
||206 բª|| Յովսափատու, որ խնդրեաց
զՏր յամենայն սրտէ իւրմէ: Եւ ոչ
գոյր այնուհետև ի տանն Ոխոզիայ,
որ զաւրանայր հաստատել ի նմին
10 թագաւորութեան, քանզի մայրն Ոխո-
զիայ իբրև ետես, թէ մեռաւ որդին
իւր, յոտն եկաց փաղփաղակի և սա-
տակեաց զամենայն զաւակ թագաւո-
րութեան տանն Յուդայ: Ապա եկն 11
առ Յուսապէէ, դուստր թագաւորին,
զՅովաս, որդի Ոխոզիայ, գողացաւ
զնա ի միջոյ որդեացն թագաւորին
սպանելոցն և ետ զնա դայեկաւն հան-
դերձ ի տուն գանձի դահոյից: Եւ
թաքոյց զնա դուստր թագաւորին
Յովրամայ զՅովաս Յուսաբէէ, քոյրն
Ոխոզիայ, կինն Յովդայ քահանայա-
պետի, և թաքոյց զնա յերեսաց Գո-
թողիայ, և ոչ եգիտ սպանանել զնա:
Եւ էր Յովաս թաքուցեալ Յուդայեաւ 12
հանդերձ ի տան Տյ ամս վեց. և թա-
գաւորեաց Գոթողիայ ի վերայ երկրին:

## [ԻԳ.]

Եւ իբրև լինէր ամն եւթներորդ, 1
զաւրանայր Յուդայէ, և առնոյր նա
զհարիւրապետսն Զարեհ, զորդին Յով-
րամայ, և զԻսմայէլ, զորդին Յովհա-
նու, և զԱզարիայ, զորդի Յովբեթայ,
և զՄաասի, զորդի Ադայիու, և զԵ-
ղիշափատ, որդի Զեքրեա: Եւ առ նա
զնոսա ընդ իւր ի տուն Տն. և ուխտ
դնէին, դաշինս կռէին և ժողովէին 2
զՂևտացիսն յամենայն քաղաքաց ան-
տի Յուդայ և զիշխանսն նահապետս
ազգատոհմացն Իղի, և եկին յԵմ:
Եկին ուխտ ամենայն ժողովն և դա- 3
շինս կռեցին ի տան Տն ընդ արքայի.

6 որդի... հիւանդացեալ | 7 առ Յէու որդին Նէմեսեայ... Աքաաբու | 8 և եղև առ ի խնդրել զվրէժն Յէուայ (Օ. մր վրիպակաւ՝ «Յուդայ», փոխ.՝ Յուայ) ի տանէն Աքաաբու... և անդէն | 9 Ոքոզիա... առ Յէու... թաղեցին (դ-ի-ե՝ «զնա») զի ասացին բան թէ որդի Յ. է | 10 եթէ մեռաւ | 11 Յովսապէէ... զՅովաս զորդին Ոքոզիա... որդեացն... սպանել-ոյն... դահոյց և թաքոյց զնա... Յովսապէէ... Յովիդեա քահանայապետի (Շփոթումն ինչ թուի լինել ի բանիս՝ ի պատճառս վրիպակաւ կրկնելոյ խնդրոյն սեռի («զնա»), փոխանակ ասելոյ՝ «Եւ թաքոյց զՅովաս Յուսաբէէ, դուստր թագաւորին Յովրամայ, քոյրն Ոխոզիայ, կինն Յովդայ քահանայապետի») և թաքոյց զնա | 12 թաքուցեալ Յովիդաիւ հանդերձ... Գոթողիա... երկրի |

ԳԼ. ԻԳ.—Է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ Փռ. ԻԳ. | 1 Յովիդայէ (դ-ր-ե և է Ն-ե-)... Ազարիու և զԵղիշափայն ո. Զիքրայ, և առ զնա (դ-ր-ե վրիպակաւ՝ փոխ. նա) զնոսա | 3 ամենայն

և ասէ ցնոսա Յուդայէ. և աւասիկ
որդի արքայի թագաւորեսցէ սա որ-
պէս խաւսեցաւ Տէր ի վերայ տան
4 Դաւթի։ Եւ արդ այս բան է, զոր
արասցէք դուք. երրորդ մասն ի ձէնջ
մտցէ շաբաթուց ցքահանայիցն և
Ղևտացւոցն և դռնապանացն ընդ
5 դրունս մտից, և երրորդ մասն ի
դրան յարքունի, և երրորդ մասն ի
դրանն ի միջնում, և ամենայն ժո-
6 ղովուրդն ի սրահս տանն Տն։ Եւ մի
ոք մի մտցէ ի տուն Տն, բայց միայն
քահանայքն և Ղևտացիքն, պաշտաւ-
նեայք Ղևտացւոցն. նոքա մտցեն մի-
այն, զի ի սրբութեան կան, և ամե-
նայն ժողովուրդն պահեսցեն պահ Տն։
7 Եւ պատեսցին Ղևտացիքն զարքայիւ
շուրջ, և այր իւրաքանչիւր գործի
• իւր ի ձեռին իւրում. և որ մտանիցէ
ի տուն, մեռցի, և եղիցի այն միայն,
որ ընդ արքայի մտանեն և ելանեն։
8 Եւ արարին Ղևտացիքն այնպէս։ Եւ
պատուէր ետ Յուդայէ քահանայա-
պետ, [եւ առին] այր իւրաքանչիւր
ընդ մտանելն շաբաթուն և յելանելն
նորա, զի ոչ պակասեցոյց Յուդայէ
քահանայապետ ||207 Ա'|| շաբաթաւորս։
9 [Եւ ետ Յովիդաէ քահանայապետն]
զհարիւրապետսն կորդեալս և կազ-
մեալս նիզակաւքն և ասպարաւքն,
և զամենայն զզէն արքայի Դաւթի,
10 որ էր ի տան Տն, ետ ցնոսա։ Եւ
կացոյց զամենայն ժողովուրդն այր
իւրաքանչիւր զինու հանդերձ յան-
կենէ անտի տանն աջակողմն կուսին
մինչև յանկիւն տանն ձախակողմ
կուսի սեղանոյն և ի տաճարի անդ
շուրջ զարքայիւ։ Եւ ած եհան Յու- 11
դայէ զորդին արքայի, և ետ ի նա
զթագաւորութիւնն և զվկայութիւնն,
և թագաւորեցուցին զնա. և աւծ զնա
Յուդայէ և որդիքն իւր, և ասեն.
յաւիտեան կեցցէ արքայ։ Եւ իբրև 12
լուաւ զայն բարբառ Գոթողիայ և
ժողովրդեանն զամբոխն, զի վեր ի
վայր սուրհայլին և աւրհնէին, և ընդ
նոսա թագաւորն, եկն եմուտ առ ար-
քայ ի տուն Տն և ետես անդ զարքայ, 13
զի հաստատեալ կայր առ սեանն և ի
մուտ դրանն, իշխանք և փողքն աւրհ-
նութեան և իշխանքն շուրջ զարքա-
յիւ, և ամենայն ժողովուրդքն ցնծա-
ցեալք փողովք և երգովք սրնգաց, և
երգիչքն և աւրհնիչք, պատառեալ
զպատմուճան իւր և ի ձայն բարձր
ճիչ կալաւ և ասէ. դա՛ւ, է դա՛ւ է։
Եւ ել ի դուրս յարքայէ քահանայ 14
Տն և հրաման ետ հարիւրապետացն
և զաւրագլխացն զաւրուցն և ասէ
ցնոսա. հանէք զնա ի բաց ի տաճարէ
տանի և երթայք զհետ զորա ի դուրս,
և անդ արտաքոյ մեռցի դա սրով. զի
այսպէս հրամայեալ էր քահանայապե-
տիցն, մի ոք եթէ մեռցի ի ներքս ի

---

ժողովուրդն (գրչէն՝ «և») զաշխնս... ցնոսա Յովիդէայ | 4 շաբաթուցն քահանայիցն | 5 արքունի... ի դրան (գրչէն՝ «ի») միջնում | 6 մի ոք մի մտցէ... կեան | 8—9 Յովիդաէ քահանայապետ և առին այր... և յելանել նորա... շաբաթաւորս. և ետ Յովիդաէ քահանայապետ (պակասեն յՕ. մերում նատրագրերը, զորս յաւելաք.) զհարիւրապետսն... զէն... ի տան Տն ետ | 10 աջակողմ կուսի | 11 արքային... զթագաւորութիւն և զվկայութիւն (գրչէն՝ «և») թ. | 12 Գոթողիա և ժողովրդեան... սուրհ°ին (ջնջուած ի բնագրին, և ի լուսանցս յաւելեալ՝ ն°է) և օրհնէին | 13 և ետես անդ արքա (գրչէն՝ նախ գրել «զ» և շաղկապն «զի») հաստատեալ... առ սեանն (գրչէն՝ «և») ի մուտ դ. իշխանքն... ցնծացեալ... և երգիչք... պատառեաց... ճիչ բարձ և ասէ | 14 և ել ի դուրս (Օ. մեր՝ «ի դաւս»)... զօրուց... հանէք զնա... մի ոք (գրչէն՝ «եթէ») մեռցի... ի տաճարի |

12

15 տաճարին Տն: Եւ թոյլ ետ նմա, և
ձեռն արկին ի նա և ածին հանին ի
դուռն հեծելոց տանն արքունի և
16 անդէն սպանին զնա: Եւ անդէն ի
նմին աւուրն ուխտ եդին, դաշինս
կռեցին ի մէջ ժողովրդեանն և ի մէջ
արքային, զի եղիցին նորա այնուհետև
17 ժողովուրդ Տն Այ: Եւ եկն եմուտ
ամենայն ժողովուրդն երկրին ի տունն
Բահաղու և կործանեցին զնա, և
զբագինս նորա և զպատկերս նորա
մանրեցին, և զՄատթանն զքուրմն
Բահաղու սպանին առաջի բագնաց
18 նոցա: Եւ ետ Յովդայէ զայցելութիւն
տանն Տն ի ձեռն քահանայիցն և
Ղևտացւոցն. և կանգնեաց նա զշա-
բաթապահսն քահանայիցն և զՂև-
տացւոց, որպէս և հրաման ետ Տր
Դաւթի ի վերայ տանն Տն մատու-
ցանել ընդ ողջակէզս պատար[ագ]աց,
որպէս և գրեալ է յօրէնս Մովսէսի,
ուրախութեամբ ցնծութեամբ ի ձայն
19 երգոց ի ձեռն Դաւթի: Եւ եկին կա-
ցին դարապանքն [ի] դրունս տան
Տն, և ոչ էր հնար մտանել ամենայն
որ արատաւոր էր ընդ ‖207 ա²‖ ամե-
20 նայն ժողովուրդն: Եւ առին զհարիւ-
րապետսն և զիշխանս և զաւրա-
գլուխս զաւրացն, զամենայն ժողովս
երկրին, և ածին հանին զթագաւորն
ի տաճարն Տն Այ. և եկն եմուտ ընդ
ներքին դուռն թագաւորութեանն, և
նստուցին զարքայ յաթոռ թագաւո-
րութեան: Եւ ուրախ եղեն ուրախու- 21
թիւն մեծ ամենայն ժողով երկրին, և
դադարեաց քաղաքն, իբրև զԳոթողիայ
սպանին սուսերաւ:

## [ԻԴ.]

Եւ Յովաս էր այր ամաց իբրև 1
եւթն, զի եղև թագաւոր, և ամս խ.
կալաւ զթագաւորութիւնն Եմի. և
անուն մաւր նորա Սաբեայ ի Բերսա-
բէեայ: Եւ գնայր ուղղութեամբ Յովաս 2
զամենայն աւուրս կենաց Յովդայէ
քահանայապետի: Եւ առ Յովաս Բ. 3
կանայս, և եղեն նորա ուստերք և
դստերք: Եւ եղև յետ այսորիկ եդ ի 4
սրտի իւրում հանդէս առնել տանն
Տն: Եւ ժողովեցին զքահանայապետսն 5
և զՂևտացիս, և ասէ ցնոսա. ելէք
դուք ընդ ամենայն քաղաքս Յուդայ
և ժողովեցէք յամենայն Իէղ արծաթ,
զի հաստատեսցի տունն Տն Այ Իղի
կանխաւ ամ յամէ, և դուք երագեցէք
խաւսել ընդ ժողովրդեանդ: Եւ ոչ ե-
րագեցին Ղևտացիքն: Ապա կոչեաց 6
արքայ զՅովդայէ և զիշխանսն և ասէ
ցնա. ընդէր չարարեր խնդիր վասն
Ղևտացւոցն բերել ի տուն Տն յԻմէ
Յուդայ զսակ մաւին, որ հրամայեալ
էր Մովսէսի առն Այ ի ժամանակին,
իբրև ժողովեաց զԻէղ ի վրան ժամուն

---

15 և թոյլ ետ[illegible] նմա և ձեռն արկին նմա... ընդ դուռն հեծելատանն | 17 և զՄակթանն քուրմն | 18 տան Տն ի ձեռն քահանայից... և Ղևտացոցն որպէս... տան Տն մատուցանել [illegible] (Օ. մեր գուցէ վրիպակաւ «ընդ») ողջակէզս պատարագաց (Օ. մեր թուի վրիպակաւ «պատարաց»)... յօրէնսն... և ցնծութեամբ | 19 դարա[illegible]պանքն է դրունս | 20 զհ.ապետս... դուռն թագաւորութեան | 21 ամենայն ժողով[illegible] երկրին... զԳոդողիա |

Գլ. ԻԴ.—Է. ունի ի լուսանց. կրկնակի բաժանումն գլխոյ՝ Թռ. ԻԴ/Ժ. | 1 ի Բերսաբեէ | 2 Յովիդաէ ([illegible]) | 3 երկուս կանայս | 5 և զՂևտացիսն... Իղէ արծաթ | 6 զՅովդա և զիշխանսն ([illegible] «և ասէ ցնա») ընդէր չարարէր... առնն Այ ([illegible] ի նոր տողէ ունի Օ. մեր.)... յանապատի անդ (Օ. մեր վրիպակաւ «ան») զի |

7 յանապատի ան[ղ]. զի Գոթողիայ ա-
նաւրէն և որդիք նորա կողոպտեցին
զերծին զտուն Տյ և զնուէրսն ամե-
նայն տանն Տն տարան եդին կռոցն
8 Բահաղու: Եւ արդ արարէք տապա-
նակ մի և դիցէք առ դրան տանն Տն
9 արտաքոյ, և քարոզ կարդասցի ընդ
ամենայն Յուդա և Եմ գալ բերել Տն
Տյ, որպէս և ասաց Մովսէս ծառայ
10 Տն յանապատի անդ: Եւ իբրև լուան,
ուրախ եղեն ամենայն իշխանքն և
ամենայն ժողովուրդն. և բերէին ար-
կանէին ի տապանակ անդր մինչև
11 լցու: Եւ լինէր իբրև բերէին զտա-
պանակն առ իշխանսն թագաւորին
ի ձեռն Ղևտացւոցն և իբրև տեսա-
նէին, եթէ լցաւ արծաթն, գայր
դպրապետն արքունի և իշխանն մե-
ծի քահանայապետին, թափէին զտա-
պանակն և դառնային և անդէն
դնէին: Եւ այնպէս առնէին աւր ըստ
աւրէ, և ժողովեցին արծաթ բազում:
12 Եւ ետ զարծաթն արքայ և Յովդայէ
քահանայապետն ի գործ ||207 բ'|| սա-
րագու տաճարին Տն, ուր գործէին.
և առնէին ի վարձու քարկոփս և
հիւսունս, և առ նոսին զարբինս և
ճարտարապետս պղնձոյ և երկաթոյ
13 և զի հանդերձեսցեն զտունն Տն: Եւ
գործէին որ գործէին զգործ Տն.
և բարձրանայր գործն ի ձեռս նոցա,
և կազմէր հանդերձէր տունն Տն ի
վերայ կացութեանն նորա. և լինէր
զգուշութիւն յոյժ: Եւ իբրև կատա- 14
րեցին զգործ տանն Տն, զայլն բերէին
զմնացորդս արծաթոյն առ արքայ և
առ Յովդայէ, և առնէին զայն ի սպաս
տանն Տն, անօթս պաշտաման ողջա-
կիզաց և պատարագաց, և խնկաղացս
և ի բաժակս և ի ճաշակս. և այսպէս
առնէին ամենայն աւուրս կենաց Յով-
դայէի: Եւ ծերացաւ Յովդայէ, և էր 15
լի աւուրբք. և մեռաւ Յովդայէ, և
էին ամք նորա ճԼ. զի մեռաւն: Եւ 16
թաղեցին զնա ի քաղաքին Դաւթի
ընդ թագաւորսն, զի արար նա բա-
րիս յԵմ և ընդ Իղի, և ի մէջ Տյ և
ի մէջ տան նորա: Եւ եղև յետ մա- 17
հուանն Յովդայեայ ժողովեցան իշ-
խանքն Յուդայ և եկին մտին երկիր-
պագին արքային, և շրջեցին զմիտս
Յովասու արքային. ապա ունկնդիր
եղև արքայ նոցա: Եւ թողին նոքա 18
զտուն Տն Այ հարցն իւրեանց, և պաշ-
տեցին նոքա զաստղն կռոցն սնո-
տեաց. և եղև բարկութիւն Տն ի վե-
րայ Յուդայ և ի վերայ Եմի յաւուրսն
յայնոսիկ: Եւ առաքեաց Տր ԱԾ մար- 19
գարէս, զի դարձուսցեն զնոսա առ Տր
ԱԾ և դիցեն նոցա ուխտ վկայու-
թեան, և ոչ լուան: Եւ ոգի Տն վա- 20
ռեաց զԶաքարիայ Յովդայեանց քա-
հանայապետին, եկն եհաս ի վերայ
ժողովրդեանն և ասէ ցնոսա. այսպէս
ասէ Տր. ընդէ՞ր դուք անցանէք զան-
ցանէք զպատուիրանաւք Տն, և ոչ

7 զի Գոդողիա անօրէն և որդիք նորա (Օ. մեր զուցէ վրիպակաւ կրկնէ ստո զշարկայն «զի») կողոպտեցին... և զնուէրսն Այ տանն Տն | 9 որպէս (դրծ՝ «և») ասաց Մովսէս | 10 ամէն իշխանքն | 11 առ իշխանս... ի ձեռն... դպրապետ... և դառնային և ... անդէն դնէին | 12 և Յովդա և (... և Օ. մեր՝ փոխ. Յովդայէ) քահանայապետն... քարակոփս... և երկաթոյ (դրծ՝ «և») զի | 13 զգործ Տն (... ի նոր տող ... Օ. մեր.) ...տուն Տն ի վերակացութեան նոցա | 14 առ Յովիդաէ (...)... տանն Տն... կենացն | 15 ճ. և Լ. | 16 յԵմ (դրծ՝ «և») ընդ Իղի | 17 զմիտսն | 18 զտուն (դրծ՝ «Տն») Այ | 20 Յովիդայեանց... անցանէք զանց առնէք զպատուիրանօքն |

աջողի ձեզ. զի թողէք դուք զՏէր Ած
21 և նա լքցէ զձեզ: Եւ նոքա յարեան
ի վերայ նորա և քարկոծ առնէին
զնա քարամբք պատուիրանաւ Յովա-
22 սու արքայի ի սրահին Տն: Եւ ոչ
յիշեաց Յովաս արքայ զողորմն զոր
արար Տէր ընդ նմա և Յուդայէ հայր
նորա, և սպանին զնա յետ նորա. և
իբրև մեռանէրն, ասէ. տեսցէ Տէր և
23 դատեսցի: Եւ եղև ընդ կատարել տա-
րւոյն, եկին հասին զաւրք Ասորոց
ի վերայ Յովասու, և առին զՅուդայ
և զԵմ, և սատակեցին զամենայն իշ-
խանս նոցա, և զամենայն զաւ զա-
պուռ զաւարին առին և ետուն
տանել ի Դամասկոս թագաւորին իւ-
24 րեանց: Զի սակաւ ինչ ‖207 բ[2]‖ զաւ-
րուք եկեալ էին նոքա ի վերայ նոցա
բազմաց, և Տէր մատնեաց զնոսա ի
ձեռս նոցա, և զդատաստանն զայն,
25 զոր ասաց մարգարէն: Եւ մինչդեռ
էին յայսմ չափու, լքին զնա ի բաց
կացին, և նա էր անկեալ ի հիւան-
դութիւնս մեծամեծս. և եկին հասին
ի վերայ Յովասու ծառայքն իւր վասն
արեանցն որդւոցն Յուդայէ քահա-
նայապետին, և անդէն սպանին: Եւ
մեռաւ, և թաղեցին զնա ի քաղաքին
Դաւթի, և ոչ թաղեցին զնա ի գե-
26 րեզմանս թագաւորացն: Եւ որ հա-
րանն ի վերայ նորա Զաբատ որդի
Սամաադու ի Սոմանիտացւոց անտի.
և որդիք նորա հինգ հասին ի վե- 27
րայ նորա հնգեքին, և բազում ինչ
մթերս ի վերայ նորա դնէին: Այլ
սկիզբն տանն Այ և այլ ճառք բանից
աւասիկ գրեալ են ի գիրս ճառից
թագաւորացն: Եւ թագաւորեաց Ամե-
սիա որդի նորա փոխանակ նորա:

## [ԻԵ.]

Այր իբրև ամ[աց] ԻԵ.ից Ամեսիայ 1
ի թագաւորել իւրում, և ԻԹ. ամ թա-
գաւորեաց ի վերայ Եմի. և անուն
մաւր նորա Յովադիմ յԵմէ: Եւ արար 2
նա ուղղութիւն և զարդարութիւն
առաջի Տն, այլ ոչ յամենայն սրտէ
իւրմէ: Եւ եղև իբրև հաստատեցաւ 3
թագաւորութիւն ի ձեռս նորա,
սպան նա զծառայսն, որ սպանին
զհայր նորա, և զորդիս նոցա ոչ սպա- 4
նին ըստ պատուիրանին աւրինաց
Տն, որպէս և գրեալ է յաւրէնս Մով-
սէսի պատուիրանաց Տն, եթէ ոչ
մեռցին հարք վասն որդւոց և ոչ որ-
դիք վասն հարց, այլ այր իւրաքան-
չիւր ի մեղս իւր մեռցի: Ապա ժողո- 5
վեաց Ամեսիայ զտունն Յուդայ և
կացոյց զնոսա ըստ ազգս ազգս տոհ-
մից նահապետութեան իւրեանց ի
Ռ.ապետս և Ճ.ապետս ընդ ամենայն
տունն Յուդայ և Բենիամէն. և արար
համար ի քսանամենից և ի վեր, և

22 զողորմն... ընդ նմա և ընդ Յովիդաեա հօր | 23 զօրքն | 24 զի (վրիպակաւ, փոխ՝ զի) սակաւ | 25 զնա ~ ի բաց կացին... և եկին հասին (Օ. մեր՝ «հասան»)... ի քաղաքի | 26—27 Սամաաթու ի Սոմանիտացոց անտի, և որդիք նորա... հնգեքինն և է բազում ինչ... դնէին (Ա--էն ի նոր տողէ ունի Օ. մեր.)... բանիցն (գրչ--է «աւասիկ») գրեալ են |

Գլ. ԻԵ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժան. գլխոյ՝ Յո. ԻԵ/ՃԱ | 1 Անանջատ և միայար ընդ նախընթացին ունի զբանդ Օ. մեր | Այր իբրև ամաց (Օ. մեր զուցէ կրճատմամբ՝ «ամ») ...Յովաճիմ... զուղղութիւն | 2 թագաւորութիւնն ի ձեռին | 4 ոչ սպան ըստ պատուիրանի օրինացն... Մովսէսի... այլ (գրչ--է՝ «այր») իւրաքանչիւր | 5 և է Ճ.ապետս... և եգիտ զնոսա (Օ. մեր՝ «զնա») |

եգիտ զնոսա ԳՃՌ. այր զաւրութեան
պատրաստեալ ի գործ պատերազմի,
6 որ ունէր նիզակ և ասպար։ Եւ առ-
նոյր նա ի վարձու ի տանէն Իղի
Ռ. այր զաւրութեան արծաթոյ Ճ.
7 քանքարի։ Եկն առ նա այր Այ և ա-
սէ. արքայ, մի գնասցեն ընդ քեզ
զաւրք Իղի, զի ոչ է Տր Ած ընդ Իղի
ամենայն որդւոցն Հանդերձ Եփրե-
8 մայ. զի եթէ կարծիցես դու յաղթել
ի պատերազմի անդ բազմութեամբն
այսուիկ, վաթթարեսցէ զքեզ Տր ա-
ռաջի թշնամեաց քոց, զի կարող է Տր
աւգնել և վաթթարեցուցանել։ ||208 Ա'||
9 Եւ պատասխանի Ամեսիայ առն Այ
և ասէ. և զինչ արարից զայն Ճ. քան-
քար, զոր ետու զաւրացն Իէղայելոյ։
Ասէ ցնա այրն Այ. կարող է Տր ի
բազմագոյն ևս քան զայն տալ քեզ։
10 Ապա մեկնեաց զատոյց Ամեսիայ զզ-
աւրս զայնս, որ եկեալ էին յԵփրեմէ
երթալ գնալ նոցա յիւրաքանչիւր
տունս իւրեանց։ Եւ բարկացան յոյժ
նոքա ի վերայ Յուդայ, և գնացին
նոքա յիւրաքանչիւր տունս իւրեանց
11 սրտմտութեամբ բարկութեամբ։ Եւ
Ամեսիա զաւրացաւ, և առ նա զզ-
աւրս իւր և գնաց ի Հովիտս Աղ-
տիցն, և անդ կոտորէր նա զորդիսն
12 Սէիր իբրև ԺՌ. և Ժ. ևս այլ Ռ.
ձերբակալ առնէին որդիքն Յուդայ, և
առեալ ածէին զնոսա ի կատար քա-
րակլին և անդ քարավէժ առնէին
զնոսա և սատակէին։ Եւ որդիքն 13
զաւրութեանց, զոր դարձոյցն Ամե-
սիայ, զի մի գնասցեն ընդ նմա ի
գործ պատերազմի, անկան զքաղա-
քաւքն Յուդայ և կոտորեցին զնոսա
ի Շամրնէ մինչ ի Բեթորոնն, և սատա-
կեցին [ի նոցանէ ԳՌ. եւ խաղացու-
ցին] ի նոցանէ աւար բազում։ Եւ 14
եղև իբրև դարձաւ Ամեսիայ ի կոտո-
րածէ անտի Եդոմեացւոցն, և առեալ
բերէր ընդ իւր և զկուռսն որդւոցն
Սէիրայ և կացուցանէր զնոսա իւր
յԱծս, և առաջի նոցա երկիրպագա-
նէր և ողջակէզս մատուցանէր։ Եւ 15
եղև բարկութիւն սրտմտութեան Տն
ի վերայ Ամեսիայ։ Եւ առաքեաց նա
ի վերայ նորա մարգարէ և ասէ. զի
ցանկացար դու խնդրել քեզ զխո
ստուածս ժողովրդեան, որք ոչ կարա-
ցին փրկել զժողովուրդս իւրեանց ի
ձեռաց քոց։ Եւ եղև մինչդեռ խաւ- 16
սէր նա ընդ նմա, եւ պատասխանի
նա և ասէ. միթէ խորհրդակից ինչ
արքայի առեալ է ուրուք զքեզ. զգոյշ
լեր անձին քում, գուցէ երբէք սատա-
կիցեն զքեզ։ Եւ լռեաց մարգարէն և
ասէ. այն զի խորհեցաւ Տր սատակել
զքեզ, փոխանակ զի ոչ լուար դու
խրատու իմում։ Եւ խորհեցաւ Ամե- 17
սեայ արքայ Յուդայ և առաքեաց առ
Յովաս որդի Յովաքազու արքայի Իղի

---

6 Իղի ([illegible]՝ «Ռ.») այր զօրութեան | 7 և եկն առ նա | 8 զի ոչ եթէ... վաթթա-
րեսցէ... վաթթարացուցանել | 9 Ճ. քանքարն... զօրացն Իղէ... Տր ([illegible]՝ «ի») բազմագոյն ևս |
10 մեկնեալ | զատոյց ([illegible] և Օ. մր.) Ա. զօրսն զայնս... նոքա յոյժ... և գնացին [illegible] ([illegible]՝
«նոքա») յ. | 11 կոտորէր ([illegible]՝ «նա») զորդիսն | 12 և Ժ. այլ ևս Ռ. | 13 դարձոյց... ի
Շամրնէ մինչև ի Բեթոր, և սատակեցին չ [illegible] (պակասեն վրիպակաւ յՕ.
մերում [illegible], զորս յաւելաք ի բնագրին.) ի նոցանէ աւար | 14 Եդոմայ[illegible]... և կացու-
ցանէր [illegible] իւր... և առաջի նոքա | 15 Ամեսիայ, ([illegible] ի նոր տողէ ունի Օ. մր.)... մար-
գարէ... խնդրել ([illegible]՝ «քեզ») [illegible] | 16 առեալ ([illegible]՝ «է») ուրուք... սատակեսցեն... Տր
սատակ ([illegible]՝ վրիպակաւ, ի տեղի՝ սատակել.) զքեզ... ոչ լէար | 17 Յովաքազու |

և ասէ. եկ և տեսցուք մեք յանդի-
18 ման զմիմեանս: Եւ առաքեաց անդրէն
Յովաս արքայ Իղի առ Ամեսիայ ար-
քայ Յուդայ և ասէ. գձնիկ, որ ի
Լիբանան լերին է, առաքեաց առ
մայրն Լիբանանու և ասէ. տուր
ինձ, ասէ, զդուստր քո որդւոյ իմում
կնութեան, և եկեսցեն մտցեն ամե-
նայն գազանք անտառին, որ ի Լի-
բան-‖208 Ա[2]‖-անդ իցեն. և եկին գա-
զանքն կոխան արարին և սատակեցին
19 զգձնիկն: Արդ ասես ի մտի քում,
թէ սատակելով սատակեցի ես զԵդով-
մայեցիսն. արդ հպարտացաւ սիրտ
քո և մեծամտեցեր. երթ նիստ ի տան
քո խաղաղիկ, և զի՞ պիտոյ է քեզ
բախել ընկերի քում. և սատակիցիս
20 դու և Յուդայ ընդ քեզ: Եւ ոչ ան-
սաց Ամասիայ բանիցն, զի ի Տնէ է
մատնել զնա ի ձեռս Յովասու ար-
քային, զի խնդրեաց նա զդիսն Եդո-
21 մայեցւոց: Եւ ել Յովաս արքայ Իղի,
և եղեն յանդիման միմեանց նա և
Ամեսիայ արքայ Յուդայ ի Բեթսա-
22 միւս Հրէաստանի: Եւ վաթթարեցաւ
Յուդայ յերեսաց Իէղացւոցն, և լինէր
փախստեայ այր յիւրաքանչիւր գաղա-
23 րս իւր: Եւ զԱմեսիայ արքայ [Յուդայ],
զորդի Յովասու, որդի Ոքոզիայ, ձեր-
բակալ առնէր արքայն Իղի ի Բեթ-
սամիւս և ածէր զնա յԵմ: Եւ քա-
կեաց նա ի պարսպաց անտի Եմի ի
դրանէ անտի Եփրեմի մինչ ի դուռն
անկեանն Փծ. կանգուն. և զամենայն 24
զոսկին և զարծաթն, զկահ և զկա-
րասի, որ գտաւ ի տան Տն և որ
Յաբեդովմայ, և զգանձս տանն ար-
քունի, և զորդիսն խառնակութեանց,
առ նա և դարձաւ ի Շամրին: Եւ եկաց 25
Ամեսիայ որդի Յովասու արքայի Յու-
դայ յետ մահուանն Յովասու արքային
Իղի զհնգետասան ամ: Եւ ամենայն 26
բանք Ամեսիայ, առաջինք և վերջինք,
ահաւասիկ գրեալ են ի ճառս Թագա-
ւորացն Յուդայ և Իղի:
Եւ ի ժամանակին իւրում յետս 27
եկաց Ամեսիայ ի Տէ, և ժողովեցան
ի վերայ նորա դաւող յԵմ, և փա-
խեաւ անկաւ նա ի Ղաքիս. և առա-
քեցին զկնի նորա ի Ղաքիս և սպա-
նին զնա անդէն ի վերայ ձիաստանի
անդ: Եւ թաղեցին զնա առ հարս 28
իւր ի քաղաքին Դաւթի:

## [ԻԶ.]

Եւ թագաւորեցուցին ամենայն ժո- 1
ղովք երկրին զՕզիա որդի նորա փո-
խանակ նորա. և նա էր ամաց իբրև
վեշտասան, և թագաւորեցուցին զնա
փոխանակ հաւր իւրոյ Ամեսիայ: Սա 2
ինքն եկն և շինեաց զԱյլիղաթ, սա
ինքն եկն և դարձոյց զնա անդրէն
առ Յուդայ յետ մահուան արքային.
և ինքն էր ամաց վեշտասանից, զի 3
թագաւորեցուցին զնա, և ամս Ծ.ևԲ.

18—19 զգձնիկն. արդ –ես ի մտի քում, թէ –– սատակեալ –– զԵդոմայեցիսն... ի տան քո–... բախել –– ընկերի... և սատակեսցիս | 20 Ամէսիա... ի Տնէ էր... զդիս Եդոմայեցւոյն | 21 Յովաս (–– «արքայ») Իղի | 22 և վա–թարեցաւ... այր իւրաքանչիւր ի գաղարս | 23 և զԱմեսիա չարքա Յ–– (պակասէ վրիպակաւ յՕ. մերում անուղղ, զոր յաւելաք ի բնագրին.) որդի Յովասու... մինչև ի | 24 և զկահ... ի տանն Այ և... ի Շամրնի | 25 յետ մահուանն Յովասու (Օ. մեր վրիպակաւ «Ամեսիայ» ունի, զոր ուղղագրեցաք.) արքաի Իղի | 26 ահաւասիկ գրեալ են ի գիրս թագաւորացն | 27 և ի ժամանակին իւրում... ձիաստանին անդ |
Գլ. ԻԶ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժան. գլխոյ՝ Փո. ԻԶ/ՃԲ | 2 զԱհիղաթ | 3 Յէքիէլա |

Թագաւորեաց նա յԵմ. և անուն մօր
4 նորա Յեքեղիայ յԵմէ: Եւ արար Ոզիայ
ուղղութիւն առաջի Տն ըստ ամե-
նայնի, որպէս և արար Ամեսիա հայր
5 նորա: Եւ խնդր-‖208 բ'‖-էր նա զՏր
յերկիւղ Տն յաւուրս Զաքարիայ, որ
ընդ նմայն շրջէր տեսլեամբ Այ, և
յաւուրս ամաց կենաց իւրոց, որ
խնդրէր նա զՏր, յաջողեալ էր նմա
6 Տն Այ: Եւ եկն ել Ոզիայ տալ պատե-
րազմ ընդ այլազգիսն, և քակեաց նա
զպարիսպն Գեթայ և զպարիսպն
Յաբնեայ և զպարիսպն Ազովտայ, և
շինեաց նա քաղաքս յԱզովտոս և ի
7 մէջ այլազգեացն: Եւ զօրացոյց զնա
Տր ի վերայ այլազգեացն և ի վերայ
Արաբացւոցն, որ բնակեալն էին ի
8 վիմին, և ի վերայ Մինեցւոցն: Եկին
բերին պատարագս Մինեցիքն Ոզիայ,
և էր անուն նորա մինչև յանցս ճա-
նապարհացն Եգիպտացւոց, զի զօ-
9 րացաւ մինչև ի վեր: Եւ շինեաց
Ոզիայ զաշտարակն յԵմ և զդուռն
անկեան և ի վերայ դրան անկեանն
և ի վերայ անկեանցն ձորոյն, և զօ-
10 րացոյց զնոսա: Եւ շինեաց նա զուրս
զուրս բազումս, զի գրաստ բազում
էր նորա ի Սեփելայ և ի Միսովր,
արդիւնարարք և այգեգործք ի լերինս
ի Կարմեղոս, զի այր արդիւնարա-
րասէր [էր] նա:

Եւ եղեն զաւրք Ոզիա պատերազ- 11
մողք, և թիւ հանդիսի նոցա ի ձեռն
Յայեղայ, որ աշխարհամար դպիր էր,
և ի ձեռն Ամասիա դատաւորի և ի
ձեռն Անանիայ երկրորդին արքայի:
Եւ ամենայն [թիւ] զաւրագլխաց տոհ- 12
մացն զաւրացն, որ ելանէին ի գործ
պատերազմի, երկու հազարք և վեց
հարիւրք. և ընդ նոսա զաւրք պա- 13
տերազմողք ՓԾ. հազար, և Է. հազար
և հինգ հարիւր այր, որ ի գործ պա-
տերազմի էր, ի թիկունս թագաւորին
ի վերայ թշնամեաց: Եւ պատրաստէր 14
Ոզիա արքայ ամենայն զաւրացն վա-
հանս և նիզակս և պատեանս և ա-
ղեղնակապարճս և պարսատիկս և
քարինս: Եւ արար Ոզիա յԵմ մեքե- 15
նայս խորհրդովք իմաստութեան, զի
լեցին ի վերայ աշտարակացն և ի վե-
րայ անկեանցն բաղխատս և վէմս մե-
ծամեծս: Եւ լու եղև պատրաստու-
թիւնն այն մինչև ի հեռաստան: Եւ 16
բարձրացաւ սիրտ նորա և մեծա-
մտեաց, դարձաւ յապականութիւն ա-
նաւրինել առաջի Տն. և եկն եմուտ
նա ի տաճարն Տն մատուցանել խուն-
կըս ի վերայ սեղանոյն խնկոց: Եւ 17
մտին զկնի նորա Զաքարիայ քահա-
նայապետ և ևթանասուն քահանայիւքն
հանդերձ որդւովքն մեծամեծաւք, հա- 18
սին կացին ի վերայ նորա և ասեն. ո՞չ

---

5 տեսլեամբ+... խնդրէր նա զՏր (Օ. մեր վրիպակաւ՝ «խնդրէր զնա Տր») | 6 Յաբնեա... յԱզովտա... յԱզովտոսն (թուի նոյն լինել ընդ նախընթացին.) | 7 Արաբացոցն որ բնակեալ... և ի Տր –մինացոցն (ի յաջորդ համար. Մ ի ն ե ց ի ք ունի և է. օ.) | 8 Մինեցիքն... Եգիպտացոցն | 9 և զդուռն | 10 և զ օ ր ա ց ո յ ց նա զուրս զուրս... ի Սեփելա և ի Մի–սովր արդիւնարարք (–––՝ «և») այգեգործք... և ի Կարմեղոս... արդիւնարարասէր էր. (բայց վերջին պակասէ յՕ. մերում՝ զուցէ վրիպակաւ ընդօրինակողաց. իսկ յէ. –––՝ «նա».) և | 11 Յայեղայ... Ամէսիայ | 12 և ամենայն [illegible] (–––՝ վրիպակաւ պակասէ յՕ. մերում.) զօրագլխաց... ԲՌ. և ՉՃ. | 13 ՅՃՌ. և ԷՃՌ. (–––՝ վրիպակաւ. իսկ Օ. մեր՝ «ՓԾ. հ ա զ ա ր և Է. հազար».) | 14 ամենայն (Օ. մեր՝ «յամենայն») զօրացն | 15 իմաստութեամբ... պատրաստութիւն | 17 Հ. քահանայիւք հանդերձ որդովքն մեծամեծաց | 19 նուիրելոցն |

եթէ քեզ Ոզիայ տուեալ է արկանել
խունկս Տն Այ, ‖208 բ²‖ այլ քահանա-
յիցն, որդւոցն Ահարոնի նուիրելոցն.
ել, ել ի սրբութենէ աստի, զի անցեր
զհրամանաւ Տն, և ոչ է քեզ այդ ի
փառաւորութիւն ի Տէ Այ քումմէ։
19 Եւ բարկացաւ Ոզիայ մինչդեռ ի ձե-
ռին ունէր զբուրվառն խնկոց, և
ընդ բարկանալ նորա քահանայիցն,
բուսաւ բորոտութիւն ի ճակատ
նորա ի տան Տն առաջի քահանա-
20 յիցն, ի վերայ սեղանոյն խնկոց։ Եւ
յարձակեցաւ ի վերայ նորա քահա-
նայապետն քահանայիւքն հանդերձ,
և տեսին, զի նա էր բորոտ պիսա-
կացեալ, և փութացուցին զնա ելա-
նել անտի. և ինքն իսկ փութացաւ
ելանել անտի, զի կշտամբեաց զնա Տր։
21 Եւ էր Ոզիա արքայ բորոտ սպիտա-
կացեալ զամենայն աւուրս կենաց իւ-
րոց, և նստաւ նա ի տանն Ափու-
սովր, զի մերժեցաւ նա յերեսաց Տն,
և Յեթամ որդի նորա ի վերայ թա-
գաւորութեան, և դատէր զժողովուրդ
22 երկրի նորա։ Եւ այլ բանք Ոզիայ,
առաջինք և վերջինք, աւասիկ գրեալ
են ի ճառս Եսայեա որդւոյ Ամովսայ
մարգարէի։
23 Եւ մեռաւ Ոզիայ, և թաղեցին զնա
առ հարս իւրում յագարակին գերեզ-
մա[նա]ցն թագաւորաց, զի ասացին,
թէ բորոտ է։ Եւ թագաւորեաց Յո-
վաթամ որդի նորա փոխանակ նորա։

[ԻԷ.]

Այր ամաց իբրև քսան և հնգից, 1
և վեշտասան ամ թագաւորեաց նա
յԵմ. և անուն մօր նորա Գերուսայ,
դուստր Սադովկայ։ Եւ գնայր Յով- 2
թամ ուղղութեամբ առաջի Տն ըստ
ամենայն գործոցն Ոզիայ հաւր նորա,
բայց միայն ի տաճար անդր Տն ոչ եմուտ.
և տակաւին ժողովուրդքն զմծեալ
էին։ Եւ ինքն շինեաց զդուռն տան Տն 3
բարձր, և ի պարսպի անդ Ովփղայ
շինեաց յոյժ. և զքաղաքն շինեաց յԵմ 4
աշտարակս բարձունս։ Եւ ինքն Յո- 5
վաթամ տայր պատերազմ ընդ թագա-
ւորսն որդւոցն Ամոնայ և յաղթէր
նոցա, և տային որդիքն Ամոնա ամի
ամի ի տուրս իւրում Ճ. քանքար
արծաթոյ և տասն հազար քոռ ցորե-
նոյ և տասն հազար քոռ գարւոյ. այս
մուրք էր, որ բերէր արքայն որդւոցն
Ամոնայ ամի ամի, և յամին երկրորդի
և երրորդի։ Եւ հզաւրանայր Յով- 6
թամ, զի հաստատեաց կազմեաց զճա-
նապարհս իւր առաջի Տն Այ իւրոյ։
Եւ այլ բանք Յովաթամայ և պատե- 7
րազ‖209 ա¹‖մունք և գործ նորա աւա-
սիկ գրեալ են ի գիրս ճառից թագա-
ւորացն Իղի և Յուդայ։ Եւ էր Յով- 8
թամ այր ամաց Ի. և հնգից, և թա-
գաւորեաց ի վերայ Իղի ամս ԺԶ։
Եւ ննջեաց Յովաթամ առ հարս 9
իւր, և թաղեցաւ նա ի քաղաքին

19 և ընդ բարկանալն... խնկոցն | 20 զի նա էր բորոտ ապիտակացեալ | 21 ի տան Նափուսովր... թագաւորութեան Նոր. և դատէր | 22 աշաւասիկ... մարգարէին | 23 և թաղեցառ հարս իւրում յագարակին գերեզմանացն... բորոտ էր. |

Գլ. ԻԷ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժանումն գլխոյ՝ Փռ. ԻԵ/ԺԴ. | 1 Անանջատ և միայար ընդ նախընթացին ունի զբանդ Օ. մր. | Այր իբրև ամաց... և ԶԺ. ամ | 2 ի տաճար (Նոր.՝ «անդր») Տն... զմծեալ | 3 զդուռն | 5 որդիքն Ամոնա (Նոր. և Ձեռ.) ամի ամի... որդոցն (ուղղագոյն են՝ յորդւոցն) Ամոնայ ամի ամի. (Աշտէն ի նոր տողէ ունի Օ. մր.) | 6 Այ իւր և | 7 և գործք նորա աշաւասիկ | 8 այր Նոր. ամաց Ի. և Ե. ից... ամս ԺԶ. ամ |

Դաւթի։ Եւ թագաւորեաց Աքազ որդի նորա փոխանակ նորա։

## [ԻԸ.]

1 Եւ էր Աքազ իբրեւ ամաց Ի., և
թագաւորեաց նա ի վերայ Եմի ամս
իբրեւ վեշտասան։ Ոչ արար նա ուղ-
ղութիւն առաջի Տն իբրեւ Դաւիթ
2 հայր նորա, այլ գնաց Աքազ ըստ
ճանապարհաց թագաւորացն Իղի.
քանզի և կուռս ձուլածոյս կանգնեաց
3 նա ի Բաահղիմ, և զոհս մատուցանէր
նա ի ձորն Բենենովմայ, և շրջեցու-
ցանէր նա զորդիս իւր և զորդիսն
որդւոցն Իղի ըստ ամենայն բարձունս,
4 և անդ խունկս արկանէր և ի վերայ
տանեաց և ի ներքոյ ամենայն անտա-
ռաց և ի ներքոյ ամենայն ծառոց
5 փարթամաց։ Եւ մատնեաց զնա Տր
Ած ի ձեռս թագաւորին Ասորւոց, և
սատակեաց նովաւ յաշխարհի սատա-
կումն մեծ, և գերեաց գերութիւն
յոյժ և վարեաց ած զգերին ամե-
նայն ի քաղաքն ի Դամասկոս։ Եւ ի
ձեռս թագաւորին Իէղացւոց մատ-
նեաց զնա Տր և սատակեաց զնա ի
6 սատակումն մեծ հարուածոյ. և սպան
Փակէէ, որդին Ռոմելայ, արքայ Իղի
ի տանէն Յուդայ, յաւուր միում ճի.
հազար արս հզաւրս պատերազմողս,
փոխանակ զի թողին նոքա զՏր Ած
7 հարցն իւրեանց։ Եւ անդ սպանանէր
Զեքրիա հզաւրն Եփրեմայ զՄանասէ,
զորդին արքայի, և զԵզրիա զաւրա-
գլուխ նորա, և զԵղկանայ զերկրորդ
թագաւորին։ Եւ ի գերութիւն վա- 8
րեցին որդիքն Իղի յեղբարց նոցա
երկերիւր հազար կին և զուստերս և
զդստերս, և աւար բազում յոյժ առին
ի նոցանէ և բերին զաւարն ամենայն
ի Շամրին։ Եւ անդ էր մարգարէ մի 9
Տն Ովդիթ անուն, և ել նա ընդ ա-
ռաջ զաւրացն մինչ գային գեռ ի
Շամրին, և ասէ ցնոսա. ահաւասիկ
բարկութիւն Տն Այ հարցն մերոց ի
վերայ Յուդայ, և մատնեաց զնոսա
ի ձեռս ձեր, և կոտորեցէք դուք
զնոսա մեծաւ բարկութեամբ, և ել
աղաղակն այն մինչեւ յերկինս։ Եւ արդ, 10
որդիք Յուդայ և Եմ, դուք ասէք,
թէ ստացայք մեք ի ծառայութիւն
և յաղախնութիւն, այլ ես աւասիկ
իբր ոչ թէ ոչ եկից ես ընդ ձեզ.
ուխտէ ընդ ձեզ Տր Ած ձեր, զի մեղք
ընդ ձեզ են առ Տր Ած ձեր։ Արդ 11
լուարուք ||209 Ա²|| դուք ինձ և դար-
ձուցէք զգերութիւնդ, զոր գերեցէք
դուք յեղբարցն ձերոց, զի սրտմտու-
թիւն բարկութեան Տն է ի վերայ
ձեր։ Յոտն կացին իշխանքն յորդւոցն 12
Եփրեմայ Ազարիա Ովսանեանց և
Բաքիամայ Ասաղեմովթեանց և Եզե-
կիայ Սեղեմեանց և Ամասիա Փաղե-
ղեանց, և հասին ի վերայ այնոցիկ,
որ գային ի պատերազմէ անտի,

---

Գլ. ԻԸ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ Ցռ. ԻԸ/ԺԴ. | 1 Անանջատ և միայար ընդ նախընթացին ունի զբանդ Օ. մր. | իբրեւ ըԴաւիթ | 2 ի Բաահ-ղիմ | 3 Բենէովման | 4 խունկ | 5 ամենայն ի քաղաքն (Օ. մր՝ ։յամենայն քաղաքն) Դամասկոս և ի ձեռն թ. Իէղացոյն... մեծ-մեծ հարուածոյ | 6 որդի Հ. արքայ Իղի... և պատերազմողս | 7 Եփրեմի... զորդին արքայի (Ա-րէն ի նոր տողէ ունի Օ. մր.) և զԵզրի | 8 և բերէին | 9 մինչ գ և ռ գային... և ասէ ցնոսա (Ա-րէն ի նոր տողէ ունի Օ. մր.) ահաւասիկ | 10 ասէք եթէ... ոչ եթէ ոչ... ձեզ -ու- ուխտէ | 11 զոր գերեցէք | 12 Յովանանեանց և Բաքիամայ Սաղեմովթեանց... Սեղեմեանց |

13 և ասեն ցնոսա. մի ածէք ի ներքս
զգերութիւնդ առ մեզ, զառ յանցա-
նելն առ Տր զոր դուք ես մեղս ի մեղաց
վերայ յաւելուք և ի վերայ աղխտու-
թեանց մերոց, զի բազում են մեղք
մեր և մեծ է բարկութիւն սրտմտու-
14 թեան Տն ի վերայ Իղի: Եւ ի բաց
կացին վաղվաղակի արք պատերազ-
մին, որ ածէին զգերին, և թողին
զաւարն առաջի իշխանացն իւրեանց
և առաջի ամենայն ժողովրդեանն:
15 Եւ մատեան արքն այն, որ անուա-
նեցան յառաջ, հասին ի վերայ գե-
րութեանն, և առ[ին] ի կապուտ
կողոպտածոյ անտի աւարին, և զգե-
ցուցանէին զմերկութիւն գերեացն,
և ագուցանէին զոտս նոցա. և
անդէն ի նմին վայրի վաղվաղակի
տային ուտել և ըմպել նոցա, և ա-
ծանէին և հանգուցանէին զնոսա, և
բառնային զտկարս նոցա գրաստու,
և հասուցանէին զնոսա ի քաղաքն
Փիւնիկեցւոց առ եղբարս իւրեանց,
և դարձուցանէին զնոսա անդէն ի
Շամրին:
16 Ի ժամանակին յայնմիկ առաքեաց
Աքազ առ արքայն Ասորոց, զի աւգ-
17 նական լիցի նմա: Եւ յայնմ ժամա-
նակի Եդովմայեցիք յարուցեալ հասա-
նէին հարկանել զՅուդայ, հարկանէին
18 վանէին գերէին գերութիւն մեծ: Եւ
այլազգիքն հասեալ էին ի վերայ քա-
ղաքացն դաշտացն ի կողմանցն արե-
մտից ի վերայ Յուդայ, և առին նո-
քա զԲեթսամիւս և զԵղոմն և
զԳադերովթն և Սոկովթն և զգիւ-
ղաքաղաքս նոցա, և զԹամնային և
զգիւղաքաղաքս իւր, զԳամզոյն և
զգիւղաքաղաքս իւր, և բնակեցան
նոքա անդէն ի նոսին: Զի նկուն ա- 19
րար Տր զՅուդայ վասն Աքազու ար-
քային Հրէաստանեաց, փոխանակ զի
յայանեցան Յուդայ և ապստամբեցան
ապստամբութիւն ի Տէ: Եւ եկն ի 20
վերայ Աքազու Թէկղաթ Փաղասար,
արքայ Ասորոց, և անդէն ստամբեաց
զնա: Թէպէտ և առ Աքազ զգանձն 21
ի տանէ Տն և զգանձս իշխանացն
զաւառացն, և ետ նա զայն Թագա-
ւորին Ասորոց, սակայն յօգնել ա-
գուտ ‖209 բ'‖ լինէր նմա, բայց եթէ 22
յաւելուր ի նեղութիւն նորա: Եւ
յաւել ես Աքազ յեսս կալ ի Տէ.
խաւսել սկսաւ և ասէ. խնդրեցից 23
ես զդիսն Դամասկացւոց, որ եկեալ
հարկանեն զիս. և ասէ, եթէ դիքն
արքային Ասորւոց զաւրացեալ են ի
վերայ նորա. արդ եկայք մատուսցուք
նոցա աղջամկէզս, և աւգնեսցեն մեզ:
Զի նոքա եղեն նմա խաչ ընդ ակն և
խաչ ընդ յաւն ամենայն Իղի:
Եւ ժողովեաց յեսս Աքազ զամենայն 24
Իէղ, և զսպասս տան Տն կոտորէր
բաշխէր զամենայն, և խնդր զդրունս
տանն Տն, և առնէր անդ բագինս
բագինս, անկեան անկեան Եմի: Եւ 25

---

13 զէ առ յանցանելն... ես զմեղս | 15 և առ[ի]ն ի կապուտ... և զգեցուցին... և հասուցանէին զնոսա ե-ղե-ղ-ն ի քաղաքն | 16 Աքազ (գ-ն--ե՝ «առ») արքայն | 17 Եդոմայիքն | 18 դաշտացն (Օ. մեր՝ «դաշտնայն»)... և զԵղոմն և զԳադերովթն և զՍոկկովթն և զգեղաքաղաքս (-յ-դե- և է ներ-յ.) նոցա և զԹամնան... և զԳամզոյն | 19 նկուն | 20 Թ-կղաթ Փաղասար | 21 զանձն... և զգանձն... և ետ (գ-ն--ե՝ «նա») զայն | 22 յաւել-ուր ի նեղութիւն (գ-ն--ե՝ «նորա»). և յաւել | 23 հարկանեն (գ-ն--ե՝ «զիս») և ասէ... և խաղընդամն (-յ-դե-՝ փոխպակաւ.) | 24 Աքազ յեսս... և խն-դր | 25 ստարատոց |

յամենայն քաղաքս Յուդայ առնէր
բարձունս խունկ արկանել դիցն օտա-
րաց, բարկացուցանել զՏէր Ած
26 հարցն իւրոց։ Եւ այլ բանք Աքազու
և գործք նորա, առաջինք և վերջինք,
ահաւասիկ գրեալ են ի մատեան Թագաւո-
րացն Յուդայ և Իսրայէլի։
Եւ ննջեաց Աքազ ընդ հարս իւր,
և թաղեցաւ նա ի քաղաքին Դաւ-
թի. և ոչ մուծին զնա ի ներքս, զի
գերեզմանք էին թագաւորացն։
Եւ թագաւորեաց Եզեկիա որդի
նորա ընդ նորա։

## [ԻԹ.]

1 Այր ամաց Ի. և հնգից, և Ի. և Թ.
ամ թագաւորեաց յԵմ. և անուն մօր
նորա Աբիայ, դուստր Զաքարեայ։
2 Եւ արար ուղղութիւն Եզեկիայ ա-
ռաջի Տն ըստ ամենայնի, որ ինչ ա-
րար Դաւիթ հայր նորա։
3 Եւ եղև իբրև հաստատեցաւ Եզե-
կիայ յարքայութեան իւրում, յամ-
սեանն առաջնում բանայր նա զդրու-
նս տանն Տն, և զարդարէր զնոսա։
4 Եւ ածէր ի ներքս զքահանայսն և
զՂևտացիս և կայուցանէր զնոսա ի
5 կողմն արևելից, և ասէ ցնոսա.
Լուարուք, Ղևտացիք, արդ սրբեցա-
րուք և սրբեցէք զտուն Տն Այ հարցն
մերոց և ի բաց հանէք զամենայն
պղծութիւնս ի սրբութենէ այտի.
զի յետս կացին հարքն մեր և արա- 6
րին չարիս առաջի Տն Այ մերոյ, և
թողին զնա և դարձուցին զերեսս իւ-
րեանց ի վրանէն վկայութեանց Տն,
և փակեցին զդրունս տաճարին, և 7
շիջուցին զճրագունսն, և խունկս ոչ
խնկեցին նոքա, և ողջակէզս ոչ մա-
տուցին Այ սրբոյն Իղի։ Եւ եղև 8
սրտմտութիւն բարկութեան Տն ի
վերայ Յուդայ և ի վերայ Եմի, և
մատնեաց զնոսա [ի] յիմարութիւն
և յապականութիւն և ի զարմանա-
լիս և [ի] շչիւն, որպէս և դուք իսկ
տեսանէք աչօք ձերովք։ Եւ ահա- 9
ւասիկ անկան հարքն ձեր ի սուր, և
որդիքն ձեր և դստ-‖209 Բ²‖-երք ձեր ի
գերութիւն մատնեցան յերկիր, որ ոչ
իւրեանց էր։
Վասն այսր ամենայնի եղ[ի] ի մտի 10
խնամ դնել զուխտս զայս ընդ Տն Այ
Իղի, զի դարձուսցէ ի մէնջ զսրտ-
մտութիւն բարկութեան իւրոյ։ Եւ 11
արդ մի պակասիցէք առնել առաջի
Տն, կանխել կալ դուք առաջի նորա
պաշտել, խունկս արկանել։ Յոտն կա- 12
ցին փաղփաղակի Ղևտացիքն Մաաթ
Ամասեանց և Յովէլ Ազարիանց, յոր-
դւոյն Մերարեայ, և Կիս Աբդեանց
և Ազարիայն Յադայելեանցն, և յոր-
դւոյն Գերսոնեան Յուդա Ազեմայեանց
և Յովադան Յովաքեանց, և յորդւոյն 13
Եղիսափան Ամրի և Յէիէլ, և յոր-
դւոյն Ասափայ Զաքարիայ և Մաթ-

---

Գլ. ԻԹ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ Ֆո. ԻԹ/ՃԻ | 1 Անանչաւ և միայար ընդ նախընթացին ունի զբանդ Օ. մեր. | 4 և զՂևտացիսն... արևելից | 5 և ասէ ցնոսա (Ա-ԴԷՆ ի Նոր տողէ ունի Օ. մեր) զտունն... անտի | 6 չչարիս | 8 մատնեաց զնոսա ; յիմարութիւն և յապականութիւն և ; շչիւն | 9 և որդիք | 10 եղէ (Օ. մեր փոփոխեալ՝ «եղ») ի մտի | 11 կանխեալ | 12 Մաաթ Ամասեանց (Օ. մեր՝ «Մաաթամ Ասենց», զոր եդաք համաձայն Է. օրինակին.) և Յովէլ Նազարեանց և Կիսնարանեանց և Ազարիայն Յադաելեանց և յորդոցն Գէրսոնեայ Յուդա Յաղեմանեանց և Յովադայնն 13 Եղիսափանա Մաի (Օ. մեր՝ «Եղիսափանամարի») և Յ. |

14 Թանիայ, և յորդւոցն Եմանայ Յէիէլ
և Սէմէի, և յորդւոցն Իդիթումայ Սա-
15 մէիայ և Ոզիէլ. և ժողովեցին զեղ-
բարս իւրեանց, և սրբեցան և սըր-
բեցին ըստ պատուիրանին Եզեկիայ
արքայի ի հրաման Տն, զի սրբեսցեն
16 զտունն Տն Այ։ Եւ եկին մտին քա-
հանայքն ի տուն Տն Այ սրբել զնա,
և հանին անտի զամենայն պղծու-
թիւնս, զոր գտին ի ներքս ի սրահի
անդ, և պեղեցին հանին անտի ար-
17 տաքս ի հեղեղատն ի Կեդրոն։ Եւ
յաւուրն առաջնում ամսոյն առաջնոյ
սրբեցին, և յաւուրն ութերորդի եկին
մտին ի ներքս ի տաճար անդր Տն
և սրբեցին զտունն Տն աւուրս ութ,
և յաւուրն վեշտասաներորդի յամ-
18 սեանն առաջնում կատարեցին։ Եւ
եկին մտին ի ներքս առ Եզեկիայ
արքայ և ասեն ցնա. սրբեցաք մեք
զամենայն ինչ, որ ի տանն Տն էր, և
սեղանն ողջակիզացն և զամենայն
սպաս նորա, և զսեղան հանապազոր-
19 դայն և զամենայն սպաս նորա, և
զամենայն կահն և զկարասին, զոր
առաքեաց յարքայութեան իւրում ի
յետս կալն իւրում, կազմեցաք սրբե-
ցաք մեք անդրէն, և ահաւասիկ ե-
20 դեալ կնի առաջի սեղանոյ Տն։ Եւ
կանխեաց ընդ առաւաւտն Եզեկիայ
արքայ և ժողովեաց նա զիշխանս
քաղաքին, և եկն ել ի տաճարն Տն։

Եւ անդ մատուցանէր զողջակէզս 21
պատարագացն զուարակս եւթն և
խոյս եւթն և գառինս եւթն և նո-
խազս եւթն և զվասն մեղաց արքա-
յին և զվասն սրբութեանն Յդի։
Խաւսել սկսաւ Եզեկիայ ընդ որ- 22
դւոցն Ահարոնի և ընդ քահանայսն,
զի մատուսցեն զպատարագս ի սեղան
Տն։ Եւ մատեան զենուլ քահանայքն
զզուարակսն, և ընկալան զարիւնն
և ‖210 Ա՛‖ հեղուին առ սեղանովն, և
զենուին զխոյսն և հեղուին զարիւնն
ի վերայ սեղանոյն, և զենուին զգա- 23
ռինսն [եւ հեղուին զարիւն ի վերայ
սեղանոյն, եւ զենուին զնոխազն], որ
վասն մեղացն էր առաջի թագաւորին
և ժողովրդեանն, և դնէին զձեռս ի-
րեանց ի վերայ նոցա և ցանէին 24
զարիւն նոցա առ սեղանովն և ի վե-
րայ ժողովրդեանն առ ի քաւութիւն
ամենայն Իէղացւոցն, զի վասն ամե-
նայն Իէղացւոցն պատուիրեաց թա-
գաւորն մատուցանել զողջակէզսն եւ
վասն մեղացն։ Եւ կացոյց զՂևտացիսն 25
ի տաճարին Տն ի փողս և ի քնարս
և թմբուկս ըստ պատուիրանին Դաւ-
թի արքայի, և զԳադ տեսանողն
արքայի, և զՆաթան մարգարէ պա-
տուիրանաւն Տն հրաման էր ի ձեռն
մարգարէիցն նորա, և Ղևտացիքն ի 26
սրինգս իւրեանց, և քահանայքն ի
փողս իւրեանց։ Եւ հրաման ետ Եզե- 27

---

14 և յորդոյն Նէէմանայ... Իդիթմայ | 15 զեղբարս | 16 անտի (ջնջված «զամենայն») պղծութիւնսն... ի սրահին... ի Կեդրոն | 17 ամսեան... աւուրս Ը. (Անդէն ի նոր տողէ սկսի Օ. մր.) | 18 և ասեն ցնայ (Անդէն ի նոր տողէ սկսի Օ. մր.)... և զսեղանն ողջակիզաց... և զսեղանն | 19 կահ և կարասին զոր առաքեաց յարքայութեան իւրում ի յետս կալն իւրում (պակաս ինչ թուի լինել ստորակէտին օրինակն.)... և աշխատին | 21 զուարակս Է... Է... Է... Է | 22 Եզեկիա ընդ որդւոցն Ահ՟ոնի և ընդ քահանայսն ջնջված Ահարոնի... զի ...զպատարագն... զարիւն | 23 և զենուին զզուարակն և հեղուին զարիւն ի վերայ սեղանոյն, և զենուին զնոխազն (սխալմամբ ընդօրինակողաց պակասեն յՕ. մերում Նորագիւտ, զորս յաւելաք ի բնագրին.) որ վասն մեղացն | 24 զարիւնն... առ ի քաւութ... և վասն մեղացն | 25 և ի թմբուկս... պատուիրանաւ... հրամայէր... մարգարէից | 27 զողջա-

կիայ նուագանել դնել զողջակէզն ի
վերայ սեղանոյն. իբրև սկսան մատու-
ցանել զողջակէզն պատարագացն,
սկսան աւրհնել ի ձայն փողոյն և ի
ձայն սրնգին արքային Իէղայւոյ:
28 Եւ ամենայն ժողովուրդն անկեալ եր-
կիրպագանէին, և աւրհնիչքն աւրհ-
նէին, և փողքն գոչէին մինչ ի կա-
29 տարել պատարագացն: Իբր եկուլին ի
վեր զպատարագսն, խոնարհեցաւ թա-
գաւորն, երկիրպագանէր և ամենայն
30 ժողովուրդն [ընդ] նմա: Եւ ասէ
Եզեկիայ արքայ և իշխանքն ցՂևտա-
ցիսն, զի աւրհնեսցեն բանիւ ըստ
աւրհնութեանն Դաւթի և Ասափայ
մարգարէի. և աւրհնէին ցնծութեամբ
և ուրախութեամբ, և անկանէին ա-
մենեքեան խոնարհ երկիրպագանէին:
31 Ապա խաւսել սկսաւ Եզեկիա և ա-
սէ. այժմիկ կատարեցէք զձեռս ձեր.
արդ բերէք և դուք մատուցէք պա-
տարագս աւրհնութեան ի տուն Տն:
Եւ ամենեքին յաւժարութեամբ սրտիւ
32 բերին մատուցանել զպատարագս: Եւ
եղև թիւ ողջակիզացն, զոր ժողո-
վուրդքն մատուցանէին, զուարակք
եւթանասուն, խոյք իբրև հարիւր,
գառինք երկերիւր յողջակէզս պատա-
33 րագաց Տն: Եւ որ նուիրեալ զուա-
րակքն էին Ջ. հարիւր, և ոչխարք
34 ԳՌարք: Սակայն և քահանայքն սա-
կաւք էին և ոչ էին բաւական առ
այնչափ ողջակէզս պատարագաց: Ապա
յաւգնականութիւն եկին նոցա եղ-
բարք իւրեանց Ղևտացիքն, մինչև ա-
ուլին մատուցին զպատարագսն, և կա-
տարեցաւ գործ ողջակիզացն մինչև
սրբեցան նուիրեցան և քահանայքն.
զի Ղևտացիքն յառաջագոյն ևս սըր-
բեցան քան զքահանայսն: Եւ ողջա- 35
կէզք պատարագացն բազումք էին յոյժ
ճարպովքն ||210 Ա²|| կատարելովք և զո-
հիւքն ողջակիզացն: Եւ կազմեցաւ
պատրաստեցաւ գործն ի տուն Տն, և 36
ուրախ եղև Եզեկիայ և ամենայն ժո-
ղովուրդն վասն պատրաստութեան
ապասուն Տն, զի յանկարծակի իմն
կատարեցաւ բանն հրամանին:

## [Լ.]

Ապա առաքեաց Եզեկիայ արքայ 1
ընդ ամենայն Իէղ և ընդ Յուդայ,
հրովարտակս արձակեցին յԵփրեմ և
ի Մանասէ գալ հասանել ի տուն Տն
յԵմ, զի արասցեն անդ զպասէքն Տն
Այ Իղի: Եւ հայեցաւ թագաւորն և 2
իշխանքն և ամենայն ժողովուրդքն
առնել զպասէքն յԵմ յամսեանն երկ-
րորդի, զի ոչ կարէին առնել զնա 3
յամսեանն առաջնում ի ժամանակին
յայնմիկ, զի քահանայքն չև էին սըր-
բեալ և ոչ էին բաւական, և ժողո-
վուրդն չև էին ժողովեալ յԵմ: Եւ 4
հաճոյ թուեցաւ բանն թագաւորին
առաջի ամենայն ժողովրդոյն, և հաս- 5
տատեցին զբանն, զի գնասցեն պա-
տուիրանքն ընդ ամենայն Իէղ, ի

---

կէզն... ի վերայ սեղանոյն. (Աւելի ի Նոր տողէ ունի Օ. ձեռ.) և իբրև... զողջակէզն | 29 Եւ իբրև եկուլին... ընդ նմա | 30 բանիւք | 31 պատարագ օրհնութեան... և ամենեքեան... բերէին | 33 և որ նուիրել ՉՌ. Սակայն | 34 ողջակէզսն պատարագացն... եղբարքն... գործն... սրբեցան և նուիրեցան | 35 պատարագաց | 36 ապասուն Այ զի |

ԳԼ. Լ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Թռ. Լ. | 1 արձակեցին Եփրեմ և Մանասէ (-յ-ղէ- յերկոսին օրինակսն՝ առանց նախդրաց, զորս մեղէն յաւելաք) | 3 ի ժամանակի | 5 պատուիրակք... ժողով—րդք |

Դանա մինչև ցԲերսաբէէ, զի եկեսցեն
հասցեն յԵմ ամենայն ժողովք։ Եւ ա-
6 րարին այնպէս ըստ գրոյ սուրհան-
դակքն, որ տանէին զհրովարտակս
արքունի և իշխանացն առ ամենայն
Իէղ և Յուդայ ըստ հրամանի արքու-
նի, և ասեն. [որդիք Իղի,] դարձա-
րուք ի Տր ԱԾ Աբրահամու, Իսահա-
կայ և Յակոբայ, և դարձցի Տր նո-
րոգել զմնացեալսդ ի հարուածոյ ան-
տի ձեռացն արքային Ասորեստանեայց։
7 Եւ մի լինիք դուք որպէս հարքն
ձեր և եղբարքն ձեր, որ յետս կացին
և ապստամբ եղեն ի Տէ Այ հարցն
իւրեանց, և մատնեաց զնոսա յաւեր
և յապականութիւն, որպէս դուքդ
8 իսկ տեսանէք։ Եւ մի խստացուցանէք
զպարանոցս ձեր, որպէս հարքն ձեր.
տուք զփառս Տն Այ, եկայք մտէք ի
սրբութիւն նորա, զոր սրբեաց յա-
ւիտեանս ծառայել Տն Այ ձերոյ, զի
և դուք եղիջիք ծառայել Տն Այ ձե-
րում, և դարձուսցէ ի ձէնջ զսրտ-
9 մտութիւն բարկութեան իւրոյ։ Զի ի
դառնալ ձեր առ Տր, և եղբարքն
ձեր և որդիքն ձեր գտցեն զողորմու-
թիւն առաջի ամենայն գերչաց նոցա,
և դարձուսցէ զնոսա յերկիր յայս. և
ողորմած և գթած է Տր ԱԾ մեր, և
ոչ դարձուսցանէ զերեսս իւր ի մէնջ,
10 եթէ մեք դարձցուք առ նա։ Եւ ըն-
թանային սուրհանդակքն քաղաքէ ի
քաղաք, և ընդ լեառն Եփրեմ և Մա-
նասէ, մինչև [ի] Զաբուղոն, և լինէր
իբրև զի ծիծաղէին զնոքաւք և ու-
չքս առնէին և արհամարհէին զնոսա։
Բայց միայն արք յԱսերայ և ի Մա- 11
նասէ և ի Զաբուղոնէ [խորշեցան]
ի հրամանէ անտի և ‖210 բ'‖ եկին յԵմ։
Եւ ի վերայ Յուդայ եղև ձեռն Տն 12
տալ նոցա սիրտ մի, գալ երանել յԵմ
ըստ հրամանին արքունի և իշխանա-
ցըն բանիւ Տն։ Եւ ժողովեցան յԵմ 13
ժողովուրդք բազումք առնել կատա-
րել զտօնն տարեկանաց բաղարջա-
կերացն յամսեանն երկրորդում ժողո-
վըրդեամբ բազմաւ։ Արդ յարեան 14
քակեցին զբագինսն, որ յԵմ լինեալ
էր, ի մատուցանել զխունկս իւրեանց
սնոտեացն, կործանեցին և կրեցին ի
հեղեղատն ի Կեդրոնի։ Եւ զենին զպա- 15
սեքն յաւուրն չորեքտասաներորդի
ամսեանն երկրորդի, և քահանայք և
Ղևտացիք զղջացան և սրբեցան և
մատուցին պատարագս ի տան Տն։
Եւ անցին կացին ի կարգս իւրեանց 16
ըստ պատուիրանին Մովսէսի առն Այ,
և քահանայքն ընդունէին զարիւնն
ի ձեռացն Ղևտացւոց։ Զի բազմու- 17
թիւն էր ժողովրդոցն և չէին սըր-
բեալք, և Ղևտացիքն էին ի զենուլ
զպասեքն ամենայնի, որ ոչն կարէին
սրբել ի նուէրս Տն. զի մեծ մասն 18
ժողովրդեանն յԵփրեմայ և ի Մանասէէ

---

6 ըստ հրամանին ա. և ասեն, որդիք Իղի, (պակասեն յՕ. միայն Նատրագիրքդ.) դարձարուք առ Տր ԱԾ Աբրահամու | 8 որպէս և հարքն… փառս… և եկայք… Այ ձերում (գրեթէ՝ զի և դուք եղիջիք ծառայել Տն Այ ձերում) և դարձուսցէ | 10 մինչև ի Զաբուղոն | 11 և ի Զաբուղոնէ խորշեցան (յՕ. միայն պակասէ բայց, զոր յաւելաք ի բնագրէն.) ի հրամանէ | 12—13 ըստ հրամանի ա. և իշխանաց նոցա և բանիւ Տն (գրեթէ՝ «և») ժողովեցան… զտօն | 14 յարուցեալ …ի մատուցանել (Օ. մէր «և մատուցանել») զխունկսն… և կործանեցին (գրեթէ՝ «և») կրեցին… ի Կեդրոն | 15 զպասեքն… ամսեան… և քահանայքն և Ղևտացիքն… և սրբեցան (գրեթէ՝ «և») մատուցին… ի տուն | 16 ի կարգս իւրեանց ըստ կարգին իւրեանց ըստ պատուիրանին Մովսէսի …Ղևտացոցն | 17 և ոչ էին սրբեալք | 18 և ի Սաբարա… սկսաւ Եզեկիա կալ յաղօթս վասն

և [յ]Իսաքարայ և ի Զաբուղոնէ ոչ
սրբեցան, այլ կերան զպասեքն զայն
արտաքոյ գրոյն. ապա սկսաւ կալ
յաղօթս Եզեկիայ վասն նոցա և ա-
սէ. Տէր Ած սուրբ, քաղցր և բարերար,
19 լեր դու փրկիչ և քաւիչ ի վերայ ա-
մենայն սրտից, որ ուղղեալ են խնդ-
րել զՏէր Ած հարցն իւրեանց, և ոչ
20 որպէս ըստ սրբութեան սրբոցն: Եւ
լուաւ Տէր Եզեկիայ, և քաւեաց զժո-
21 ղովուրդն: Եւ արարին որդիքն Իղի,
որ գտան յԵմ, զտաւնն տարեկանաց
բաղարջակերացն աւուրս եւթն ցըն-
ծութեամբ և ուրախութեամբ բազ-
մաւ, և օրհնէին զՏր աւր ըստ աւրէ,
և Ղեւտացիքն և քահանայք ի սրինգ
մեծաբարբառ Տն Այ:
22 Եւ խաւսել սկսաւ Եզեկիայ ի սիր-
տըս Ղեւտացւոցն և յամենայն, որ
իմանային բարեաւ իմաստութեամբ
զՏէ: Եւ կատարեցին զտաւնն տարե-
կանացն բաղարջակերաց յեւթն աւր,
զենուին զողջակէզս պատարագացն
փրկութեանն և զխոստովանութեան
Տն Այ հարցն իւրեանց:
23 Ապա խորհեցան խորհուրդ ամենայն
ժողովքն առնել եւթն ևս այլ աւր.
և արարին աւուրս եւթն ևս այլ
24 ուրախութիւն մեծ: Զի Եզեկիա ար-
քայ Հրէաստանի սկսաւ ժողովրդեանն
գործել հաց յեւթն հազար զուարակէ
և յեւթն հազար ոչխարէ, և իշխանքն
ի նոյն նպաստ մատուցանէին վասն
ժողովրդոցն ի հազար զուարակէ և
ի ԺՌ. ոչխարէ, և սրբեցան ի քահա-
նայից անտի բազումք: ‖210 բ²‖ Եւ ու- 25
րախ եղեն քահանայքն և Ղեւտացիք
և ամենայն ժողովուրդքն, որ եկեալ
էին յԻէղէ, և որ եկքն և պանդուխտք
էին եկեալ յերկրէն Իէղէ, և բնա-
կիչքն Յուդայ: Եւ եղև ուրախու- 26
թիւն մեծ յԵմ, որ ոչ եղև երբեք
յաւուրն Սողոմոնի արքայի, որդւոյ
Դաւթի արքային Իղի, այսպիսի տաւն
ուրախութեան յԵմ:
Ապա յոտն կացին քահանայքն և 27
Ղեւտացիքն, աւրհնէին զժողովուրդն,
և լսելի եղև ձայն բարբառոյ նոցա,
և ելին մտին աղաւթք նոցա առաջի
սրբութեան բնակութեանն Այ յերկինս:

## [ԼԱ.]

Եւ իբրև կատարեցին զայն ամե- 1
նայն, ելին ամենայն Իէղացիքն, որ
գտան ի քաղաքսն Յուդայ, սկսան
խորտակել զարձանսն, և կոտորել զան-
տառս, և կործանել զբարձունս, և
տապալել զբագինս յամենայն երկրէն
Հրէաստանի և Բէնիամենն և յԵփրեմ
և Մանասէ մինչև ի վախճան. և գնա-
ցին այր Իէղեան յիւրաքանչիւր ժա-
ռանգութիւն և քաղաքս իւրեանց:
Ապա կարգեաց Եզեկիայ զկարգս 2
շաբաթաւորաց քահանայիցն և Ղե-
ւտացւոց և զիւրաքանչիւր կարգս

---

նոցա և ասէ. (Աստէն ի Նոր տաղէ ունի Օ. մեր.)... քաւիչ և փրկիչ | 19 հարցն նոցա և | 21 և քահանայքն... մեծայբարբառ | 22 իմաստութեամբ բարեաւ... և կատարեցին (Կողմէ՝ «զտաւնն») տարեկանացն բաղարջակերացն | 23 ժողովուրդքն | 24 վասն ժողովրդոց | 25 եկք... և բնակիչք | 26 յաւուրցն (Օ. մեր՝ «յաւուրքն») Սողոմոնի | 27 Եւ ապա յոտն կացին |

Գլ. ԼԱ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Փռ. ԼԱ. | 1 զայս... զարձանս... և կործանել զբագինս և տապալել զբարձունս ամենայն յերկրէ Հրէաստանէ... և Մանասէ (Կողմէ՝ «մինչև ի վախճան») և գնացին այր Իղէ... և ի քաղաքս | 2 և Ղեւտացւոցն... սրահին տան |

Դանա մինչև ցԲերսաբէէ, զի եկեսցեն
հասցեն յԵմ ամենայն ժողովք։ Եւ ա-
6 րարին այնպէս ըստ գրոյ սուրհան-
դակքն, որ տանէին զհրովարտակս
արքունի և իշխանացն առ ամենայն
Իէղ և Յուդայ ըստ հրամանի արքու-
նի, և ասէն. [որդիք Իղի,] դարձա-
րուք ի Տր ԱԾ Աբրահամու, Իսահա-
կայ և Յակոբայ, և դարձցի Տր նա-
րօդել զմնացեալսդ ի հարուածոյ ան-
տի ձեռացն արքային Ասորեստանեաց։
7 Եւ մի լինիք դուք որպէս հարքն
ձեր և եղբարքն ձեր, որ յետս կացին
և ապստամբ եղեն ի Տէ Այ հարցն
իւրեանց, և մատնեաց զնոսա յաւեր
և յապականութիւն, որպէս դուքդ
8 իսկ տեսանէք։ Եւ մի խստացուցանէք
զպարանոցս ձեր, որպէս հարքն ձեր.
տուք զփառս Տն Այ, եկայք մտէք ի
սրբութիւն նորա, զոր սրբեաց յա-
ւիտեանս ծառայել Տն Այ ձերոյ, զի
և դուք եղիջիք ծառայել Տն Այ ձե-
րում, և դարձուսցէ ի ձէնջ զսրտ-
9 մտութիւն բարկութեան իւրոյ։ Զի ի
դառնալ ձեր առ Տր, և եղբարքն
ձեր և որդիքն ձեր գտցեն զողորմու-
թիւն առաջի ամենայն գերչաց նոցա,
և դարձուսցէ զնոսա յերկիր յայս. և
ողորմած և գթած է Տր ԱԾ մեր, և
ոչ դարձուսցանէ զերեսս իւր ի մէնջ,
10 եթէ մեք դարձցուք առ նա։ Եւ ըն-
թանային սուրհանդակքն քաղաքէ ի
քաղաք, և ընդ լեառն Եփրեմ և Մա-
նասէ, մինչև [ի] Զաբուղոն, և լինէր
իբրև զի ծիծաղէին զնոքաւք և ան-
չքս առնէին և արհամարհէին զնոսա։
Բայց միայն արք յԱսերայ և ի Մա- 11
նասէ և ի Զաբուղոնէ [խոնարհեցան]
ի հրամանէ անտի և ||210 բ'|| եկին յԵմ։
Եւ ի վերայ Յուդայ եղև ձեռն Տն 12
տալ նոցա սիրտ մի, գալ կատարել յԵմ
ըստ հրամանին արքունի և իշխանա-
ցըն բանիւ Տն։ Եւ ժողովեցան յԵմ 13
ժողովուրդք բազումք առնել կատա-
րել զտաւնն անխմորաց բաղարջա-
կերացն յամսեանն երկրորդում ժողո-
վրդեամբ բազմաւ։ Ապա յարեան 14
քակեցին զսեղանսն, որ յԵմ շինեալ
էր, ի մատուցանել զխունկս իւրեանց
սնոտեացն, կործանեցին և կրեցին ի
հեղեղատն ի Կեդրոնէ։ Եւ զենին զպա- 15
սեքն յաւուրն չորեքտասներորդի
ամսեանն երկրորդի, և քահանայք և
Ղևտացիք զղջացան և սրբեցան և
մատուցին պատարագս ի տուն Տն։
Եւ անցին կացին ի կարգս իւրեանց 16
ըստ պատուիրանին Մովսէսի առն Այ,
և քահանայքն ընդունէին զարիւնն
ի ձեռացն Ղևտացւոց։ Զի բազմու- 17
թիւն էր ժողովրդոյն և չէին սըր-
բեալք, և Ղևտացիքն էին ի զենուլ
զպասեքն ամենայնի, որ ոչն կարէին
սրբել ի նուէրս Տն. զի մեծ մասն 18
ժողովրդեանն յԵփրեմէ և ի Մանասէէ

6 ըստ հրամանին ա. և ասեն, որդիք Իղի, (պակասեն յՕ. մերում նաւրագիրրդ.) դարձարուք առ Տր ԱԾ Աբրահամու | 8 որպէս և հարքն... փառս... և եկայք... Այ ձերում (դարձեալ՝ «զի և դուք եղիջիք ծառայել Տն Այ ձերում») և դարձուսցէ | 10 մինչև ի Զաբուղոն | 11 և ի Զաբուղոնէ խոնարհեցան (յՕ. մերում պակասէ բայս, զոր յաւելար ի բնագրին.) ի հրամանէ | 12—13 ըստ հրամանի ա. և իշխանաց նոցա և բանիւ Տն (դարձեալ՝ «և») ժողովեցան... զտօն | 14 յարուցեալ ...ի մատուցանել (Օ. մեր «և մատուցանել») զխունկսն... և կործանեցին (դարձեալ՝ «և») կրեցին... ի Կեդրոն | 15 զպասեքն... ամսեան... և քահանայքն և Ղևտացիքն... և սրբեցան (դարձեալ՝ «և») մատուցին... ի տուն | 16 ի կարգս իւրեանց ըստ իրաւանց իւրեանց ըստ պատուիրանին Մովսէսի ...Ղևտացւոցն | 17 և ոչ էին սրբեալք | 18 և ի Սաքարա... սկսաւ Եզեկիա կալ յաղօթս վասն

և [յ]Իսաքարայ և ի Զաբուղոնէ ոչ
սրբեցան, այլ կերան զպասեքն զայն
արտաքոյ գրոյն. սակս այսր և կալ
յաղօթս Եզեկիայ վասն նոցա և ա-
սէ. Տր ԱԾ սուրբ, քաղցր և բարերար,
19 լեր դու փրկիչ և քաւիչ ի վերայ ա-
մենայն սրտից, որ ուղղեալ են խըն-
դրել զՏր ԱԾ հարցն իւրեանց, և ոչ
20 որպէս ըստ սրբութեան սրբոյն: Եւ
լուաւ Տր Եզեկիայ, և քաւեաց զժո-
21 ղովուրդն: Եւ արարին որդիքն Իղի,
որ գտան յԵմ, զտաւնն տարեկանաց
բաղարջակերացն աւուրս եւթն ցըն-
ծութեամբ և ուրախութեամբ բազ-
մաւ, և օրհնէին զՏր աւր ըստ աւրէ,
և Ղևտացիքն և քահանայք ի սրինգ
մեծաբարբառ Տն Այ:
22 Եւ խաւսեալ սկսաւ Եզեկիայ ի սիր-
տըս Ղևտացւոցն և յամենայն, որ
իմանային բարեաւ իմաստութեամբ
զՏէ: Եւ կատարեցին զտաւնն տարե-
կանացն բաղարջակերաց յեւթն աւր,
զենուլին զողջակէզս պատարագացն
փրկութեանն և խոստովանութեան
Տն Այ հարցն իւրեանց:
23 Ապա խորհեցան խորհուրդ ամենայն
ժողովքն առնել եւթն ևս այլ աւր.
և արարին աւուրս եւթն ևս այլ
24 ուրախութիւն մեծ: Զի Եզեկիա ար-
քայ Հրէաստանի սկսաւ ժողովրդեանն
զործել հայ յեւթն հազար զուարակէ
և յեւթն հազար ոչխարէ, և իշխանքն
ի նոյն նպաստ մատուցանէին վասն
ժողովրդեան ի հազար զուարակէ և
ի ժՌ. ոչխարէ, և սրբեցան ի քահա-
նայից անտի բազումք: ||210 բ²|| Եւ ու- 25
րախ եղեն քահանայքն և Ղևտացիք
և ամենայն ժողովուրդքն, որ եկեալ
էին յԻէղէ, և որ եկքն և պանդուխտք
էին եկեալ յերկրէն Իէղէ, և բնա-
կիչքն Յուդայ: Եւ եղև ուրախու- 26
թիւն մեծ յԵմ, որ ոչ եղև երբեք
յաւուրսն Սողոմոնի արքայի, որդւոյ
Դաւթի արքային Իղի, այսպիսի տաւն
ուրախութեան յԵմ:
Ապա յառն կային քահանայքն և 27
Ղևտացիքն, աւրհնէին զժողովուրդն,
և լսելի եղև ձայն բարբառոյ նոցա,
և ելին մտին աղաւթք նոցա առաջի
սրբութեան բնակութեանն Այ յերկինս:

## [ԼԱ.]

Եւ իբրև կատարեցին զայն ամե- 1
նայն, ելին ամենայն Իէղացիքն, որ
գտան ի քաղաքսն Յուդայ, սկսան
խորտակել զարձանսն, և կտորել զան-
տառս, և կործանել զբարձունս, և
տապալել զբագինս յամենայն երկրէն
Հրէաստանի և Բէնիամէն և յԵփրեմ
և Մանասէ մինչև ի վախճան. և դար-
ձին այր Իէղեան յիւրաքանչիւր ժա-
ռանգութիւն և քաղաքս իւրեանց:
Ապա կարգեաց Եզեկիայ զկարգս 2
շաբաթաւորաց քահանայիցն և Ղև-
տացւոց և զիւրաքանչիւր կարգս

---

նոցա և ասէ. (Աստէն ի նոր տողէ ունի Օ. մր.)... քաւիչ և փրկիչ | 19 հարցն նոցա և | 21 և քահանայքն... մեծայրարբրա | 22 իմաստութեամբ բարեաւ... և կատարեցին (դրսէ՝ «զտաւնն») տարեկանացն բաղարջակերացն | 23 ժողովսուրքն | 24 վասն ժողովրդոց | 25 եկք... և բնակիչք | 26 յաւուրցն (Օ. մր՝ «յաւուրքն») Սողոմոնի | 27 Եւ ապա յառն կային |

ԳԼ. ԼԱ.—Է. ունի ի լուսանցս բաժանումն գլխոյ՝ Յո. ԼԱ. | 1 զայս... զարձանս... և կործանել զբագինս և տապալել զբարձունս ամենայն յերկրէ Հրէաստանէ... և Մանասէ (դրսէ՝ «մինչև ի վախճան») և դնային այր Իղէ... և ի քաղաքս | 2 և Ղևտացւոցն... սրահին տան |

սպասուց պաշտամանց իւրեանց յող-
ջակէզս և ի պատարագս, յաւրհնել
և ի պաշտել և ի խոստովան լինել
3 դրանց սրահիցն տան Տն։ Եւ մասն
արքային, որ հասանէր բերել յընչից
իւրոց իբրև յողջակէզս պատարագաց
ի ժամանակս առաւաւտինս և երե-
կոյն, և յողջակէզս շաբաթուցն ի
գլուխս ամսոցն և ի տաւնս տարե-
կանացն ըստ գրոյն աւրինակի, որպէս
և գրեալ է յաւրէնս Տն։
4 Ահա հրաման ետ Եզեկիայ ժողո-
վրդեանն, որ բնակեալ է յԵմ երեւե-
ցուցանել զատանել տալ զմասն քա-
հանայիցն և Ղևտացւոց, զի հզաւ-
րասցին և կարասցեն բուռակալ լինել
5 սպասու պաշտամանն Տն։ Եւ իբրև
ել հրաման բանին Եզեկիայ, յաճախե-
ցին որդիքն Իղի բերել կուտել զերա-
խայրիսն պտղոյ, ցորենոյ, գինւոյ, ձի-
թոյ, մեղու, ամենայն ընդոց արմտեաց
ծննդեան երկրին, բերին կուտեցին
6 բազմութիւն յոյժ։ Եւ որ բնակեալ
էին ի քաղաքսն Յուդայ, և նոքա ե-
կին բերին զտասանորդս զարջառոյ և
զոչխարի, յայծեաց, զաւդեաց առ հա-
սարակ ի նուէրս սրբութեան Տն Այ
իւրեանց, և եկին բերին եդին կու-
7 տեցին շեղջս շեղջս ի սրահս։ Եւ եղև
զի սկսան հիմն արկանել շեղջիցն
շեղջից յամսեանն երրորդի, և կատա-
րեցին զշեղջսն յամսեանն եւթներոր-
8 դի։ Եւ եկն Եզեկիայ և ժողովուրդքն

ամենայն, և տեսին զշեղջսն ‖211 Ա'‖
կուտեալս, և աւրհնեցին զԱԾ Իղի։
Սկսաւ հարցանել Եզեկիայ ցքահա- 9
նայապետսն և ցՂևտացիսն վասն
շեղջիցն։ Եւ ետ պատասխանի Ազա- 10
րիայ քահանայապետ տանն Սադովկայ
և ասէ. յորմէ հետէ սկսան մտանել
երախայրիք ի տուն Տն, կերաք մեք
և արբաք բազում ուրախութեամբ, և
մնացորդք այդ, որ մնացին, այդչափ
յոյժ կուտեցան, զի աւրհնեաց Տր
զժողովուրդ իւր, և կուտեցան մնա-
ցորդքդ այդ ուտելիկ շեղջեալք և
կուտեալք։ Ապա ետ հրաման Եզեկիայ 11
տանել կազմել պատրաստել շտեմա-
րանս ի տան Տն։ Եւ արարին կազ-
մեցին պատրաստեցին տարան ի ներ- 12
քս զերախայրիսն զզուշութեամբ, և
ի վերայ նոցա վարդապետ Քոնենիայ
Ղևտացի և Սէմէի, եղբայր նորա ի
ձեռանէ, և Յէիէլ և Ոզիայ և Նաաթ 13
և Ասայէլ և Յերիմովթ և Յովզափատ
և Սամաքիայ և Սէքէնիա և Թեսոն
և Ղաւէ և Բանէաս, և որդիք նորա
պատրաստականք ի ձեռանէ Քոնէնիայ
և Սեմեա եղբաւր նորա, որպէս և
հրաման ետ Եզեկիայ արքայ, և Ազա-
րիա հրամանատար տան Տն։ Եւ Կո- 14
րէշ Յեմնայեանց Ղևտացի, դարապետ
կողմանցն արևելից, և ի վերայ ըն-
ծայնեաց տալ զերախայրիսն Տն և
զնուէրս սրբոցն ի ձեռանէ Յադար 15
և Բենիամին և Յեշով և Շէմեա և

3 և երեկոյն... յօրէնսն | 4 Ասա հրաման... բնակեալ էին... զատուցանել... և Ղևտացոցն զի հզօրասցին (զ—կ—է՛ «և») կարասցեն | 5 պտուղ... արմտեաց —մ—ջ— ծննդեան | 6 զտասանորդսն զարջառս... զօզից... ի սրահսն. (Ա.—ե— ի Նոր տողէ ունի Օ. մր.) | 7 Եւ եղև իբրև սկսան... երկրորդի | 8 կուտեալս — ⟨…⟩ և օրհնեցին | 9 Ե— սկսաւ... շեղջեցն | 10 Տր ԱԾ զժողովուրդ իւր յոյժ և կ. մնացորդք այդ | 12 վարդապետ Ոնենա | 13 և Ցերիմովթ և Յովզաբադ... և Թեսոն և փ—է—վ— և Ղաւէ... պատրաստական ի ձեռանէ Ոնենիա և Սեմէի եղբօր... և Ազարիա հրաման տայր տանն | 14 և Կորէշ... դռնապետ | 15 և Շեմա... և Սեքենիա... եղբարցն իւրեանց... մեծի |

Ամարիայ և Սեքենիայ ի քաղաքսն
ի ձեռն քահանայիցն հաւատարմու-
թեամբ եղբարցն իւրոց, ըստ կարգս
շաբաթամանացն, ըստ չափոյ մեծին և
16 փոքու, բայց ի տղայածին մանկացն,
այլ արու մանկան յերեմենից և ի վեր,
ամենայնի որ մտանէին ի տուն Տն ի
բան համարոյ աւուրաւուրէ իւրեանց
ի պաշտաւն աւրամսի հրամանի
կարգաց իւրեանց։
17 Եւ այս հաշիւ քահանայիցն ըստ
ազգատոհմի իւրեանց, և Ղեւտացիքն
ըստ աւրմսի իւրեանց ի քսանամե-
նից և ի վեր, ըստ հաշիւս իւրեանց,
18 ըստ ամենայնի զխմի իւրեանց, որ-
դւոցն իւրեանց և դստերացն իւ-
րեանց, ըստ բազմութեան իւրեանց,
զի հաւատարմութեամբ նուիրեցին
19 նուէրք իւրեանց։ Եւ որդւոցն Ահա-
րոնի, որ կային յագարակս և ի
քաղաքս իւրեանց, ըստ ամենայն քա-
ղաքի քաղաքի, արք որ յանուանէ
անուանեալ էին, տալ նոցա մասն
ամենայն արուի մանկան, որ քահա-
նայիցն սակի էին, և ամենայնի որ
թուէին ի թիւս Ղեւտացւոց։ ||211 Ա²||
20 Եւ արար Եզեկիայ այսպէս յանդի-
ման ամենայն Հրէաստանի. և արար
Եզեկիայ զբարին և զիրաւունս և
զուղղութիւն և զճշմարտութիւն ա-
21 ռաջի Տն Այ։ Եւ զամենայն զգործս,
զոր սկսաւ գործել ի տան Տն յաւ-
րէնս ի հրամանս և ի պատուիրանս,
և ի խնդրել զՏրԱծ իւր յամենայն
սրտէ իւրմէ, և արար կատարեաց, և
աջողեցաւ նմա։

[ԼԲ.]

Եւ եղև յետ բանիցս այսոցիկ և 1
յետ ճշմարտութեանս այսորիկ, եկն
եւ Սենեքերիմ արքայ Ասորեստանեաց,
եկն եհաս ի վերայ Յուդայ և սփռե-
ցաւ տարածեցաւ ընդ ամենայն քա-
ղաքս պարսպաւորս, և եդ ի մտի իւ-
րում պատել պաշարել և առնուլ
զնոսա։ Եւ ետես Եզեկիայ, եթէ [եկեալ 2
հասեալ է Սենեքերիմ դէմ եդեալ]
խորհուրդ ի մտի առնուլ զալ տալ
պատերազմ ի վերայ Եմի, խորհուրդ 3
կալաւ ընդ ծերակոյտ ժողովրդեանն
իւրում և ընդ ամ մեծամեծս, զի եղ-
ցեն խցցեն զակունս աղբերցն արտա-
քոյ քաղաքին. ապա հաճոյ թուեցաւ,
յանձն առին ամենեքին։ Եւ եղեն 4
բազմութիւն յոյժ, և խցին զակունս
աղբերցն և թաքուցին զգնացս ջուր-
ցըն և կորուսին զգետն, որ ընդ մէջ
քաղաքին էր, թէ զուցէ զայցէ ար-
քայն Ասորեստանեաց գտանիցէ ջուր,
և զտեղի առեալ զաւրացի ի վերայ
քաղաքիս։ Եւ դարձեալ ամրապարէր 5
շինել զպարիսպս կործանեալս, և
կանգնէր զաշտարակսն, և արտաքոյ

16 բաց ի տղածին մանկացն (Օ. մեր «մանկցն»)... յերեմե՞նից (Ա[illegible]... մանկունս ի վերայ [illegible])... օրըստօրէ | 17 ըստ ամ ի զխմի | 18 Ահարոնի | 19 արք որ... արու ման-կան... Ղեւտացւոցն | 21 զգործ... և յաջողեցաւ |

Գլ. ԼԲ.—Է. ունի ի լուսանցս բաժան. գլխոյ՝ Ձա. ԼԲ. | 1 Ասորեստանի, եկն եհաս ի [illegible] վերայ Հրէաստանի և սփռեցաւ | 2 և ետես Եզեկիայ եթէ [illegible] ելեալ (պակասեն վրիպակաւ յՕ. մերում նատրագիրբդ, [illegible] Ասորեստա-նէ. օր.) խորհուրդ ի մտի առնուլ | 3 մեծամեծս... ամենեքեան | 4–5 [illegible] (Օ. մեր «զա-նեաց (Օ. մեր վրիպակաւ «Ասատնեաց»)... քաղաքիս ([illegible]) [illegible] (Օ. մեր [illegible] ձեռ)... կործանեալսն... զաշտարակսն (Օ. մեր «զաշտարակսն քաղաքին» [illegible]

պարսպին այլ պատուար արտին, և
շուրջ զքաղաքաւն Դաւթի պարիսպ
ամրացուցանէր, պատրաստէր զէն և
6 մեքենայս բազում: Եւ պահապանս
բազում կացուցանէր, և իշխանս զաւ-
րագլուխս ի վերայ զաւրացն և ի
գործ պատերազմի կացուցանէր: Եւ
ժողովեցան առ նա ի մէջ քաղաքին
ամենեքին, և խաւսել սկսաւ Եզեկիա
7 ի սիրտ մարդկանն և ասէ. քաջալե-
րեցարուք պինդ կացէք զաւրացա-
րուք, մի երկնչիք մի զանգիտէք մի
զարհուրիք յերեսաց Թագաւորին Աս-
րեստանեաց և մի յաղգաց զաւրաց
ժողովրդեանն նորա, զի ընդ մեզ բա-
8 զումք են քան ընդ նոսա. ընդ նմա
բազում մարմնաւոր, և ընդ մեզ Տր
ԱԾ զաւրութեանց առլ պատերազմ
ընդ մեր և փրկել զմեզ: Եւ այսպէս
քաջալերէր Եզեկիա արքայ զՅուդայ:
9 Ապա յետ այսորիկ առաքեաց Սե-
նեքերիմ արքայ զծառայս իւր ի վերայ
Եմի. ||211 բ'|| և ինքն էր ի Լաքիս, և
ամենայն զաւրք իւր ընդ նմա. և ա-
ռաքեաց նա առ Եզեկիա արքայ
Յուդայ և առ ամենայն զաւրսն Յու-
10 դայ, որ էին յԵմ, և ասէ. այսպէս ա-
սէ Սենեքերիմ արքայ Ասորեստանեաց.
յո կամ յինչ յուսացեալ էք դուք, զի
նստեալ նստիք դուք յայդմ արգելանի
11 յԵմ: ոչ աւադիկ Եզեկիա պատրէ
զձեզ պահել պաշարել զձեզ, մատնել
զձեզ ի սով և ի ծարաւ և ի մահ, և
քաջալերէ զձեզ և ասէ. Տր ԱԾ ազ-
րեցուցանէ զձեզ ի ձեռաց Թագաւո-
րաց Ասորեստանեայց: Ոչ այդ այն 12
Եզեկիա է, որ բարձեալ զբարձաւնսն,
և կործանեաց զբագինսն և ասէ
ցՅուդայ և ցբնակիչս յԵմի. և աւասիկ
կամ, ասէ, առաջի սեղանոյս այսո-
րիկ, երկիրպագէք դուք և ի սմին
խունկս արկեալ պաշտաւն պաշտի-
ջիք: Արդ ոչ գիտէք դուք զինչ գործ 13
գործեցի ես կամ արքք իմ ընդ ամենայն
ազգս ազգաց երկրի. միթէ կարացին
ինչ ընդդէմ կալ դիքն հեթանոսաց
ամենայն երկրի, և կամ փրկեցին
զիւրաքանչիւր ժողովս ի ձեռաց իմոց:
Եւ արդ մի խաբեսցէ զձեզ Եզեկիա 14°
արքայ, մի տացէ ձեզ զուր տարա-
պարտուց յուսալ ի նա. արդ, ով է
այն ԱԾ, որ կարէ փրկել զձեզ ի ձե-
ռաց իմոց. մի պատրեսցէ զձեզ, և մի 15
հաւատայք դուք նմա, զի ոչ կարեն
աստուածք ամենայն հեթանոսաց ա-
պրեցուցանել զիւրաքանչիւր ժողո-
վուրդ ի ձեռաց իմոց և ի հարց մերոց.
իսկ արդ այդ ԱԾ ձերդ կարասցէ
փրկել զձեզ ի ձեռաց իմոց: Եւ խաւ- 16
սեցան արքն բանս ամբարտաւանս
յԱԾ և յԵզեկիա և ի ժողովուրդն
Յուդայ:
Նաև հրովարտակս ես ետ բերել 17
Սենեքերիմ արքայն նախատանաց Տն

---

Նաւք ի վերայ վերջին բառից.) և... պատուար արտէ և... ամրացուցանէր (Աշտէն ի նոր տողէ ունի Օ. մր.) | 6 բազումս... բազաքին ... (...՝ փոփոխաւ կրկնեալ է վերջաւորութիւնն.) ամենեքեան... ի սիրտ | 10 յայդմ արգելանի (Օ. մեր փոփոխաւ՝ «այդ արգելանի») | 11 ո՞չ աւանիկ | 12 Եզեկիայն է | 13 Եւ արդ ոչ... կալ ... ամենայն գիրն հեթանոսաց երկրի | 14°—15 Թերի թուի լինել 14 համար. յերկաւին օրինակսն, իսկ յՕ. մերում բաց յայսմանէ բան ինչ ի 15 համարոյ թուի ի 14-ն փոխադրեալ. | Արդ ով է այն ԱԾ, որ կարէ փրկել զձեզ ի ձեռաց իմոց. և արդ մի խաբեսցէ զձեզ Եզեկիա (...՝ «արքայ») և մի տացէ ձեզ զուր տարապարտուց յուսալ ի նա: Մի պատրեսցէ զձեզ և մի հաւատայք դուք նմա, զի ոչ կարացին ԱԾք... և ի հարց իմոց. իսկ արդ այդ ԱԾ | 17 Հրովարտակս (...՝ «ես») ետ... արքա...

Իղի, և զայս ևս գրեալ էր, եթէ որ-
պէս ոչ կարացին դիքն հեթանոսաց
փրկել զեւրաքանչիւր զժողովուրդս
իւրեանց ի ձեռաց իմոց, սոյնպէս և
Ածդ Իղի ոչ կարէ փրկել զԵզեկիայ և
18 զժողովուրդդ ի ձեռաց իմոց: Եւ գո-
չեցին ի վերայ ի բարբառ մեծ զար-
հուրեցուցանել զզաւրսն, որ ի վերայ
պարսպին էին, զի զանգիտեցուսցեն
19 զնոսա առնուլ զքաղաքն: Եւ խաւսել
սկսան յԱծ իբրև ի դիսն հեթանոսաց:
20 Ապա եկաց յաղաւթս Եզեկիայ ար-
քայ և Եսայի մարգարէ, որդի Ամով-
սայ, աղաղակեցին առ Ած յերկինս
21 ի վերայ բանիցն այնոցիկ: Եւ առա-
քեաց Տր Ած զհրեշտակ յերկնից և
սատակեաց զամենայն զաւրս պատե-
րազմողս, զիշխանս, զաւրավարս բա-
նակին Ասորեստան-‖211 բ²‖-եաց, և դա-
դարեցոյց զնոսա ամաւթալից կոր-
անկեալ յերկիրն իւրեանց: Եւ եկն
եմուտ ի տուն այ իւրոյ, և մտին
որդիքն, որ յորովայնէ իւրմէ էին, և
անդէն մաշեցին զնա ի սուր սուսերի
22 իւրեանց: Եւ փրկեաց Տր Ած զԵզե-
կիայ և զամենայն բնակիչսն Եմի ի
ձեռաց Սենեքերիմ արքային Ասորե-
ստանեաց և ի ձեռաց ամենայն զաւրաց
նորա, և հաստատեաց Տր Ած շուրջ
23 զնոքաւք խաղաղութիւն: Եւ բազում
այնուհետև սկսան շուրջանակի բերել
զպատարագս Տն Այ յԵմ, և բազում
ընծայս և պաշտամունս բերէին Եզեկիայ
արքային. և բարձրացաւ այնուհետև
Եզեկիա յաչս ազգաց ամենայնի, որ
բնակեալ էին շուրջ զնովաւ: Եւ ընդ 24
ժամանակսն ընդ այնոսիկ հիւանդա-
ցաւ Եզեկիա արքայ յախտ մահու
հիւանդութեան. և եկաց յաղաւթս
Եզեկիա առ Տր Ած իւր, և ետ նմա
նշան: Սակայն ոչ ըստ պարգևացն 25
Այ հատոյց նմա Եզեկիա, այլ մեծա-
մտեաց և հպարտացաւ և բարձրացաւ
սիրտ իւր. և եղև բարկութիւն մեծ
ի վերայ... և ի վերայ Եմի, և ի վե-
րայ նորա: Եւ խոնարհեցաւ Եզեկիայ 26
ի բարձրութենէ մեծամտութեան սըր-
տին իւրոյ ինքն և բնակիչքն Եմի, և
ոչ ած այնուհետև Տր զբարկութիւն
իւր ի վերայ Եզեկիայ յաւուրս իւր:
Եւ եղև Եզեկիա մեծութիւն յոյժ և 27
փառք բազում և գանձք յոյժ արծա-
թոյ և ոսկւոյ և ականց պատուա-
կանաց և խնկոց. և արար տունս
տունս զինուց և գանձից և խնկոց,
և շտեմարանս շտեմարանս իւրաքան- 28
չիւր արդեանց, ցորենոյ և գինոյ և
ձիթոյ, և ապաստանս ապաստանս
և կայեանս կայեանս խաշանց բազում 29
յոյժ, զի ետ նմա Ած ստացուածս
բազումս: Եւ արգել նա զելս ջրոյն, 30
որ էր ի վեր և որ էր ի խոնարհ ընդ
արևմուտս քաղաքին. և աջողեցաւ
նմա: Եւ այնպէս արար ընդ հրեշտակս 31
իշխանացն, որ եկին ի Բաբելացւոց
անտի հարցանել վասն նորա, և թոյլ
ետ նմա Տր փորձել զնա, զի գիտասցէ
զինչ կայ ի սրտի նորա: Եւ վասն 32

---

Տն Այ Իղի... եթէ (գ-լ-ն-է՝ «որպէս») ոչ... ժողովս (գ-լ-ն-է՝ «իւրեանց») ի ձեռաց իմոց, այնպէս և | 18 ի վերայ... որ է (ջ-ն-ջ-է՝ ջնջիչ նշանաւ) ի վերայ | 20 և Եսաի | 21 Ած հրեշտակս... զօրս (Օ. մեր՝ «զաւրն») և դարձոյց զնոսա... կոր անդեալ... աստուած-ոյն իւր-ոյ | 22 Սենեքե-րիմայ | 23 Եւ բազում+այնուհետև... բերել պատա-ր-ագս...յաչս ազգաց | 24 ժամանակս... առ Տր Ած իւր (թուի պակաս ինչ լինել ստայերկոսին օրինակին.) և ետ | 25 սիրտ իւր (Ա-դ-էն ի նոր տողէ ունի Օ. մեր) Եւ եղև բարկութիւն մեծ ի վերայ (զկնի «ի վերայ» յՕ. մերում տեղի թողեալ դատարկ վասն միոյ բառի, գուցէ՝ Յուդայ. իսկ յէ. գ-լ-ն-էն՝ «ի վերայ—և») Եմի և ի վր նորա | 27 և գանձ... և գանձ-ուց | 31 հարցանել (գ-լ-ն-էն՝ «վասն նորա և թոյլ ետ նմա Տր փորձել»)

այլոց բանից, որ ինչ գրեալ է վասն
նորա ի ճառս Եսայեայ մարգարէի,
որդւոյ Ամովսայ, ցուցանէ և ի ճառս
այլոց թագաւորացն Յուդայ և Իղի:
33 Եւ ննջեաց Եզեկիա առ հարս իւր, և
թաղեցին զնա ի գլուխս գերեզմանա-
ցըն որդւոցն Դաւթի, և փառաւո-
րեցուցին զնա ի մահու անդ իւրում
ամենայն տուն Յուդայ [եւ բնակիչք
Եմի]. և թագաւորեաց Մանասէ որդի
նորա փոխանակ նորա:

## [ԼԳ.]

1 Այր ամաց Ժ., և Ծե. ‖212 Ա'‖ ամ
թագաւորեաց [ի վերայ Եմի]:
2 Եւ արար նա չարիս առաջի Տն
ըստ ամենայն պղծութեանց հեթանո-
սաց, [զոր] և ջնջեաց Տր յերեսաց
3 որդւոցն Իղի: Դարձաւ Մանասէ և
շինեաց բարձունս, զոր կործանեաց
Եզեկիայ հայր նորա, և կանգնեաց
զբագինս Բահաղիմ, և երկիրպագա-
նէր ամենայն զաւրութեանցն երկնից
4 և ծառայէր նոցա: Եւ շինեաց Մա-
5 նասէ բագինս բագինս ի տան Տն, և
սեղանս սեղանս կանգնեաց ամենայն
զաւրութեանցն երկնից ի սրահս
6 տանն Տն: Եւ ինքնին անցուցանէր
զորդիսն զրօզով ի Գեբեննովմ, և
առնէր հաւհմայս և հմայէր և գիւ-
թէր և առնէր փոխուկս, բազմացու-
ցանէր թովիչս. և յաճախեաց Մա-
նասէ առնել զչարիս առաջի Տն, զի
բարկացուսցէ զնա: Եւ դնէր նա 7
զկուռսն ձուլածոյս և զկռածոյսն և
զքանդակեալս ի տան Տն, յորում ա-
սաց Տրն ցԴաւիթ և ցՍողոմոն որ-
դի նորա, թէ. ի տանս յայսմիկ և
յԵմ ընտրեցից [յ]ամենայն ազգացն
Իղի դնել զանուն իմ ի վերայ սորա
մինչև յաւիտենից ժամանակաց. և ոչ 8
ևս յաճախեցից շարժել զոտն Իղի
յերկրէ, զոր խոստացայ տալ հարց
նոցա, բայց միայն թէ զգուշասցին
նոքա պահել զամենայն պատուիրանս
իմ, զոր պատուիրեցի ես նոցա ըստ
ամենայն հրամանաց աւրինացն և
իրաւանցն, զոր ետու ի ձեռն Մովսէսի:
Եւ մոլորեցոյց Մանասէ զՅուդայ և 9
զբնակիչսն Եմի առնել զչարիս չարիս
քան զամենայն հեթանոսս, զոր ջըն-
ջեաց Տր յերեսաց որդւոցն Իղի: Եւ 10
խաւսեցաւ Տր ընդ Մանասէի և ընդ
ամենայն ժողովրդեանն իւրում, և ոչ
լուան նմա: Ապա ած Տր ի վերայ 11
նոցա զիշխանս զաւրացն թագաւո-
րացն Ասորեստանեաց. և եկին հասին
ի վերայ Մանասէի, կապեցին զնա ի
կապանս ոտից և ձեռաց և առին գնա-
ցին զնա ի Բաբելոն: Եւ իբրև տա- 12
ռապեցաւ աղաչեցաւ Մանասէ,

---

զնա, զի | 32 ցուցանէ և ի ճառս այլոց | 33 ի գլուխ... և փառաւորեցին... տունն Յուդա և բն–կիչք Եմի (պակասեն յՕ. մերում Նորագիրքդ, զորս յաւելաք ի բնագրին.) |

Գլ. ԼԳ.—Է. ունի ի լուս. կրկնակի բաժ. գլխոյ՝ Թռ. ԼԳ/ՃՁ | 1 Այր երկոտ–ն ամաց ԺԲ.–ներ և Ծ.Ե. և Ծ.Ե. ամ թագաւորեաց ի վերայ Եմի. (Նորագիրքդ պակասեն յՕ. մերում.) | 2 (Առաջին ի նոր տողէ ունի Օ. մեր.) | հեթանոսաց զոր (Նորագիրքդ պակասէ յՕ. մերում.) և ջնջեաց | 3 արձանս... զօրութեանց | 4 Եւ շինեաց բագինս բագինս Մանասէ | 5—6 զօրութեանց... տանն Տն, և ինքն անցուցանէր զորդիսն իւր ընդ հուր... ի Գեբեննով... հաւ–հմայս և հմայէր (Օ. մեր դուցէ վրիպակաւ՝ «հրամայէր»)... զփոխուկս... և յաճախէր... զչարիս չարեաց առաջի | 7 և զկռածոյս և զքանդակեալսն... և ցՍողոմոն... յամենայն ազգացն... իմ ի վերայ Նորա | 8 օրինաց | 9 և զբնակիչս | 12 հարցն իւրոց |

խոնարհեցաւ յոյժ առաջի երեսաց Տն
13 Այ հարցն իւրեանց: Եւ եկաց յաղաւթս
առ նա. ապա լուաւ նմա և լուաւ
ձայնի բարբառոյ նորա, և դարձոյց
զնա անդրէն յԵմ և ի նոյն թագ
14 աւորութեան կացոյց: Եւ յետ այսո-
րիկ շինեաց Մանասէ պարիսպ ար-
տաքոյ քաղաքին Դաւթի յարեւմտից
ի հարաւակողմ կոյս, ի վերայ հեղե-
ղատին, յելս դրանն Ձկոյ, շուրջ զՕ-
փաղաւն, և բարձրացոյց յոյժ. և կա-
ցոյց իշխանս զաւրութեանց ընդ ա-
մենայն ||212 Ա²|| քաղաքս պարսպաւորս
15 Յուդայ: Եւ քակեաց ջնջեաց ի միջոյ
զամենայն կուռս և քանդակեալս և
ձուլածոյս ի տանէ Տն, և զամենայն
բագինսն, զոր շինեալ էր ի ներքս ի
16 տան Տն և յԵմ, ի բաց ջնջեաց: Եւ
ուղղեաց նա զսեղանն Տն և անդ
մատոյց խաւնկս և ողջակէզս գոհու-
թեանն ի վերայ նորա. և ետ հրաման
պատուիրանի Մանասէ Յուդայ և ա-
մենայն տանն Իմի ծառայել Տն Այ
17 Իղի. բայց սակայն ժողովուրդն տա-
18 կաւին ի բարձունս պաշտէին: Եւ այլ
բանք, որ ինչ էին Մանասէի, և ա-
ղաւթք որ առ Ած էին, և մարգա-
րէից բանքն որ ինչ խաւսէին ընդ
նմա յանուն Այ Իղի, այս ամենայն
գրեալ են ի ճառս աղաւթից նորա:
19 Եւ որպէս լուաւ նմա վասն ամենայն
մեղաց նորա և ապստամբութեանն
նորա, և վասն տեղեաց տեղեաց, որ
շինեաց նա ի բարձունս, և որպէս
կացոյց անդ անտառս և կուռս քան-
դակեալս մինչ չև էր դարձեալ, այս ա-
մենայն գրեալ է ի ճառս տեսանողացն:
Եւ ննջեաց Մանասէ առ հարս իւր, 20
և թաղեցին զնա ի դրախտի անդ
տան իւրոյ:

Եւ թագաւորեաց Ամովն որդի
նորա փոխանակ նորա: Եւ այր իբրև 21
ԻԲ. ամաց, և կալաւ զթագաւորու-
թիւնն ի վերայ Եմի Բ.ամ: Եւ ա- 22
րար նա չարիս չարիս առաջի Տն,
որպէս և արար Մանասէ հայր նորա, և
պագանէր երկիր ամենայն կռոց, զոր
կանգնեաց հայր նորա, և ծառայէր նոցա:

Եւ ոչ խոնարհեցոյց զանձն իւր ա- 23
ռաջի Տն, որպէս և խոնարհեցոյց
զանձն իւր Մանասէ հայր նորա, այլ
յաճախեաց զնել մեղս ի մեղաց վե-
րայ: Եւ յարեան ի վերայ նորա ծա- 24
ռայք իւր և սատակեցին զնա ի ներքս
ի տան իւրում: Եւ եկին հարին զաւր- 25
քն ի վերայ այնոցիկ, որք սպանին
զթագաւորն, և սատակեցին զնոսա.
և առին ամենայն ժողովք երկրին
զՅովսիա որդի նորա թագաւորեցու-
ցին փոխանակ նորա:

## [ԼԴ.]

**Եւ** թագաւորեաց Յովսիա այր իբ- 1
րև Ը.ամի, և ԼԲ.ամ կալաւ զթա-
գաւորութիւնն ի վերայ Եմի:

13 և ի նոյն թագաւորութեան կացոյց ՉԻ— | 14 ի հարաւակողմն... դրանն Ձկոյ... քաղաքսն | 15 կուռս (դ—ն—ե՝ «և») քանդակեալս | 16 և ողջակէզս բաւութեանն... Յուդա և (դ—ն—ե՝ «ամենայն») տանն Իղի ծառայել | 17 ի բարձունս պաշտէին | 18—19 և բանք մարգարէիցն որ... յանուն Տն Այ... աղօթից նորա. (Ա—ր—ն ի նոր տող է Օ. մր.) և որպէս լուաւ (Օ. մր՝ «լուան», գուցէ փոխ՝ լուաւ—ն) նմա... զոր շինեաց... կացոյց (դ—ն—ե՝ «անդ») Ամոն... փ. նորա անտառս | 20—21 տան իւրոյ. (Աստանօր է. ունի ի լուս. բաժ. գլխոյ՝ ԺԷ.) | (դ—ն—ե՝ «և») այր... զերկոտ ամս | 22 և արար նա չարիս (դ—ն—ե՝ «չարիս») առաջի | 23 և ոչ խոնարհեց—ոյց... և խոնարհեցոյց (դ—ն—ե՝ «զանձն իւր») Մանասէ | 25 որ սպան—նին... ժողով—ք—ն |

2 Եւ արար Յովսիա զուղղութիւնս և
զիրաւունս առաջի Տն. և գնայր նա
ընդ ամենայն ճանապարհայն հաւր
իւրոյ Դաւթի, և ոչ թիւրեցաւ նա
ոչ յաջ և ոչ յահեակ:
3 Եւ յամին ութերորդի թագաւորու-
թեան իւրում ինքն մանուկ էր, և
սկսաւ խնդրել զՏր ԱԾ Դաւթի հաւր
իւրոյ, և յամին երկ-‖212 Բ'‖-ոտասանե-
րորդի թագաւորութեան իւրոյ սկսաւ
սրբել նա զՅուդայ և զԵմ յամենայն
բարձանց և յամենայն բագնաց և յա-
մենայն կռոց քանդակեալ ձուլածոյի-
4 ցըն: Եւ քանդէր զամենայն բագինս,
որ առաջի Բահաղիմն կանգնեալ էր, և
զամենայն բարձունս, որ ի վերայ նո-
րա էին. և կոտորէր զամենայն ան-
տառս, և զկուռսն ձուլածոյս փշրէր
և մանրէր և ընկենոյր առաջի գե-
5 րեզմանացն զոհելոց նոցա: Եւ զոսկերս
քրմացն այրէր ի վերայ կործանեալ
բագնաց նոցա, և սրբեաց Յովսիա
6 զՅուդայ և զԵմ և զամենայն քաղաքս
Եփրեմի և Մանասէի [եւ Շմաւոնի]
և Նեփթաղիմայ և ամենայն որ շուրջ
7 զնոքաւք էին: Եւ կոտորէր զամենայն
անտառսն, և կործանէր զամենայն
կուռսն և խորտակէր, և զբարձունսն
կործանէր յամենայն երկրէն Իղի, և
ինքն դառնայր յԵմ:

Եւ յամին Ը. և Ժ.երորդի թագաւո- 8
րութեան իւրոյ հրաման ետ թագա-
ւորն սրբել զտաճարն և զերկիրն. և
առաքեաց Յովսիա զՍափան զորդի
Եսայեայ, և զՄաասի քաղաքապետն,
և զՅովաս որդի Յովաքազայ դպիրշա-
տակաց դպիրն, հաստատել զհրաման
տան Տն Այ իւրոյ: Եւ եկն եհաս նա 9
առ Քեղկիա քահանայապետն մեծ, և
եառուն նոքա զարծաթն, որ մտեալ էր
ի տուն Տն, զոր ժողովեալ էր Ղե-
ւտացւոցն, որ պահէին զդուռն, ի
ձեռանէ Մանասէի և Եփրեմի և իշ-
խանացն յամենայն գնդացն Իղի յա-
մենայն Յուդայ, Բենիամին և որ բնա-
կեալ էին յԵմ: Եւ եառուն զնա ի ձեռն 10
այնոցիկ, որ գործէին զգործ տան
Տն, և առցեն նորոգեսցեն զամենայն 11
գործ ի հիւսանց, գործ շինուածոց,
և գնեսցեն վէմս արդեալս չորեքկու-
սիս և փայտս հեծանոցուս, զոր ջըն-
ջեցին բարձին թագաւորքն Յուդայ:
Եւ արքն, որ էին հաւատարիմք ի 12
վերայ գործոցն, Յայեթ և Աբդիա
Ղեւտացիք յորդւոցն Մերարեա, և
Զաքարիա և Մեսողամ յորդւոցն Կա-
աթու ճեպաւղք, և ամենայն որդիք
Ղեւտացւոցն ի օրինգս երգոց: Ի վե- 13
րայ բեռնակիր ստանձնաւորաց վար-
դապետք, որ գործեցին զգործ ճե-

---

• Գլ. ԼԴ.—Է. ունի ի լուս. կրկնակի րամ. գլխոյ՝ Փո. ԼԴ/ՃԸ | 1 իբրև Ը. ամէ— | 2 Յովսիա զխաղաղութիւն և զիրաւունս... ըստ ամենայն | 3 ձուլածո-ից | 4 բագինսն... Բաշ-ղիմն... և զկուռս ձուլած-ոյս | 5 (Բանքս՝ «և զոսկերս»... մինչև՝ «բագնաց նոցա»—եղեալ են յՕ. մերում ի լուսանցս՝ նովին ձեռամբ.) | 6 և Մանասէի և Շ—ն (պակասէ յՕ. մերում անունդ վերջին.) և Նեփթաղիմ | 7 անտառսն ([illegible]՝ «և կործանէր զամենայն կուռսն») և խորտակէր և զբարձունս | 8 զորդի Յովաքազայ... զՏրամանն | 9 Քեղկեա ([illegible]) բ. մեծ և եառուն նմա զարծաթն... պահէին զդուռն (Օ. մեր՝ «զդրունսն») ի ձեռանէն | 10—11 տան Տն և ([illegible]՝ «և» գնի յերկոսին օրինակսն, փոխանակ ասելոյ՝ զի) առցեն... գործ ([illegible]՝ «ի») հիւսանց... և գնեսցեն (Օ. մեր վրիպակաւ՝ «ընեսցեն») վէմս արդեալս չորեքկուսի և | 12 հաւատարիմ... Յաեթ... Ղեւտացիքն... և Մասեղամ | 13 բեռնակիր ըստանձնաւորացն (պլպլեալ յՕ. մերում՝ «ստանձնեա —որայ»)... որ գործէին զգործ ճեպելով և ([illegible]՝ «ի») Ղեւտացւոց |

պելով, և ի Ղևտացւոց անտի դպիրք
14 և դատաւորք և դռնապանք։ Եւ
մինչ բերէին ի ներքս զարծաթն զմու-
տըս տանն Տն, անդ գտանէր Քեղկիա
քահանայապետ զմատեանն աւրինաց
Տն, որ ի ձեռն Մովսէսի տուեալ էր։
15 Եւ խաւսել սկսաւ Քեղկիա և ասէ
ցՍափան դպրապետ. գիր գտի, ասէ,
16 աւրինաց ի տան Տն։ Եւ բերին զգիրն
զայն ետուն ի ձեռս ||212 F²|| արքային։
Եւ եդ բանս ընդ արքայի և ասէ.
զամենայն արծաթ, որ տուեալ է ի
ձեռս ծառայից քոց, ոյք առնէին
17 զգործն, զամենայն արծաթն ձուլեցին,
որ գտեալ էր ի տան Տն, և ետուն
18 զնա ի ձեռս ոստիկանացն։ Եւ պատ-
մեաց զայն Սափան դպրապետ ար-
քայի և ասէ. գիր մի ետ ցիս, ասէ,
Քեղկիա քահանայապետ. և մատեաւ
փողփողակի ընթերցաւ զայն յունկն
19 արքայի։ Եւ եղև իբրև լուաւ արքայ
զբանս աւրինացն, ձեռ[ն] զաւձուք
արկանէր, զպատմուճանն պատառէր.
20 տայր պատուէր Թագաւորն Քեղկեա,
և Աքիկամա որդւոյն Սափանայ, և
Յափդոմնայ որդւոյն Միքեայ, և Սա-
փանա դպրապետի, և Յեսեա որդւոյն
21 արքայի. երթայք գնացէք խնդրեցէք
դուք ի Տէ ի վերայ իմ և ի վերայ
մնացորդացն Իղի և Յուդայ վասն
բանից գրոյդ, որ գտաւ, զի մեծ է
սրտմտութիւն բարկութեան Տն, որ
վառեալ է ի վերայ մեր, փոխանակ
զի ոչ լուան հարքն մեր բանի Տն
առնել զամենայն, որ ինչ գրեալ է ի
գրիդ յայդմ։ Եւ գնացին Քեղկիա քա- 22
հանայապետ, և որում հրաման ետ
Թագաւորն ընդ նմա, առ Ողդայ
մարգարէ, զի էր նա կին Սեղեմեա
որդւոյ Թեկուայ, որդւոյ Ասերայ պատ-
մուճակի, և պահէր զպատուիրանն
Տն, և նա ինքն էր բնակեալ յԵմ ի
Մասենայ. և խաւսեցան ընդ նմա ըստ
բանիցն, որ ասաց Թագաւորն։
Ապա ետ պատասխանի նոցա և 23
ասէ. այսպէս ասէ Տր Աճ Իղի. ա-
սասջիք դուք ցայրն ցայն, որ առա-
քեաց զձեզ առ իս, գողջիք. այսպէս 24
ասէ Տր Աճ. ահաւասիկ ես ածեմ չա-
րիս ի վերայ տեղւոյդ այդորիկ ըստ
ամենայն բանիցդ, որ գրեալ են ի
գրիդ յայդմիկ, որ ընթերցայք դուք
առաջի Թագաւորին Յուդայ. փոխա- 25
նակ զի թողին զիս և արկանէին
խունկս դիցն դիցն աւտարաց, զի
բարկացուսցեն զիս յամենայն գործս
ձեռաց իւրեանց, որովք բորբոքեցին
զսրտմտութիւն բարկութեան իմում
ի տեղւոջդ յայդմիկ, և այլ ոչ ես
շիջցի։ Բայց Թագաւորն, որ առաքեաց 26
զձեզ առ իս խնդրելով ի Տէ, այսպէս
ասասջիք դուք ցնա. այսպէս ասէ Տր
Աճ Իղի. զբանս, զոր լուար դու, և 27
զանգիտեաց սիրտ քո, և խոնարհեցար
դու ի սրտի քում առաջի իմ, զի
լուար դու զբանս իմ ի վերայ տե-
ղւոյդ այդորիկ և ի վերայ բնակչաց
նորա, և խոնարհեցար դու ի սիրտ

---

14 զմատեանս օրինացն | 16 ի ձ. արքայի... ընդ արքայի (դպիրն՝ «և ասէ») զամենայն արծաթն | 19 ձեռն զձեռս արկանէր | 20 և Ցաբդոնա ո. Միքա | 21 բանից գրո որ... բարկութիւն սրտմտութեան... որ վառեալ (Օ. մեր՝ «վառեալ») է | 22 առ Ողդա... կին Սեղոմեայ... պատմուճակի | 25 խունկս դիցն (դպիրն՝ «դիցն») օտարոտաց... բարկութեան իմոյ | 26 բայց թագաւորն (դպրութ. և Օ. մեր, գուցէ փոխանակ առելոյ՝ ցթագաւորն.) որ առաքեացն... խնդրելով ի Տնէ. (Առաջին ի Նոր տողէ ունի Օ. մեր.) այսպէս | 27 ի սրտի քում առաջի իմ և պատառեցեր |

քո առաջի իմ, և պատառեցեր զու-
զպատմուճան քո, և լացեր դու ա-
ռաջի իմ, և ես լուայ ձայնի բարբա-
28 ռոյ քո, ասէ Տր։ Արդ ||213 Ա'|| աւասիկ
մատուցից զքեզ առ հարս քո խաղա-
ղութեամբ ի հանգիստ գերեզմանաց
քոց, և ոչ տեսցեն աչք քո զամենայն
չարիս, զոր ածելոցն իցեմ ի վերայ
տեղւոյս այսորիկ և ի վերայ բնակչաց
սորա։ Եւ բերին անդրէն պատասխանի։
29 Եւ առաքեաց Յովսիա արքայ և
ժողովեաց զծերս ժողովրդեանն Յու-
30 դայ և Եմի։ Եւ ել արքայ եմուտ ի
տուն Տն և ամենայն բնակիչքն Յու-
դա և ծերքն Եմի, և քահանայքն և
Ղևտացիքն և ամենայն ժողովուրդքն
ի մեծէ մինչ ի փոքր, և ընթերցաւ
նա յականջս ժողովրդեանն զամենայն
բան գրոյն, զոր գրեալ էին ի գրի
անդ ուխտին կտակարանի, որ գտեալ
31 էին ի տան Տն։ Զի եկն եկաց արքայ
Յովսիայ ի վերայ սեանն, եդ ուխտ
պատուիրանի գնալ առաջի Տն, պա-
հել զպատուիրանս նորա և զվկայու-
թիւնս նորա և զհրամանս նորա յա-
մենայն սրտէ և յամենայն մտաց,
առնել կատարել զամենայն պատգամս
պատուիրանին, որ գրեալ են ի գրին
32 յայնմիկ։ Եւ հաստատեաց զամենեսին,
որ յԵմ և Յուդայ և ի Բենիամին էին.
եկին և մտին նոքա յուխտ պատուի-
րանին ըստ ուխտին Տն Այ հարցն
33 իւրեանց։ Եւ կործանեցին ջնջեցին զա-
մենայն պաշտամունս պղծութեան
յերկրէն իւրեանց և հաստատեցին
ծառայել Տն Այ հարցն իւրեանց զա-
մենայն աւուրս կենաց իւրեանց, զի
մի ևս խոտորեսցին ի ճանապարհաց
Տն Այ իւրեանց։

## [ԼԵ.]

Եւ արար Յովսիա զպասեքն Տն 1
Այ իւրում. և մատուցին զպատա-
րագս զպասեքայն, և զենին զպասե-
քայն յաւուր տասներորդի չորրորդի
ամսեանն առաջնում։ Եւ կացոյց նա 2
զքահանայս պահապանս իւր, և զօ-
րացոյց զնոսա և հաստատեաց ի գործ
Տն։ Եւ պատուէր Ղևտացւոցն զօ- 3
րաւորաց, զի պատուէր տացեն ամե-
նայն Իղի սրբել զանձինս իւրեանց ի
Նուէրս Տն, զի տացեն զտապանակն
կտակարանաց ի տուն Տն։ Եւ տուին
եդին զտապանակն կտակարանաց ի
տան Տն, զոր շինեաց Սողոմոն որ-
դի Դաւթի, արքայն Իղի։
Ասա խաւսել ակաւ արքայն և ասէ.
մի ինչ լիցի ամենեւին այլ գործ բեռնա-
բարձութեան ձերոյ, բայց միայն պաշ-
տաման սպասու սրբութեան ձեզ ի
մէջ ժողովրդեանն Իէղացւոց. արդ 4
կազմեցարուք ըստ ազգս ազգաց
տոհմի ձերոյ և ըստ կարգս կարգս
աւրամաի հրամանի գրոյն Սողոմոնի
որդւոյ նորա։ Եւ կացէք դուք ի 5
տան Տն ըստ վիճակաց դասուց տանց
հարցն ձերոց և եղբարցն ձերոց և

---

28 զոր ածելոց եմ ի վերայ | 30 և ամենայն ժողովքն ի մեծէ... բան• գրոյն զոր... որ (դրդէ՝ յերկուսին օրինակսն. Տես և ի Ներքոյ՝ գլ. ԼԵ. 19.) գտեալ | 32 էին. և եկին մը-տին | 33 զի մի (դրդէ՝ «ևս») խոտորեսցին |

ԳԼ. ԼԵ.—Է. ունի ի լուսան. բաժան. գլխոյ՝ Ֆո. ԼԵ. | 1 զպատարագս և զպասեքայն... յաւուրս | 2 և զօրացոյց զնոսա (Օ. մեր գուցէ վրիպակաւ՝ «զնա») և | 3 զի պատուէր տացեն ամենայն Ղևտացոց սրբել զանձինս... Սողոմոն... միայն պաշտաման սպասաւորութիւն ձեզ ի մէջ... Իէղացոյն | 4 ըստ ազգս ազգատոհմի ձերոյ... հրամանի գր-յն Սողոմոնի |

որդւոց ժողովրդեանդ, և մասն տան
6 ազգատոհմին Ղևտացւոց, և զենջիք
զուք զպաս-‖213 Ա²‖-եքայն և պատրաս-
տեսջիք զուք եղբարցն ձերոց և որ-
դւոց ժողովրդեանդ առնել ըստ հրա-
մանին բանի Տն, որ ի ձեռն Մովսէսի:
7 Եւ կանխեաց սկսաւ Յովսիայ յառա-
ջագոյն որդւոց ժողովրդեանն զառինս
և խաշինս և ալոջս և ուլս այծեացն
զամենայն ի պասեքն, ամենայն ինչ
որ գտաւ ըստ թուոյն Լ՛Ռ., և ար-
ջառ երիս հազարս. այս ի տանէ
8 արքունի: Եւ իշխանքն, որ եկին բե-
րին զերախայրիս ժողովրդեանն և
քահանայիցն և Ղևտացւոց. և Քեղ-
կիա և Զաքարիա և Յէիէլ իշխանաց
տանն Այ, և ետուն զայն ցքահանայ-
սն ի պասեք անդր որձս և որոջս
և ալոջս երկուս հազարս և Ո., և
9 զուարակս Յ.: Եւ Քոնենիա և Սամէէ
և Նաթանայէլ եղբարք իւր, և Ասա-
բիա և Յէիէլ և Յովզափատ իշխանք
Ղևտացւոց բերին ի պասեք անդր
յորձս Ե. հազար, և զուարակս Ե:
10 Եւ ուղղեցաւ աջողեցաւ սպաս պաշ-
տաման, և կային քահանայքն ի վե-
րայ հաստատութեան իւրեանց, և
Ղևտացիքն ըստ մասանց մասանց իւ-
րեանց ըստ հրամանի թագաւորին:
11 Եւ զենին զպասեքն, և առին զարիւ-
նըն հեղին ի ձեռաց իւրեանց, և
12 Ղևտացիքն մորթեցին պատրաստեցին
զողջակէզս պատարագացն, զի եղիցի
այն ըստ մասանց տանց ազգատոհմին
իւրեանց որդւոցն Իղի, զի մատուցա-
ցեն ըստ աւրինի Տն, որպէս և գրեալ
է ի գիրս Մովսէսի, և ապա ի վա-
ղիւ անդր խորովել զպասեքն հրով 13
ըստ պատուիրանին և զնուէրսն եփել
կաթսայիւքն և սանուք, և աջողեցաւ.
և առին մատուցին յընթաց առ ա-
մենայն որդիս ժողովրդեանն: Եւ ապա 14
յետ այսորիկ պատրաստեցեն անձանց
իւրեանց քահանայքն. զի քահանայքն
որդիքն Ահարոնի մատուցին զողջա-
կէզսն պատրաստ մինչև ցգիշեր գի-
շեր, և Ղևտացիքն պատրաստէին նո-
ցա և եղբարցն իւրեանց որդւոցն
Ահարոնի: Եւ սաղմոսասացքն որ- 15
դիքն Ասափայ իւրեանց հաստատու-
թեան ըստ պատուիրանին Դաւթի.
Ասափն և Եմանն և Իդիթովմ մար-
գարէքն արքայի և դարապետք դրանն,
զի ոչ գոյր նոցա հանգիստ առ փոքր
մի ի սպասուէ անտի իւրեանց, և եղ-
բարք նոցա Ղևտացիքն պատրաստե-
ցին նոցա: Եւ կազմեցաւ պաշտաւն 16
Տն յաւուր յայնմիկ, զի կատարեսցեն
զպասեքն և բերցեն զողջակէզսն պա-
տարագացն ի վերայ սեղանոյն Տն
ըստ պատուիրանի հրամանի արքային
Յովսիայ: Եւ արարին որդիքն Իղի, 17
որ գտան անդ, զպասեքն ի ժամա-
նակի յայնմիկ, և զտաւնն տարեկանաց

6 ըստ հրամանին | 7 և ալոջս... այծից... որ ինչ... ԼՌ | 8 Եւ իշխանքն [illegible] որ... և Ղևտացւոցն ([illegible] «և») Քեղկիայ... տան... ցքահանայս | 9 Եւ Ն-քոնենիա... Ղևտացւոցն... ի պասեք ([illegible])... հինգ հազար | 10 յաջողեցաւ | 11—12 ի ձեռաց իւրեանց ([illegible] ի Նոր տողէ ունի Օ. ձեռ.) և Ղևտացիքն... տան ազգատոհմին | 13 կաթսաիւք և սանիւք և յաջողեցաւ և [illegible] մատուցին յընթաց առ ([illegible] և Օ. ձեռ.) ամենայն | 14 պատրաստեցէն անձանց իւրեանց քահանայքն ([illegible] ի Նոր տողէ ունի Օ. ձեռ.) զի... Ահարոնի ([illegible]) մատուցանէին զողջակէզսն... և եղբարց | 15 Ասափա իւրեանց պատրաստութեամբ... ըստ պատուիրանին... և Իդիթոմ | 16 պաշտօնն Տն յաւուր... զողջակէզս | 17 ի ժամանակին... և զտօնն տարեկան բաղարջակերացն |

18 բաղարջակերացն զէ. աւր: Չեղև այն-
պիսի պասէք երբեք կամ նման ի
մէջ Իղի յաւուրցն ‖213 բ'‖ Սամուէլի
մարգարէի և ամենայն թագաւորացն
Իղի, և ոչ եղև այնպիսի պասէք, որ-
պէս արար Յովսիա արքայ և քահա-
նայքն և Ղևտացիք, բնակիչքն Յուդայ
և Իղի, որ էին բնակեալ յԵմ ի տան
19 Տն: Յամին ութուտասներորդի թագա-
ւորութեանն Յովսիա եղև պասէքս
այս: Եւ յետ այսր ամենայնի կազ-
մեալ Յովսիայ զտաճարն, և զվհու-
կսն և զգէտսն և զթերափիմսն և
զկուռսն և զկարասին, որ էր յերկ-
րին Յուդայ և յԵմ, զայն ամենայն
այրէր հրով արքայն Յովսիա, զի
հաստատեսցէ զբանս ամենայն, որ
գրեալ է ի գրին յայնմիկ, որ եգիտ
Քեղկիա քահանայապետ ի տան Տն:
Նման նմա ոչ եղև երբեք ոք, և ոչ
այնպէս դարձուցանել առ Տր ամե-
նայն սրտիւ իւրով և ամենայն մտաւք
իւրովք և ամենայն զաւրութեամբ
իւրով ըստ ամենայնի աւրինացն
Մովսէսի, և ոչ յետ նորա յարեաւ
նման ոք նմա: Բայց սակայն ոչ դար-
ձաւ սրտմտութիւն Տն մեծն, որ բոր-
կացաւ նա սրտմտութեամբ բարկու-
թեամբ իւրով ի վերայ Յուդայ ըստ
ամենայն բար[կ]ութեան, որ բարկա-
ցոյցն Մանասէ: Եւ ասէ Տր. սակայն
զՅուդայ դարձուցից յերեսաց իմոց,
որպէս դարձուցի զԻէղն, և մերժե-
ցից յերեսաց իմոց զքաղաքն զընտ-
րեալ զԵմ և զտունն, զոր անուանե-
ցի յանուն իմ: Եւ ել փարաւոն 20
Նեքաւով արքայն Եգիպտացւոց ի վե-
րայ թագաւորացն Ասորեստանեայ
առ ափն գետոյն Եփրատայ տալ պա-
տերազմ ընդ նմա ի Քարքամիս. և
գնաց ընդ առաջ նորա արքայ Յով-
սիայ: Ապա յղեաց ընդ առաջ նորա 21
փարաւոն հրեշտակս և ասէ. զի կայ
իմ և քո, արքայդ Հրէաստանի, ոչ
եթէ ի քո վերայ ինչ եկեալ եմ այ-
սաւր տալ պատերազմ ընդ քեզ, այլ ի
տեղիս յայս պատերազմիս հասեալ
եմ, զի Ած սախպեաց զիս. զգոյշ լեր
դու յԱյ և յինէն, զի մի ապականես-
ցիս դու: Եւ ոչ դարձոյց Յովսիայ 22
զերեսս իւր ի նմանէն տալ ընդ նմա
պատերազմ, և ոչ լուաւ Յովսիա բա-
նիցն փարաւոնի Նեքովայ ի բերանոյ
Այ, և եկն ընդդէմ տալ պատերազմ
ընդ նմա ի դաշտին Մակեդոնի:
Ապա ընդ առաջ մատեան աղեղ- 23
նաւորք և ձիգ եդեալ նետալից ա-
բարին զՅովսիա: Խաւսել սկսաւ Յով-

---

18 և ոչ եղև երբէք այնպիսի պ. կամ նման (Օ. մեր վրիպակաւ «նմա») ի մէջ... որպէս արարն... և քահանայք | 19 Համարատունդ ընդարձակ պակասէ յայսմ տեղւոջ հայերէն թարգմանութեան՝ որ ըստ Եօթանասնից, և գտանի՝ թէև տարբեր խմբագրութեամբ, ի ԻԴ. գլ. Չորրորդ գրոց Թագաւորութեանց (համար. 24—29.) | Յամի Ը.ուտասաներորդի... եղև պասէքս այս և (յՕ. մերում թուի վրիպակաւ «որ») յետ այսր... և յԵմ զամենայն այրէր հրով (յՕ. մերում վրիպակաւ գնի աստ վերջակէտ և ապա՝ «Եւ», զոր պատշաճ վարկաք ի բաց թողուլ) արքա Յովսիայ... որ ([illegible]՝ յերկրին օրինակն.) եգիտ Քեղկիա... ըստ ամենայն օրինացն... սրտմտութեամբ բարկութեամբ... ըստ ամենայն բարկութեան որ... յերեսաց իմոց ([illegible] «որպէս դարձուցի զԻէղն և մերժեցից յերեսաց իմոց») զքաղաքն զընտրեալն... անուանեցի (Օ. մեր՝ «անուանեցից») | 20 Փարաւոն ([illegible])... թագաւորաց | 21 արքայ Հ... ի վերայ քո ինչ | 22 Եւ ոչ դարձոյց... ի նմանէ... Նեքովայ... Մակեդովն | 23 աղեղնաւորքն... ընդ ծառայսն... ի տեղւոյդ պատերազմէ | 25 Եւ առ ողբս... և կանայք երգեն զողբս... մարգարէիցն. |

սիա ընդ ծառայս իւր և ասէ. հա-
նէք զիս ի տեղւոյդ պատերազմի, զի
24 ապիկարեցայ յոյժ։ Եւ առին իջու-
ցին զնա ի կառաց անտի յերկրորդ
կառս և ածին յԵմ։ Եւ մեռաւ Յով-
սիա, և թաղեցին զնա առ հարս
իւր, և սուգ առին ամենայն Յուդայ
և Եմ ի վերայ Յովսիայ։

Եւ առ ողբս Երեմիա ի վերայ 25
Յովսիա, և ամենայն երգիչքն արք
և կանայք ողբան զողբս զայս մին-
չև ցայսօր ժամանակի, և ետուն
զնա ի հրամանս Իղի։ Եւ ահաւասիկ
այս ամենայն գրեալ է յողբս մար-
գարէից։ *

---

* Աստանօր՝ այն է ի 25-րդ համարատուն ԼԵ. գլխոյն, աւարտին Գիրք Բ. Մնացորդաց ըստ օրինակին Ս. Երուսաղէմի. իսկ օրինակն Ս. Էջմիածնի յաւելու ևս համարատունս երկուս (26 և 27) և ապա գլուխ մի ամբողջ՝ ԼԶ-րդ (թէև առանց գլխահամարոյ) թէ՛ զմին և թէ՛ զմիւսն ունելով յար և նման տպագիր օրինակաց որ ըստ Եօթանասնից, ուստի և աւելորդ վարկաք ի մէջ բերել զայնս ի Ծանօթութիւնսն.

Ի վերջ Գրոց Բ. Մնացորդաց՝ ըստ օրինակին Ս. Երուսաղէմի, ի վերջին տողս 213 Բ՝ երեսի, գնի յիշատակարան ինչ համառօտ յընդօրինակողէն գրոցս.

«Զ Յակոբոս գծաւղ սորին, զսուտանուն կրաւնաւոր, և զհօգևոր եղբայրն իմ զՄխիթար որրասէր կրաւնաւոր աղաչեմ յիշել ի Տր, ո՛վ սուրբ եղբարք»

Երեսն 213 Բ՝ նորին ձեռագրի լցեալ է ամբողջապէս, իսկ յերեսն 213 Բ² գնի խորան զարդարուն և ապա խորագիր՝ «Էզրաս Առաջին», (այն է՝ Գիրք Եզրի Առաջին), յորոյ վերայ զանի գրեալ նովին գրչաւ բան ինչ խորհրդաւոր՝ այսպէս.

,,Տեառն Սահակա Կթղիկոսի զՄնացորդս յետոյ ամենայն մարգարէից է թարգմանեալ։''

# ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ՎՐԻՊԱԿՔ.

| ՏՊԱԳՐԵԱԼ. | | | ՊԱՐՏ Է ԸՆԹԵՌՆՈՒԼ. |
|---|---|---|---|
| Էջ 39 Սիւն. Ա. | տող 10 | ջառանգութիւն | ժառանգութիւն |
| » 40 (ի ծան.) | » 4 | Սողոմոն (այսպէս և է Ներսէս) ես | Սողոմոն (այսպէս և է Ներսէս)... ես |
| » 41 Սիւն. Ա. | » 13 | յորճիս | յորդիս |
| » 47 (ի ծան.) | » 8 | 21 Ղազարանա (պահպանէն՝ «որդւոյ Գեսամ և Աղագանայ») իշխանք | Ղազարանա որդւոյ Գեսամ և Աղագանայ իշխանք |
| » 54 » | » 4 | (ի վերջոյ) կու սիրէր։» | կու սիրէր. ոչ։» |
| » 58 » | » 3 | (ի վերջ.) ի վերայ | ի վերայ յ |
| » 60 Սիւն. Բ | » 18 | ի տաւն | ի տուն |
| » 68 (ի ծան.) | » 7 | (ի վերջ.) տասն»)... որինչ | տասն»)... յետ (Աստանօր թուի պակաս ինչ լինել յերկոսին օրինակսն.) որ ինչ |
| » 78 Սիւն. Ա. | » 19 | փոխանաք | փոխանակ |
| » 81 » Ա. | » 29 | յաջէկէ | յաջեկէ |

Բաց յայսմանէ՝ գտանին ուրեք ուրեք հատեալ ծայրք տառից ոմանց (ը ե ը ը ⁵, յ.) և երբեմն ա և բ, ժ և ք, և կամ ղ և ղ շփոթեալ ընդ միմեանս՝ ի պատճառս նմանութեան տառից և կամ ի զանազանութենէ մելանի։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библ



ԳՐՉԱԳԻՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՁԴ—1635.

Рукопись библіотеки Эчміадзинскаго монастыря.







ԳՐՉԱԳԻՐ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ՝ ՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ.
ՉԺԸ—1269.

Рукопись библіотеки монастыря св. Іакова въ Іерусалимѣ.